

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԹԱԼԷԱԹ – ՓԱՇԱՅԻ

ՍՂԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

Թալէաթ փաշան սպաննելուն համար ամբաստանուած ուսանող ՍՈՂՈՄՈՆ ԹԷՀԼԻՐԵԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ, որ տեղի ունեցաւ Բերլինի նահանգային Գ. դատարանի առջեւ: 2/3 Յունիս 1921:

Արձանագրութեան նշան՝ C. J. 22/21:

ԱՏԵԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ա. Նախագահ.

Դր. ԼԵՄԲԵՐԳ, վարիչ նահանգային դատարանի:

Դատաւորներ.

ԲԱԹԷ, նահանգային դատական խորհրդական:

Դր. ԼԱՔՍ, օգնական դատաւոր:

Ատենադպիր.

ՎԱՐՄԲՈՒՐԳ., հետամուտ դատաւորութեան:

Բ. Դատախազ.

Գոլնիկ, դատախազ:

Գ. Երդուեալներ.

ՎԻԼՀԵԼՄ ԳՐԱՈՒ, որմնադիր, Նաուեն Բերլինի մօտ:

ՐՈՒԴՈԼՖ ԳՐՈՍԷՐ, վաճառական, Բերնաու (Մարկ):

ԿՈՒՐՏ ԲԱՐԹԷԼ, ակնավաճառ, Բերլին:

ԱԴՈԼՖ ԿԻԻՀՆԷ, ռանտիէ, Բերլին-Պանկով:

OSSO ԷՎԱԼԴ, տանտէր, Շարլոտտենբուրգ:

OSSO ՎԱԳՆԷՐ, յարկաձածկ, Շարլոտտենբուրգ:

OSSO ԲԻՆՏԷ, երկաթագործ, Շէօներլինդէ:

OSSO ՐԱՅՆԵԿԷ, վերին գործավար, Տեգել:

ԷՕԺԷՆ ԴԸ ՊՐԻՍ, ներկարար, Բերլին-Վիլմերսդորֆ:

ԱԼԲԵՐՏ ԲԷԼԼԻՆԳ, դեղարանատէր, Շարլոտտենբուրգ:

ՀԵՐՄԱՆ ԳՈԼԴԷ, երկաթագործ, Շարլոտտենբուրգ:

ՐՈԲԵՐՏ ՀԱՅԶԷ, աղիւսի գործարանի տէր, Շարլոտտենբուրգ:

Փոխանորդներ.

ՅՈՒԼԻՈՍ ՖՈՒՐՅ, տանտէր, Շարլոտտենբուրգ:

ԱՈՒԳՈՒՍՏ ԲԼԻԶԵՆԷՐ, մսագործ, Տեգել:

Դ. Պաշտպաններ

Դր. ԱԴՈԼՖ ՖՈՆ ԳՈՐԴՈՆ, իրաւական գաղտնի խորհրդական, Բերլին:

Դր. ԻՕՉԱՆՆԷՍ ՎԵՐԹԱՈՒԷՐ, իրաւական խորհրդական, Բերլին:

Դր. ՆԻՄԱՅԷՐ, գաղտնի խորհրդական և պրոֆեսոր Կիլի համալսարանի իրաւագիտանան
բաժնին:

ԱՌԱՋԻՆ ՕՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Նախագահը՝ նահանգային դատարանի վարիչ Դր. Լեմբերգ առաջօրեան ժամը 91/4 ին բացառապես ատենանք:

Ամբաստենեալի և անոր երեք պաշտպաններուն ներկայութիւնը ստուգուեցաւ, և թարգմանները՝ Վահան Զաքարեան և Գեորգ Գալուստեան երդումն ըրին:

Այնուհետեւ վիճակարկութեամբ երդուեալներու դասը կազմուեցաւ. անոնք մի առ մի երդուընցան, որ իրենց ձայնը պիտի տան խղճի մտօք:

Ապա ստուգուեցաւ վկաներու և իրազեկ մասնագէտներու ներկայութիւնը:

Նախագահը (վկաներու և իրազեկներու դառնալով).

Ներկայ գործիս մէջ դուք իբրև վկայ կամ մասնագէտներ պիտի լսուիք. խնդրոյ նիւթը ձեզի արդէն ծանօթ է, միայն ուշադիր կ'ուզեմ ընել ձեզ երդման կարևորութեան և սրբութեան. նկատի առեք թէ օրէնքը ծանր պատիժներ կը նախատեսէ այն անձինքներու համար, որոնք երդուելով հանդերձ դիտմամբ կամ անուշադրութեամբ սխալ վկայութիւններ կու տան: Դարձեալ ամբաստանեալի անձին և ձեր անոր հետ ունեցած յարաբերութեանց մասին տրուած տեղեկութիւնները ճշմարտութեան համապատասխանելու են:

Կը խնդրեմ ուրեմն որ դուրս ելլէք և ձեր ներս կոչուելուն սպասէք. հաւանականաբար այն որոշման պիտի գանք թէ վկաներէն մաս մը այսօր կրնայ դատարանէն հեռանալ, ուստի կը խնդրեմ որ դռան մօտ կենաք:

Ասոր վրայ վկաները դուրս կ'ելլեն:

Իրազեկ մասնագէտներու պօռոճներուն վրայ անցան՝

Դր. Թիլէ, շրջանային օգնական-բժիշկ, Բերլին-Ֆրիդենաու.

Դր. Շմուլինսկի, առողջապահական գաղտնի խորհրդական, Շարլոտտենբուրգ.

Դր. Շլուս, բժիշկ, առողջապահական պահակ 7.

Դր. Շտեօրմէն, դատական բժիշկ, բժշկական գաղտնի խորհրդական, Բերլին.

Դր. Հուգօ Լիպման, պատուոյ պրոֆէսոր Բերլինի համալսարանի եւ բժշկական գաղտնի խորհրդական, Բերլին, իբրեւ հոգեբան.

Դր. Հիխարդ Կասիրէր, ջղային բժիշկ եւ պրոֆէսոր Բերլինի համալսարանի.

Պրոֆ. Դր. Էդմունդ Ֆօրստեր, գլխաւոր բժիշկ գրքութեան հիւանդանոցի համալսարանական ջղային կլինիկի, Բերլին, իբրեւ հոգեբան.

Դր. Բրունո Հակե, ջղային բժիշկ, Բերլին.

Բարելլա, արքունի հրազինաշէն, Բերլին, իբրեւ մասնագէտ հրազէնի հարուածներու.

Դր. Փիլ. Պ. Պֆեֆեր, Բերլին- ֆրիտենաու, իբրեւ թարգման գաղղիերէնի:

Նախագահը ատենանի անդամներուն եւ պաշտպաններուն.

Բացման որոշումը կարդալէն ետքը միտք ունեմ ամբաստանեալի հարցաքննութիւնը հնարաւոր մանրամասնութեամբ կատարել, լսել Տիկին Թալէաթը, վաճառական Եսսենը, ծառայ Դիմբիկին, ոստիկան Գնասը, ոստիկանապետ Շօլցը, դատական խորհրդական Շուլցեն, բժիշկ Դր. Շլոսը, Բարելլան եւ դարձեալ այն վկաները որոնց վկայութիւնները դէպքին կը հային, եւ երկրորդաբար միայն հարցաքննել այն անձինքը, որոնք ամբաստանեալին հետ, անոր Բերլին կամ Պարիս գտնուած ժամանակ ծանօթացած եւ անոր հետ յարաբերութիւն ունեցած են, ըստ այսմ՝ տիկին Շտելլբաումը, տիկին Դիտմանը.

Օր. Լուիս Բայլընզոն վարժուհին, Արելեանը, Էֆթեանը, Թերզիպաշեանը, տիկին Թերզիպաշեանը եւ վերջերս ատենակոչ եղած վկան Սամուէլ Ոսկանեանը:

Պաշտպան գաղտնի խորհրդական Դր. Ֆոն Գորդոն.

- Համաձայն ենք:

Նախագահ.- Այնուհետեւ մտադիր եմ հարց դնել թէ արդեօք պաճտպանները ըստ պարագային կրնան հրաժարիլ անդրագոյն փաստերու յառաջբերումէ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Բացայայտ է թէ այդ մասին մենք աւելի ուշ որոշում պիտի կարենանք տալ. խնդիրը ընդհանրապէս դժուարին հարցի մը շուրջ է, վասն զի թէեւ մենք մէկ կողմանէ պարտաւոր ենք ամբաստանեալի շահերը պաշտպանել, բայց նաեւ գերմանական պետութեան շահերը:

Նախագահ.- Առաջին եւ երկրորդ խումբի վկաներով այսօր կը գոհանամ եւ մայիս 30ի ու անկէ նախընթաց գրութեամբ ատենակոչ եղած վկաները վաղուան կը թողում, այդպիսով այսօրուան կը մնան 19 վկայ. գուցէ պատշաճ է որ ձաշի կարճ դադար մը նշանակենք: Ինչ է արդեօք այսմասին պ.պ. երդուեալներու կարծիքը: Զաւանութեան նշաններ երդուեալնրու դասէն:

Ժամը 1 1/2ի մօտերը շատ կարճ դադարով մը կը գոհանանք, եւ վաղը առաւօտեան կը հարցաքննենք միւս վկաները. միաժամանակ կը տեսնենք թէ փաստերու յառաջբերումը որ աստիճան շարունակելու է եւ յաջորդաբար կը լսենք իրազէկ մասնագէտներէն Պրոֆ. Դր. Կասիրերը, Դր. Շտեօրմէրը, գաղտնի խորհրդական Լիպմանը եւ Պրոֆ. Ֆորստերը:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Կը խնդրենք որ իրազէկներու խմբին մէջ լսուին նաեւ Դր. Լեպսիուսը եւ վսեմաշուք Լիման Ֆոն Չանդէրսը. եւ կը խնդրենք որ այս երկուքը լսուին իբրեւ

իրազեկներ ամբողջ հայ իրականության: Խօսակցութեան նիւթ պիտի ըլլան այնպիսի բաներ, պ.պ. Երդուեալներ, որոնք թե՛ մեզի եւ թե՛ ձեզի տարօրինակ պիտի գան, այնպէս որ պետք ունինք բանալիի մը, մանաւանդ այս ժողովրդեան նկարագրին համար: Առ այս ամէնէն յարմարագոյնն է Պրոֆ. Դր. Լեպսիուս, որ երկայն ատեն հոն՝ արեւելք ապրած է եւ պարագաներն անձնական փորձառութեանք կը ձանչնայ. եւ դարձեալ վսեմաշուք Լիման Ֆոն Չանդերս, որ ինչպէս գիտենք, ոչ միայն պատերազմի միջոցին, այլ եւ անկէ առաջ արդէն երկար տարիներ Թուրքիա ապրած է: Իբրեւ իրազեկ աչքի առաջ ունէի նաեւ Հալէպի գերմանական նախկին հիւպատոս Պր. Ռէօսլերը, որ ներկայիս Էզեր կը գտնուի, ուսկից ինձի կը հեռագրերէր թէ կրնար գալ, եթէ Արտաքին գործոց նախարարութիւնը թոյլ տար: Արտաքին գործոց նախարարութիւնը, որ իսկզբան հեռագրով թոյլ տուաւ իրեն հոս գալ, երեկ երեկոյան գրած էր թէ չի կրնար հրաման տալ, որ Պր. Ռէօսլեր, հիւպատոսը, իբրեւ իրազեկ հոս լուի: Գալով այն մասնական հարցերուն, որոնք իրեն պիտի առաջարկուէին հոս, անոնց մասին դեռ գրաւոր բանակցութեան մէջ ենք եւ կը յուսանք որ այսօր կը կարգադրուին: Ահա թէ ինչո՛ւ կը խնդրէի ձեզմէ որ իրեն տեղ վսեմաշուք Լիման Ֆոն Չանդերս եւ Դր. Լեպսիուս լուին իբրեւ իրազեկ հայ յարաբերութիւններու եւ հայ իրականութեան:

Դատախազ Գոլնիկ.- Ես հոս կ'ուզէի մտադիր ընել թէ դէպքը Հայաստանի մէջ տեղի չէ ունեցած, այլ Բերլին. ես այնպէս կը կարծեմ թէ այդպիսի իրազեկ մասնագէտներու ցուցում մը հարկաւոր չէ. բայց քանի որ պաշտպանները իրազեկներ հրաւիրած են, պատժական դատաստանի կանոնաց համաձայն պետք են լուիլ. ասոր դէմ ոչինչ կարելի է առարկել. միայն կը խնդրեմ որ փաստերն աւելի չընդլայնին, վասն զի իմ կարծիքովս այս խնդրին հետ առընչութիւն չունին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Կարելի եղածին չափ փաստերը պիտի սահմանափակենք. բայց կը խնդրեմ, որ բան մը դուրս չձգուի, հաւատացէք ինձի, Տեա՛րք, որ գերման պետական շահն ալ այդ կը պահանջէ:

Նախագահ.- Ատեանը վձռեց որ Պրոֆ. Դր. Լեպսիուս եւ վսեմաշուք՝ զօրավար Լիման Ֆոն Չանդերս իբրեւ իրազեկներ լուին. երկուքն ալ իրաւունք ունին դատավարութեան ներկայ գտնուելու:

(Երկու իրազեկները սրահ կը մտնեն:)

Երկու պարոններուն ուշադրութեան կը յանձնեմ եթէ պաշտպաններու խնդրանօք իբրեւ իրազեկներ պիտի լուին:

Կը խնդրեմ դարձեալ յայտնել թէ վկաներէն՝ Քոյր Թորա Ֆոն Վեդել, քոյր Եւա Էլվերս, քոյր Դիդցում՝, տիկին Շպիկեր, գրագէտ Արամ Անտոնեան, տեղակալ Էրնստ Պառաքին, հարիւրապետ Ֆրանց Կարլ Էնդրէս, առաջնորդական փոխանորդ Պալագեան, վաղը պիտի լուին, ուստի այօր կրնան հեռանալ, բայց վաղը առաւօտ ժամը 9ին հոս ըլլալու են: Մնացեալ վկաները պետք են հոս մնալ:

Այժմ կը սկսինք խնդրին քննութիւնը, ամբաստանեալի հարցաքննութեամբ եւ անոր անձնական հանգամանքները ճշդելով:

Նախագահ.- Ստո՞յգ է արդեօք թէ դուք 1897ին Ապրիլ 2ին, Բագառիճ ծնած էք:

Ամբաստանեալ.- Այո:

Ն.- Ի՞նչ կոչում ունէիք Ձեր ծնողքը:

Ա.- Վաճառական էին:

Ն.- Ու՞ր կը բնակէին:

Ա.- Բագառիճ:

Ն.- Մի՞ շտ:

Ա.- Ես դեռ երկու կամ երեք տարեկան էի, երբ Երզնկայ փոխադրուեցան:

Ն.- Քանի՞ եղբայրուքոյր էիք:

Ա.- Երկու եղբայր եւ երեք քոյր:

Ն.- Անոնք ամէնքն ալ մինչեւ 1915 թուականը ծնողա՞ց հետ կը բնակէին:

Ա.- Ամէնքն ալ, բացի քոյրերէս մէկէն, որ ամուսնացած էր:

Ն.- Ո՞ւր դպրոց յաճախած էք:

Ա.- Երզնկայ:

Ն.- Քանի՞ տարի:

Ա.- Ութը կամ ինը տարի:

Ն.- Դպրոցը յաջողութեա՞մբ աւարտած էք:

Ա.- Այո՛, յաջողութեամբ:

Ն.- Ձեր ծնողքը նիւթական լա՞ւ դրութեան մէջ էին:

Ա.- Այո՛, շատ լաւ:

Ն.- Համաշխարհային պատերազմի հետեւութեամբ արդեօք վնասուեցա՞ն:

Ա.- Մինչեւ ջարդերը մեր ընտանիքը ամենեւին չվնասուեցավ, միայն թէ գործերն դադար առած էին:

Ն.- Ձեր եղբայրներեն մեկն ալ զինուոր չէ՞ր:

Ա.- Այո՛, միջին եղբայրս զինուոր էր:

Ն.- Ո՞ր կռուած է, ո՞ր ճակատին վրայ:

Ա.- Ճակատը չէր, այլ Խարբերդ, Երզնկայէն հարաւ:

Ն.- Խարբերդ Հյաստանի՞ մէջ է:

Ա.- Այո՛, ասիական Թուրքիոյ մէջ:

Ն.- 1915 թուին տո՞ւնը կը գտնուէր:

Ա.- Այո՛, 1915ին արձակուրդով տունն էր, երբ ջարդերն սկսան:

Ն.- Արդեօք Երզնկայի այս ջարդերեն բռնորովին յանկարծակի՞ եկաք թէ արդէն նշաններ կային:

Ա.- Կը վախնայինք որ ջարդեր տեղի պիտի ունենային, վասն զի արդէն լուր կը շրջէր թէ մարդիկ սպանուած են:

Ն.- Ի՞նչ կը մտածուէր այս ջարդերու մասին, ի՞նչ կը խօսուէր, ի՞նչ էր անոնց պատճառը:

Ա.- Ջարդեր իսկզբանէ արդէն միշտ տեղի ունեցած են. թէ՛ իմ ծնած ժամանակներս եւ թէ՛ երբ ծնողքս Երզնկայ հաստատուեցան եւ ծնողքս միշտ կը պատմէին թէ ջարդեր տեղի ունեցած են:

Ն.- Յառաջագո՞յն ալ ե՞րբ եղած են այս ջարդերը:

Ա.- 1894ին այս տեղ ջարդեր եղած են:

Ն.- 1915ի ջարդերուն կանխանշաններ կայի՞ն. ծանօ՞թ էր արդեօք թէ տեղի ունենալիք ջարդերուն պատճառն ի՞նչ էր:

Ա.- Այն ատեն ես դեռ ծնած չէի:

Ն.- 1915ի՞ն:

Ա.- Միշտ ահու դողի մէջ էինք թէ ջարդեր տեղի պիտի ունենային, բայց պատճառներ յայտնի չէին:

Ն.- Այսպիսի ջարդերեն կը վախնայի՞ն:

Ա.- Տարիներ ծարունակ ահուդողի մէջ էին եւ այս վերջին ջարդերեն ալ յառաջ երկար ատեն կը վախնային, որ տեղի պի ունենան:

Ն.- Տան մէջ եղած խօսակցութիւններու մէջ կամ առանձնապէս բան մը լսած էք պատճառներու մասին:

Ա.- Հարցումը չհասկցայ:

Ն.- Ջարդի պատճառներուն վրայ բան մը լսած էք ընտանեկան խօսակցութիւններու մեջ:

Ա.- Կը խօսուէր թէ թրքական նոր կառավարութիւնը մեր դէմ միջոցներ ձեռք պիտի առնէր:

Ն.- Գուցէ թրքական կառավարութիւնը կը պատճառաբանէր թէ զինուորական հարկը կը պահանջէր. ընդհանրապէս ի՞նչ կը խօսուէր այդ մասին:

Ա.- Այդ ժամանակները ես դեռ շատ երիտասարդ էի:

Ն.- Բայց այն ժամանակ Դուք արդէն 18 տարեկան էիք:

Ա.- Այն ժամանակ ինձի կ'ըսէին թէ կրօնական եւ քաղաքական պատճառներ կային:

Ն.- Լաւ կ'ըլլար դէպքին այս նախապատմութիւնը ամբաստանեալին անձնական հանգամանքներուն հետ քննութեան նիւթ ընել:

Դատախազ.- Ես կը կարծեմ թէ լաւագոյն է այս մէկդի թողուլ եւ նախ բացման վճիռը կարդալ տալ:

Նախագահ.- (ատենանին խորհրդակցութենէն ետքը.) Կը բաղձանք ամբաստանեալին մանրամասն լսել թէ ի՞նչպէս տեղի ունեցան ջարդերը եւ թէ իր ընտանիքին զլխէն ինչե՞ր անցած են: Ամբաստանեալը թող մաս առ մաս պատմէ. եւ յետոյ իր պատմածը թարգմանուի:

Ա.- 1914ին պատերազմը սկսաւ եւ հայ զինուորները զինակոչ եղան. իսկ 1915 Մայիս ամսին լուր տարածուեցաւ թէ դպրոցները պէտք են զոցուիլ եւ թէ քաղաքին մաճամեծները եւ ուսուցիչները խմբովին ուրիշ տեղ պիտի առաքուին:

Ն.- Որոշ տեղե՞ր կը համախմբուէին, արդեօք հաւաքատեղիներ՞:

Ա.- Չեմ գիտեր, կը համախմբուէին եւ ճամբայ կը հանուէին:

Ես երկիւղի մեջ էի, տնէն դուրս չէի ուզեր ելլել: Այս խումբերն արդէն տարուած էին, երբ լուր տարածուեցաւ թէ նախորդ տեղահանեալները արդէն սպանուած էին. յետոյ հեռագրով մը իմացանք թէ այս տեղահանեալներէն միայն մէկ հոգի՝ Մարտիրոսեանը, կենդանի մնացած էր:

Յունիսի սկիզբը հրաման ելաւ որ ժողովուրդը պատրաստուի քաղաքէն դուրս գալու. այն ակ ըսուեցաւ թէ դրամը եւ թանկարժէք առարկաները կարելի էր իշխանութիւններու քով պահեստի դնել: Երեք օր ետքը ժողովուրդն առաւօտը շատ կանուխ քաղաքէն դուրս հանուեցաւ:

Ն.- Մե՞ծ խմբերով:

Ա.- Երբ հրաման ելաւ որ ժողովուրդը քաղաքէն դուրս ելլէ, այն վայրկեանէն իսկ քաղաքէն դուրս ժողովուրդը որոշ խումբերու բաժնեցին եւ համախմբուեցին. յետոյ կարաւանի ձեւով եւ խումբերով յառաջ շարժեցին:

Ն.- Հրաման կա՞ր ունեցածը հետոն առնելու:

Ա.- Անկարելի էր ամենայն ինչ հետոն առնել. ձի, եւն. թըլլալուն պատճառով, այնչափ բան միայն կրնային առնել, որչափ որ իրենք կրնային տանիլ:

Ն.- Դուք կառք ունէի՞ք ձեր իրերն առնելու համար.

Ա.- Առաջ ձի մ'ունէինք, որ պատերազմին սկիզբն արդէն ձեռքերինէս առին. յետոյ էջ մը գնեցինք:

Ն.- Եւ այդ է՞ջը պիտի տանէր ձեր ամբողջ ունեցածը. հետերնիդ կառք չունէի՞ք:

Ա.- Եզան կառք մ'ալ ունէինք:

Ն.- Քանի՞ օր քալեցիք:

Ա.- Չեմ գիտեր. քաղաքէն ելած օրերնիս իսկ ծնողքս սպանուեցան:

Ն.- Ո՞ր կը տարուէիք:

Ա.- Դեպի հարաւ..

Ն.- Ո՞վ կ'ընկերանար կարաւանին:

Ա.- Ժանդարմներ, ձիաւոր եւ ուրիշ զինուորներ:

Ն.- Մե՞ծ թուով:

Ա.- Ճամբուն երկայնութեան՝ երկու կողմէն:

Ն.- Իսկ առջեւէն ու ետեւէ՞ն:

Ա.- Երկու կողմէն:

Ն.- Հսկելո՞ւ համար որ մարդ չհեռանայ:

Ա.- Այո՛:

Ն.- Ի՞նչպէս պատահեցաւ Ձեր ծնողաց, եղբայրուքոյրերու մահը:

Ա.- Երբ խումբը քաղաքէն քիչ մը հեռացաւ, կեցուցին. ժանդարմները սկսան կողոպտել եւ կ'ուզէին խումբին դրամը եւ մեծագին իրերը ձեռք բերել:

Ն.- Ուրեմն պահապան զինուորնե՞րն իսկ տեղահանեալները կը թալանէին:

Ա.- Այո՛:

Ն.- Եւ ինչ պատճառ կը տրուէր աղոր:

Ա.- (նշանակելից ձեռով մը) Այդ մասին բան չըսուեցավ ամբողջ աշխարհին այդ անբացատրելի է, սակայն Ասիայի խորերը հնարաւոր է:

Ն.- Ուրեմն այսպիսի բաներ տեղի կ'ունենան առանց պատճառները հասկանալի^օ ըլլալու:

Ա.- (ժպտալով) Այո', ըրին:

Ն.- Ուրիշ ազգերո՞ւ ալ:

Ա.- Թուրքերը միայն Հայոց հետ այս կերպ վարուեցան:

Ն.- Ի՞նչպէս սպանուեցան Ձեր ծնողքը:

Ա.- Կողոպուտի ժամանակ կարաւանին առջեւէն մեր վրայ կրակեցին. այդ միջոցին ժանդարմներէն մին քոյրս քաշեց տարաւ, ասոր վրայ մայրս սկսաւ պառալ. “Աչքերս կուրնան”: Այդ օրը այլ եւս չեմ կրնար յիշել, չեմ ուզեր որ այդ օրը յիշեցնեն ինձի. աւելի լաւ է որ մեռնիմ, քան թէ այդ օրը նկարագրեմ:

Ն.- Բայց ես Ձեզ ուշադիր կ'ընեմ թէ ատեանին համար շատ կարեւոր է, որ այս դէպքերը Ձեր բերնէն լսէ, վասն զի Դուք միակն էք որ այս դէպքիս վրայ կրնաք տեղեկութիւն տալ: Փորձեցէք ինքզինքնիդ ժողովել եւ անձին տէր ըլլալ:

Ա.- Ես չեմ կրնար այս ամէնն ըսել. ծասն զի ամէն անգամ կը վերապրիմ այդ ամէնը: Ամէնքը քաշեցին տարին եւ զիս ալ հարուածեցին. յետոյ տեսայ թէ ինչպէս եղբօրս գլուխը կացինով մը ճեղքեցին:

Ն.- Ձեր քոյրը, զոր քաշեցին տարին, ետ դարձա՞ւ:

Ա.- Այո', քոյրս քաշեցին տարին եւ բռնաբարեցին:

Ն.- Ետ եկա՞ւ:

Ա.- Ո՛չ:

Ն.- Ո՞վ ճեղքեց Ձեր եղբօր գլուխը կացինով:

Ա.- Հազիւ զինուորները եւ Ժանդարմները ջարդն սկսած էին, երբ վրայ հասաւ նաեւ խուժանը եւ այդ միջոցին կրտսեր եղբօրս գլուխը ճեղքեցին. իսկ մայրս ինկաւ:

Ն.- Ի՞նչ բանէ:

Ա.- Ձեմ գիտեր, գնդակէ մը թէ ուրիշ բանէ:

Ն.- Հայրերնիդ ո՞ր էր:

Ա.- Հայրս չտեսայ, նա աւելի յառաջ էր, բայց հոն ալ կթիւ կար:

Ն.- Դուք ի՞նչ ըրիք:

Ա.- Գլխիս հարուած մը ստացայ եւ գետին ինկայ. անկէ ետքը բանէ տեղեկութիւն չունիմ:

Ն.- Ջարդին տեղն ինկած մնացի՞ք:

Ա.- Թէ հոն որչափ մնացի չեմ գիտեր. գուցէ երկու օր. երբ աչքերս բացի, շուրջս դիակներով լի տեսայ, վասն զի ամբողջ կարաւանը սպանուած էր, մթութեան պատճառով ամէն բան չէի կրնար զանազանել: Իսկզբան չէի գիտեր թէ ո՛ր եմ. յետոյ սակայն իրականութիւնը հասկացայ թէ ամէն կողմս դիակ էր:

Ն.- Արդեօք մեռեալներու մէջ Ձեր ծնողաց եւ եղբայրուքոյրերու դիակներն ալ գտա՞ք:

Ա.- Մօրս դիակը տեսայ երեսին վրայ ինկած, իսկ եղբօրս դիակը իմ վրաս ինկած էր. աւելին չկրցայ ստուգել:

Ն.- Ի՞նչ ըրիք երբ աչքերնիդ բացիք եւ ոտքի ելաք:

Ա.- Երբ ոտքի ելայ, տեսայ թէ սրունքս վիրաւոր էր եւ թեւէս արին կը հոսէր:

Ն.- Գլխու վրայ վերք ունէի՞ք:

Ա.- Ամէնէն առաջ գլխուս հարուած մը ստացայ:

Ն.- Գիտէ՞ք արդօք թէ ի՞նչ բանով վիրաւորեցին Ձեզ:

Ա.- Երբ ջարդերն սկսան, գլուխս ձեռքերուս մէջ առի, այնպէս որ չէի կրնար գիտնալ, միայն գոչումը կը լսէի:

Ն.- Ըսիք նախ թէ պահապաններ, ժանդարմներ եւ ձիաւոր զինուորներ էին. բայց յետոյ ըսիք թէ խուժանն ալ վրայ հասաւ. ի՞նչ կ'ուզէք ըսել ասով:

Ա.- Երզնկայի թուրք բնակչութիւնը:

Ն.- Ուրեմն այդ թուրք բնակչութիւնը հոն հասած էր եւ կողոպուտին մասնակի՞ց եղաւ:

Ա.- Այսչափս միայն գիտեմ թէ երբ ժանդարմները ջարդը սկսան, ժողովուրդը վրայ հասաւ:

Ն.- Ուրեմն մէկ կամ երկու օր ետքը ուշքի եկաք եւ տեսաք թէ Ձեր եղբօր դիակին տակը մնացած էիք, չկրցաք արդեօք ստուգել թէ Ձեր ծնողաց դիակներն ալ հո՞ն էին:

Ա.- Երեց եղբօրս դիակը վրաս ինկած տեսայ:

Դատախազ - Կարծեմ կրտսերագոյն եղբայրնիդ էր, որուն գլուխը կացնով ճեղքած էին:

Ն.- Ձեր կրտսեր եղբոր դիաֆուն էր:

Ա.- Ո՛չ, երեցինը:

Ն.- Բայց Դուք տեսած էք Ձեր առջելը Ձեր կրտսեր եղբոր կացնի հարուած մ'ընդունիլը:

Ա.- Այո՛:

Ն.- Այն օրէն ի վեր Ձեր ծնողքն այլ եւս չէք տեսած:

Ա.- Ո՛չ:

Ն.- Իսկ եղբայրութայրէ՞ ըր:

Ա.- Ո՛չ, անոնք ալ չէ:

Ն.- Ուրեմն կորսուած, աներեւոյ՞ եղած են:

Ա.- Մինչեւ այսօր հետք մը չգտայ:

Ն.- Բայց Դուք այնպէս անօգնական եւ առանց միջոցի ի՞նչ ըրիք:

Ա.- Լեռներուն մէջ գիւղ մը գացի. հոն պառաւ մը զիս իր տունն առաւ, բայց երբ վերքերս բուծուեցան, ինձի ըսին թէ աւելի չէին կրնար պահել զիս, վասն զի կառավարութիւնն արգիլած էր, եւ անոնք որ իրենց քովը հայեր կը պահէին՝ մահուամբ կը պատժուէին:

Ն.- Ձեզ իրենց տունն ընդունողները հա՞յ էին:

Ա.- Ո՛չ, քուրդ:

Ն.- Իսկ անկէ ո՞ր անցաք:

Ա.- Շատ բարի մարդիկ էին այդ քուրդերը եւ ինձի խորհուրդ տուին որ Պարսկաստան անցնիմ. քրդական հինցած հագուստներ տուին ինձի, վասն զի իմ զգեստներս արիւնով լի էին, զանոնք այրեցի:

Ն.- Դուք ամէն միջոցէ զուրկ էիք, ուրեմն ինչն՞վ կ'ապրէիք:

Ա.- Գարեհացով:

Ն.- Վերքերու բուծումը ո՞րչափ տեւաց:

Ա.- Քսան օր կան մէկ ամիս:

Ն.- Անկէ ետքն ո՞ր երկար ատեն ապաստանարան գտաք:

Ա.- Նախ քուրդերուն քով:

Ն.- Ո՞րչափ ատեն ջարդը 1915ի յունիսին եղաւ:

Ա.- Գրեթէ երկու ամիս Տէրսիմի քուրդերուն մէջ մնացի. այդ միջոցին երկու ուրիշ փախստականներ ինձի միացան, որոնցմէ իմացայ թէ Խարբերդ ալ ջարդ եղած էր: Երեքս միասին լեռներու եւ գիւղերու մէջէն փախանք. օրեր եղան որ միայն խոտով ապրեցանք: Ընկերներէս մին՝ կ'երեւայ թէ թունաւոր խոտ մը կերած էր, ճամբան մեռաւ: Ընկերներէս երկրորդը բաւական կրթեալ մարդ էր եւ կ'ըսէր. “Եթէ այսպէս միշտ յառաջ քալենք, անշուշտ Պարսկաստան կը հասնինք եւ անկէ Կովկաս”: Ուստի մտքերնիս դրինք լեռներէ ու ձորերէ քալելով Պարսկաստան անցնիլ: Ցերեկը կը քնանայինք, իսկ գիշերը յառաջ կը քալէինք, այսպէս գրեթէ երկու ամիս քալած էինք, երբ տեղ մը հասանք, ուր ռուս զինուորներ կային: Մենք քուրդի զգեստով էինք, բայց ոչ կօշիկ ունէինք եւ ոչ ալ գլխարկ: Մեզ բռնեցին եւ հարցաքննեցին. ընկերս ֆրանսերէն եւ անգլիերէն գիտէր եւ ջարդերու պատմութիւնը պատմեց եւ ըսաւ թէ ես ջարդերէն ազատած էի, ասոր վրայ մեզ ազատ թողուցին: Ես կ'ուզէի Կովկաս անցնիլ, բայց թոյլ չտուին. այն ատեն Պարսկաստան անցայ, ուր պատերազմ չկար: Պարսկաստան հիւանդացայ եւ Սալմաստ մնացի. իսկ ընկերս Թիֆլիս գնաց. վերջէն ես ալ հոն անցայ եւ գրեթէ մէկ տարի մնացի:

Ն.- Հոն ի՞նչ կ'ընէիք:

Ա.- Հասնելուն պէս հայկական եկեղեցին գացի, հոն ինձի զգեստ, ուտելիք եւ դրամ տուին: Հոս ընկերս ինձմէ բաժանուեցաւ զիս վաճառականի մը յանձնելէն ետքը, իսկ վերջինս զիս իր խանութն առաւ:

Ն.- Հոն ո՞րչափ մնացիք:

Ա.- Մէկ տարի կամ քիչ մ'աւելի:

Ն.- Յետոյ ո՞ւր գացիք:

Ա.- Այն միջոցին լուր ելաւ թէ ռուսները Երզնկայ առած են, կ'ուզէի հոն երթալ ծնողքս եւ ազգականներս փնտռելու համար: Բաց աստի շատ լաւ գիտէի թէ մեր տունը դեռ դրամ կարգայն կ'ուզէի առնել: Իսկ տէրս կը ջանար զիս ետ կեցնել:

Ն.- Երզնկայ ե՞րբ հասաք:

Ա.- 1916ի վերջերը:

Ն.- Հոն ի՞նչ գտաք:

Ա.- Երբ հոն հասայ, բոլոր դռները խորտակուած գտայ, տան մէկ մասը կործանուած էր, իսկ երբ տունը մտայ՝ գետին ինկայ:

Ն.- Ուշաթա՞փ եղաք:

Ա.- Այո՛, ուշաթափուեցայ:

Ն.- Այս անգգայ վիճակը երկայ տեւե՞ց:

Ա.- Չեմ կրնար ըսել թէ որչափ երկար:

Ն.- Երբ ուշքի եկաք՝ ի՞նչ ըրիք:

Ա.- Երբ ուշքի եկայ, երկու իսլամացած ընտանիքներու գացի, ասոնք ամբողջ քաղաքին մէջ միակ ազատածներն էին:

Ն.- Ուրեմն Դուք միայն երկու ընտանիք գտաք քաղաքին նախկին հայ ազգաբնակութենէն, որոնք իսլամացած էին. իսկ երբ ռուսները Երզնկան գրաւեցին, դարձեալ քրիստոնեա՞յ եղած էին եւ իրենք զիրենք քրիստոնեա՞յ կը զգային: Ուրեմն Երզնկայի ազգաբնակչութենէն մնացածն ա՞յս էր միայն:

Ա.- Այո՛, այս երկու ընտանիքն էին եւ ասդին անդին քանի մը առանձնականներ, ընդ ամէնը քսան հոգի, բայց միայն երկու ընտանիք:

Ն.- Ձեր հօրեկան տան մէջ ուրիշ բան մը գտա՞ք:

Ա.- Գտայ քանի մը իրեր. մնացածը թալանուած եւ այրած էր. գտայ նաեւ պահուած դրամը:

Ն.- Այդ Ձեր ծնողքե՞ն գիտէիք:

Ա.- Երկու եղբայրներս, հայրս եւ մայրս եւ ես գիտէինք դրամին տեղը. քոյրերս չէին գիտեր:

Ն.- Որչա՞փ դրամ գտաք:

Ա.- 4800 թրքական ոսկի:

Ն.- Այդ դրամն առի՞ք:

Ա.- Ի հարկէ:

Ն.- Անկէ ետքն ո՞ւր գացիք:

Ա.- Քիչ մը ժամանակ դեռ հոն մնացի. վասն զի յոյս ունէի թէ դեռ աւելի թուով տարագրեալներ ազատած կ'ըլլան. եւ հնարաւոր կը համարէի թէ գուցէ ազգականներէս մէկուն կրնայի հանդիպիլ:

Ն.- Ո՞րչափ մնացիք Երզնկայ:

Ա.- Գրեթէ մէկ ու կէս ամիս:

Ն.- Անկէ ո՞ւր անցաք:

Ա.- Թիֆլիս:

Ն.- Հոն ի՞նչ ըրիք:

Ա.- Հոն դպրոց յաճախեցի ռուսերէն սորվելու համար:

Ն.- Ո՞ր դպրոցը:

Ա.- Հայկական դպրոց մը՝ Ներսիսեան, այդ տեղ գաղթականներու եւ ազատեալներու համար բաժին մը բացած էին, ուր կարելի էր ուսանել:

Ն.- Այդ տեղ ռուսերէն սորվեցա՞ք:

Ա.- Հինգ ամսուան մէջ որչափ որ սորվիլ կարելի էր: Շատ բան մը չկրցայ սորվիլ, վասն զի խելքս գլուխս չէր եւ միշտ ցրուած էի:

Ն.- Յետոյ Ֆրանսերէ՞ն ալ սորված էք:

Ա.- Սորվեցայ, բայց յուսացածիս չափ ոչ:

Ն.- Ո՞րչափ մնացիք Թիֆլիս:

Ա.- Մօտաւորապէս երկու տարի:

Ն.- Ե՞րբ ելաք Թիֆլիսէն:

Ա.- 1919ի սկիզբը, կարելի է փետրուարին:

Ն.- Ո՞ւր գացիք:

Ա.- Կ.Պոլիս:

Ն.- Հոն ի՞նչ ըրիք:

Ա.- Լրագրի մէջ յայտարարութիւններ դրի եւ կը կարծէի այդ կերպով ազգականներս գտնել, որոնք գուցէ Միջագետքէն փախած ազատած էին:

Ն.- Այդ ժամանակ արդէն Կ.Պոլիս մեծ յեղաշրջում մը տեղի ունեցած էր. ո՞րչափ մնացիք Կ.Պոլիս:

Ա.- Գրեթէ երկու ամիս:

Ն.- Անկէ ո՞ւր անցաք:

Ա.- Սալոնիկ:

Ն.- Իսկ անկէ՞:

Ա.- Սերբիա:

Ն.- Անկէ՞:

Ա.- Դարձեալ Սալոնիկ:

Ն.- Անկէ՞:

Ա.- Անկէ Պարիս:

Ն.- Կենաց որոշ ծրագիր մը չունէի՞ք. ինչո՞ւ համար էր այս թափառական կեանքը:

Ա.- Ես ուսանիլ կ'ուզէի, բայց միտքս միշտ խառնաշփոթ էր եւ չէի ուզեր տեղ մը հաստատուիլ, վասն զի որ եւ է որոշ կոչման յակում չունէի:

Ն.- Սալոնիկ եւ Սերբիա դպրոց յաճախեցի՞ք եւ կը սորվէի՞ք:

Ա.- Ոչ. Սալոնիկ ազգականներու գացի՝ բժշկուելու համար:

Ն.- Բ՞նչ հիւանդութիւն ունէիք:

Ա.- Ջղային բռնկումներ:

Ն.- Քանի՞ անգամ կրկնուած են այն բռնկումները, զորս ունեցաք առաջին անգամ, երբ Ձեր հայրենի տունը վերստին տեսաք:

Ա.- Երզնկայ երկու անգամ ունեցայ, բայց չեմ կրնար ըսել թէ ինչպէս էին այդ բռնկումները. ամէն անգամ որ ջարդերու պատկերներն աչքիս առջեւ կը պատկերանային այդ բռնկումները կ'ունենայի:

Ն.- Սերբիա, Կ. Պոլիս եւ Սալոնիկ եղած ատեննիդ այսպիսի բռնկումներ ունեցա՞ք:

Ա.- Այո՛:

Ն.- Պարիս ե՞րբ անցաք:

Ա.- 1920ին:

Ն.- 1920ի սկի՞զբը:

Ա.- Այո՛:

Ն.- Կ. Պոլիս, Սալոնիկ եւ Սերբիա շատ յարաբերութիւններ ունէի՞ք:

Ա.- Այո՛, ազգականներու հետ:

Ն.- Ազգականներու եւ տարագրեալներու հետ այս դէպքերուն վրայ խօսած է՞ք եւ արդեօք ասով անոնց յիշատակը Ձեր մէջը վերակենդանացած է:

Ա.- Այո՛, անոնց վրայ շատ կը խօսէի:

Ն.- Այս խժողովություններու հեղինակը ո՞վ կը համարուէր:

Ա.- Խժողովություններու հեղինակներու ո՞վ ըլլալը իմացայ լրագիրներէն, Կ. Պոլիս եղած ժամանակս:

Ն.- Աւելի առաջ գիտէի՞ք թէ ո՞վ էր այս ջարդերուն հեղինակը, կամ Ձեր հայրենի տան մէջ ո՞վ կը համարուէր հեղինակը:

Ա.- Այդ մասին բան մը չէի գիտեր:

Ն.- Ե՞րբ այն համոզման եկաք թէ Թալէաթ փաշան էր անոնց հեղինակը:

Ա.- Կ. Պոլիս եղած ժամանակս լրագիրներէն այդ համոզման եկայ:

Ն.- Արդեօք տեղեկութիւն մը առի՞ք թէ այդ ժամանակ Թալէաթ փաշան ո՞ր կը գտնուէր:

Ա.- Կ. Պոլսոյ մէջ՝ ո՞չ. կը կարծէի թէ Կ. Պոլիս է եւ տեղ մը ծածկուած է:

Ն.- Այն ժամանակ արդէն մտքերնիդ դրի՞ք որ վրէժ լուծէք այն մարդէն, որ Ձեր ընտանեաց տխուր բախտին մեղապարտն էր:

Ա.- Ո՛չ:

Ն.- Լաւ է, կարծեմ այժմ կարդալ բացման վճիռը:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալին այս ալ կ'ուզէի հարցնել, թէ արդեօք լրագիրներուն մէջ կարդացած էր որ Թալէաթ փաշան այս խժողովություններու համար Կ. Պոլիս զինուորական ատեանէն մահուան դատապարտուած էր:

Ա.- Կարդացած էի եւ Կ. Պոլիս կը գտնուէի, երբ ջարդերու հեղինակներէն Քէմալ կախաղան հանուեցաւ. լրագիրներն այդ միջոցին գրեցին թէ Թալէաթ եւ Էնվեր փաշան ալ մահուան դատապարտուած են:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Երզնկայի մէջ որչա՞փ հայ բնակչութիւն կար:

Ա.- Գրեթէ քսան հազար:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Յունիսի սկիզբը հրաման ելա՞ւ կամ կարգադրութիւն եղա՞ւ որ բոլոր հայերը խումբերով եւ հինգ վեց հոգի մէկ կարգ տեղահանուին:

Ա.- Այո՛, այդպիսի հրաման մը ելաւ:

Դատախազ.- Գիտէ՞ք թէ որմէ՛ ելաւ այդ հրամանը, վալիէ՞ն թէ զինուորական վարչութենէն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Այս միջոցին արդէն պաշարման վիճակ յայտարարուած էր:

Ա.- Կ'ըսուէր թէ հրամանը Կ. Պոլսէն եկած էր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ո՞րչափ երկարութիւն ունէր կարաւանը, մէ՞կ ժամու:

Ա.- Չեմ գիտեր, գուցէ հինգ ժամու:

Պ.- Բոլոր բնակչութի՞ւնը տեղահանուեցաւ եւ դուրս քշուեցաւ, եւ Ձեր Երզնկայ վերադարձին միա՞յն երկու ընտանիք եւ քանի մը հոգի գտաք:

Ա.- Այո՛:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Խնդրեմ հարցուցէք ամբաստանեալին թէ գիտե՞ արդեօք որ 1908ին հայերը երիտասարդ թուրքերու, իմասնաւորի Թալէաթ եւ Էնվեր փաշայի հետ միացած յեղափոխութիւնը յառաջ բերին եւ իրենց ազգային յոյսերը անոնց վրայ դրած էին, բայց յետոյ զարհուրելի կերպով յուսախաբ եղան, երբ տեսան թէ երիտասարդ թուրքերը սուլթան Ապտուլ Համիտէ աւելի վատ կը վարուէին:

Ա.- 1908 ին եւ դեռ շատ փոքր էի եւ խելքս չէր հասներ. բայց երբ քիչ մը հասակս առի եւ խելահաս եղայ, ինձի պատմեցին թէ հայերը երիտասարդ թուրքերու հետ գործակցած էին եւ թէ յետոյ անոնք չափազանց յուսախաբ եղած էին, երբ 1909ին Ատանայի մէջ ջարդեր կատարուած էին եւ 40.000 հոգի զոհ գացած էր անոնց:

Նախագահ.- Ես կը բաղձամ նախ բացման վճիռը կարդալ տալ:

Ատենադպիրը. (կը կարդայ բացման վճիռը.)

Մեքենականութեան ուսանող համարեալ՝ Սողոմոն Թէիլիբեանը- ծնած 2 ապրիլ 1897 Բագադիճ, թրքահպատակ եւ հայ-բողոքական՝ որ Շարլոտտենբուրգ, Հարդէնբերգ փողոց 37, Դիտմանի քով կը բնակէր եւ 1921 մարտ 16 էն ի վեր բանտ կը գտնուի,

Կ'ամբաստանուի՝

1921 մարտ 15 ին Շարլոտտենբուրգի մէջ թրքական նախկին մեծ եպարքոս Թալէաթ փաշան դիտմամբ սպաննելուն եւ սպանութիւնը խորհրդածութեամբ կատարած ըլլալուն համար:

Ոճրագործութիւն՝ ըստ պատժական օրինագրքի 211րդ յօդուածի.

Յիշեալ հիմունքներու վրայ բանտարկութիւնը կը շարունակուի:

Բերլին, 16 ապրիլ 1921.

Նահանգային Գ. դատարան. պատժոյ 6րդ սենեակ:

Նախագահ.- (թարգմանին) Հաղորդեցէք ամբաստանեալին թէ բացման վճիռը զինքը կը մեղադրէ Թալէաթ փաշան խորհրդածութեամբ սպաննած ըլլալուն համար:

Ամբաստանեալը կը լռէ.

Ն.- Եթէ այս մեղադրանքին այ՛ն կամ ոչ ըսելով պատասխանելու ստիպուէնք, ի՞նչ պատասխան պիտի տայիք:

Ա.- Ո՛չ:

Ն.- Բայց նախապէս ուրիշ կերպ կը վարուէնք. Դուք կ'ընդունէիք թէ այդ գործը խորհրդածեալ կատարած էիք:

Ա.- Ե՞րբ ըսած եմ այդ:

Ն.- Ուրեմն այսօր չէ՞ք ուզեր ըսած ըլլալ: Բայց հետեւինք դէպքերուն Պարիսէն ասդին: Դուք զանազան առիթներու մէջ եւ զանազան ժամանակներ խոստովանած էք թէ Թալէաթ փաշան սպաննելու որոշումն ըրած էիք:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Խնդրեմ հարցուցէք ամբաստանեալին թէ ինչո՞ւ արդեօք ինք զենքը յանցաւոր չի համարիր:

Նախագահը սոյն հարցումը կ'ուղղէ ամբաստանեալին:

Ա.- Ինք զինքս յանցաւոր չեմ համարիր, վասն զի խիղճս հանգիստ է:

Ն.- Խղճերնիդ ինչո՞ւ հանգիստ է:

Ա.- Մարդ մը սպաննած եմ, բայց մարդասպան չեմ:

Ն.- Կ'ըսէ՞ք թէ խղճի խայթ չունիք, Ձեր խիղճը մաքո՞ւր է. Դուք Ձեզ չէ՞ք յանդիմաներ: Բայց հարցուցէք Դուք Ձեզի- Արդեօք Թալէաթ փաշան սպաննել կ'ուզէի՞ք:

Ա.- Այս հարցումը չեմ հասկնար. բայց ես զինքն արդէն սպաննած եմ:

Ն.- Կ'ուզեմ ըսել թէ զինքն սպանելու ծրագիր ունէի՞ք:

Ա.- Ես որ եւ է ծրագիր չունէի:

Ն.- Ե՞րբ արթնցաւ Ձեր մէջ այդ գաղափարը:

Ա.- Դէպքէն գրեթէ երկու շաբաթ առաջ, ինք զինքս շատ վատ կը զգայի եւ ջարդերու պատկերները դարձեալ աչքերուս առջեւ կը նկարուէին: Մօրս դիակը տեսայ. այդ դիակը ոտքի ելաւ եւ առջեւս կանգնեցու եւ ըսաւ ինձի. Դու տեսար թէ Թալէաթ հոս է եւ անըարբէ՞ր կը մնաս. դու այլ եւս իմ զաւակս չես:

Ն.- (Այդ խօսքը կրկնելով երդուեալներուն.) Իսկ Դուք ի՞նչ ըրիք:

Ա.- Յանկարծ արթնցայ եւ որոշեցի այդ մարդը սպաննել:

Ն.- Պարիս եւ Ժընեվ եղած ժամանակնիդ եւ կամ երբ Բերլին եկաք այդ որոշումն արդէն չէի՞ք ըրած:

Ա.- Որ եւ է որոշում չէի տուած:

Ն.- Ընդհանրապես գիտե՞ք արդեօք թե Թալեաթ փաշան Բերլին է:

Ա.- Ո՛չ:

Ն.- Ամբողջ 1920 տարին Պարիս մնացի՞ք:

Ա.- Այո՛:

Ն.- Հոն ի՞նչ կ'ընէիք. ֆրանսերէ՞ն սորվեցաք:

Ա.- Այո՛:

Ն.- Ուրիշ ոչի՞նչ. արուեստագիտական ուսում չէի՞ք ըներ:

Ա.- Ո՛չ, ուրիշ որ եւ է զբաղմունք չունէի:

Ն.- Բայց Դուք ծրագիր ունէի՞ք Բերլին այդ ուսմանց հետեւելու:

Ա.- Այո՛:

Ն.- Ժընէվը օգտագործեցիք՝ Բերլին աւելի դիւրութեա՞մբ անցնելու համար:

Ա.- Ժընէվ ալ անգամ մը տեսնել կ'ուզէի:

Ն.- Պարիս հայրենակիցի մը հե՞տ էիք. պատմեցէք թէ ի՛նչպէս ժընէվ հասաք եւ անկէ Բերլին:

Ա.- Ժընէվ երթալու համար զուիցերական հիւպատոսարանէն “վիզա” հարկաւոր էր. հոն մարդու մը պատահեցայ, որ թէեւ զուիցերական հպատակ՝ բայց հայ էր եւ ժընէվ բնակարան մ'ունէր: Հարցուցի անոր թէ ի՞նչ կերպով կրնայի “վիզա” ստանալ. ըսաւ թէ “վիզա” ստանալու համար ամենէն լաւն է եթէ ես իրեն ժընէվ ունեցած բնակարանն առնէի, վասն զի ինքը Հայաստան կ'ուզէր երթալ: Յանձն առի, եւ իր տանտիկնոջ յանձնարարական մը տուաւ, զոր գործածեցի: Նոյեմբեր 21ին Պարիսէ ժընէվ անցայ. ժընէվ միայն կարճ ժամանակ կեցայ եւ Բերլին եկայ, եւ մօտաւորապէս 1920ի դեկտեմբերի սկիզբը Բերլին էի:

Ն.- Ի՞նչ քայլեր առիք հոս գալու համար:

Ա.- Անցագիրս “վիզա” ընել տուի:

Ն.- Դուք ի սկզբան միայն կա՞րճ ժամանակով Գերմանիա մտնելու իրաւունք ունէիք:

Ա.- Միայն ութ օրուան համար:

Ն.- Հոս հասնելէն ետքը Բերլին ո՞ր կողմը գացիք:

Պաշտպան Դր. Նիմայեր.- Կը ներուի՞ ինձի ամբաստանեալին անձնական հայող հարցում մ'ընել:-
Գիտէ՞ք թէ ի՛նչ հպատակ էք, ի մասնաւորի մարտ15ին. գիտէ՞ք թէ ի՛նչ հպատակ էր Թալէաթ
փաշան. գիտէ՞ք թէ 1921 փետրուարէ սկսեալ Թուրքիա Հայ Հանրապետութեան հետ պատերազմի
մէջ է, եւ թէ այդ կոիւր իր բարձրակէտը հասած էր մարտ 1էն մինչեւ 1 ապրիլ, 1921, տարածուելով
120 հազարամետրի վրայ:

Ա.- Այո՛, գիտեմ:

Ն.- Ուսկի՞ց գիտէք:

Ա.- Լրագիրները գրած էին:

Ն.- Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ պատարագմական դրութիւնը մարտ մէկէն սկսեալ միայն
գոյութիւն ունէր, իսկ դէպքը պատահեցաւ մարտ 15ին. ա՞յդ ժամանակամիջոցին կարդացիք:

Ա.- Այո՛, լրագիրներու մէջ:

Ն.- Երբէ՞ն ի վեր պատերազմը սկսած է:

Ա.- 1918ի վերջերը. Թուրքերը մինչեւ Թիֆլիս եկան:

Ն.- Կ'ուզեմ ըսել թէ պաճօնական պատերազմի յայտարարութիւն եղա՞ծ է:
Պաշտպան Դր. Նիմայեր.- Կատարելապէս:

Ն.- Ուրեմն մարտ 1 էն սկսեալ Մեծամասնականները եւ երիտասարդ թուրքերը ուս ուսի
Հայաստանի դէմ կը կռուին: Գիտէի՞ք արդեօք, ամբաստանեա՛լ, թէ Հայաստանի դէմ այդ
մեծամասնական թրքական արշաւանքը Մոսկուայէ օժանդակած էր Էնվեր փաշան եւ թէ տեղին
վրայ պատերազմը կը ղեկավարէր:

Ա.- Այո՛, այդ ալ գիտէի:

Իրագեկ Դր. Լիպման.- Խնդրեմ հարցնէիք թէ մայրը երգի՞ մէջ թէ կիսարթուն վիճակի մէջ երեւցած
է:

Ն.- Դեռ կ'անդրադառնամ:- Իսկզբան ութ օր միայն մնալու հրաման ունէիք եւ յետոյ մշտապէս հոս
մնալու թոյլտուութիւն ստացա՞ք:

Ա.- Այո՛, խնդրագիր մը տուած էի:

Ն.- Յունուարի սկիզբը Աուգսբուրգէր փողո՞ց 51 տեղափոխուեցաք:

Ա.- Դեկտեմբերին:

Ն.- Ոստիկանատունը ծանուցուած էք յունուարին. Հոն Ձեր հայրենակիցը Աբելեա՞նը կը բնակէր:

Ա.- Այո՛:

Ն.- Յետոյ բնակարաննիդ դարձեա՞լ փոխեցիք:

Ա.- Այո՛:

Ն.- Ե՞րբ:

Ա.- Գրեթէ երկու շաբաթ առաջ:

Ն.- Մարտ 5ին տիկին Դիտմանի քով անցած էիք, ի՞նչ էր պատճառը:

Ա.- Երբ մայրս երեւցաւ ինձի, որոշեցի Թալէաթը սպաննել. այս պատճառով ալ բնակարանս փոխեցի:

Ն.- Այնպէս ըսելու համար դէպքը կը նախապատրաստէի՞ք:

Ա.- Մօրս ինձի պատուիրելէն ետքն երկրորդ օրն՝ ինքն իրենս ըսի թէ պէտք եմ զինքը սպաննել:

Ն.- Եւ այդ վայրկեանէ՞ն սկսեալ կը ջանայիք այդ որոշումը ի գործ դնել:

Ա.- Երբ նոր բնակարանս անցայ, քիչ մը մոռացութեան տուի մօրս ըսածը:

Ն.- Մոռացութեա՞ն տուիք. բայց ես կարծեմ միայն անոր համար նոր բնակարանը վարձեցիք, վասն զի Ձեր մայրը Ձեզ յանդիմանած էր թէ Դուք անտարբեր էիք:

Ա.- Այդ միջոցին մտմտուքս բռնեց եւ ես ինք իրենս կ'ըսէի, թէ ի՞նչպէս կրնաս մարդ մը սպաննել:

Ն.- Դուք Ձեզի կը հարցնէիք թէ ի՞նչպէս ի վիճակի պիտի ըլլայիք Թալէաթ փաշան սպաննելու:

Ա.- Ես ինք իրենս կ'ըսէի թէ ի վիճակի չեմ մարդ մը սպաննելու:

Ն.- Ես այս լաւ չեմ հասկնար. քիչ մը առաջ պատասխանեցիք թէ այն օրէն ի վեր մտքերնիդ դրած էիք Հարդենբերգ փողոցը փոխողորուիլ, ուրեմն զիտէի՞ք թէ Թալէաթ փաշան դիմացը կը բնակէր:

Ա.- Այո՛:

Ն.- Ուրեմն Դուք մտադրած էիք անոր մօտէ՞րն ապրիլ:

Ա.- Մօրս այն խօսքերը ըսելէն ետքը:

Ն.- Այն ժամանակ որոշում տուիք, ի՞նչ որոշում էր այդ:

Ա.- Թէ կ'ուզեմ զանիկա սպաննել:

Ն.- Ըսէք խնդրեմ, ճի՞շդ է որ ասկէ յառաջ արդէն ստուգած էիք թէ Թալէաթ փաշան Բերլին կը գտնուէր:

Ա.- Այո՛, մօտաւորապէս հինգ շաբաթ առաջ զինքը տեսած էի:

Ն.- Ո՞ւր:

Ա.- Փողոցի վրայ. ըւրիշ երկու երիկ մարդու հետ կենդանաբանական պարտեզի կողմերէն կու դար. լսեցի որ թուրքերէն կը խօսէին եւ մէկուն “փաշա” տիտղոսը կու տային ետ դարձայ եւ տեսայ թէ այդ մարդը Թալէաթ փաշան էր: Անոնց ետեւէն գացի մինչեւ շարժապատկերի դռան առջեւէն տեսայ թէ միւս մարդիկներէն մին հեռացաւ, Թալէաթի ձեռքը համբուրեց եւ “փաշա” տիտղոսը տուաւ. իսկ միւս երկուքն ալ տուն մը մտան:

Ն.- Արդեօք այդ վայրկեանի՞ն արդէն Թալէաթը սպաննելու գաղափարն ունեցա՞ք:

Ա.- Այդ գաղափարը չունեցայ. կայց ինք զինքս գէշ կը զգայի եւ շարժապատկերին մէջ կարծես թէ ջարդերու բոլոր պատկերները վերակենդանացան իմ առջեւ, ելայ անկէ եւ տուն գացի:

Ն.- Ուրեմն, ինչպէս ըսիք, այս Ձեր Հանդէսբերոց փողոցը փոխադրուելէն 4 – 5 շաբաթ առաջ՞ պատահած էր:

Ա.- Այո՛:

Ն.- Ստոյգ չե՞՞ ուրեմն թէ Դուք աւելի առաջ արդէն իմացած էիք թէ Թալէաթ փաշան Բերլին կը գտնուէր:

Ա.- Ո՛չ:

Ն.- Այս հարցումն ուղղեցի եւ, վասն զի անբաստանեալը ուրիշ առթիւ մը յայտարարած էր, թէ Բերլին անոր համար եկած էր, որովհետեւ ուսանիկ կ’ուզէր եւ իմացած ալ էր որ Թալէաթ Բերլին կը գտնուէր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալին այսօր ըսածը մօտաւորապէս կը համապատասխանէ իր վերջին անգամ ըրած յայտարարութիւններուն, թէ դէպքէն 2 շաբաթ առաջ իր մօր ոգւոյն երեւալուն վրայ է որ Թալէաթ սպաննելու որոշում յղացաւ, եւ այս պատճառով ալ Հարդէսբերոց փողոցը փոխադրուեցաւ:

Ա.- Այո՛:

Ն.- Այդ վարկեանէն սկսեալ արդեօք Թալէաթ փաշայի ըրածն ու թողածը հետապնդելը եւ վերահսկելը Ձեր բան ու գործը չըրի՞ք:

Ա.- Ո՛չ. երբ նոր բնակարանս անցայ, միտքս դրած էի իմ առօրեայ սովորական գործերովս զբաղիլ:

Ն.- Ուրեմն Դուք ի վիճակի էիք Ձեր սովորական գործերովը զբաղելու, շարունակելու Ձեր դասերը Օր. Բայրընզոնի եւն քով:

Ա.- Իսկզբան փորձեցի ուսումնական առաջ տանիլ: Պրոֆ. Կասիրերի գացած ժամանակս այն աստիճան վատ եւ տկար կը զգայի ինք զինքս, որ շատ չէի կրնար աշխատիլ. անոր համար ալ Օր. Բայրնզոնի ըսի այլ եւս չեմ կրնար դաս առնել, վասն զի հանգստեան պէտք ունէի եւ իրապէս ալ վերջին ժամանակները այլ եւս ուսման չէի հետեւեր:

Ն.- Ձեր՝ հայրենակիցներու հետ ունեցած յարաբերութիւնները մինչեւ մարտ 15 սովորական ձեւով շարունակեցի՞ք:

Ա.- Այո՛:

Ն.- Ձեր մայրը ուրիշ անգամներ ալ երեւցա՞ւ Ձեզի:

Ա.- Չարդերը եւ անոնց պատկերները շատ անգամ կը նկարուէին աչքերուս առջեւ, իսկ մայրս քիչ անգամ միայն:

Ն.- Ե՞րբ կ'ունենայիք այդ տեսիլները, ցերե՞կը:

Ա.- Ո՛չ, գիշերը:

Ն.- Ի՞նչ պատճառով ժամանակին Պրաֆ. Կասիրերի դիմած էիք:

Ա.- Ինք զինքս շատ վատ կը զգայի:

Ն.- Հոս՝ Բերլինի մէջ ալ ջղային նոպաներ ունեցաք, այնպէս չէ՞:

Ա.- Քանի մը:

Ն.- Առաջին անգամ ե՞րբ:

Ա.- Ճիշտ չեմ կրնար ըսել:

Ն.- Ե՞րբ էր այն բռնկումը, որուն միջոցին դրանատան պաշտոնեայ մը Ձեզ վեր վերցուց եւ Երուսալէմէր փողոցէն տուն տարաւ:

Ա.- Այդ Բերլինի մէջ առաջին բռնկումն էր:

Ն.- Այն միջոցին դեռ Աուգսբուրգէր փողոցը կը բնակուէիք:

Ա.- Այո՛

Ն.- Ի՞նչպէս պատահեցաւ այս առաջին բռնկումը:

Ա.- Երուսալէմէր փողոցէն կը քալէի, չեմ գիտեր թէ դռա՞ն առջեւ թէ փողոցին մէջ ինկայ, երբ արթնացայ տեսայ որ բազմութիւն մը չորս դիս պատած էր, ինձի դեղ մը տուած էին. պաշտօնեայ մը հարցուց թէ ո՛ր կը բնակէի եւ մինչեւ ստորերկրեայ երկաթուղին ընկերացաւ. հոն երկաթուղի մտայ, եւ երբ տուն հասայ՝ սանդուխին վրայ դարձեալ ինկայ:

Ն.- Ինչո՞ւ համար Պրոֆ. Կասիրերի գացիք, այս անկումներո՞ւն համար թե՛ որ եւ է ուրիշ հիւանդութիւն մ'ունէիք:

Ա.- Խնամուելու համար:

Ն.- Այս անկումը Ձեր հայրենակից Աբելեանի պատմեցի՞ք եւ արդեօք անո՞ր խորհրդին վրայ Պրոֆ. Կասիրերի դիմեցիք: Բայց այդ մասին կը լսենք, երբ վկաները հարցաքննուին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Քիչ մը առաջ նկատողութիւն մը լաւ չհասկցայ: Արդեօք ճի՞շտ հասկցած եմ, թե՛ ամբաստանեալը, Թալէաթի մօտ ըլլալու համար Հարդենբերգ փողոցի բնակարանը վարձելէն ետքն ալ, ժամանակ մը այդ դիտաւորութիւնը մոռացութեան տուած է, վասն զի սկսած է մտածել թե՛ մարդ սպաննել չըլլար. մէկ խօսքով, արդեօք այն որոշումը, գոր ըրած էր մօրն երեւնալուն, իր մէջ հաստատ մնացած է թե՛ ժամանակ մը մոռացած է զայն եւ իր սովորական գործերով պարապած, վասն զի կը մտածէր թե՛ մարդ սպաննել չըլլար:

Նախագահ.- Ըսաւ թէ իր որոշման մէջ կը տատամսէր:

Ամբաստանեալ.- Այդպիսի տատամսումներ կ'ունենայի. երբ ինք զինքս վատ կը զգայի, միտքս կը դնէի մօրս պատուէրը գործադրել. բարց երբ ինք զինքս լաւ կը զգայի կ'ըսէի ինք իրենս. մարդ սպաննել չըլլար:

Ն.- Ուրեմն ամբաստանեալն իր սովորական կեանքը առաջ տարած է, թէեւ քիչ մը դժուար կու գար իրեն: Ծանօթներու յարաբերութեան մէջ ալ որ եւ է փոփոխութիւն չէ՞ր նկատուէր. որո՞նք էին Ձեր ծանօթները:

Ա.- Թերզիպաշեան, Էֆթեան, Գալուստեան, Աբելեան:

Ն.- (Թարգմանին) Դո՞ւք ալ:

Զաքարեանց.- Այո՛:

Ն.- Յունուարէն ասդին Օր. Բայլըզունէ դաս առնելէն զատ ուրիշ ի՞նչ կ'ընէիք:

Ա.- Հայ ընտանիքներու կ'այցելէի, թատրոն եւ պարահանդէսներ կը յաճախէի:

Ն.- Կարծեմ պարի՞ ալ դաս կ'առնէիք:

Ա.- Այո՛:

Ն.- Ե՞րբ:

Ա.- Յունուարէն սկսեալ:

Ն.- Արդեօք ճշմարիտ է թե՛ այս պարի դասերու ժամանակ ալ անգամ մը վերնոտ նոպայ մ'ունեցած էք:

Ա.- Այո՛:

Ն.- Ճշմարիտ է արդեօք թե՛ յունուարին ալ այդպիսի նուպայ անցուցած էք. արդեօք այս նո՞յն է անոր հետ, զոր դրամատունն դարձած ատեն ունեցած էք, թե՛ աւելի վերջը պատահած է:

Ա.- Այո՛:

Ն.- Այս երկու- մին պարի դասի ժամանակ եւ միւսը փողոցի վրայ- նուպաներէն զատ ուրիշ ալ ունեցա՞ծ էք:

Ա.- Այո՛, տունը:

Ն.- Միայն տո՞ւնը, փողոցի վրայ չէ՞:

Ա.- Ո՛չ:

Ն.- Ուրիշ ի՞նչ կ'ընէիք:

Ա.- Թերզիպաշեանի, Էֆթեանի եւ Աբէլեանի հետ մտերմական յարաբերութեան մէջ էի:

Ն.- Թատրոն կը յաճախէի՞ ք:

Ա.- Այո՛, բայց աւելի շարժապատկերի կ'երթայի:

Ն.- Օրը ո՞րչափ կը զբաղէիք:

Ա.- Առաւօտը լեզուներով կը զբաղէի եւ Օր. Բայլընզոնի քով դաս կ'առնէի:

Ն.- Ո՞ւր կ'ուտէիք:

Ա.- Որոշ ճաշարան մը չունէի:

Ն.- Կէտրէն ետքն ալ դաս ունէի՞ ք:

Ա.- Մեծ մասամբ միայն կէսօրէն ետքն էին դասերս:

Ն.- Լեզու սորվելէն զատ, արուեստագիտական ուսումներով ալ կը զբաղէի՞ ք:

Ա.- Ո՛չ. միշտ լեզուներով կը պարապէի:

Ն.- Ի՞նչ լրագիրներ կը կարդայիք:

Ա.- Հայերուն քով հայ թերթեր կը գտնէի եւ կը կարդայի:

Ն.- Ուրիշ օտարերկրեայ լրագիրներ չէի՞ ք կարդար:

Ա.- Մէկ երկու անգամ ռուսերէն լրագիրներ ձեռքս ինկան:

Ն.- Դառնանք դարձեալ մինչեւ մարտ ամիսը, երբ Տիկին Դիտմանի քով փոխադրուած էիք. Ձեր նախորդ տանտիկնոջ, տիկին Շտելբաումի հետ ի՞նչպէս էիք:

Ա.- Իրեն հետ շատ լաւ էի:

Ն.- Տիկին Դիտմանի քով ալ գո՞հ էիք:

Ա.- Այո՛:

Ն.- Ի՞նչպէս եղաւ որ սպանութիւնն ըրիք:

Ա.- Վասն զի մայրս ըսած էր, ադոր վրայ կը խորհէի եւ երբ մարտ 15ին Թալէաթը տեսայ...

Ն.- Ո՞ւր տեսաք զինքը:

Ա.- Սենեակիս մթջ քալելով կը կարդայի եւ ոեսայ թէ Թալէաթ տնէն դուրս կ'ելլէր:

Ն.- Տեսաք թէ Թալէաթ դո՞ւրս կ'ելլէր:

Ա.- Նախ տեսայ զինքն իր բնակարանը պատշգամի վրայ, բայց յետոյ դուրս ելաւ: Երբ դուրս ելաւ, մայրս դարձեալ միտքս եկաւ, զինքը դարձեալ առջեւ տեսայ, տեսայ նաեւ առջեւս այն մարդը, որ իմ ծնողացս, քոյրերուս եւ եղբայրներուս սպանութեան ատճառը եղած էր:

Ն.- Ձեր ազգականները տեսաք մտքով եւ կը կարծէիք թէ Թալէաթ փաշան պատասխանատու էր ոչ միայն ձերիններու՝ այլ նաեւ Ձեր ազգակիցներու թափուած արեան համար: Գիտէիք արդեօք թէ Թալէաթ փաշան դուրս պիտի ելլէր:

Ա.- Ո՛չ:

Ն.- Յետոյ ի՞նչ ըրիք:

Ա.- Այն վայրկենին որ դուրս ելաւ, ես ատրճանակս առի ետեւէն վազեցի եւ զինքը գնդակահար ըրի:

Ն.- Ատրճանակը ո՞ւր կը պահէիք:

Ա.- Ճերմակեղէններուս հետ սնտուկիս մէջ:

Ն.- Ատրճանակը լեցո՞ւն էր:

Ա.- Այո՛:

Ն.- Ո՞րչափ ժամանակէ ի վեր ունէիք այդ ատրճանակը:

Ա.- Թիֆլիս եղած ժամանակս 1919ին գնած եւ հետս բերած էի: Լսած էի թէ թուրքերը եթէ դարձեալ գան եւ գերմանացիները հոն չգտնեն, դարձեալ ջարդեր պիտի կատարուէին:

Ն.- Երբ Թալէաթ տնէն դուրս ելաւ Դուք դարձեալ տեսիլ ունեցա՞ք. արդեօք աճապարանօ՞ք թէ հանդարտութեամբ մօտեցաք պայուսակին:

Ա.- Ճիշտ չեմ կրնար ըսել. երբ զինքը տեսայ՝ մայրս առջեւս ելաւ, ու ես դուրս նետուեցայ:

Ն.- Դուրս ելած աստեննիդ Թալէաթ դիմացի մայթին վրա՞յ տեսաք:

Ա.- Այո՛. դէպի կենդանաբանական պարտէզին ուղղութեամբ:

Ն.- Իրեն մօտեցա՞ք եւ այս դիտմամբ Հարդենբերգ փողոցը կտրեցի՞ք:

Ա.- Փողոցի այս կողմէն վազեցի մինչեւ որ իրեն հասայ, յետոյ փողոցը կտրեցի եւ իրեն վրայ քալեցի:

Ն.- Անոր երեսը դիտեցի՞ք, հետը խօսեցա՞ք:

Ա.- Հետը չխօսեցայ. մայթին վրայ անոր քովէն անցայ եւ յետոյ վրան կրակեցի:

Ն.- Իրապէս իրեն քովէն անցա՞ք. ետեւէն դէպի յառաջ քալողին վրայ կրակեցի՞ք. թէ կողմնակի ետեւէն մօտեցաք եւ կրակեցիք:

Ա.- Թալէաթ փաշային հասած ժամանակս արդէն ետեւը կը գտնուէի:

Ն.- Ուրեմն կռնակէն կրակեցիք:

Ա.- Այո՛:

Ն.- Գլխո՞ւն նշան առիք:

Ա.- Բոլորովին մօտեցայ անոր:

Ն.- Ասորճանակին փողը գլխուն մօ՞տ բռնեցիք:

Ա.- Այո՛:

Ն.- Յետոյ ի՞նչ եղաւ:

Ա.- Այսչափ զիտեմ միայն - աւելին չեմ կրնար ստորագրել – թէ Թալէթ փաշան գետին ինկաւ, եւ երեսէն արիւն կը հոսէր, եւ թէ բազմութիւն մը չորս դին կանգնած էր:

Ն.- Չտեսա՞ք թէ Թալէաթին մէկը կ'ընկերանար:

Ա.- Ո՛չ, մարդ չտեսայ:

Ն.- Տիկի՞նն ալ չտեսաք:

Ա.- Ո՛չ:

Ն.- Սպանութենէն ետքն ի՞նչ ըրիք:

Ա.- Չեմ գիտեր թէ ինչ ըրի:

Ն.- Կծիկը դրած էք, փախած էք. չէ՞ք գիտեր որ փախած էք:

Ա.- Փախած ըլլալս չեմ գիտեր. այսչափս միայն դիտեցի թէ արիւն կը հասեր, եւ թէ բազմութիւնը շուրջը կանգնած էր:

Ն.- Այդ տեսնելէն ե՞տքն էր որ փախաք:

Ա.- Երբ տեսայ չորս կողմս կեցած բազմութիւնը, մտածեցի թէ կրնային զիս ծեծելու ելլել, եւ անոր համար ալ փախայ:

Ն.- Անմիջապէս դիակին քո՞ վր ձերբակալուեցաք թէ փախչելէն ետքը:

Ա.- Չեմ գիտեր թէ ինչպէս եղաւ:

Ն.- Դուք դէպի Ֆազանէն փողոցը բաւական տեղ մը փախած էք եղեր:

Ա.- Չեմ գիտեր:

Ն.- Ճամբան ասորճանակը մէկդի նետած էք եղեր:

Ա.- Չեմ գիտեր:

Ն.- Ի՞նչ զգացում ունեցաք երբ Թալէաթ փաշան մեռած առջեւնիդ տեսաք. ի՞նչ մտածեցիք:

Ա.- Թէ անմիջապէս յետոյ ինչ զգացի՝ չեմ գիտեր:

Ն.- Բայց ժամանակ անցնելէն ետքը եղածին արդէն անդրադարձած ըլլալու էք:

Ա.- Ոստիկանատուն բերուելէս ետքն է որ անդրադարձայ թէ ի՛նչ էր եղածը:

Ն.- Ուրեմն ի՞նչ կը մտածէիք Ձեր ըրածին վրայ:

Ա.- Սրտի գոհունակութիւն մը կը զգայի:

Ն.- Իսկ այսօ՞ր:

Ա.- Դեռ այսօր ալ եղածէն շատ գոհ եմ:

Ն.- Բայց գիտէ՞ք անշուշտ թէ բնական պայմաններու մէջ ոչ ոք իրաւունք ունի իւր իսկ դատաւորն ըլլալու, նոյն իսկ եթէ շատ բաներ քաջած ըլլայ:

Ա.- Չեմ գիտեր. մայրս ինձի պատուիրեց որ Թալէաթ փաշան սպաննեմ, վասն զի ջարդերու յանցապարտ է, եւ այս ազդեցութենէն միտքս այն աստիճան գրաւուած էր որ չէի գիտեր թէ պէտք չեմ սպաննել:

Ն.- Բայց Դուք գիտէի՞ք թէ մեր օրէնքները սպանութիւնը կ'արգիլեն:

Ա.- Այդ օրէնքը չեմ գիտեր:

Ն.- Հայոց մէջ արեան վրիժառութիւն կա՞յ:

Ա.- Ո՛չ:

Պաշտպան Դր. Նիմայեր.- Բազմութեան Ձեզ ծեծած եւ Ձեզմէ արիւն հոսած ատեն Դուք խօսք մ'ըսած էք. չէ՞ք յիշեր արդեօք թէ ի՞նչ ըսած էք այն պահուն ամբոխին առջեւ ինք զինքնիդ արդարացնելու համար:

Ն.- Այնպէս մը ներկայացուց իբր թէ փախած չէ եւ թէ արեան հոսումը եւ չորս դին կանգնած բազմութիւնը տեսած է միայն եւ զինքն արդէն ձերբակալած են: - Կը յիշէ՞ք արդեօք խմբուած բազմութեան մէջէն մէկը Ձեզի խօսք ուղղեց եւ կամ Դուք անոնցմէ մէկուն, երբ Ձեզ բռնեցին եւ կը ծեծէին ինք զինքնիդ արդարացնելու համար բան մ'ըսի՞ք:

Ա.- Ըսի թէ ես օտար եմ, սպանուածն ալ օտար էր,անոր համար ալ գերմանացիները ի՛նչ կը խառնուին եղածին:

Ն.- Դուք ըսած էք եղեր թէ, Դուք Ձեր ըրածը գիտէք. Գերմանիոյ համար վնաս մը չէ:

Ամբաստանեալը.- (նախորդ ըսածը կը կրկնէ:)

Պաշտպան Դր. Նիմայեր.- Գիտէի՞ք թէ Գերմանիոյ մէջ կը պատժուէր այդ բանը: Այդ մասին բացատրութիւն կ'ուզեմ:

Նախագահ.- Այդ հարցն արդէն պարզուած է: Այն օրէն ի վեր ամբաստանեալը կանխադատ բանտարգելքի տակ է, այսօր տուած է բացատրութիւններու եւ նախապէս ըրած խոստովանութեան մէջ որ եւ է հակասութիւն չկայ:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Հարդենբերգ փողոցը 37, ո՞ր յարկը կը բնակէիք. Թալէաթ դիմացը, Հարդենբերգ փողոց 4 կը բնակէր, այսինքն Կնիէ եկած ատեն Շիլլեր-փողոցի եւ Կնեզերէկ փողոցի մէջտեղի տունը:

Ամբաստանեալ.- Առաջին յարկը:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Մարտ 15ին տեսաք թե Թալէաթ փաշան տնէն դուրս կ'ելլէր, ատրճանակը առիք, գլխարկնիդ դրիք եւ սանդուխէն իջաք՝ փողոց ելաք. այդ միջոցին Թալէաթ փաշան, որչափ եւ կրնամ դատել արդէն Կնէզէբէկ փողոցը բաւական անցած ըլլալու էր.

Ամբաստանեալ.- Արդէն ըսի թէ իրեն հասնելու համար վազեցի:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Այդ պարագային Հարդենբերգ փողոցի մէջ բուսականութեան վրայէն անդին անցած էք. իրմէ առաջ էիք:

Նախագահ.- Այդ հարցը բացայայտ ժխտեց, ետեւէն մօտեցած է:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Խնդրեմ, ամբաստանեալին անգամ մ'ալ հարցուցէք:

Նախագահ.- Այդ մասին անգամ մ'ես բացատրութիւն տուէք:

Ամբաստանեալ.- Ես Թալէաթ փաշայի քովէն առաջ անցայ, սպասեցի եւ երբ քովես անցաւ կրակեցի:

Ն.- Այդ որոշ չափով թերեւամտութիւն էր Թալէաթ փաշան կրնար Ձեզ տեսնել եւ կասկածիլ թէ իրեն դէմ բան մը կը նիւթէիք. այդ սարսափելի թերեւամտութիւն էր արդեօք ետեւի կողմանէ Թալէաթի չմօտեցաք:

Ա.- Այդպիսի բաներ չմտածեցի:

Ն.- Երկու հնարաւորութիւն կայ. արդեօք Թալէաթի քովէն առաջ անցա՞ք թէ իրեն անմիջապէս ետեւէն մօտեցաք. դեռ մինչեւ հիմայ չկրցանք որոշ իմանալ թէ Թալէաթ փաշան Ձեր քովէն անցած է:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Ես ըսուածներէն այսպէս կը հասկնամ թէ Թալէաթ իր քովէն անցած է. ամբաստանեալը միշտ այսպէս ըսած է: Թալէաթի դեմքը տեսա՞ք:

Ա.- Այո՛, միւս կողմէն քալած ժամանակս, դեռ Թալէաթի քալած կողմը չանցած.

Ն.- Տեսնենք թէ վկաները ինչ պիտի ըսեն այդ մասին:

Դատախազ.- Ամբաստանեալը քիչ առաջ պաշտպաններէն մէկուն հարցման վրայ պատասխանեց, թէ գիտէր որ Կ. Պոլսոյ մէջ Թալէաթ մահուան դատապարտուած էր: Ստոյգ է, այսպիսի մահավճիռ մը կար, բայց հարկ է որ մտադիր ընեմ թէ այդ վճիռը տրուած էր, երբ Կ. Պոլսոյ մէջ ղեկը բոլորովին ուրիշ կառավարութեան մը ձեռքն էր անցած եւ Թուրքիա պարտուած էր եւ Կ. Պոլիսը անգղիական նաւային թնդանօթներու տակն էր: Ատեանին կը ձգեմ դատել թէ ի՞նչ արժէք ունէր այդ մահավճիռը եւ կը խնդրեմ որ սա հարցումը ուղղուի ամբաստանեալին: Ըսաւ թէ իր եղբօրը դիակը գտած էր. այս իր եղբայրը թաղա՞ծ էր:

Ա.- Ո՛չ:

Նախագահ.- Ամբաստանեալը փախած է, վտանգաւոր կացութեան մէջ կը գտնուէր:

Դատախազ.- Դարձեալ ամբաստանեալը ըսաւ թէ բժշկական խնամք վայելած է իր մարմնին վրայ սպիներ կամ վերքեր ունի՞:

Ա.- Ի հարկէ:

Դատախազ.- Խնդրեմ որ յետոյ ստուգուի այդ: Դարձեալ կը խնդրեմ որ հարցուի ամբաստանեալին թէ ի՞նչպէս իմացած էր որ յաղ անձը Թալէաթն էր զինքը առաջ տեսած էր թէ պատկերներու վրայէն ճանչցայ:

Ա.- Ո՛չ, ես զինքը տեսած չէի. լրագիրներու պատկերներէն միայն զինքը ճանչցայ:

Դատախազ.- Ըսուեցաւ թէ ջարդերը Երզնկայի քով կատարուած են բարց ես այնպէս տեղեկացած եմ թէ կարաւանը Երզնկայէ հեռանալէն ետքը կրճի մը մէջ քուրդ աւագակներէն յարձակում մը կրած է. եւ այդ կռիւին մէջ նոյն իսկ թուրք ժանդարմաներ ալ սպանուած են: Խնդրեմ հարցնէիք թէ քուրդ աւագակներ չէի՞ք այդ ընտղները:

Ա.- Ինձի այնպէս ըսուեցաւ թէ թուրք ժանդարմներ էին կրակողները:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Կը յուսամ թէ այս քուրդ աւագակներու հարցը պիտի լուսաբանուի:

Դատախազ.- Ինձի տարօրինակ կու գայ որ ամբաստանեալը Հարդենբերգ փողոցը այնչափ շուտ բնակարան մը գտած է:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Կարծեմ քուրդերու հարցը այնպէս կարելի է լուծել: Թրքական ջարդերուն գլխաւոր յօրինուծութիւնը եղած է՝ հայոց ոխերիմ թշնամիները, լեռներու վրայ ապրող քուրդերը իբրեւ ժանդարմներ զինել հայոց վրայ հսկելու համար:

Ա.- Քրդերը զանազան են. մաս մը հայոց թշնամի է, իսկ մաս մ'ալ հայոց հանդէպ շատ լաւ է:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Ամբաստանեալը պատմեց թէ քուրդերու քով ապաստարան գտաւ. ուրեմն լաւ եւ գէշ քուրդեր կան. այս անկէ յայտնի էր որ ամբաստանեալը ըսաւ թէ քուրդերը զինքը սիրով ընդունած են. բայց կան քուրդեր ալ, որոնք կառավարութեան հետ բարեկամ են:

Ա.- Մեծ մասամբ:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Քանի՞ տարուան էին Ձեր ծնողքը երբ Ձեր հայրը մառաւ:

Ա.- Հայրս հիսունուհինգ, մայրս հիսունուերկու- հիսունուերեք, եղբայրներս քսանուութ եւ քսանուերկու, քոյրերէս մէկը քսանուվեց-քսանուեօթ, միւսը տասնուվեցուկէս եւ ամէնէն փոքրը տասն եւ հինգ տարեկան էր:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Ձեր ամուսնացած քոյրը իր գաւակին եւ էրկանը հէ՞տ ճամբայ էլաւ:

Ա.-Այո՛, ի միասին ելան, բայց իրարմէ քիչ մը հեռու էին:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Ամբաստանեալը այսօր ըսաւ թէ բացի իր եղբօր դիակէն՝ ազգականներէն ոչ մէկուն դիակը տեսած էր. բայց ինձի ուրիշ բան ըսած էր առաջ. գուցէ լաւ չհասկացուեցաւ: Կը խնդրեմ հարցնել, թէ արդեօք հեռուն թուփերուն մէջ քույրերէն մէկուն աներեւոյթ ըլլալը չէ՞ր տեսած եւ արդեօք իր այդ քոյրը վերստին չէր գտած:

Ա.- Տեսայ մօրս իյնալը, եղբայրս մեռած եւ ուրիշ դիակներ. փախած միջոցիս աւելի չկրցայ ստուգել:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Երզնկայի մէջ 20.000 հայ քրիստոնէաներ կային. ըրիշ ինչ ազգեր կային հոն, քուրդեր եւ թուրքեր ալ կայի՞ն:

Ա.- Երզնկայի մէջ 25.000-30.000 թուրք բնակչութիւն կար:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Պատերու վրայ յայտարարութիւննե՞ր փակցուցին արդեօք, որոնց մէջ կ'ըսուէր թէ հայերը իրենց տներէն ելլելու են, թէ բերանացի յայտարարուեցաւ այս: Կամ այդ կարճ ժամանակի մէջ 20.000 հայերու ի՞նչպէս հաղորդուեցաւ. մէկ առաւօտեան մէջ եղած է. ես քիչ մ'առաջ այնպէս հասկցայ թէ առտու մը հրաման եկաւ որ հայերը քաղաքը պէտք են դատարկել. ի՞նչպէս եղաւ այս:

Ա.- Քաղաքը եւ շրջակայքը ամենքն ի մի հաւաքուեցան եւ դուրս քշուեցան. ետ մնացողները վերջէն դուրս հանուեցան:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Կը յիշե՞ք արդեօք յայտարարութիւն փակցուցի՛ն փողոցներուն վրայ կամ արդեօք թմբուկով լուր տրուեցա՞ւ. կամ վերջապէս ի՞նչպէս յայտարարուեցաւ:

Ա.- Զինուորական մունետիկ մը եկաւ եւ բարձրաձայն յայտարարեց թէ քաղաքը պէտք է դատարկել:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Հրամանը կառավարութեան կողմանե՞ր էր:

Ա.- Այո՛, կը յայտարարուէր թէ Կ. Պոլսէն եկած հրաման մըն է, Թալէաթ փաշայի հրամանն է:

Նախագահ.- Այն միջոցին կ'ըսուէ՞ր թէ հրամանը Թալէաթ փաշայէն ելած էր:

Ա.- Կ'ըսուէր, լուր կը շրջէր:

Պաշտպան Դր. Վերթաուէր.- Խնդրեմ հարցուցէք ամբաստանեալին թէ դպրոցները փետրուարի՞ն փակուեցան. մինչ ինքը մինչեւ մայիս Երզնկայ մնացած է:

Նախագահ.- Ամբաստանեալը արդէն ըսաւ թէ մէկ ամիս յառաջ դպրոցները փակուեցան:

Ա.- Երկու, երեք ամիս առաջ:

Պաշտպան Դր. Վերթաուեր.- Խնդրեմ հարցուցեք թե հորենական տան մեջ գտած դրամը՝
նսկեղրամ էր:

Ա.- Ոսկեղրամ էր:

Ն.- Այդ դրամը մինչեւ հիմայ բաւե՞ց դեռ անո՞վ կ'ապրէիք:

Ա.-Այո՛:

Պաշտպան Դր. Վերթաուեր.- 4800 թրքական ոսկի էր, մէկ թուրք ոսկին հաւասար է 20 ոսկի
մարկի:

Ն.- Դեռ մինչեւ հիմայ անո՞վ կ'ապրէիք:

Ա.- Այո՛:

Պաշտպան Դր. ֆոն Գորդոն.- Երբ Ձեր կրտսեր քոյրը քաշեցին տարին, անոր պոռալը լսեցի՞ք:

Ա.- Անոր պոռալը լսեցի եւ մայրս ալ տեսաւ զինքը, քովս եկաւ կը պոռար եւ կ'ըսէր. “Երանի՛ թե
կուրնայի”:

Ն.- Ամբաստանեալին ուղղելիք ուրիշ հարցեր կա՞ն:

Դատախազ Գոլնիկ.- Բացատրութիւն մ'ես պիտի խնդրեմ. ամբաստանեալը այդ դրամը ի՞նչպէս
Գերմանիա բերած է:

Ա.- Մաս մը գրպանիս մէջն էր մաս մ'ալ պայուսակիս:

Նախագահ.- Եթէ ամբաստանեալին ուղղելիք ուրիշ հարցումներ չկան, անցնինք փաստերու:

Վկայ Նիկողայոս Եսէն, վաճառական Շարլոտտենբուրգէն, 40 տարեկան, բողոքական, երդումը
կ'ընէ:

Նախագահ.- Դուք ականատե՞ս էիք.

Վկայ.- Այո՛:

Ն.- Պատմեցեք Ձեր տեսածը:

Վ.- Երեքշաբթի օրը, մարտ 15ին, առաւօտեան ժամը 11ին Հարդենբերգ փողոցէն կ'անցնէի՝
Վիտտենբերգ հրապարակը երթալու համար, ուր զանազան յաճախորդներու կ'ուզէի այցելել
մտեղինաց գործատան մը ներկայացուցիչ եմ: Առջեւէս կ'երթար հանդարտ քայլերով մոխրագոյն
ուլստեր-վերարկու հագած պարոն մը: Յանկարծ այս ամբաստանեալը արագ քայլերով անցաւ
քովէս ձեռքը գրպանը տարաւ:

Նախագահ.- Ո՞ւր կ'երթայիք, ա՞ջ կողմէն կը քալէիք:

Վ.- Այո՛ դէպի կենդանաբանական պարտէզը:

Ն.- Ուլստեր վերարկու հագած պարոնին ետեւէ՞ն:

Վ.- Այո՛:

Ն.- Ատրճանա՞կը դուրս հանեց, ո՞ր գրպանէն:

Վ.- Այդ մանրամասը չեմ գիտեր կարծեմ աջ կողմի ծոցի գրպանէն: Ամէն պարագայի մէջ ատրճանակ մըն էր, դուրս քաշեց եւ անմիջական մօտէն ետեւէն կրակեց պարոնին գլխին, որ վայրկենապէս դէպի առաջ գետին գլորեցաւ, եւ գանգը բացուեցաւ: Ամբաստանեալը ատրճանակը մէկդի նետեց եւ փորձեց փախչիլ: Քիչ մը աւելի առջեւէն տիկին մը կը քալէր. ան ալ ուշագնաց եղաւ. նախ այդ տիկինը վեր վերցուցի, վասն զի կը կարծէի թէ ան ալ վերաւորուած էր: Յետոյ ամբաստանեալին ետեւէն վազեցի եւ Ֆազանէն փողոցի մէջ ձերբակալեցի զինքը: Բնական է բազմութիւն մը խմբուեցաւ, եւ մարդիկը անխնայ կը զարնէին ամբաստանեալին. մարդ մը շարունակ բանալիով մը կը հարուածէր անոր գլուխը, ուրիշները կը պոռային. բռնեցէք մարդասպանը: Ամբաստանեալը կանդանաբանական պարտէզին մօտ ոստիկանատուն տարի հոն ուզեց գլանիկ մը ծխել. հոն ալ բազմութիւն մը խմբուեցաւ եւ դարձեալ ձեռեցին զինքը:

Ն.- Բոլորովին ստո՞յգ էք թէ ամբաստանեալը մաթի վրայէն Ձեր մօտէն առաջ անցած է:

Վ.- Այո՛:

Ն.- Եւ պարոնին ծոծրակին կրակեց:

Վ.- Այո՛:

Ն.- Միթէ դիմացի կողմէն ասդին չանցա՞ւ եւ թող տալէն ետքը, որ Թալէաթ փաշան իրմէ առաջ անցնի, ետեւէն չկրակէ՞ց:

Վ.- Ո՛չ:

Ն.- Առջեւէն երեսը նայեցա՞ւ:

Վ.- Ո՛չ այս պէտք է որ ժխտեմ ամբաստանեալը արագաքայլ յառաջացաւ, եւ առանց խօսք մ'ըսելու հանեց ատրճանակը եւ կրակեց մարդուն ծոծրակին:

Ն.- Անմիջապէս գետի՞ն ինկաւ:

Վ.- Դէպի առաջ ինկաւ:

Ն.- Ամբաստանեալը ամենեւին չսպասե՞ց:

Վ.- Ո՛չ:

Ն.- Անմիջապես փախա՞ւ:

Վ.- Այո՛, Ֆազանէն փողոց մտաւ եւ Կանտ փողոցը ուղուեցաւ:

Ն.- Տիկինը ո՞ւսկից կը քալէր:

Վ.- Տիկինը պարոնին առջեւէն կը քալէր:

Ն.- Քովէն չէ՞:

Վ.- Ո՛չ:

Ն.- Պարոնին ուղեկի՞ցն էր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Եւ ուշաթափ ինկա՞ւ:

Վ.- Այո՛:

Ն.- Մօտերն ուրիշ մարդ կա՞ր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ամէնէն առաջ Դո՞ւք դիակին քովը հասաք:

Վ.- Ես նախ տիկինը վեր վերցուցի:

Ն.- Եւ յետո՞յ միայն նկատեցիք որ պարոնը մեռած էր արդէն:

Վ.- Այո՛:

Ն.- Այդ միջոցին ուրիշներ ալ վրայ հասա՞ն:

Վ.- Այդ միջոցէն կարասիներու կառք մը կ'անցներ եւ վիլլայէ մը պարոն մը իր ծառայովը դուրս ելաւ:

Ն.- Վկային ուղղուելիք ուրիշ հարցումներ կա՞ն: - Չկան:

Վկայ Բոլէսլաւ Դեմբիցկի, ծառայ Շարլոտտենբուրգէն, 32 տարեկան, կ'երդնու:

Ն.- Դեպքին մասին Ձեր գիտցածները յայտնեցե՞ք:

Վ.- Ճաշելու համար Հարդենբերգ փողոցէն տուն դառնալու վրայ էի:

Ն.- Ի՞նչ ուղղութեամբ կը քալէիք:

Վ.- Դեպի Կենդանաբանական պարտէզը:

Ն.- Ա՞ջ կողմէն:

Վ.- Այո՛, Ֆազանէն փողոցի անկունը, պարոն ամբաստանեալը ինձի հասաւ:

Ն.- Մայթի վրայէ՞ն կը քալէիք:

Վ.- Այո՛, ինձի հասաւ իր սպաննած պարոնէն 3-4 քայլ հեռու. յանկարծ պայթում մը լսեցի, կարծեցի թէ անիւ մը պայթեցաւ, բայց ի՞նչ տեսնեմ առջեւս մէկը գետին ինկաւ եւ ուրիշ մը սկսաւ փախչիլ:

Ն.- Անմիջապէս փախչի՞լ սկսաւ:

Վ.- Այո՛, անմիջապէս, ես ալ ետեւէն վազեցի. ամբաստանեալը ձախ կողմէն Ֆազանէն փաղոցը մտաւ, բայց այդ փողոցին մէջ առջելը մարդիկ ելան եւ չկրցաւ փախչիլ. եւ քիչ առաջ հոս վկայող պարոնը զինքը ձերբակալեց. եւ անկէ զինքը Կենդանաբանական պարտէզի մօտ պահականոցը տարինք:

Ն.- Ստո՞յգ էք թէ Ձեզ անցնող մարդն ամբաստանեալն էր:

Վ.- Այո՛:

Ն.- Սպանեալը երեսէն դիտե՞ց թէ ետեւէն մօտեցաւ անոր:

Վ.- Ետեւէն ուղղակի պարոնին վրայ քալեց, զէնքը դուրս հանեց եւ կրակեց անոր վրայ:

Ն.- Մայթին վրայէն գալով Ձեզ անցա՞ւ:

Վ.- Այո՛, փոքրիկ դարձուածք մ'ըրաւ, դեպի վեր պատշգամ մը նայեցաւ, պարոնին վրայ քալեց եւ կրակեց անոր վրայ:

Ն.- Դեպքէն ետքը ամբաստանեալին բերնէն որ եւ իցէ բացականչութիւն լսեցի՞ք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Մարդիկ անոր խօսք ուղղեցի՞ն, ինք զինքն արդարացո՞ւց:

Վ.- Ասիկա օտարական մ'էր, ըսաւ, ես ալ օտարական եմ, այդ վնաս չունի:

Ն.- Ո՞ր ըստ այդ խօսքերը:

Վ.- Պահակատունը:

Ն.- Դիակին քով չկեցա՞ւ:

Վ.- Ո՛չ:

Ն.- Հարուածէն ետքը զէնքը նետեց եւ փախա՞ւ:

Վ.- Այո՛:

Ն.- Իսկ Դուք ետեւէ՞ն վազեցիք:

Վ.- Այո՛:

Ն.- Նկատեցի՞ք արդեօք թէ սպանեալին քովէն կամ անկէ քիչ մը առաջ տիկին մը կը քալէր:

Վ.- Ո՛չ, այդ չնկատեցի:

Ն.- Ուրեմն սպանեալին անմիջապէս քովը մարդ չկա՞ր:

Վ.- Ո՛չ, մարդ չկար:

Ն.- Ուրեմն դուք տեսաք թէ այդ պարոնը հանդարտաքայլ փողոցն ի վար կը քալէր:

Վ.- Այո՛, հանդարտաքայլ:

Ն.- Եւ քովը ոչ ո՞ք կար:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ուրեմն Դուք եւ պարոն Եսէնը առաջի՞ններն էիք թէ ուրիշներ ալ կային:

Վ.- Այո՛, առաջիններն էինք:

Ն.- Վկային ուղղելիք ուրիշ հարցեր կա՞ն:- Չկան:

Յաջորդ վկային, Թալէաթ փաշայի այրիին հարցաքննութիւնը աւելորդ համարուեցաւ, վասան զի երեւան ելաւ թէ սխալ էին այն ըսուածները թէ ինք էր այն կինը որ սպանութեան միջոցին Թալէաթ փաշայի հետ միասին գտնուած եւ ուշակորոյս գետին ինկած էր:

Վկայ ոստիկանապետ Պաուլ Շույց, 47 տարեկան, Շարլոտտենբուրգ: Երդումեն վերջը:

Նախագահ.- Ի՞նչ ըսելիք ունիք դեպքին մասին:

Վկայ.- Խնդրոյ առարկայ օրը հեռաձայնով ըսուեցաւ ինձի որ Հարդենբերգ փողոց սպանութիւն մը գործուեցաւ եւ թէ մարդասպանը ձերբակալուած է: Դեպքին վայրը գացի եւ տեսայ սպանուածը մայրին վրայ: Պահակ ոստիկանութեան կողմէ այդ տեղը փակուած:

Ն.- Անձնական ո եւ է քննութիւն չկատարեցի՞ք գործողութեան մասին:

Վ.- Ո՛չ:

Ն.- Որո՞ւ ուշադրութիւն դարձուցիք՝ դիակի՞ն թէ սպանութիւնը գործողի՞ն:

Վ.- Դիակով զբաղեցայ եւ անոր իրերը առի, անկէ վերջը ոճրագործը չտեսայ:

Ն.- Այն ամբաստանութիւնը գոր դուք ըրած էք, հիմնուած է ուրեմն միայն այն անկերու ըսածներին վրայ, որոնք հոն գտնուած են: Ձեր կողմէ ո եւ է քննութիւն չէ՞ք ըրած:

Վ.- Ո՛չ:

Ն.- Վկային ուղղելիք ուրիշ հարցեր քա՞ն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ո՞ւր կը գտնուէր դիակը, Ֆազանէն փողոցի եւ Շտայն Պլացի միջեւ թէ՞ Շտայն Պլացի եւ Կնեզեբէկ փողոցի միջեւ:

Վ.- Ֆազանէն եւ Բօախիմսթալեր փողոցներու միջեւ, Հարդենբերգ փողոց թիւ 17 տան առջեւ եւ աւելի մօտ Ֆազանէն փողոցի:

Ն.- Վկային ուղղելիք ուրիշ հարցեր քա՞ն: Չկան: Խնդրեմ պ. թարգման, հաղորդեցէք, որ երկու նախորդ վկաները յայտնեցին թէ ինքը սպանուածիմ մօտէն չէ անցած գացած, այլ թէ ինքը մայրին վրայէն անոր ետեւէն եկած եւ մի քանի անձեր անցնելէ վերջը, Թալեաթին մօտեցած եւ զայն սպաննած է:

Ամբաստանեալ.- Ա՛յնպէս եղած է ինչպէս որ նկարագրեցի, նախ իր մօտէն անցայ գացի եւ յետոյ ետեւէն կրակեցի:

Ն.- Այս վկաներու ըսածին համաձայն ճիշդ չէ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Թերեւս ան այնքան յուզուած էր որ ալ որոշ չի գիտեր:

Ն.- Թերեւս որոշ չէք գիտեր, երկու անձեր հակառակը վկայեցին, թէ Դուք ետեւէն զարկած էք առանց մօտէն անցնելու:

Ա.- Դիմացի մայրին ասդին անցայ ետեւէն կրակեցի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Կ'ուզեի հարցնել Պրն. Նախագահին թե՛ արդեօք Ռեշ վկան եկա՞ծ է, վասն զի անոր վկայութեան մեծ կարեւորութիւն կու տամ:

Ն.- Թող զինուորներէն մին ստուգէ թե՛ Ռեշ վկան եկած է: (Դեռ չէ եկած:) Երկու նախորդ վկաներու, Եսէնի եւ Դեմբիցկիի, ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն բանի վրայ որ ամբաստանեալը իրենց վկայութեան հակառակ կ'ելլէ: Ան կըսէ թէ փողոցին միւս կողմէն ասդին անցած եւ թողած է որ Թալէաթ փաշա իր մօտէն անցի, յետոյ աջ կողմի մայթին վրայէն ձեզմէ առաջ անցած, մօտեցած է Թալէաթին եւ ետեւէն զայն զարկած է:

Վկայ Եսէն.- Ամբաստանեալը կրնայ իրաւունք ունենալ, սակայն այն տեղէն, ուր Թալէաթ փաշա զարնուեցավ, քսան մետր առաջ ան իմ քովէս անցաւ, գուցէ երաժշտական վարժարանին քովը միջուղիէն անցած է:

Ն.- Այն պարագային Թալէաթի հասնիլը աւելի առաջ տեղի ունեցած է:

Վկայ Դեմբիցկի.- Ֆազանէն փողոցը հասաւ անոր, Հարդենբերգ փողոցի մայթի վրայ անոր մօտեցաւ:

Վկայ Եսէն.- Անմիջապէս ամբաստանեալին հարցուցի, թէ ինչն^օ Թալէաթ փաշան կը սպաննէր: Պատասխանեց. “Ես հայ, ան թուրք, ոչ մի վնաս Գերմանիոյ”:

Ն.- Կարծեմ այս վերջը ըսած ըլլալու է:

Վկայ Եսէն.- Անմիջապէս հարցուցի թէ ինչն^օ զարկաւ, եւ գրպանները նայեցայ վասն զի վախցայ որ կրնար անգամ մ'ալ կրակել, եւ թերեւս վրան սուր մ'ալ ունէր: Այն ատեն ըսաւ, “Ես հայ, ան թուրք, ոչ մի վնաս Գերմանիոյ”: այս եղավ թերեւս գործողութենէն 5 վայրկեան վերջը:

Ն.- Տակավին անորոշութիւն մը կը մնայ, սակայն ըսուածները այնքան ալ հակասող չեն. երկուքն ալ որոշ ստուգութիւն մը կրնան ունենալ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ինձ համար հարցը անորոշ չէ, որովհետեւ Ռեշ վկան Եսէն եւ Դեմբիցկի վկաներուն հակառակը ըսած է, անոր վկայութիւնը գրեթէ ամբաստանեալին ըսածին կը համապատասխանէ:

Ոստականապետ Գնաս Շարլոտտենբուրգի ոստիկանատնէն:

(Երդումէն վերջը:)

Նախագահ.- Դէպքի մասին ի՛նչ գիտէք: Քննութիւն կատարած է՞ք եւ դիակը դո՞ւք փոխադրել տուած էք:

Վկայ.- Մարտ 15ի կէսօրը լուր տրուեցաւ ինձի որ Հարդենբերգ փողոցի մէջ թուրք մը զարնուած է: Սպաննողը ձերբակալուած է Ժեժի հարուածներ ստացած է: Օր մը ետքը դիակը քննեցի եւ ձախ աչքին վրայ գտայ գնդակին բացուածքը, ուր կարելի էր մատ մը մտցնել: Ծակը ինձի կասկածելի երեւցաւ: Գլխին ետեւը վնասուած ո եւ է տեղ չէի գտներ, թէ եւ արին կար: Կէս օրէ վերջը յանցապարտը առջեւս կանչեցի. դժբախտաբար դժուարաւ կրնայի ինք զինքս հասկնալ: Լսեցի թէ ըսած էր որ այդ սպանութիւնը ըրած է, վասն զի կը հաւատար թէ սպաննուածը իր ծնողներուն մահուան յանցաւորն էր: Հարցուցի թէ գերմաներէն գիտե՞ք եւ ինչպէս սպանութիւնը կատարեց: Ատրճանակը ձեռքս՝ ըսի, ինձ ցոյց տուր թէ սպաննութիւնը ինչպէս ըրիր: Ատրճանակը գլխուս առջեւ ի կողմը բռնած, հարցուցի թէ այսպէ՞ս էր ըրած: Այս կը ժխտէր եւ ցոյց կու տար որ ետեւէն հարուածը տուած է: Ասկէ աւելի բան չէր ուզեր յայտնել: Դատախազին մօտ հաստատեց որ այդ գործը կատարած էր, որովհետեւ կը հաւատար թէ սպաննուածը իր ծնողաց մահուան յանցաւորն է: Անդրագոյն քննութիւններ ցոյց տուին որ ան Ժնէվէն մարտի սկիզբը Բերլին- Շեօնբերգ եկած էր եւ Աուգսբուրգէր փողոց թիւ 51 կը բնակէր:

Նախագահ.- Յունուարի՞ն:

Վկայ Գնաս.- Այո՛, յունուարին. մարտին բնակարան փոխած է: Փորձեցի բանակարանի փոփոխութեան պատճառն իմանալ եւ գտայ որ իր տեղափոխութեան համար զօրեղ պատճառ մը գոյութիւն չունէր: հարդենբերգ փողոցի թիւ 37 բարձր-գետնայարկի իր բնակարանին պատուհանները կը նային այն փողոցին վրայ ուր դէն առ դէն սպաննուածին բնակարանը կը գտնուի, այնպէս որ ան հնարաւորութիւն ունէր բնակարանին վրայ հսկելու:

Դէպքին օրը վկայ մը եկաւ եւ բացայայտ ըսաւ որ, ինքը Հարդենբերգ փողոցէն կ'անցնէր իսկ միւս կողմէն ամբաստանեալը կու գար. երաժշտական վարժարանի ուղղութեան վրայ փառոցը կտրած անցած է: Նոյնպէս թէ, կին մը սպաննուածին առջեւէն կը քալէր: Ամբաստանեալը մօտեցաւ սպաննուածին, վերարկուին տակէն ատրճանակը հանեց եւ առանց այլ եւ այլի կրակեց: Հարուածը տալէն վերջը, սպաննուածը անմիջապէս գետին ինկած է եւ յանցաւորը սպաննեալին վրայ ծռած է ստուգելու համար որ արդեօք հարուածը նպատակին ծառայած է. յետոյ սկսած է փախչիլ:

Ն.- Դուք այն միջոցին այսօր դեռ չեկած Ռէշ վկան հարցաքննա՞ծ էք: Գիտե՞ք արդեօք խօսակցութեան նիւթ եղաւ այն կէտը թէ ամբաստանեալը ետեւէ՞ն զարկած է թէ թողած է որ սպաննուածը նախ իր մօտէն անցնի երթայ:

Վ.- Չեմ կրնար յիշել թէ արդեօք Ռէշ վկան էր, որ այս ցուցմունքն ըրաւ, թէ արդեօք ան տեսած է որ յանցաւորը փողոցը սպաննուածին առջեւէն կամ ետեւէն եկած է:

Ն.- Ի՞նչ կը նշանակէ առջեւէն կամ ետեւէն:

Վ.- Սպաննուածին վրայ ետեւէն կրակած է:

Պաշտպան Դր. Նիմայեր.- Կարծեմ թե երկու ըմբռնումներն ալ կը միաբանին: Երբ մէկը փողոցը կը կտրէ կ'անցնի, բնական է, որ ետ կը մնայ այն մարդէն, որ արդէն միւս կողմն է եւ առաջ կը քալէ, մինչեւ անգամ եթէ երկուքն ալ միեւնոյն ուղղութեան վրայ կը գտնուէին, մանաւանդ երբ պողոտան այնքան լայն է ինչպէս Հարդենբերգ փողոցը: Ըստ իմ կարծիքիս սպաննուածին մօտէն անցած գացած է:

Պաշտպան Դր. Վերթաուեր.- Ամբաստանելը գետնայարկ չէր բնակեր, այլ՝ առաջին յարկը:
Նախագահ.- Առաջին յարկը ըսաւ նախապէս, հաւանաբար բարձր-գետնայարկը կ'ուզէր ըսել:

Վկայ բժիշկ Շլօս, Շարլոտտենբուրգի թիւ 7 առաջապահական պահակաբաժինէն, 42 տարեկան. (Երդման արարողութենէն վերջը).- Մարտ 15ին Կենդանաբանական պարտէզին 7-րորդ առաջապահական պահակաբաժնին լուր եկաւ թէ Հարդենբերգ փողոցը ոճիր մը գործուած էր: Հոն գացի: Անցքը ոստականութեան կողմէ փակուած էր: Սպաննուածը գլխուն ետեւի կողմը հրազենի հարուածի բացուածք մ'ունէր: Ճշգրիտ քննութիւն մը հարկաւոր չտեսայ: Բացուածքէն այնքան արիւն հոսած էր, որ աւելին չկրցայ տեսնել: Ուրիշ ըսելիք մը չունիմ:

(Վկան կ'արձակուի:)

Վկայ բժշկական խորհրդական Դր. Շմուլինսկի, Շարլոտտենբուրգ, 63 տարեկան: (Երդումէն վերջ:)

Նախագահ.- Մարտ 15ին Դր. Թիլի հետ դիագնոստիկանը կատարած էք: Կրնա՞ք ձեր քննութեան արդիւնքը հաղորդել:

Վկայ.- Գլխուն ետեւի կողմը շրջանակաձեւ խոշոր բացուածք մը գտանք: Վերքը բազմաթիւ ոսկորի կտորներ կը պարունակէր: Անդամահատելէ վերջը գտանք որ ուղեղը բոլորովին սեւ էր եւ արեան մէջ կը լողար: Իսկապէս ամբողջ գանկը փշրուած էր, եւ ուղեղը արեան խուժումով այնքան վնասուած որ անմիջական մահ պատճառած էր: Հաւանաբար վարկենապէս յաջորդած է սրտի կաթուածը:

(Վկան կ'արձակուի:)

Վկայ արքունի հրազինաշէն Բարելլա, Բերլին, հրազենի մասնագետ:
(Կը յիշեցնեն իրեն՝ իբրեւ իրազեկ միանգամ արդէն ըրած երդումը:)

Բարելլա կը քննէ զէնքը:

Նախագահ.- Ամբաստանեալ, ա՞յս զէնքով սպաննեցիք Թալէաթը:

Ա.- Չեմ կրնար ճանչնալ:

Ն.- Երկար առեն զենքին տերը եղած էք, պետք է որ ճանչնաք զայն:

Ա.- Կ'երեւայ թէ նոյնն է:

Բարեւլա.- Ատրճանակը 8-9մ տրամագծով փող մ'ունի պաշտօնապէս ընդունուած է գերմանական բանակին մէջ ինքն իրմէ կը լեցուի եւ ութը գնդակ միանուագ կրնայ արձակել բանակի մնացորդներէն է եւ Deutsche Waffen- und Munitionsfabrikի գործ է 1915 թուականով գնդակներն ալ բանակի մթերքէն են:

Ն.- Կարելի՞ է ստուգել թէ զենքը շատ գործածուած է:

Բարեւլա.- Յարաբերաբար նոր է, բայց ամէն պարագայի մէջ շատ լաւ պահուած:

Ն.- (Ամբաստանեալին) Զենքը ուրիշ անգամ գործածա՞ծ էք բնաւ:

Ա.- Ո՛չ:

(Իրազեկին ուրիշ հարցեր չեն ուղղուիր:)

Վկայ Էլիզաբէթ Շտելլբաում, Բերլին Աուգսբուրգեր փողոց 51, 63 տարեկան, բողոքական: (Երդման արարողութենէն վերջ:)- Ամբաստանեալը իմ քովս բնակած է. իր մասին միայն լաւ կրնամ վկայել: Շատ պարկեշտ եւ համեստ էր. սպասուհի չունիմ եւ ես ինքս կը տեսնեմ տանս գործերը. ինչ որ կրնար անձամբ կ'ընէր, ինձի չճանրանալու համար, այնպէս, իր կօշիկը մաքրելը ինձի չէր ձգեր: Ամէն տեսակետով շատ համեստ եւ պարկեշտ էր:

Նախագահ.- Բնաւ հիւանդացա՞ւ:

Վ.- Իմ քովս գալէն քանի մը օր ետքը, Ծնունդէն առաջ. եւ այդ պատճառով ալ ոստիկանութեան ծանուցանելը քիչ մը ուշացաւ: Առաջին օրը իսկ ոստիկանութեան կ'ուզէի ծանուցանել, սակայն ան անձամբ պետք էր երթալ, բայց հիւանդութեան պատճառով ուշացաւ: Քովս գալէն քանի մ'օր ետքն էր, ես խոհանոց էի, դրան առջեւ խշխշոց մը լսեցի: Մտածեցի թէ այս մի քանի օրէ ի վեր քովս բնակող պարոնն է եւ դեռ չի կրնար բանալին լաւ գործածել: Երբ դրան առջեւ եկայ, տարօրինակ երեւցաւ ինձի: Կարծեցի որ գինով է. բարեւեց զիս, բայց նկատեցի որ ինքն իրեն շատ կը բռնանար: Իր սենեակը գնաց, ես ալ իմ սենեակս՝ եւ մտիկ կ'ընէի, որովհետեւ կը կարծէի թէ օդային կազը պիտի վառէր: Յետոյ լսեցի որ ջրոյ ամանը գործածեց, եւ բազկաթոռին վրայ նստաւ ու ամէն ինչ հանդարտեցաւ: Իր դռնէն ականջ դրի: Ամէն ինչ հանդարտ էր: Յաջորդ օրը ոչինչ լսեցի այդ մասին եւ ըսի պ.Արելեանի, որ նոյնպէս իմ քովս կը բնակէր, թէ՛ պ. Թէլիբրեանը երէկ գինովցած էր եւ թէ պետք է իրեն ըսել ու ես գինով մարդ չեմ կրնար տանիլ: Ատոր վրայ պ. Արելեան խօսեցաւ պ. Թէլիբրեանի հետ:

Ն.- Ուրիշ առթիւ ալ հիւանդագին երեւոյթներ նկատա՞ծ էք:

Վ.- Չափազանց ջղային էր եւ չէր կրնար քնանալ: Այսպէս կ'ըսէր ինքն ալ, երբ մէկը իր առողջութեան մասին հարցնէր:

Ն.- Գիտե՞ի՞ք որ բժիշկին կ'երթար:

Վ.- Այո', Պրոֆ. Կասիրերի: Նախապես իրեն յանձարարեցի Պոտտոսամեր փողոց բնակող, չեմ կրնար ըսել որոշ որտեղ, ուրիշ ջղային հիւանդութեան բժիշկ մը որ ինձ ծանօթներու կողմէ ըսուած էր, բայց ոչ թէ Դր. Հակէն:

Ն.- Ուրիշ ի՞նչ կրնաք ըսել իր կեանքի մասին. բարեկա՞րգ էր:

Վ.- Շատ:

Ն.- Գիտե՞ք իր պարի դասի մասնակցիլը:

Վ.- Այո':

Ն.- Ուրիշ հայեր յաճախ կու գայի՞ն իրեն:

Վ.- Միայն մէկ հոգի, Լեւոն Էֆթեանը:

Ն.- Պ.Աբելեանի հետ յաճախ դուրս կ'ելլէ՞ր:

Վ.- Այո':

Ն.- Չզարմացա՞ք երբ յանկարծ տեղափոխուեցաւ:

Վ.- Ի՞նչպէս չէ:

Ն.- Ի՞նչ ըսիք այն ատեն:

Վ.- Ան մինչեւ մայիս 1 կ'ուզէր իմ քովս բնակիլ: Ուստի ըսի իրեն. Կարծեմ կ'ուզէիք մինչեւ մայիս 1 բնակիլ: Պատասխանեց որ բժիշկը ըսած է թէ կազի լոյսը վնասակար է իրեն եւ պէտք ունի արեւի լոյսի: Ասոր հաւատացի, որովհետեւ չափազանց ջղային էր: Յետոյ մարտ 5ին տեղափոխուեցաւ: Իր սենեակը իմինիս կից էր, կրնայի ամէն ինչ լսել: Գիշերը միշտ անհանգիստ կը քնանար:

Ն.- Խելքը գլո՞ւխն էր. միտ դրած էք՝ արդեօք խորհողութիւնը կանոնաւո՞ր էր:

Վ.- Երբեք անքաղաքավար չէ եղած. միշտ ազնիւ եւ քաղաքավարի էր. իր մասին միայն լաւ կրնամ վկայել:

Ն.- Վերնոտ նոպաներու մասին բան մը չէ՞ք գիտէր: Անգամ մը տուն եկած միջոցին դրան առջեւ գետին ինկած է եղեր:

Վ.- Այո', քիչ առաջ ըսած դէպքս է:

Ն.- (Թարգմանին) Հաղորդեցեք ամբաստանեալին թէ վկան իր վրայ աննպաստ բան մը չըսաւ, այսչափ միայն որ անգամ մը հիւանդագին եղած է: - Վկային ուղղուելիք ուրիշ հարցեր կա՞ն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալը շատ կը նուագե՞ր:

Վ.- Այո', միշտ մանդոլին կը նուագէր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Արդեօք կ'երգե՞ր ալ:

Վ.- Այո', տխուր եղանակներ. միշտ մանդոլինը ձեռքն էր, եւ երբ մենակ էր, մանդոլինը ձեռքը սենեակին մէջ վեր վար կը քալէր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Նուագած միջոցին ստեպ օդային կազի լոյսը կը մարե՞ր:

Վ.- Այո'. անգամ մը, երբ միւս պարոնը անոր սենեակն էր, որովհետեւ անոր ըսելիք մ'ունէի, դուռը բացի ներս մտայ տեսայ որ երկուքն ալ մութի մէջ նստած էին, կը ծխէին եւ կը նուագէին: Ըսին ալ թէ մութի մէջ աւելի յարմար տրամադրութիւն կը ստեղծուի:

Ն.- Աւելի խորհրդաւոր էր:

Իրազեկ Դր. Լիպման.- Վկան ըսաւ թէ ամբաստանեալը շատ ջղային էր. ի՞նչ կ'ուզէք ըսել ատով. շատ լո՞ւրջ էր:

Վ.- Այո', շատ լուրջ էր, միշտ լուրջ էր:

Իրազեկ Դր. Լիպման.- Աւելի տխուր քա՞ գու՞մ րթ:

Վ.- Այո':

Իրազեկ Դր. Լիպման.- Ուրիշ երիտասարդներու պէս կենսուրախ չէ՞ր:

Վ.- Շատ անգամ կը զարմանայի թէ ինչն է՞ այդպէս ընկճուած էր:

Իրազեկ Դր. Լիպման.- Մտածկո՞տ էր. արդեօք բանով մը զբաղած մարդու երեւո՞յթ ունէր:

Վ.- Ո՛չ, բաց աստի եւ իրեն հետ շատ գործ չունէի:

Իրազեկ Դր. Լիպման.- Ի՞նչ կը հասկնաք ջղային ըսելով. կ'ուզէք ըսել թէ ցրուա՞ծ էր:

Վ.- Այո', շատ անգամ ինքն իրեն կը խօսէր, այնպէս որ կը կարծէի թէ քովը մարդ կար:

Ն.- Ցերե՞կն ալ:

Վ.- Ո՛չ, գիշերը:

Ն.- Պր. իրազեկը կը հարցնէ թէ արդեօք յաճա՞խ մտամոլար էր:

Իրազեկ Դր. Լիպման.- Վերահա՞հ էր, աւելի ինքն ի՞ր մէջը քաշուած:

Վ.- Շատ վերապահ եր, միշտ լուրջ եր. տուն գալու պէս մանդոլինը փետք կ'առնուր:

Ն.- Ապագայի մասին ամենեւին Ձեզի հետ խօսա՞ծ է:

Վ.- Ո՛չ:

Ն.- Բնաւ հետաքրքրուա՞ծ էք թէ Բերլին գալուն նպատակը ի՞նչ էր:

Վ.- Կ'ըսէր թէ ուսանիլ կ'ուզէր, եւ իրօք ալ երկրորդ օրը արդէն լեզուի ուսուցչուհի մը գտաւ:

Ն.- Ձեր քով բնակած միջոցին երնէք նշմարա՞ծ էք զգալի փոփոխութիւն մը իր հոգեկան տրամադրութեան (Վկայ.- Ո՛չ) եւ կամ իր ամբողջ ապրելակերպին մէջ:

Վ.- Ո՛չ, միշտ անփոփոխ մնաց, երբեմն նոյն իսկ կը սուլէր, ի հարկէ մարդ միշտ տխուր չի կրնար ըլլալ. ընդհարապէս լուրջ այնպէս... ինքնայատուկ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Իւր անցեալէն ամենեւին կը պատմէ՞ր. ծնողքը կորսնցուցած ըլլալուն վրայ կը խօսէ՞ր:

Վ.- Ո՛չ, ինձմէ ելլելէն քանի մը օր ետքը եկաւ ոստիկանական տեղափոխման թուղթը առնելու. այն օրը հարցուցի եւ պատմեց թէ ի՛նչպէս տուն վերադարձին ամենայն ինչ աւերակներու մէջ գտած էր, եւ կ'ըսէր չէր կրնար որոշապէս պատմել, քոյրերը, երեց երբայրը, ծնողքը սպաննուած էին, միայն ինքը կենդանի մնացած էր: Ինձի պատմածը սա էր. յետոյ խօսքը կտրեց, եւ նկատեցի որ չէր ուզէր այլ եւս այդ մասին խօսիլ:

Ն.- Սրտի յուզում մը նկատեցի՞ք իր վրայ:

Վ.- Այո՛, այո՛, արդէն միայն հարցումիս վրայ պատմեց ասոնք ալ:

Ն.- Իրեն տեղափոխուելուն պատճա՞ռը կ'ուզէիք ստուգել:

Վ.- Ո՛չ, ո՛չ. իր բարեկամը դեռ քովս կը բնակէր, ըսաւ թէ անոր հետ խօսիլ կ'ուզէր, յետոյ իր սենեակին մասին պատմեց, այն ատեն էր որ իրեն հարցուցի:

(Վկային ուղղելիք ուրիշ հարցեր չկան:)

Վկայ տիկին Դիտման, Շարլոտտենբուրգ, Հարդենբերգ փողոց թիւ 37:
(Երդումէն ետքը:)

Նախագահ.- Ամբաստանեալը քանի մը շաբաթ Ձեր քովը բնակած է: Իր անհատական բարքին ու վարքին մասին կրնա՞ք բան մը պատմել:

Վ.- Ազնիւ, համեստ, հանդարտաբարոյ եւ մաքրասէր երիտասարդ մ'էր. ամէն բան կարգի կանոնի մէջ կը պահէր: Մարտ 15ի առաւօտը, դէպքին օրը, սպասուհին եկաւ ինձի լուր տուաւ թէ պարոնը սենեակին մէջ կու լար սպասուհիին ըսի, թէ գուցէ մերձաւորներէն մէկը մեռած էր, հանգիստ թող զանիկա, ես չեմ կրնար իրեն օգնել քանի զիս չի հասկնար: Քիչ մը վերջը դուրս ելած էր. բայց ես նախապէս իրեն գացի եւ տեսալ թէ կոնեակ կը խմէր եւ շատ զարմացայ: Դուրս ելլելէն ետքը դարձեալ սենեակը մտայ եւ սեղանին վրայ դեռ կեցած էր այն շիշը, որուն մէջէն կոնեակը խմած էր:

Ն.- Գիտե՞ք արդեօք երբ գնած էր կոնեակը:

Վ.- Սպասուհին կ'ըսէր թէ նոյն առաւօտը:

Ն.- Շիշէն ո՞րչափ խմուած էր:

Վ.- Գրեթէ մէկ երրորդը, երեք քառարդ լիտր բովանդակող շիշ էր, գաղիական կոնեակ:

Ն.- Նոյն առաւօտը ուրիշ ի՞նչ կերած էր:

Վ.- Թեյ խմած էր, ուրիշ օրերու պէս:

Ն.- Որ եւ է կասկած ունեցա՞ք:

Վ.- Ամենեւին, մինչեւ որ սպասուհիս տուն դարձաւ եւ լուր տուաւ ինձի. “Ո՛հ տիկին Դիտման, մեր պարոնը սպանուած է”: Ես պատասխանեցի. “Ի՛նչ է ինե՞նթ էք”: Յետոյ լսեցի թէ ինքը մէկը սպաննած է. իսկզբան չուզեցի հաւատալ:

Ն.- Ամբաստանեալը նոյն օրը իր սովորական հանդարտութիւնը ունէ՞ր, թէ ներքին անհանգստութիւն եւ ցրուածութիւն մը կը տեսնուէր իր վրայ:

Վ.- Օր մը անոր ծանօթներէն մէկը եկած էր եւ ըսաւ. “Պարոնը հիւանդ է, արեւկայ սենեակ մը պետք է տալ անոր”:

Ն.- Բայց Ձեզի եկած ժամանակ մասնաւոր ոչի՞նչ նշմարեցիք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Եւ Ձեր քով բնական ամբողջ ժամանա՞կն ալ չնշմարեցիք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Կ'ուսանէ՞ր:

Վ.- Այո', շատ քիչ անգամ դուրս կ'ելլէր:

Ն.- Այցելուներ ունէ՞ր:

Վ.- Անենեւին:

Ն.- Կը նուագէ՞ր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Նկատած էք արդեօք ջղայի՞ն էր:

Վ.- Այո՛:

Ն.- Վարանո՞տ էր:

Վ.- Չէր կրնար երեսս նայիլ, կը շփոթէր, վարանոտ էր եւ կ'ամչնար:

Ն.- Ահաբեկեա՞լ էր:

Վ.- Ջարհուրածի երեւոյթ ունէր:

Ն.- Ծանր խորհուրդներէ հալածուածի՞ մը պէս:

Վ.- Այո՛:

Ն.- Երբեմն անհասկանալի, անճիշտ եւ շփոթ պատասխաններ կու տա՞ր պարզ հարցերու:

Վ.- Չէ, այդ չեմ կրնար ըսել:

Ն.- Հիւանդագին երեւոյթներ ամենեւին նկատա՞ծ էք:

Վ.- Ո՛չ բայց ինքը կ'ըսէր թէ ջղայնոտ եւ հիւանդ էր:

Ն.- Արդեօք նկատա՞ծ էք, Ձեր բնակարանին մէջ վերնտօղի անկումներ կ'ունենա՞ր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ուրեմն Դուք իր մասին լաւ վկայութիւն կու տաք:

Վ.- Շատ կարգին երիտասարդ մ'էր:

Ն.- (Թարգմանին) Ըսէք ամբաստանեալին թէ այս վկան ալ իր մասին աննպաստ չվկայեց: (Կ'ըսէ):- Կ'ուզէի այս ալ գիտնալ թէ ամբաստանեալը բնակարանը վարձելու համար որո՞ւ հետ Ձեզի եկաւ:

Ամբաստանեալ.- Հայ ուսանողական միութեան նախագահին հետ:

Ն.- Հո՞ւ է ան այսօր:

Ա.- Ո՛չ:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Կը խնդրեմ, ստուգեցէք թէ արդեօք ամբաստանեալը կը յիշէ՞ ա՛յն օրը կոնեակը գնած է եւ թէ ինչո՞ւ կու լար:

Ա.- Օր մը առաջ գնած էի, վասն զի ինք զինքս տկար կը զգայի: Իրիկունը փոքր բաժակ մը խմեցի, նոյնպէս առաւօտը փոքր բաժակ մը թէյի հետ առի:

Ն.- Դէպքին առաւօտը շատ խմա՞ծ էք:

Ա.- Ո՛չ, թէյին հետ քիչ մը միայն խմեցի:

Ն.- Բաժակ մը բերել տուի՞ք:

Ա.- Բաժակ մը բերել տուի, չափ մը ունենալու համար:

Ն.- Ամբաստանեալը կը պնդէ թէ քիչ խմած է, նոյն առաւօտը լացա՞ծ է:

Վ.- Ես ականջովս լսեցի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Արդեօք տխուր երգ մը չէ՞ր:

Վ.- Կրնայ ըլլալ. այդպիսի եղանակներ ունին, բայց ես կարծեցի թէ կու լար:

Ն.- Ամբաստանեալ, կը յիշէ՞ք դէպքին առաւօտը, եթէ լացած չէք, արդեօք երգեր մը մնջա՞ծ էք:

Ա.- Ո՛չ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալին կոնեակը դուրս հանելը Դուք ինքնի՞դ տեսաք թէ սպասուհին. ե՞րբ տեսաք, մօտաւորապէս քանիի՞ն, ժամը ե՞տ թին, ուրի՞ն միջոցներուն:

Վ.- Իննէն վերջը:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Յետոյ դո՞ւրս ելաւ, ե՞րբ վերադարձաւ:

Վ.- Ալ չվերադարձաւ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ի հարկէ վերադարձած է. կ'ըսէք թէ ժամը եօթի, ուրի միջոցներուն դուրս ելած է:

Ն.- Ժամանակը կրնայ յարմարիլ:

Վ.- Մօտաւորապէս ժամը 11ի մօտ դուրս ելաւ. թէյը խմելէն ետքը դեռ սենեակը մնաց. սենեակը յետոյ միայն կարգի դրի:

Ն.- Ամբաստանեալին դուրս ելլելէք առաջ տարօրինակ աղմուկ մը լսած էք արդեօք եւ կարծեցիք թէ կու լար: Ամբաստանեալին մեկնելէն ետքը տեսաք արդեօք որ կոնեակին մէկ երրորդը պակասած է: Ստոյգ է որ կոնեակը օր մը առաջ գնուած էր:

Վ.- Չեմ գիտեր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Գիտէ՞ք որ շիշը նոյն առաւօտը բացուած էր:

Վ.- Սպասուհին աւելի որոշ պիտի գիտնայ:

Ն.- Ամբաստանեալ, շիշը օր մը առաջ գնած եւ անկէ խմած էիք:

Ա.- Շիշը բանալ տուի այն տեղը ուսկից գնեցի:

Ն.- Եւ իրիկունը թէյի հետ խմեցի՞ք:

Ա.- Իրիկունն ալ թէյի հետ քիչ մ'առի:

Ն.- Առաւօտն ալ բաժակով չխմեցի՞ք:

Ա.- Ո՛չ:

Ն.- Ամբաստանեալը կ'ուրանայ կոնեակը գաւաթով խմած ըլլալը: Այս անմեկնելի է:

Ա.- Առաջ գաւաթի մէջ լեցուցի, բայց յետոյ թէյին խառնեցի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Վկա՛յ, նկատած էք, ամբաստանեալը գերմաներէն կարդալ կը փորձէր. գերմաներէնի վարժութիւններ կ'ընէ՞ր:

Վ.- Այո՛:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ձեզմէ դաս կ'առնէ՞ր:

Վ.- Ո՛չ բայց դաս ունէր, գոնէ կ'ըսէր թէ դաս կ'առնէր:

Դատախազ.- Ամբաստանեալը Ձեր քովը եկած ատեն արդէն ատրճանակը ունէ՞ր:

Ն.- Ատրճանակը տեսա՞ք:

Վ.- Ո՛չ:

Դր. Լիպման.- Ամբաստանեալը մեղուածի՞ թէ ընկճուածի տպաւորութիւն կը թողուր:

Ն.- Վարանո՞տ էր:

Վ.- Այո՛, վարանոտ էր. (Ժպտալով) գոնէ ես կը կարծէի թէ երիտասարդը շատ վարանոտ էր...

Ն.- Դո՛ւք, տիկին Շտեյլբաում, ամբաստանեալին Ձեր քովը բնակած ժամանակ ատրճանակը տեսա՞՞ծ էիք:

Վկայ Շտեյլբաում.- Ո՛չ:

Ն.- Չէի՞ք ալ գիտեր որ ատրճանակը սնտուկին մէջ էր:

Վկայ Շտեյլբաում.- Ո՛չ:

Ն.- Ամբաստանեալի գոյքերը շա՞տ էին:

Վկայ Շտեյլբաում.- Ո՛չ, մի միայն սնտուկ մ՛ունէր, որ միշտ բաց կը թողուր:

Ն.- Սնտուկը երբ եւ իցէ բացած ունի՞ք:

Վկայ Շտեյլբաում.- Բաց էր, ինքը բացած եւ զգեստի պահարանին մէջ զետեղած էր:

Ն.- Ամբաստանեալ, ատրճանակը ո՞ր պահած էիք:

Ա.- Սնտուկին մէջն եղած ըլլալու է:

Ն.- Տիկին Շտեյլբաումի քո՞ վն ալ:

Ա.- Սնտուկիս մէջն էր:

Վկայ Շտեյլբաում.- Ես չեմ տեսած. միայն ձեռքի փոքր սնտուկ մ՛ունէր:

Ն.- Չարմանալի է որ յաճած սնտուկը նայած էք եւ ատրճանակը չէք տեսած:

Վկայ Շտեյլբաում.- Չեմ կրնար ըսել թէ սնտուկը յաճախ նայած էի:

Ն.- Տիկին Շտեյլբաում, այս վկայութիւնը երդման տակ կուտաք: Ատրճանակը անգամ մ՛ալ չէ՞ք տեսած:

Վկայ Շտեյլբաում.- Եւ ո՛չ անգամ մը:

Շտեյլբաում եւ Դիտման վկաներուն ուրիշ հարցեր ուղղել հարկ չտեսնուեցաւ:

Վկայ Լուա Բայլընզոն, ճարտարարուեստի վարժուհի, Բերլին, 21 տարեկան:
(Երդումէն ետքը:)

Նախագահ.- Դուք ամբաստանեալին լեզուի դաս կու տայի՞ք:

Վ.- Այո՛:

Ն.- Իր բարք ու վարքի մասին բան մը կրնա՞ք պատմել:

Վ.- Յունուար 18 էն սկսեալ իրեն դաս կու տայի. իսկգբան շատ լաւ կը սորվէր, բայց վերջը ցրուած էր:

Ն.- Ըսա՞ծ է Ձեզի թէ հիւանդ էր եւ բժշկի գացած էր:

Վ.- Վերջերը պատմեց թէ Պրոֆ. Կասիրերի գացած էր, որ դեղ մը պատուիրած էր, եւ թէ աշխատիլը դժուար կու գար. դասի մը միջոցին նկատեցի նոյն իսկ թէ այլ եւս չէր կրնար կարդալ ի՛նչ գրուած ըլլալը չէր գիտեր. յայտնի կը տեսնուէր թէ հիւանդ էր, եւ ես ըսի թէ դասերը շարունակելը աննպատակ էր, ասոր վրայ ընդմիջուեցան դսերը:

Ն.- Մօտաւորապէս ե՞րբ էր:

Վ.- Փետրուարին:

Ն.- Յունուար 18ին սկսած է, ե՞րբ դադարեցուց:

Վ.- Փետրուար 20ին մօտաւորապէս, ամէն պարագայի մէջ փետրուարի վերջին կէսին:

Ն.- Վերջէն դարձեալ սկսա՞ւ:

Վ.- Վերջէն անգամ մ՛ալ եկաւ եւ ըսաւ թէ զինքը լաւ չէր զգար. եւ արդէն կը տեսնուէր որ հոգեկան վիշտ մ՛ունէր, միշտ տխրադէմ էր:

Ն.- Այս տխրութեան վրայ կը խօսէ՞ր:

Վ.- Անգամ մը միայն, երբ իր հայրենիքի մասին հարցուցի: Ըսաւ թէ այլ եւս հայրենիք չունէր, իր բոլոր ազգականները սպաննուած էին: Տառապանքն այնքան բացայայտ կ՛արտացոլանար այս պատասխանին մէջ, որ աւելին չուզեցի հարցնել:

Ն.- Աւելին չհարցուցի՞ք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Անկէ ետքը յաճախ տեսած էք զինքը:

Վ.- Այո՛, փետրուար 27ին կամ 28ին անգամ մ՛ալ եկաւ:

Ն.- Ամբաստանեալը ի՞նչպէս կը սորվէր:

Վ.- Սկիզբները շատ լաւ կը սորվէր, բայց վերջերը շատ ցրուած էր. ինքն ալ կ'ըսէր արդէն. “Բան մը չեմ հասկնար”:

Ն.- Չի կրնա՞ր ըլլալ որ դասերը մարտի սկիզբն ընդ միջած ըլլան:

Վ.- Կրնայ ըլլալ:

Ն.- Գուցէ մարտ 5 էն քիչ առաջ, բնակարանը փոխելէն ետքը:

Վ.- Նոր բնակարանէն այլ եւս չէր գար, միայն Աուգսբուրգէր փողոցէն կու գար:

Ն.- Կ'երեւայ թէ իրապէս պատճառ մը կար, որ զինքը ստիպած է բնակարանը փոխելու եւ դասերը դադրեցնելու:

Վ.- Չեմ գիտեր: Մարտին, գուցէ դէպքէն շաբաթ մ'առաջ, ճիշդ ժամանակը չեմ կրնար ըսել, հեռաձայնով լուր տուաւ ինձի թէ բնակարանը փոխած էր եւ թէ դասը վերստին պիտի սկսէր, երբ ինք զինքը լաւ զգար:

Ն.- Ուրեմն փետրուարի վերջը դասը դադրեցուցած ըլլալու է:

Վ.- Այո՛:

Ն.- Ամբաստանեա՛լ, արդեօք տեսիլը ունենալէ՞ն ետքը դասը դադրեցուցած էք թէ ասոր ուրիշ պատճառներ կային:

Ամբաստանեալ.- Հիւանդ եւ տկար ըլլալուս համար դասը դադրեցուցի եւ բնակարանս փոխելէն ետքը հեռաձայնեցի թէ դասերը վերստին սկսելու միտք ունիմ, երբ առողջական վիճակս բարուրքուի:

Ն.- Ուրեմն դասի ընդմիջումը տեսիլքին հետ կապ չունի՞:

Ա.- Պատճառը միայն առողջական վիճակս է:

Ն.- Տիկին Դիտմանի քով բնակած ժամանակ չէի՞ք ձանձրանար:

Ա.- Ինչո՞ւ պիտի ձանձրանայի:

Ն.- Քանի որ ալ եւս դաս չունէիք:

Ա.- Դասերը ինձի մասնաւոր հաճոյք մը չէին պատճառեր:

Ն.- Բայց եթէ դաս առնէիք, փոփոխութիւն մ'ունեցած պիտի ըլլայիք: Ուրեմն տիկին Դիտմանի քով ինչո՞վ կը զբաղէիք:

Ա.- Շատ անգամ հայրենակիցներու կ'երթայի:

Ն.- Գերմաներենի մեջ վարժուելու փորձեր կ'ընե՞իք:

Ա.- Առաւօտ ելլելէս ետքը կը կարդայի:

Ն.- Ընթերցուածի՞ զիրք էր. գերմաներէն ուրիշ զիրք ալ ունե՞իք:

Ա.- Անկէ գատ չունե՞ի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Այնչափ յառաջացած էիք արդեօք, որ զոր օր ամբաստանագիրը, թէեւ քիչ մը դժուարաւ, կարդալ եւ հասկանալ կարենայիք:

Ա.- Ձեռագիրը շատ դժուարաւ կը կարդամ, տպագիրն աւելի սահուն:

(Բայլընգոն վկային ուրիշ հարցեր չեն ուղղուիր:)

Վկայ Երուանդ Աբելեան, քարտուղար հայկական ընդ Հիւպատոսարանի, Բերլին, 23 տարեկան, լուսաւորչական:
(Երդումէն ետքը:)

Ն.- Տիկին Շտեյլբաումի քով, Աուգսբուրգէր փողոցը, ամբաստանեալին հետ միասին բնակած էք եւ անոր բարեկամացա՞ծ:

Վ.- Այո՛, անցեալ տարի դեկտեմբերի կեսին բարեկամի մը միջոցաւ ճանչցայ զինքը: Ձինքը ինձի ներկայացուցին եւ հարցուցին թէ արդեօք իմ քովս անոր բնակարան մը չէի՞ կրնար ճարել, հայրենակից էր եւ լեզու չէր գիտեր: Կը բաղձար հայրենակիցներու մէջ ըլլալ: Ասոր վրայ տանտիկնոջ հետ խօսեցայ, որ ըսաւ թէ մինչեւ մայիս 1 սենեակ մը, որ երբեք վարձու չէր տար, ինձի կը տրամադրէր. այնպէս հաւանելէն ետքը յաջորդ օրը ամբաստանեալը եկաւ: Այս՝ Ծնունդէն վերջը դեկտեմբերին էր.

եւ այդ ժամանակ պարի-վարպետ Ֆրիդրիխէն պարի դաս կ'առնէի, Թեիլիբեանը յորդորեցի որ ինքն ալ գայ: Ընթացքը կը սկսէր նոյեմբերին, ինքը քիչ մը ուշ մտաւ. ամէն երեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի կ'երթայինք՝ Էֆթեանը, Թեիլիբեանը եւ ես առանձնական դասընթացք էր եւ գրեթէ երեք ամիս տեւեց:

Ն.- Ուրիշ ի՞նչ կ'ընէիք Դուք հիւպատոսարանի մէջ Ձեր գործքը կը կատարէի՞ք. ամէն օր դուրս կ'ելլէի՞ք:

Վ.- Իրիկունը:

Ն.- Ամէ՞ն օր ամբաստանեալին հետ էիք:

Վ.- Միասին կը բնակէինք. յը մը իրեն հետ առանձին էի. ըսաւ ինձի թէ կ'ուզէր սորվիլ եւ արուեստագետ ըլլալ, ասով աւելի չհետաքրքրուեցայ: Օր մը պարի դասի միջոցին գետին ինկաւ,

օգնեցի իրեն, եւ ինք զինքը գտաւ. իր նոպան 5-10 վայրկեան տեւեց, յետոյ ինքն իրեն գալէն իտքը ուզեց տուն դառնալ:

Ն.- Ուրիշ անգամ ալ այսպիսի անկում մ'ունեցա՞ւ:

Վ.- Ո՛չ:

Ն.- Բժշկի երթալու պատճառը այս անկո՞ւմն եղաւ:

Վ.- Այո՛, Դր. Հակէի գացած էր, որ զինքը քննած էր: Թէ յետոյ ի՛նչ պատած է, չեմ գիտեր, ներկայ չեմ եղած:

Ն.- Վերնոտ բնոյթով ուրիշ անգամներ ալ հիւանդագին նոպաներ չէ՞ք նկատած բացի այն մէկէն, որ պարի դասի միջոցին պատահած էր:

Վ.- Դեռ զանազան անգամներ եւ անգամ մըն ալ սանդուխին վրայ այսպիսի նոպաներ ունեցած է. բայց ես ներկայ չեմ գտնուած, ինքը կը պատմէր:

Ն.- Գլխու ցաւի վրայ կը գանգատէ՞ր:

Վ.- Այո՛, կ'ըսէր թէ գլխու ցաւ ուներ եւ անկէ զատ գլխուն վրայ վերք ալ ուներ, չեմ կրնար ըսել թէ երբ էր այս. յունուարին ըլլալու է. Ժարի դասի միջոցին ունեցած նոպայէն առաջ էր:

Ն.- Ամբաստանեալը ինչո՞վ կը զբաղէր. դասե՞ր կ'առնէր եւն...: Յունուարի կէսէն մինչեւ փետրուարի վերջը Օր. Բայլնգոնէ դաս կ'առնէ՞ր, ո՞րչափ ստէպ:

Վ.- Կարծեմ շաբաթը երեք անգամ:

Ն.- Տունն ալ կ'աշխատէ՞ր:

Վ.- Այո՛:

Ն.- Ուրիշ հիւանդագին երեւոյթներ նկատա՞ծ էք, զօր ջղագարութիւն, ցրուածութիւն:

Վ.- Այո՛ շատ զգայուն էր, երբ իրեն մէկ ժխտած բանը հաստատէի, կ'առնուէր բայց ընդհանրապէս իրարու հետ լաւ էինք:

Ն.- Իր նախկին կենաց մասին բան մը գիտե՞ք. իր գլխէն անցածներուն վրայ Ձեզի հետ կը խօսէ՞ր:

Վ.- Այո՛, պատմած էր թէ իր ազգականները կորսնցուցած էր:

Ն.- Ե՞րբ պատմեց Ձեզի:

Վ.- Շատ առաջ էր. ճիշտ չեմ կրնար ըսել թէ երբ:

Ն.- Խօսա՞ծ էք այն մասին թէ իր ազգականներուն կորստեան պատճառը ո՞վ եղած էր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Թալէաթի Բերլին գտնուելուն վրայ խօսք ըրա՞ծ էր. եւ կամ թէ անոր բան մ'ընելու էր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Տիկին Դիտմանի քով փոխադրուելու դիտաւորութիւնը Ձեզի կանխապէս յայտնա՞ծ էր:

Վ.- Ո՛չ. չէր ըսած թէ ո՛ր պիտի փոխադրուէր. օր մը սակայն խնդրեց որ տիկին Շտեյլբաումի հաղորդեմ թէ ինքը բնակարանէն ելլել կ'ուզէր, որոհետեւ բժիշկն ըսած էր թէ օդային կազը կը վնասէր իրեն:

Ն.- Ուրեմն իր փոխադրուելուն իբրեւ պատճառ Ձեզի ալ իր առողջական վիճակը ցոյց տուաւ:

Վ.- Այո՛:

Ն.- Ձեզի ըսա՞ծ էր թէ Հարդենբերգ փողոցը բնակարան գտած էր:

Վ.- Ո՛չ, չէի գիտեր թէ ո՛ր էր. այդ միջոցին մեր նախկին բարեկանութիւնը չէր մնացած:

Ն.- Ուրիշներու հետ բարեկամութիւն կ'ընէ՞ր. ուրիշները զօր պ. Էֆթեանը, իրեն կու գայի՞ն:

Վ.- Այո՛, շատ անգամ երեքս միասին էինք:

Ն.- Բայց Դուք վերջերս իրեն հետ շա՞տ քիչ յարաբերութիւն ունէիք:

Վ.- Այո՛:

Ն.- Տեղափոխուելէն քիչ առաջ իր բարք ու վարքին մէջ փոփոխութիւն մը նկատեցի՞ք, թէ միշտ նոյնը մնաց:

Վ.- Այո՛:

Ն.- Երբ Ձեզի ըսաւ թէ տեղափոխուիլ կ'ուզէի, առարկութիւն մը չըրի՞ք:

Վ.- Տեղափոխուելուն պատճառը հարցուցի:

Ն.- Եւ առողջական վիճա՞կը պատճառ բերաւ:

Վ.- Այո՛:

Ն.- Գիտէի՞ք թէ ամբաստանեալը ատրճանակ մ'ունէր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Պայուսա՞կ մ'ունէր:

Վ.- Այո՛:

Ն.- Պայուսակին մէջ նայա՞ծ էք. ի՞նչ կը կարծէք, ամբաստանեալը Աուգսբուրգէր փողոցը եղած միջոցին արդէն ատրճանակը ունէ՞ր:

Վ.- Այդ չեմ գիտեր:

Ն.- Երբեք Թալէաթը սպաննելու դիտաւորութեանը վրայ չէ՞ խօսած:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ձեզի չէր յայտնած թէ Թալէաթը փողոցը տեսած էր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Սակայն ա՞ յնչափ յաճախ միասին գտնուած էք:

Վ.- Յետոյ ադոր վրայ ես ալ զարմացայ. բայց մենք քաղաքականութեան վրայ չէինք խօսեր:

Ն.- Կարծեմ հոս քաղաքականութեամբ զբաղվելու խօսք չկայ: Գիտէի՞ք որ Թալէաթ փաշա Հարդենբերգ փողոցը կը բնակէր:

Վ.- Ո՛չ. արդէն Թեհլիբեան Թալէաթի խօսքը չէր ըներ:

Ն.- Ձեզի հետ Թալէաթի վրայ խօսք չէ՞ ըրած:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ամբաստանեալը Ձեզմէ, Էֆթեանէ եւ Թէրզիպաշեանէ զատ ուրիշներու հետ ալ յարաբերութիւն ունէ՞ր:

Վ.- Այո՛:

Ն.- Չէ՞ք կրնար ըսել թէ ի՞նչպէս ամբաստանեալը գործին առաջնորդուած է եւ կամ նոյն իսկ դէպքին մասին ըսելիք մը չունի՞ք:

Վ.- Ո՛չ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Երուսալէմէր փողոցին մէջ ինկած ըլլալը լսա՞ծ էիք:

Վ.- Այո՛:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ե՞րբ, յունուարի՞ն, դեկտեմբերի՞ն, պարի դասի դէպքէն առա՞ջ թէ ետքը:

Վ.- Կարծեմ յունուարին էր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Թեև իրեա՞նը պատմեց Ձեզի:

Վ.- Այո՛:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ընդհանրապես արդեօք հայերու քով սովորութի՞նն է, հայ ժողովուրդին գլխէն անցած այս զարհուրելի ջարդերու վրայ ամենեւին կամ որչափ կարելի է քիչ խօսիլ:

Վ.- Անոնց վրայ կը խօսին, բայց ոչ ստեպ:

Ն.- Այդ դէպքերն արդէն անցեալին կը պատկանին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ջարդերու վրայ խօսք եղած ժամանակ, ի՞նչ բանի վրայ կը ծանրանաք:

Վ.- Մեր գլխէն անցած բաներու վրայ կը խօսինք:

Ն.- Դուք չէի՞ք գիտեր թէ Թալէաթ հոս էր, եւ ամբաստանեալն ալ չէ՞ր պատմած:

Վ.- Ո՛չ. իրեն հետ այս բաներուն վրայ ամենեւին չեմ խօսած:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Երբ Ձեզի ըսաւ թէ տեղափոխուելու միտք ունէր, իր խօսքերէն կրցա՞ք իմանալ՝ արդէն տեղ վարձա՞ծ էր, թէ պարզապէս Ձեզի կը յայտնէր թէ տեղափոխուելու դիտում ունէր:

Վ.- Եսաւ թէ մինչեւ շաբաթ օրը կ'ելլեմ բնակարանէս:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Բայց Ձեզի չէ ըսած թէ դժգոհ էր եւ անոր համար ալ ելլել կ'ուզէր:

Վ.- Ո՛չ. այդ չէ ըսած:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Դուք արդեօք այն զգացումը չունեցա՞ք թէ արդէն բնակարան գտած էր, ապա թէ ոչ չէր կրնար այդպէս բացարձակ ըսել թէ մինչեւ շաբաթ պիտի ելլէր, եւ այդ ըսած է ինքը:

Վ.- Այո:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Տիկին Դիտմա՛ն, երբ ամբաստանեալը Ձեր քովը բնակարան վարձեց, այդ բնակարանը արդէն դատա՞րկ էր. մի եւ նոյն օ՞րն եկաւ թէ քանի մ'օր վերջը:

Վկայ տիկին Դիտման.- Կիրակի առաւօտ, վարձելէն քանի մ'օր ետքն էր, մօտաւորապէս 3-4 օր, վասն զի սենեակը դեռ ազատ չէր:

Նախագահ.- (Թարգմանին) Ընէք ամբաստանեալին որ պ. Աբէլեան կը վկայէ թէ երեք անկումներու մասին լսած է եւ թէ ինքը պ. Աբէլեանին Աուգստուրգէր փողոցէն տեղափոխուելուն պատճառ բերած է իր առողջական վիճակը: (Կը թարգմանուի:)

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Պարի դասին քանի՞ հոգի էիք:

Վկայ Աբէլեան.- Գրեթէ 60-70 հոգի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Օրիորդներուն հետ խօսիլ կը փորձէ՞ր. քաշուած էր թէ համարձակ էր:

Վ.- Ընդհանրապէս համարձակ չէր, որոշ օրիորդի մը հետ չէր պարեր, այլ զանազան. անոնց հետ կը խօսակցէր, վասն զի կը յուսար թէ ասով գերմաներէնի մէջ պիտի բացուէր:

Դր. Լիպման.- Ձեզի իբրեւ շատ գոց, լրակեաց մարդ զարմանալի չէ՞ր երեւար:

Վ.- Լուռ ու մունջ էր եւ ուրիշներուն պէս ալ զուարթ եւ ազատեալ:

Դր. Լիպման.- Շատ զարմանալի է որ կ'ըսէք թէ ջարդերու վրայ բնաւ չէիք խօսիլ, ինքը որ այնչափ խոր մասնակցուէին մ'ունեցած է, ի՞նչպէս անոնց խօսքը չէր ըներ:

Վ.- Օր մը մեր խօսակցութեան ժամանակ Լեպսիուսի Հայաստանի վրայ գրած գիրքը կը կարդայինք, յանկարծ գիրքը ձեռքէս խլեց եւ ըսաւ. "Ձգէ, հին վերքերը չբանանք":

Դր. Լիպման.- Ուրեմն խոյս կու տար եւ չէր ուզեր զանոնք վերյիշել:

Վ.- Գիրքը ձեռքէս առաւ եւ ըսաւ. "մէկդի դնենք գիրքը եւ զուարճանանք":

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Արդեօք ծանօտ է Ձեզի, պարի դասի ժամանակ պատահած անկումը մասնաւոր պատճառ մ'ունէ՞ր:

Վ.- Ո՛չ. միայն ըսաւ թէ լաւ չէր զգար ինք զինքը ու կ'ուզէր տուն դառնալ:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Անկման միջոցին եղածը ճի՞շ թէ հեծեծանք էր. եւ արդեօք հեծեծանքին հետ բառեր ալ արտասանէ՞ց:

Վ.- Ո՛չ, ճիշ չէր, հեծեծանք էր:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Ամբաստանեալը կը դողա՞ր:

Վ.- Այո', բերանը կը փրփրէր:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Փրփուրը գունատ՞ր էր:

Վ.- Ո՛չ:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Դոդը ո՞րչափ տեւեց:

Վ.- Գրեթէ 10 վայրկեան:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Յետոյ անմիջապէս արթնցա՞ւ:

Վ.- Այո՛:

Իրագեկ Պրոֆ. Դր. Ֆորստեր.- Կ'ըսէք թէ նոպային մասնաւոր պատճառ մը չկար. կարելի չէ՞ որ առանց Ձեր գիտութեան ամբաստանեալը անկէ քիչ առաջ որ եւ է պատճառով վերյիշած ըլլար ջարդերը:

Ն.- Նոպաները քանի մ'անգամ կրկնուած են:

Պրոֆ. Դր. Կասիրեր.- Վկան կ'ըսէ թէ պատճառ մը չի գիտեր. բայց որոշ պատճառի մը գոյութեան հնարաւորութիւնը միշտ կը մնայ. կարալի չէ՞ արդեօք որ ամբաստանեալը քիչ առաջ իր չորս դիմ դիակներ տեսած ըլլայ եւ անով ջարդերը վերյիշած. այդ մասին բան մը ծանօթ է Ձեզի:

Վ.- Ո՛չ. բայց ինձի ըսած էր առաջ թէ նոպաները ունենալէ առաջ հոտ մը կ'առնէ եւ այնուհետեւ գետին կ'իյնայ:

Իրագեկ Դր. Շտեօրմեր.- Կրնա՞մ Ձեզի յիշեցնել որ հայկական հիւպատոսարանի մէջ ինձի ըսած էիք թէ անկումը կը սկսէր բարձր սուր ճիչով մը:

Վ.- Չեմ կրնար ըսել՝ ճիչ թէ հեծեծանք էր, ամէն պարագայի մէջ չորս դիմ կը շօշափէր ու կ'իյնար. ատելին չեմ կրնար ըսել:

Վկայ Լեւոն Էֆթեան, Բերլին, 21 տարեկան, կաթոլիկ:
(Երդումէն ետքը)

Նախագահ.- Պարիսէն ե՞րբ Բերլին եկաք:

Վկայ.- 1920 փետրուարին:

Ն.- Անկէ ի վեր Ձեր ազգականներու քո՞վ կը բնակիք:

Վ.- Փեասայիս՝ Թերզիպաշեանի քով, որ Օրանիէն փողոց թիւ 75 կը բնակի:

Ն.- Ծխավաճառի խանո՞ւթ ունի հոն:

Վ.- Այո՛:

Ն.- Անոր կիներ՝ Փեր քոյրը ալ հո՞ն կը բնակի:

Վ.- Այո՛:

Ն.- Ձեր քոյրն ալ Երզնկայէ՞ն է:

Վ.- Ո՛չ. Կարնեցի է:

Ն.- Ստո՞յգ է, Բերլինի մէջ ամբաստանեալին հետ ստեպ յարաբերութիւն ունեցա՞ծ էք:

Վ.- Այո՛:

Ն.- Իրեն հետ պարի-վարպետ Ֆրիդրիխի քով պարի դասի հետեւա՞ծ էք:

Վ.- Այո՛:

Ն.- Իր բնակարանին մէջ, Աուգսբուրգէր փողոցը, իրեն այցելա՞ծ էք:

Վ.- Երկու կամ երեք անգամ:

Ն.- Ամբաստանեալը Օրանիէն փողոցը Փեր ազգականներուն կու գ՞ար:

Վ.- Ամէն շաբաթ գոնէ անգամ մը կու գար:

Ն.- Հոն Ձեր ազգականներուն հետ կը խօսակցէ՞ր:

Վ.- Այո՛:

Ն.- Իր վրայ նոպաներ եւ հիւանդութիւններ նկատա՞ծ էք:

Վ.- Ինքը կը պատմէր միշտ թէ ջղային հիւանդութիւն մ'ունէր. միշտ տխուր էր:

Ն.- Ի՞նչ բանէ կը գանգատէր, հիւանդութիւնը ի՞նչ բանի մէջ կ'երեւար. դէմքէն կ'երեւա՞ր արդեօք որ ցրուած, մելամաղձոտ եւ տխուր էր:

Վ.- Տխուր էր:

Ն.- Պարի դասին անենեւին ուրախ չէ՞ք եղած:

Վ.- Արդէն գլխաւորաբար անոր համար զինքը հոն առաջնորդեցինք, մէկ կողմանէ ալ գերմաներէն սորվելու համար:

Ն.- Ինչո՞ւ տխուր էր, իր բնաւորութեա՞ն պատճառով:

Վ.- Այո՛:

Ն.- Իր անցեալ տխուր յիշատակներուն՝ ծնողաց եւ եղբայրուքոյրերու կորստեան, ջարդերու վրայ կը խօսէ՞ր:

Վ.- Քոյրս շատ անգամ խօսք կը բանար, բայց ինքը չէր ուզեր:

Ն.- Ձեր քոյրը ե՞րբ վերադարձած է:

Վ.- Տարի մ'առաջ:

Ն.- Դուք ջարդերու մէջ բազմաթիւ ազգականներ կորսնցուցա՞ծ էք:

Վ.- Իմ ծնողքս ալ ջարդերու մէջ սպանուած են: Ես 1912 Պոլիս եկայ երեք տարի, մինչեւ 1915 դպրոց կը յաճախէի: Յետոյ պատերազմը ծագեցաւ եւ ես չկրցայ հայրենիք դառնալ. բայց իմացանք որ տեղահանութիւնները արդէն սկսած էին. վերջէն միայն լուր առի թէ այս ջարդերու մէջ իմ ծնողքս եւ ազգականներս մեռած էին եւ թէ միայն երկու եղբայր եւ քոյրս ազատած էին:

Ն.- Ո՞ր ջարդերու ժամանակ սպաննուած են Ձեր ծնողքը:

Վ.- Կարնոյ:

Ն.- Ե՞րբ պատահած են այդ ջարդերը:

Վ.- 1915-1916, ճիշտ ժամանակը չեմ գիտեր:

Ն.- Դուք այս Ձեր եղբայրներէ՞ն եւ քրոջմէ՞ լսած էք:

Վ.- Քոյրս լաւ գիտէ, ինքը Կարին էր:

Ն.- Ամբաստանեալին հիւանդութեան եւ վերնոտութեան մասին բան մը չէ՞ք գիտեր:

Վ.- Լսած եմ, բայց ներկայ եղած չեմ. լսած եմ նաեւ որ մեղանալիք էր:

Ն.- Պարի դասի միջոցին պատահած դէպքէն զատ, ուրիշ անգամ չէ՞ք տեսած:

Վ.- Ո՛չ:

Ն.- Կը պատմէ՞ր թէ ստեպ այսպիսի նոպաներ կ'ունենար:

Վ.- Այո՛, կ'ըսէր թէ տկար էր: Նոյն իսկ իրմէ լսած եմ փողոցի վրայ ունեցած անկումներուն մանրամասնութիւնները, եւ թէ ի՛նչպէս ինկած էր:

Ն.- Գիտէի՞ք որ տիկին Շտեյլբաումի քովէն ելլել կ'ուզէր:

Վ.- Ո՛չ:

Ն.- Այդ յանկարծական տեղափոխութիւնը Ձեզ չզարմացո՞ւց: Ձեր հայրենակցին՝ Աբելեանի քով կը բնակէր:

Վ.- Կ'ըսեր թե ելլել կ'ուզեր, վասն զի ելեկտրական լոյս չկար հոն:

Ն.- Ե՞րբ ըսաւ այս Ձեզի, կը յիշէ՞ք:

Վ.- Տեղափոխուելէն քիչ առաջ:

Ն.- Ատոր վրայ անմիջապէս տեղափոխուեցա՞ւ:

Վ.- Ամիս մ'ետքը:

Ն.- Սարտի սկիզբը Հարդենբերգ փողոցը անցած է, ուրեմն ե՞րբ խօսած էր Ձեզի այդ մասին:

Վ.- Փետրուարի սկիզբը

Ն.- Թե տեղափոխուի՞լ կ'ուզեր:

Վ.- Կ'ըսեր թե տեղափոխուիլ կ'ուզեր:

Ն.- Դէպքի մասին բան մը գիտէ՞ք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Գիտէի՞ք որ Թալէաթ փաշա Բերլին էր:

Վ.- Մտքէս չէր անցեր:

Ն.- Եթէ երբեք չէիք ալ գիտեր՝ շրջող զրոյցներէն իմացած կրնայիք ըլլալ:

Վ.- Կ. Պոլիս այնպէս կ'ըսէին:

Ն.- Դուք 1920 յունուարի վերջերը Պարիսէն Բերլին եկած էք, անկէ ի վեր միշտ Բերլին մնացիք:

Վ.- 1918ին զինադադարին արդէն կ'ըսուէր թե Թալէաթ փաշա Բերլին կը գտնուէր. բայց ստոյգ չէր գիտցուէր:

Ն.- (Թարգմանին) Ըսէք ամբաստանեալին. վկան կ'ըսէ թե ինքը ամբաստանեալին անկումները չէ տեսած, թե ամէն շաբաթ անոր կ'այցելէր եւ ջարդերու վրայ ընդհանրապէս չէր խօսեր: (Կը թարգմանէ:)

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- (Վկային) Ձեր շրջանակներու մէջ հայկական աղէտներուն Թալէաթ փաշան միակ պատասխանատու ըն կը համարուէր: Չեմ կրնար ըմբռնել թե ի՞նչպէս կ'ըլլայ որ կասկածը ըլլալէն ետքը հայերէն եւ ոչ մէկի աշխատած է հոս ստուգելու թե արդեօք հայկական այս ջարդերուն հեղինակը, Թալէաթ փաշան Բերլին է: Մէկուն ալ փոյթը չէ՞ր. բայց այս Ձեզ մեծապէս շահագրգռելու էր: Թալէաթ փաշայի Բերլին գտնուելուն զրոյցը վերջերս ալ կը շրջէր. Դուք այս մասին միա՞յն Կ. Պոլիս լսած էիք:

Վ.- Ես չեի գիտեր թե Թալէաթ փաշա Բերլին էր:

Ա.- Ես ալ չեի գիտեր:

Ն.- Ամբաստանեալ, բայց Դուք Թալէաթի պատահած էիք. ինչո՞ւ այս հանդիպումէն ետքը Ձեր հայրենակիցներուն այդ կարեւոր դէպքը չէք պատմած:

Ա.- Կը վախնայի, որ վրաս պիտի ծիծաղէին:

Ն.- Ի՞նչպէս, չէ՞ որ Թալէաթը առ հասարակ ջարդերու հեղինակը կը նկատուէր: Թերզիպաշեան միշտ անոր վրայ կ'ուզէ եղեր խօսիլ, ինչո՞ւ անոր չիմացուցիք:

Ա.- Անոր վրայ չխօսեցայ:

Ն.- Ինչո՞ւ գաղտնի պահեցիք:

Ա.- Չէի շահագրգռուեր:

Ն.- Բայց մե՞նք կը շահագրգռուինք:

Ա.- Եթէ անոր վրայ խօսէի, շատ մը հարցումներ պիտի ուղղէին:

Ն.- Ուրեմն չէիք ուզեր որ Ձեր հայրենակիցները անհանգիստ ըլլային եւ Ձեզ հետաքրքիր հարցերով նեղէին:

Ա.- Այդպիսի վիճակի մը մէջ էի որ չէի ուզեր որ այդ մասին խօսուի:

Ատենակոչ կ'ըլլայ վկայ դատական գաղտնի խորհրդական Շուլցէ:

Վկայ Շուլցէ.- Արդեօք կարելութիւն կը տրուի՞ որ այսօր հոս բոլորովին բացայայտ երեւան բերուի թէ ամբաստանեալը նախապէս առաջին հարցաքննութեան ի՞նչ ըսած է: Պիտի առաջարկէի հրաժարիլ աղկէ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Հաւան ենք:

Դատախազ.- Կը խնդրեմ, որ խորհրդական Շուլցէն լսուի:

(Ատենանը կը վճռէ լսել:)

Վկայ դատական գաղտնի խորհրդական Շուլցէ, Շարլոտտենբուրգի դատարանէն, 53 տարեկան, բողոքական:

(Երդումէն ետքը:)

Նախագահ.- Դուք ժամանակին ամբաստանեալին առաջին պատասխանատու հարցաքննությունը կատարած էք. կը խնդրեմ անոր մասին տեղեկություն տուէք:

Վ.- Ամբաստանեալին պատասխանները դեռ բաւական որոշ կը յիշեմ: Առանց դժուարութեան խոստովանեցաւ թէ Թալէաթը գիտակցութեամբ եւ դիտմամբ սպաննած էր: Իսկ երբ պատճառը հարցուցի ըսաւ թէ Թալէաթ այն մարդն է, որուն հրամանին վրայ իր ազգականները կամ գոնէ ազգականներուն մէկ մասը Հայաստանին մէջ սպաննուած են, անոր համար ալ որոշած էր իր ազգականներու վրէժը լուծել եւ նպատակով ալ Գերմանիա՝ Բերլին եկած էր:

Ն.- Այդ որոշումն ե՞րբ տուած էր:

Վ.- Հայրենիքը ատրճանակ մը հոգացած է եւ աշխատած է Թալէաթի բնակարանը գտնել. անգամ մ'որ յաջողած է գտնել, անոր բնակարանին դէմ առ դէն սենեակ մը վերձած է դիտելու եւ հսկելու համար: Պատուհանէն սկսած է եւ երբ դէպքին օրը Թալէաթի դուրս ելլելը տեսած է, ատրճանակը առած անոր հետեւած է:

Որ եւ է սխալմունքէ զերծ ըլլալու համար՝ Թալէաթի քովէն անցած, յետոյ ետ դառնալով դէմ առ դէմ եկած՝ անգամ մ' ալ ուղղակի աչքերուն նայած է եւ համոզուելէն ետքը որ Թալէաթ ինքնին է, ատրճանակը կրակած է ետեւէն: Ասոնք են իր ըսածները:

Ն.- Այս հարցաքննութեան միջոցին անհասկացողութեան առաջը առնելու համար ամէն փոյթ տարուած է:

Վ.- Այո՛:

Ն.- Ինչ կ'ըսէ այս մասին թարգմանը, ըսուածները ճշմարի՞տ ին:

Թարգման Գալուստեան.- Այո՛, սակայն այն միջոցին ամբաստանեալն ի վիճակի չէր մտածելու:

Ն.- Հարցաքննությունը մարտ 16ին կատարած է:

Թարգման.- Գլուխը տակաւին կապած էր:

Ն.- Պ. խորհրդական Ձեր հիմայ ըսածը կը համապատասխանէ մարտ 16ի ատենագրութեանը:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Դատապարտեալը այդ միջոցին ջերմ ունէր:

Վկայ Շուլցե.- Կ'ըսէր թէ ամբոխը զինքն խոշտանգած է եւ գլխին վրայ վերք մ'ունի. սակայն բոլորովին հանդարտ տպաւորություն կը թողոր:

Ն.- Ամբաստանեալ, մարտ 16ին ընդունած էք որ 1915 թուին Երզնկայէն փախած ատենէն ի վեր որոշում տուած էք Թալէաթը սպաննել:

Ամբաստանեալ.- Այդպիսի բան մ'ըսած ըլլալս չեմ յիշեր:

Ն.- Ուրեմն չէ՞ ք խոստովանած թե այս գործողությունը երկար ատեն է ի վեր արդեն ծրագրուած էր:

Ա.- Ո՛չ, ի՞նչպէս կրնայի այդ ըսել:

Ն.- Այն ատեն որոշ ըսուած ըլլալու է այս, հարցաքննությունը թարգմանի միջոցով եղած է:

Ա.- Գուցէ այդպէս բան մ՛ըսած ըլլամ, վասն զի գլուխս վիրաւոր եւ կապուած էր:

Ն.- Ուրեմն ըսել կ'ուզէք թե հաւանական է, վասն զի գլուխնիդ վիրաւորուած էր. սակայն հիմնական տարբերություն կայ 14 օր առաջ որոշում մը տալուն եւ տարիներէ ի վեր եղած որոշման մը՝ այդ նպատակով Բերլին գալուն եւ տարիներ առաջ ատրճանակ մը ճարելուն մէջ: Այս հիմնական տարբերություն է: Գիտակից չէի՞ ք Ձեր ըսածներուն նշանակութեանը:

Ա.- Այդ օրն ըսածներուս մասին բան մը չեմ գիտեր այլ եւս, պարզապէս ըսած եմ:

Ն.- Պ. գաղտնի խորհրդական Շուլցէ, արդեօք ամբաստանեալին այս իմաստով հարցեր ուղղուած են եւ ան անոնց այս պատասխանները տուած է:

Վկայ Շուլցէ.- Ո՛չ, ո՛չ, ամբաստանեալը ինքն իրմէ ըսաւ այս բոլորը եւ յայտնի խոստովանեցաւ որ Թալէաթ փաշայի բնակարանին դէմ առ դէմ սենեակ վարձած էր, անկէ զայն դիտելու եւ հսկելու յարմարություն ունենալու համար:

Ն.- Ամբաստանեալը այդ այսօ՛ր ալ կ'ըսէ, բայց չընդունիր այդ գործը տարիներ առաջ իր մտքին մէջ ունենալը, ու պատրաստելը:

Վկայ Շուլցէ.- Ինչպէս ատենագրութեան մէջ յիշուած է, այն միջոցին ըսաւ ամբաստանեալը թէ ո՛րչափ ուսման, նոյնչափ ալ իր վրէժը գոհացնելու համար Բերլին Եկած էր:

Ն.- Ատենագրությունը կարդալ հարկ կա՞յ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Հարկ չկայ: Կո՛ւզէի հարցնել ամբաստանեալին թէ արդեօք ինքը այն ատեն իր ըրած գործէն բաւարարություն զգալով ըսած է: “Ըրած եմ այս, անշուշտ ըրած եմ, վասն զի երդում ըրած էի”: Թերեւս այս ներքին բաւարարությունը զեղուն կերպով արտայայտած է եւ երբ այս դէպքի մասին խօսք եղած է, ամէն բանի այո՛ ըսած էք: Ըսած էք որ “այս գործը տարիներով հետապնդած եմ եւ ըրած ըլլալուս համար գոհ եմ”:

Ա.- Չեմ գիտեր:

Պաշտպան Դր. Նիմայեր.- Հարցաքննությունը թարգմանի միջոցով եղած է. այսպիսի հարցաքննություն մը շատ այլազան կերպով կրնայ ըլլալ. կամ հարցաքննուողին թոյլ կը տրուի որ ազատօրէն խօսի, եւ յետոյ թարգմանը կապակցեալ կը պատմէ ամբողջութեամբ, եւ կամ կտրուկ, ճշգրիտ հարցեր կը բանաձեւուին եւ թարգմանին մէջոցով կ'ուղղուին ամբաստանեալին, եւ անոնց պատասխանը դարձեալ թարգմանին միջոցով կը ստացուի: Այսօր հոս առջեւնիս ունենք

այսպիսի ինքնայատուկ թարգմանի միջոցով հարցաքննութեան մը օրինակը: Բայց այստեղ շնորհիւ թարգմանին ճարպիկութեան ամէն բան այն աստիճան արագ կ'ընթանայ որ մարդ կը կարծէ թէ ամբաստանեալն ինքնին կը պատասխանէ: Պ. Ջաքարեանց խօսքերը ամբաստանեալին բերնէն կ'առնէ. ցարդ այսպիսի ճարպիկութիւն թարգմաններու քով հազիւ թէ տեսած ըլլամ: Ընդհանրապէս քայլ առ քայլ, դանդաղ եւ կտրուկ ձեւերով կ'ընթանան: Կ'ուզէի գիտնալ թէ այն միջոցին թարգմանի ձեռքով հարցաքննութիւնը ի՞նչպէս կատարուած է:

Վկայ Շուլցէ.- Որչափ կը յիշեմ թոյլ տուի որ ամբաստանեալը հանդարտ խօսի եւ պատմէ դէպքին ինչպէս պատահած ըլլալը, յետոյ միայն գուցէ մասնակի հարցեր ուղղած ըլլամ:

Ընդհանրապէս այսպէս կատարուած է հարցաքննութիւնը, մանրամասնութիւնները չեմ յիշեր, ամէն պարագայի մէջ թող տուի որ հանդարտ խօսի, եւ թարգմանին յանձնեցի որ ինքն ուղղէ հարցումները ու պատասխանները ինձի հաղորդէ: Շարժադիթներու մասին ալ հարցուցի անոր:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Կարելի՞ է հարցնել, պ. թարգմանը շատ յուզուած էր. կը յիշէ՞ք այս պարագան:

Վկայ Շուլցէ.- Թարգմանը իր գործին մէջ շատ հաճելի եկաւ ինձի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալի մասին ոգեւորուած կերպով չէ՞ր խօսեր, խնդրեմ նկարագրեցէք այդ անգամ մը:

Վկայ.- Թարգմանը բոլորովին հանդարտ էր. բայց ամբաստանեալին համար շատ մը քաղցրեղէններ, շաքարեղէն բերած էր, եւ խնդրեց որ առնէ: Ես հարցուցի. “Ի՞նչ, մարդասպանին քաղցրեղէններ ա՛լ կու տաք”: Ասոր վրայ պատասխանեց. “Ի՞նչ, մարդասպա՞ն, աս մեծ մարդ մ'է, որու վրայ ամէնքս ալ կը զարմանանք”:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Այս խօսքը շատ կարեւոր է:

Նախագահ.- Վկաներէն տակաւին հարցաքննուելիք մնացին Տէր եւ տիկին Թերզիպաշեանը եւ երկու թարգմանները, ուրեմն ընդ ամէնը չորս վկայ միայն, եթէ պ. պաշտպանները ուրիշ վկայութիւններէ հրաժարիլ ուզեն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Կը ցաւիմ որ այսօր այդ մասին որոշում չենք կրնար տալ. ամբաստանեալի շահը նկատելով այդ անհնարին կը համարինք. այդ մասին վաղ առաւօտ կը խորհրդակցինք:

Իրազեկ Դր. Շտեօրմէր.- Բժշկական ժողովի փոխ նախագահէն բաց-նամակ մը ստացած եմ թէ վաղը ժողովի մը ներկայ պէտք եմ գտնուիլ խնդրեմ այս նկատի առէք, վաղ առտու ժամը տասին ասկէ պիտի երթամ: Բաց աստի ծանր ջղացաւ մ'ունիմ որ դարձեալ զգալի կը դառնայ, միտք ունիմ նախապէս բժշկի երթալ ներարկում մ'ընել տալու, որպէսզի ցաւերէս ազատիմ, ապա թէ ոչ այսօր ա՛յլ եւս չեմ կրնար նստիլ. վաղը իմ գալս խնդրական է:

Նախագահ.- Կ'առաջարկեմ մնացած հարցաքննությունները յետաձգել մինչև որ տեսնենք թե ի՞նչ տպաւորութիւն պիտի ստանանք չորս յետագայ վկաներէն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ուրիշ փաստեր պահանջելը մեզի պիտի վերապահենք, թէև պիտի ջանանք որ դատական բռնի միջոցներով վճիռը չարգիլուի:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Կարելի չէ թոյլ տալ որ պ. խորհրդական Շտէօրմէրը առանձինն ընդարձակօրէն տայ իր տեսութիւնը. այլ բժշկական տեսութիւնները պէտք են յաջորդաբար տրուիլ, որպէս զի միապէս երեսան գայ հինգ իրազեկները ամբաստանեալին անձին վրայ ի՞նչ կը մտածեն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ատոր համար աւելի թարմ պէտք ենք ըլլալ, վասն զի պ. իրազեկներն անշուշտ մեզի երկար տեսութիւններ պիտի ընեն:

Նախագահ.- Պարոն բժշկական խորհրդական, կարելի՞ է այսպէս ընել:

Խորհրդական Դր. Շտէօրմէր.- Քանի որ հոս եմ, իմ պարտքս կը կատարեմ. թէ վաղն ի վիճակի պիտի ըլլա՛մ, չեմ գիտեր:

Ասոր վրայ դատավարութիւնը կէս ժամ կ'ընդհատուի:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ԿԷՍՕՐՈՒԱՅ ԴԱԴԱՐԷՆ ՅԵՏՈՅ

Վկայ՝ թարգման Վահան Զաքարեանց, Բերլին, Վիլմերսդորֆ, 38 տարեկան, լուսաւորչական, վաճառական. ամբաստանեալին ոչ արիւնակից եւ ոչ ալ խնամի:

Վկայէն երդում կ'առնուի:

Ն.- Դուք Գերմանա-հայ Ընկերութեան վարչութեան անդամ էք եւ ամբաստանեալին ծանօթացած էք, երբ նա հայկական հիւպատոսարան եկաւ:

Վ.- Ո՛չ, պարսկական հիւպատոսարան: Պատերազմին սկիզբը պաշտօնեայ էի պարսկական հիւպատոսարանի մէջ: Երբ հոն օր մը պ. Յանձնակատարին հետ կը խօսէի, հիւպատոսարանի քարտուղարը մօտեցաւ եւ ըսաւ, մարդ մը եկած է, որ իր անցագրին համար “վիզում” կը խնդրէ. թէ արդէօք կը հաճի մ'ստուգել թէ ինչ է խնդիրը: Անցագիրը ձեռքս առի եւ տեսայ որ մարդը հայ մըն էր: Ան ըսաւ որ Գերմանիա բնակելու թոյլտւութեան համար՝ անցագրին “վիզում” կը խնդրէ: Առ այս ըսի իրեն, որ պէտք է անպատճառ ոստիկանութեան դիմել, որուն վրայ պ. քարտուղարը զինքը հեռախօսով ոստիկանութեան հետ յարաբերութեան դրաւ:

Ն.- Դուք ալ օգնեցի՞ք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ուրիշ առթիւ յետոյ անգամ մըն ալ հետը խօսեցա՞ք:

Վ.- Այո՛. հասցես առած էր:

Ն.- Ամբաստանեալը Աուգսբուրգեր փողո՞ցը կը բնակէր:

Վ.- Բնակավայրը չէի գիտեր, վասն զի զինքը երբեք չէի այցելած: Կը պատմէր, որ հիւանդ է եւ ջղաբուժի մը կը կարօտի: Բժիշկի մը գացած է, բայց Պրոֆէտոր մը կ'ուզէ:

Ն.- Հետեւաբար անոր հետ Պրոֆ. Կասիրերի՞ գացիք: Ե՞րբ:

Վ.- Չեմ գիտեր ճիշդ: Կ'ենթադրեմ, որ Պրոֆ. Կասիրեր գիտէ:

Ն.- Ի՞նչ գտաւ Պրոֆ. Կասիրեր:

Վ.- Որ Թէլիիրեան վերնտտ էր, բայց այս մասին իրեն բան մը ըսելու չէի:

Ն.- Քննութեան ներկայ եղա՞ք:

Վ.- Այո՛:

Ն.- Յետագայ քննութեանց ալ ներկայ եղա՞ք:

Վ.- Երկու անգամ ներկայ եղայ:

Ն.- Ամբաստանեալը Ձեզի ալ պատմա՞ծ է, թէ անգամ մը փողոցի վրայ վերնտտ նոպայ մը անցուցած է:

Վ.- Այո՛:

Ն.- Պատմեցէ՛ք, ինչ որ Ձեզի հաղորդած է:

Վ.- Ըսաւ ինձի, որ Երուսալէմէր փողոցը փաքրիկ դրամատնէ մը դարձած ժամանակ նոպայ ունեցած է, թէ իրեն օգնած են, եւ զինքը ապա սրորերկեայ ուղիով տուն բերած են:

Ն.- Իր վիճակը մանրամասն նկարագրէ՞ց Ձեզի:

Վ.- Կարող չէր վերյիշել:

Ն.- Ամբաստանեալը Ձեզի նաեւ իր ընտանեկան յարաբերութեանց մասին խօսա՞ծ է:

Վ.- Ո՛չ, բայց ես ներկայ էի, երբ Պրոֆ. Կասիրերի կ'ըսէր, թէ առաջին նոպան իր կործանուած հօրենական տունը տեսնելէ վերջ ունեցած է:

Ն.- Այս առթիւ հետն անշո՛ւշտ անոր վրայ խօսեցաք:

Վ.- Ջարդերու մասին այն մարդկանց հետ մասնատրաբար չէի խօսեր, որոնք ինչպէս ան նոյնպէս տուժած էին: Ընդհանրապէս չեմ ուզեր մարդիկ յուզման ենթարկել:

Ն.- Ամբաստանեալին հետ իր գլխէն անցած պատահարներու վրայ չէ՞ք խօսած եւ կամ այն մասին, թէ արդէօք ազգականներ ունի՞:

Վ.- Ո՛չ:

Ն.- Եւ ոչ իսկ ջարդերո՞ւ մասին խօսած էք հետը:

Վ.- Ո՛չ, որովհետեւ գիտէի որ ջարդերէն տուժած է, չէի ուզեր ցաւը յիշեցնել:

Ն.- Ուրկէ՞ գիտէիք այդ:

Վ.- Վասն զի Պրոֆ. Կասիրերի ըսաւ, որ նման առթով մը նոպայ մ'ունեցած է:

Ն.- Աուգստուրգէր փողոցը բնակած միջոցին ամբաստանեալին հետ բարեկամբար կենցաղավարա՞ծ էք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Պ. Էֆթեան եւ պ. Թերզիպաշեան կը ճանչնայի՞ք:

Վ.- Թերզիպաշեան կը ճանչնայի վաղուց:

Ն.- Ուրեմն ամբաստանեալին երկո՞ւ անգամ օգնեցիք, երբ Պրոֆ. Կասիրերի կ'երթար, եւ ամբաստանեալին վրայ դուք անձամբ նոպան տեսա՞ք:

Վ.- Ո՛չ:

Ն.- Այդ պատճառով ոչի՞նչ կրնաք ըսել այդ մասին:

Վ.- Ո՛չ:

Ն.- Գիտէի՞ք որ Թալէաթ փաշա հոս Բերլին էր:

Վ.- Ո՛չ, ես անձնապէս չէի գիտեր: Բայց թերթերը կը գրէին թէ Գերմանիա կը բնակի:

Ն.- Ո՞ր թերթերը կը գրէին:

Վ.- Հիմա ալ չեմ յիշեր: Ես հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն ու պարսկերէն թերթեր կը կարդամ: Այս թերթերէն իմացայ, որ Թալէաթ Գերմանիա բնակելու է:

Ն.- Երբ հայ գաղութն մին Թալեաթ փաշայի կամ ուրիշ թուրքի մը հանդիպի, այս հանդիպումը միթե այնչափ կարեւոր պատահար չէ՞, որ լուրը կրակի նման ամբողջ գաղութին մէջ տարածուի: Ամբաստանեալը Ձեզի չէ՞ պատմած, որ Թալեաթը տեսած է:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ամբաստանեալին առողջական վիճակին վրայ անձամբ բան մը նկատա՞ծ էք:

Վ.- Քիչ առիթ ունեցած եմ միասին գտնուելու: Տեսած եմ, որ յաճախ մտամուլոր էր եւ առջեւը կը սեւեռէր:

Ն.- Հետը ուրիշ որ եւ է յարաբերութիւն ունեցա՞ծ էք:

Վ.- Անգամ մըն ալ քանի մը խօսք խօսած ենք:

Ն.- Ամբաստանեալին հետ ընկերական հանդէսներ, պտոյտներ եւն սարքա՞ծ էք:

Վ.- Ո՛չ:

Վկային ուրիշ հարցումներ ուղղել չի բաղձացուիր:

Ն.- (Երկրորդ թարգմանին՝ պ. Գալուստեանի) Խնդրեմ, ամբաստանեալին հաղորդեցէք, որ վկան ծանուցած է, թէ զինքը պարսկական հիւպատոսարան ճանչցած եւ իրեն օգնած է Բերլին մնալու թոյլտուութիւն առնելու մէջ. թէ ամբաստանեալին երկու անգամ ընկերացած է Պրոֆ. Կասիրերի երթալու: Վկան կը ծանուցանէ նաեւ, թէ ջարդին՝ որուն մէջ իր ծնողքները սպաննուած են, մանրամասնութեանց վրայ ամբաստանեալին հետ չէ խօսած: (Կը կատարուի:)

Ա.- Այն ատեն, Պրոֆ Կասիրերի քով, պատմեցի որ ինկայ, երբ իմ ծնողացս տան աւերածը տեսայ, եւ թէ այն ժամանակէն ի վեր այս ախտահարուածներն ունիմ:

Ն.- Վկան ծանոյց նաեւ, թէ ան անձամբ այդպիսի նուազ մը երբեք չէ նկատած:

Վկայ վաճառական եւ թարգման Գեորգ Գալուստեան, Բերլին, 28 տերեկան, լուսաւորչական, ամբաստանեալին ոչ արիւնակից եւ ոչ ալ խնամի:

Վկայէն երդում կ'առնուի:

Ն.- Դէպքին կամ ամբաստանեալին վրայ բան մը գիտէ՞ք:

Վ.- Ամբաստանեալը իմ վաճառատունս կու գար եւ գնումներ կ'ընէր: Այսպէսով ճանչցայ զինքը:

Ն.- Ե՞րբ կը պատահի այդ:

Վ.- Դեպքէն իբր 3-4 ամիս առաջ:

Ն.- Իրեն հետ մերձուստ խօսա՞ծ էք:

Վ.- Հետը ծաօթացայ: Պատմեց ինձի, թէ հիւանդ է, ես լա յանձնարարեցի որ շոկոլադ գնէ, եւ գնեց: Ըսաւ նաեւ որ կ'ուզէ ուսանիլ, երբ առողջանայ:

Ն.- Ե՞րբ կը պատահի այդ:

Վ.- Դեպքէն իբր 3-4 ամիս յառաջ: Աւելի բան մը չեմ կրնար ըսել:

Ն.- Պատմած էր Ձեզի նաեւ, թէ իր նոպաներու միջոցին զգացողութիւնը կը կորսնցնէ:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ամբաստանեալը առաջուց չէիք ճանչնար:

Վ.- Ո՛չ:

Ն.- Ուրեմն զինքն առաջին անգամ Ձեր վաճառատա՞ն մէջ տեսաք:

Վ.- Այո՛, իմ վաճառատանս մէջ:

Ն.- Յետոյ յաճախ իրեն հանդիպա՞ծ էք:

Վ.- Կրնայ ըլլալ որ անգամ մըն ալ վաճառատունս եկած ըլլայ:

Ն.- Ձինքը իր բնակարանին մէջ երբեք չէ՞ք այցելած:

Վ.- Ո՛չ:

Ն.- Իր կենցաղավարութեան վրայ բան մը չէ՞ք գիտեր:

Վ.- Ո՛չ. իրեն հետ դարձեալ այն ատեն միայն տեսնուեցայ, երբ դատարանի մէջ իր առաջին ունկնդրութեան ժամանակ իբր թարգման ծառայեցի:

Ն.- Ինչպէս նախորդ վկաներէն մին ըսաւ, արտասանա՞ծ էք, թէ ամբաստանեալը մեծ մարդ մըն է:

Վ.- Իմ աչքիս մեծ մարդ է:

Ն.- Չարդերու մէջ դուք ալ ազգականներ կորսնցուցա՞ծ էք:

Վ.- Ծնողքս 1896ին Այնթապի մէջ սպաննուած են:

Ն.- Անձամբ տեսած ըլլալո՞վ գիտէք այդ: Այն ատեն հազիւ 2q տարեկան էիք:

Վ.- 1896ին 5 տարեկան էի: Այս բաները անդադար կրկուելով յիշատակը շատ թարմ մնացած է:

Ն.- Այն ժամանակ Ձեր երկո՞ւ ծնողներն ալ սպաննուեցան:

Վ.- Այն ժամանակ սպաննուեցան հայրս, մայրս, պապս, եղբայր մը ու հօրեղբայր մը: Ընտանեաց մէջ միշտ կը պատմուէր այս: Այս ամէն բան տեսած եմ ես: Պապիս սպանման ներկայ էի:

Ն.- Այդ 1896ին էր: Մանկական յիշողութիւնը միթէ այդչափ կը գօրէ:

Վ.- Այո՛, երբ ազդեցութիւններն այսչափ սաստիկ են:

Ն.- Կրնա՞ք այս ամէնը անշփոթ պահել:

Վ.- Անդադար պատմելով յիշողութեան պատկերը բոլորովին թարմ մնացած է:

Ն.- Ուրեմն Դուք ներքին գոհունակութիւն մըն ալ զգացիք գործողութեան վրայ եւ Ձեզի համար ինքնին հասկանալի էր, որ մէկը կարենար այնպէս գործել:

Վ.- Ինքնին հասկանալի է:

Ն.- Ամբաստանեալին՝ դատաւորին առջեւ ըրած խոստովանութիւնն ուղիղ ու ճշմարիտ կը համարիք:

Վ.- Այն ատեն ուղիղ չէի համարեր սա պարզ պատճառով, որ ամբաստանեալին ամենեւին հաճոյ չէր, որ կը հարցաքննուի, վասն զի գլուխը կապուած էր: Կ'ըսէր, ա՛յս ա՛ն ըրի, զինքը սպաննեցի: Սա հարցման թէ՛ խորհրդածութեամբ ըրած էր գործը, ըսաւ. “Այո՛, խորհրդածութեամբ”:

Ն.- Ուրեմն կը հաստատէք, ինչ որ տեղեկագրին մէջ 16 մարտի հարցաքննութեան մասին գրուած է: Բայց Դուք սա տպաւորութիւնն ունէիք, որ ամբաստանեալը կ'ըսէ, որպէս զի բան մ'ըսած ըլլայ: Ձեր տարակոյսն արտայայտեցի՞ք, խօսքի նիւթ եղա՞ւ:

Վ.- Տեղեկագիրն այդ պատճառով դիտմամբ չստորագրեցի:

Ն.- (Կը քննէ տեղեկագիրը) Սոյն տեղեկագիրն իրապէս թարգմանէն չէ ստորագրուած:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Դուք մերժեցիք տեղեկագիրը ստորագրել:

Վ.- Այո՛:

Ն. – Տեղեկագրի տակ կը գտնուին սա անունները.

Թէհլիրեան եւն բայց ոչ թարգմանին անունը:

Վ. – Ըսի, որ կարելի է թէ մարդուն խելքը գլուխը չէ, թէ ըսածին հասկացողութիւն չունի, գուցէ յարմար չէ, զինքը ճիշդ այսօր հարցաքննել:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. – Դուք սա տպաւորութիւնը ունէիք, թէ ամբաստանեալը ջե՞րմ ունէր:

Վ. - Զինքը չքննեցի, այլ թերթի մէջ կարդացի, որ ջերմ ունի, եւ բաց աստի գլուխը դեռ կապուած էր: Բայց մէկ բան նկատեցի, որ նա ներքուստ գոհ էր: Կ'ըսէր. Ես սպաննեցի զինքը:

Ն. - Խօսքի նիւթ եղա՞ւ, որ Դուք մերժած էք տեղեկագիրը ստորագրել: Քննիչը հարցու՞ց. “Կ'ուզէք տեղեկագիրը ստորագրել”:

Վ. - Քննիչին ըսի, որ չեմ կրնար ստորագրել տեղեկագիրը, վասն զի չեմ գիտեր ճշդիւ, թէ արդեօք ամբաստանեալն ամէն բան խորհրդածութեամբ ըսած է:

Ն. - Տարակոյս կայ տեղեկագիրը իբր տեղեկագիր արժեցնելու:

Պաշտպան Դր. Նիմայէր. - Անկարելի կը թուի ինձ այս գրութիւնը իբր տեղեկագիր նկատել: Հարցաքննութեան տեղեկագիր չէ, վասն զի չի ծանուցաներ, որ թարգմանը զայն թարգմանած ըլլայ:

Ն. - Ուրեմն ամբաստանեալը Ձեր վաճառատան մէջ ճանչած էք, եւ հարցաքննութենէ դուրս ուրիշ յարաբերութիւն չէ՞ք ունեցած հետը:

Վ. - Ո՛չ:

Ն. - Ամբաստանեա՛լ, կը յիշէ՞ք որ վկան տեղեկագիրը ստորագրել չէր ուզէր:

Ա. - Չեմ կարող յիշել:

Ն. - Վկային ուղղարկելիք հարցեր կա՞ն տակաւին: - Չկան:

Պարի ուսացիչ Ֆրիդրիխի, որուն քով ամբաստանեալը պարի դաս առած է, հարցաքննութեան արժէք կը տրուի:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. - Յայտնապէս արժանահաւատ կերպով լսեցինք կապակցութիւնը, այնպէս որ զինքը հարցաքննելէ կարելի է հրաժարիլ:

Պարի ուսուցիչ Ֆրիդրիխի հարցաքննութիւնը կարելոր չի տեսնուի:

Վկայ՝ ծխավաճառ Թէրզիպաշեան, Բերլին, 29 տարեկան, կաթոլիկ, ամբաստանեալին ո՛չ արհինակից եւ ո՛չ ալ խնամի:

Վկայէն երդում կ'առնուի:

Ն. - Կը ճանչնա՞ք ամբաստանեալը:

Վ. - Այո՛, 1920, դեկտեմբեր 19էն ի վեր:

Ն. - Այն ատեն, երբ ամբաստանեալը Պարիսէն Բերլին եկած էր եւ պ. Էֆթեանի միջոցով Ձեր ընտանիքը եկաւ:

Վ. - Այո՛:

Ն. - Ամբաստանեալը պ. Էֆթեանն արդէն Պարիսէն կը ճանչնար, ճի՞շդ է:

Վ. - Այո՛:

Ն. - Դուք վաճառատու՞ն մը ունիք Օրանիէն փողոցը թիւ 75ի մէջ:

Վ. - Այո՛, ծխախոտի վաճառանոց մը:

Ն. - Հա՛յ էք դուք եւ հայուհի՞ Ձեր կինը:

Վ. - Այո՛:

Ն. - 1914 է՞ ի վեր Բերլին էք:

Վ. - Այո՛:

Ն. - Ջարդերուն ականատես եղա՞՞ծ էք:

Վ. - Ո՛չ, բան մը չեմ տեսած:

Ն. - Առա՞ջ ալ չէ:

Վ. - Ո՛չ:

Ն. - Եւ Ձեր ծնո՞ղքը:

Վ. - Հայրս Կ. Պոլիս է եւ մայրս վաղուց արդէն բնական մահով մեռած է: Բայց իմ ծանօթներս ու ազգականներս բոլորը սպաննուած են հայրենիքս՝ Կարնոյ մէջ:

Ն. - Ամբաստանեալին հետ ստէպ խօսա՞՞ծ էք, Ձեր բնակարանն ու վաճառատունը եկա՞՞ծ է ան:

Վ. - Այո՛:

Ն. - Նախկին դեպքերու մասին ալ խօսա՞՞ծ էք:

Վ. - Ո՛չ: Ոչինչ խօսած եմ այդ մասին: Կնոջս եւ ինձ գէշ կու գայ, երբ այդ մասին կը խօսուի:

Ն. - Ձեզի ծա՞նր կու գայ, երբ այդ հին ահեղի պատմութիւնները յիշեցնեն Ձեզ:

Վ. - Այո՛:

Ն. - Այդ պատճառով ալ չէ՞ք խօսած այդ մասին:

Վ. – Ո՛չ:

Ն. – Գիտե՞ի՞ք, որ Թալէաթ հոս Բերլին էր:

Վ. – Այո՛, ուրիշներուն պէս:

Ն. – Ե՞րբ իմացաք:

Վ. – 1919ին, պատերազմէն վերջ:

Ն. – Ամբաստանեալին պատմեցի՞ք, որ Թալէաթ հոս է:

Վ. – Այդ մասին ընդհանրապէս չէ խօսուած:

Ն. – Ի՞նչ գիտէք ամբաստանելին առողջական վիճակին վրայ:

Վ. – Մեզի եկաւ եւ ըսաւ որ լաւ չէ, հիւանդ է: Կը բաղձայ բժիշկի մը երթալ:

Ն. – Բժիշկի դիմե՞ց:

Վ. – Այո՛, ընկերի մը հետ միասին:

Ն. – Պրոֆ. Կասիրէ՞րի:

Վ. – Այո՛:

Ն. – Անոր վրայ վերնոտ նոպաներ նկատա՞ծ էք երբեք:

Վ. – Ո՛չ. կը պատմէր մեզի, թէ շատ հիւանդ էր: Քանի մը անգամ կինս անոր համար կերակուր եփած է, եւ նա մեր քով դեղ առած է:

Ն. – Ուրեմն բժշկական խնամատարութեան տա՞կ էր:

Վ. – Այո՛:

Ն. – Ամբաստանելին վրայ բան մը Ձեր աչքին զարկա՞ծ է:

Վ. – Ոչ, չեմ կրնար ըսել այս:

Ն. – Ուրա՞խ էր, զուա՞րթ, տրամադրեալ, թէ աւելի տխուր էր եւ ճնշուած:

Վ. – Երբեմն զուարթ էր, երբեմն տխուր բայց աւելի տխուր քան զուարթ:

Ն. – Պարի դասի մասին կը պատմե՞ր:

Վ. – Երբ մեզի այցելութեան կու գար, Էֆթեանի հետ էր, որ նոյնպէս պարի դասին կը մասնակցէր:

Ն. – Ձեր բնակարանէն դուրս հետը միասին չէ՞ք եղած:

Վ. – Ո՛չ, միայն բնակարանիս մեջ:

Ն. – Բերլինի հայ գաղութը ո՞րչափ մեծ է:

Վ. – Չեմ գիտեր

Ն. – Իբր հարի՞ւր

Վ.- Գրեթէ:

Ն.- Ունի՞ք ընկերական հաւաքոյթներ: Կ'օգնէք իրարու:

Վ.- Այո', հարկաւ, կ'օգնենք իրարու:

Ն.- Ուրեմն գաղութը կը ճանչնաք եղեր:

Վ.- Շատ անձ կը ճանչնամ, բայց ոչ մեծոգոյն մասը:

Ն.- Ամբաստանեալը Ձեզի պատմա՞ծ է, որ անգամ մը փողոցը Թալէաթի հանդիպած է:

Վ.- Ո՛չ, պատմած չէ:

Ն.- Ամբաստանեալին հետ անցած Ձեր ծանօթութեան միջոցին նկատա՞ծ էք երբեք որ անոր վրայ փոփոխութիւն մը տեղի ունեցած է:

Վ.- Ո՛չ, ոչինչ նկատած եմ:

Ն.- Հողորդած է Ձեզի, թէ ինչու Հարդենբերգ փողոցը տեղափոխուած է:

Վ.- Ո՛չ:

Ն.- Հարցուցի՞ք իրեն:

Վ.- Այո'. ըսաւ որ իրեն այլեւս հաճոյ չէ: Հիւանդ է եւ լաւագոյն բնակարանի մը կը կարօտի:

Ն.- Վկային ուղղուելիք հարցումներ կա՞ն դեռ: - Ուրեմն՝ ոչ:

Վկայ Տիկին Քրիստինէ Թերզիպաշեան, կին նախընթաց վկային, 26 տարեկան: - Հարցաքննութիւնը կ'ըլլայ թարգմանի միջոցով:

Վկաներու յատուկ երդումն ընելէ վերջ՝

Ն.- Գործողութեան մասին բան մը չէ՞ք գիտեր:

Վ.- Ո՛չ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Խնդրեմ վկան հարցաքննեցեք խժողովությանց մասին: Ամենէն առաջ, թէ պատերազի ժամանակ հայրենի՞քն էր եւ ո՛ր կը բնակէր:

Վ.- Կարին էի:

Ն.- Այդ Ձեր հայրենի՞քն է:

Վ.- Այո՛:

Ն.- Հոն տեղահանութիւններ պատահեցա՞ն:

Վ.- 1915 յուլիսին այն տեղի բնակիչները ժողովուեցան եւ կ'ըսուէր, թէ հարկ էր թողուլ քաղաքը:

Ն.- Քաղաքին մէջ ազդագրե՞ր էրեւցան, թէ հայերը պէտք են գաղթիլ:

Վ.- Նախ քաղաքին հարուստներուն ոստիկաններու եւ պաշտօնեաներու ձեռքով լուր տրուեցաւ եւ ապա կ'ըսուէր, հարկ էր որ պարպուի քաղաքը, վասն զի ռազմագծին վրայ կը գտնուէր, եւ քաղաքացիք պէտք է որ հեռացուէին: Քաղաքին հարուստները 8 օր առաջ լուր առին, միւսները տեղահանութենէն մէկ ժամ առաջ: Ապա իմացան, որ եղածը խաբէութիւն էր եւ թէ միայն հայ բնակչութիւնը պիտի արտաքսուէր:

Ն.- Ամբողջ բնակչութիւնը մէ՞կ անգամէն քաղաքէն դուրս հանեցին:

Վ.- Չորս անգամէն:

Ն.- Չո՞րս խումբով:

Վ.- Չորս խումբ 8 օրուան մէջ:

Ն.- Ետ մնացողները կ'իմանայի՞ն, թէ նախընթաց խմբակները ի՞նչ կ'ըլլային:

Վ.- Ո՛չ:

Ն.- Որո՞շ ուղեկէտ մը կը նշանակուէ՞ր:

Վ.- Նախ դէպի Երզնկայ պիտի երթայինք:

Ն.- Դուք ո՞ր խումբին հետ պիտի ելլէիք:

Վ.- Երկրորդ:

Ն.- Նկարագրեցե՞ք, ո՞րչափ մարդ տեղահան եղաւ, ի՞նչպէս պատահեցաւ եւ դուք ո՞րչափ յառաջացաք եւ ի՞նչ պատահեցաւ:

Վ.- Մեր ընտանիքը 21 անձէ կը բաղկանար: Անոնցմէ երեքը միայն մնացած են:

Ն.- Որքա՞ն մեծ էր ամբողջ խումբը:

Վ.- 500 ընտանիք:

Ն.- Ձեր ազգականներն ի՞նչպես մեռան:

Վ.- Մեր ընտանիքը կը բաղկանար 21 հոգի: Երեք եզան սայլ վարձած էինք եւ ինչ որ կրնայինք զետեղել, մեզի հետ առինք, կերակուր եւ դրամ: Կը կարծէինք որ Երզնկայ պիտի երթանք: Հայրս ու մայրս մեզի հետ էին, երեք եղբայր, երիցագոյնը 30 տարեկան, երեք մանչ, փոքրիկը վեց ամսական, ամուսնացած քոյրս իւր ամուսինով, վեց տղայ, երիցագոյնը 22 տարեկան: Իմ աչքերովս տեսայ ամենուն կորուստը, միայն երեքը մնացին ու ազատեցան: Կ'երդնում, որ Կ. Պոլսոյ հրամանով տեղահանուեցան:

Ն.- Ի՞նչ կերպով:

Վ.- Երբ քաղաքը թողուցինք եւ Կարնոյ բերդին դռներուն առջեւ էինք, ռստիկանները եկան եւ զենք կը փնտռէին: Դանակ, անձրեւնոց եւ այլն առին մեզմէ: Կարնէն եկանք Բաբերդ: Երբ այս քաղաքին առջեւէն կ'անցնէինք, դեզադէզ դիակներ տեսանք, եւ ես ստիպուած էի դիակները կոխելով անցնիլ, այնպէս որ ոտքերս արիւնով ներկուեցան:

Ն.- Դիակները Կարնէն եկող նախընթաց խումբերէ՛ն էին:

Վ.- Ո՛չ, Բաբերդէն էին: Ապա հասանք Երզնկայ: Խոստացած էին մեզի բնակարան տալ, սակայն թոյլ տրուած չէր մեզ բնակիլ, եւ ոչ իսկ ջուր խմելու հրաման կու տային: Ստիպուեցանք նոյն իսկ եզները յանձնել, որոնք լեռները քշուեցան:

Ն.- Ի՞նչպէս խնդիրը ջարդի եկաւ, որուն մէջ Ձեր ազգականները սպաննուեցան:

Վ.- Երբ առաջ գացինք, խումբերէն 500 երիտասարդ ջոկուեցան: Նաեւ եղբայրներմէս մին: Բայց ան յաջողեցաւ փախչիլ եւ իմ քովս գալ: Զինք, իբրեւ աղջիկ զգեստաւորեցի, որով կրցաւ քովս մնալ: Միւս երիտասարդները ջարդուեցան:

Ն.- Ի՞նչ եղան ընտրուածները:

Վ.- Իրարու կապեցին եւ ջուրը նետեցին:

Ն.- Ուստի՞ զիտէք:

Վ.- Իմ աչքերովս տեսայ:

Ն.- Տեսաք, որ զե՞տը նետուեցան:

Վ.- Այո՛, գետը նետուեցան եւ հոսանքն այնպէս սաստիկ էր, որ բոլոր ջուր նետուողները քշեց տարաւ:

Ն.- Ետ մնացողներն ի՞նչ եղան:

Վ.- Պոռագինք, լացինք ընելիքնիս չէինք գիտեր: Բայց եւ լալ ալ թոյլ չէին տար, սուիններով առաջ կը մղէին մեզ:

Ն.- Ո՞վ:

Վ.- 30 ոստիկան եւ ջոկատ մը զինուոր:

Ն.- Կը հարուածէի՞ն մերթընդմերթ:

Վ.- Այո՛:

Ն.- Ձեր ազգականներն ապա ի՞նչ եղան:

Վ.- Ինչ որ կրնայինք շալկել, անով Մալաթիա եկանք, մեզ հոն լեռ հանեցին ու այրերը կիներէ բաժնեցին: Կիները այրերէն իբր 10 մետր հեռու էին, սեփական աչքերով կրնային տեսնել, թէ այրերուն ինչ կ'ըլլար:

Ն.- Ի՞նչ կ'ըլլար այրերուն:

Վ.- Կացիններով մեռցուցին եւ ջուր նետեցին զանոնք:

Ն.- Իրապէս ա՞յս կերպով ջարդուեցան կիներն ու այրերը:

Վ.- Միայն այրերը այսպէս ջարդուեցան: Երբ քիչ մը մթնցաւ, ոստիկանները եկան, ամենազեղեցիկ կիներն ու աղջիկները ընտրեցին եւ իբր կին իրենց քով առին: Ժանդարմներէն մէկն ալ ինձի եկաւ եւ կ'ուզէր զիս իրեն կին առնել: Հնազանդիլ, տեղի տալ չուզողները սուիններով կը խոցուէին եւ անոնց սրունքները կը պատառէին: Նոյն իսկ յղի կանանց կողերը կը փշրէին, տղաք դուրս կը հանուէին ու կը նետուէին:

(Մեծ իրարանցում սրահին մէջ:)

Երդմամբ կը հաստատեմ այս:

Ն.- Դուք ի՞նչպէս ազատեցաք:

Վ.- Եղբորս զուխն ալ կտրեցին: Երբ մայրս այս տեսաւ, գետին ինկաւ եւ իսկոյն մեռաւ: Յետոյ թուրք մըն ալ ինձի եկաւ եւ կ'ուզէր զիս իրեն կին ընել, եւ որովհետեւ յանձն չառի, տղաս առաւ եւ մէկդի նետեց:

Ն.- Ի՞նչպէս ազատեցաք:

Վ.- Հեռուէն ծուխ նշմարեցի եւ ծուխին ուղղութեամբ գացի, եւ հոն գտայ եղբայրս ու եղբորս կինը, որ յղի եւ ծնանելու վրայ էր: Ըսին մեզի որ նոյն իրիկունն իսկ պիտի թողունք այն տեղը եւ մենք ստիպուած էինք լքել եղբորս կինը, վասն զի յղի էր:

Ն.- Յետոյ Սամսէ՞ք հասաք: Ո՞րչափ էիք:

Վ.- Մօտաւորապէս 600 հոգի:

Ն.- Իսկ Ձեր ընտանիքէ՞ն:

Վ.- Հայրս, երկու եղբայր եւ ես:

Ն.- Դո՞ւք ալ ուրեմն մինչեւ Սամսէք եկաք:

Վ.- Այո՛: Հոն հիւանդացաւ հայրս, եւ ահա հրաման մը եկաւ, որ կ'արգիլէր հիւանդները միասին առնել, այլ հարկ էր ջուրը նետել: Հայրս վրանէն հանեցին: Բայց յետոյ եղբայրս դարձեալ բերաւ զինք, բայց ան նոյն իրիկունը մեռաւ:

Ն.- Իսկ երկու եղբայրնե՞րը:

Վ.- Կ'ապրին:

Ն.- Իրաւ այս ամէն բան ճշմարի՞տ է: Երեւակայութիւն չէ՞:

Վ.- Պատմածս իրականութենէն շատ նուազ է: Շատ աւելի քստմնելի էր:

Ն.- Դուք Սամսէ՞ք մնացիք:

Վ.- Չէի կարող Սամսէք մնալ: Պէտք է որ Սուրուչ երթայինք: Վերջապէս մեզ ամէնքս լեռ մը քշեցին եւ ինչ որ դեռ մնացած էր առին մեզմէ:

Ն.- Այս արհաւիրքներուն ո՞վ պատասխանատու կը համարուէր այն ատեն:

Վ.- Էնվէր փաշայի հրամանով կը կատարուէր, եւ զինուորները կը ստիպէին որ տարագրեալները ծնրադրեն եւ գոչեն. “Կեցցէ փաշան”, վասն զի փաշան թոյլ տուած էր իրենց որ ապրին:

(Իրարանցում:)

Դր. Նիմայէր.- Հասկանալի իրարանցումէն յայտնի է, որ վկային ըսածները անհաւատալի կը թուին: Բայց առջեւնիս պաշտօնապէս ունինք նման հազարումէկ զեկոյցներ: Սակայն, որպէս զի չթողունք որ վկային արժանահաւատութեան վրայ ամենաթեթեւ տարակոյսն իսկ ծագի, պիտի խնդրէի, որ այժմ երկու իրազեկները, Պ. Պրոֆ. Դր. Լեպսիուս եւ վսեմաշուք Լիման Ֆոն Զանդէրս այն ժամանակուան թրքական ոստիկանութեան եւ թրքական զինուորականութեան կազմի մասին հարցաքննուին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ես ալ իրողութիւններու, որոնց վրայ գոնէ այս ընդարձակութեամբ մինչեւ այսօր գաղափար չունէի, այս սահմոկեցուցիչ նկարագրութենէն վերջ կը կարծեմ որ դուրսը եղող մնացած վկաներու հարցաքննութենէն կրնանք հրաժարիլ: Գուցէ անոնք ալ ինձի հետ միասին կ'ուզեն երկու իրազեկները լսել: Բաց աստի կը խնդրեմ որ շատ կարկառուն

անձնաւորութիւն մ'ալ, որ Մանչեստրըէ Բերլին եկած է, եպիսկոպոսական տեղապահ Պալաքեան հարցաքննուի: Ան այս ահռելի իրերը ապրած է, ուրեմն տեսած է, եւ մենք կրնանք իրմէ ալ լսել, թէ արդեօք հայ ազգին ամբողջութիւնը Թալէաթ փաշա յանցաւոր կը համարի: Թէ իրապէս յանցաւոր է, այդ ուրիշ հարց է:

Դատախազ.- Ես ալ բաղձալի կը համարէի, որ երկու իրազեկները թրքական ոստիկանութեան եւ պահանորդութեան մէջ տիրող ընդհանուր յարաբերութեանց մասին լսուին:

Ն.- Պ. թարգման, ըսէք ամբաստանեալին, որ վկան իր զեկոյցներուն մէջ մանրամասն խօսեցաւ ջարդերու վրայ:

Թ.- Արդէն հասկցաւ:

Ն.- (Ժպտալով) Բնական է:

Իրազեկ գրագէտ Դր. Հովհաննէս Լեպսիուս, 62 տարեկան, աւետարանական:

Իրազեկներու յատուկ երդումն ընելէ վերջ:

Ն.- Գիտէ՞ք, թէ ինչ բանի վրայ է խնդիրը: Խնդրեմ սակայն շատ հեռուն չսկսիլ, այլ միայն հետեւեալ կէտերու մասին արտայայտուիլ. 1915ի հայկական ջարդերուն մէջ այնպիսի խժոժութիւնները մեծագոյն ծաւալով պատահա՞ծ են, եւ թէ Ձեր ըրած քննութիւններու եւ հաւաքած փորձառութիւններուն համաձայն՝ վկաններուն նկարագրութիւնները եւ ամբաստանեալին իր անձնական կեանքի նկատմամբ տուած տեղեկութիւնները արժանահաւա՞տ են (եւ թէ ի՞նչ տարրերէ բաղկացած էր այս տեղահանութեան պահանորդութիւնը):

Իրազեկ Դր. Հովհաննէս Լեպսիուս.- Ընդհանուր տեղահանութիւնը որոշեց “Երիտասարդ Թուրքերու Կոմիտէն”, Թալէաթ փաշան իբր ներքին գործող նախարար (միուս կողմանէ նաեւ Էնվեր փաշա իբր պատերազմական նախարար) հրամայեց եւ օգնութեամբ “Երիտասարդ Թուրքերու Կոմիտէի” կազմակերպութեա ի գլուխ հանուեցաւ: Տեղահանութիւնը, ընդհանուր աքսորը, որ արդէն 1915 ապրիլին որոշուած էր, կը հայէր Թուրքիոյ ամբողջ հայ ժողովրդեան, քիչ բացառութեամբ գոր դեռ պիտի յիշեմ: Թուրքիոյ բնակչութեան մէջ կար՝ պատերազմէն առաջ՝ 1.850.000 հայ: Բացարձակ ստոյգ ազգահամար չկայ բնականաբար Թուրքիոյ նման երկրի մը մէջ: Յիշեալ թիւը կը ստանանք եղած վիճակագրական ատաղձէն, որ կը համաձայնի հայ Պատրիարքարանի ազգահամարին: Հայ բնակչութիւնը սփռուած էր պատերազմէն առաջ եւրոպական Թուրքիոյ (Կ. Պոլիս, Ադրիանուպոլ, Ռոդոսսո) եւ ասիական Թուրքիոյ վրայ (Անատոլու, Կիլիկիա, հիւսիս՝ Ասորիք, Միջագետք):

Հայոց մեծագոյն մասը կ'ապրէր արեւելեան Անատոլու, հայկական լեռնաշղթային վրայ, ազգին հին հայրենեաց, վեց վիլայեթներու մէջ. Կարին, Վան, Բաղէշ, Տիարքէքի, Սեբաստիա եւ Խարբերդ: Արեւմտեան Անատոլու, Կ. Պոլսոյ դիմաց, Մարմարայի հարաւային եզերքը կը

կազմեն բնակչության մեկ զորաւոր բեկորը: Հարաւային Անատոլի մէջ Կիլիկիա՝- Տաւրոսի տափաստանով եւ Ադեքսանդրիոյ ծովախորշին շուրջ գտնուող սահմանակից հիւսիս, ասորական երկիրներով – մէկ մասն էր հայկական հին հայրենիքին:

Անատոլի ամբողջ հայ բնակչութիւնը բարձրագոյն հրամանով տեղահանուեցաւ դէպի հիւսիսային եւ արեւելեան եզրը Միջագետքի անապատին. Տէր-էս-Չօր, Չօր, Ռակկա, Մեսկէնէ, Ռաս Իլ-Ային, մինչեւ Մոսուլ:

Մերձաւորապէս 1.400.000 հայ տեղահան եղած են:

Ի՞նչ կը նշանակէ այս աքսորը:

Թալէաթէ ստորագրուած հրամանագրի մը մէջ սա խօսքը կը գտնուի. “Աքսորավայրն է Ոչնչութիւն”։ Համաձայն այս հրամանագրին հոգ տարուեցաւ. արեւելեան Անատոլի նահանգներէն դէպի հարաւ տեղահան եղող ամբողջ բնակչութենէն միայն 10% աքսորավայր հասան. մնացած 90% ճամբան արդէն սպանուեցան, բացի ոստիկաններէն վաճառուած եւ քուրդերէն առեւանգուած կիներէն ու աղջիկներէն, մնացածն անօթութենէ եւ ուժասպառութենէ մեռան: Այն հայերէն, որոնք արեւմ. Անատոլուէ, Կիլիկիայէ եւ հիւսիս. Ասորիքէ անապատի եզրը քշուեցան, հաւաքատեղիներու մէջ հետզհետէ հարիւրհազարաւոր մարդկանց նկատելի բազմութիւն մը հաւաքուեցաւ: Ասոնք յետոյ մեծ մասամբ սիւսթեմաթիք սովով ու պարբերական ջարդերով ոչնչացան: Երբ հաւաքատեղիները նոր խումբերով կը լեցուէին, այնպէս որ մարդկանց ալ տեղ չէր մնար, գունդագունդ անապատ կը տարուէին եւ հոն կը մորթուէին: Թուրքեր յայտնած են, թէ Անգոլիացոց օրինակով՝ հանդէպ Բուրերու հարաւ. Ափրիկէի մէջ, իրենք հաւաքատեղիներու գաղափարին եկած են: Պաշտօնապէս կը յայտարարուէր, թէ աքսորները նախագոյնական կարգադրութիւններու կը ծառայէն, անհատապէս սակայն հեղինակաւոր անձեր բոլորովին յայտնի կերպով կը ծանուցանէին, որ հայ ազգը ոչնչացնել էր նպատակը:

Ըսածս կը հետեւի նաեւ այն վաւերաթղթերէն, որոնք կայսերական Դեսպանութեան եւ Արտաքին գործոց նախարարութեան արձանագրութիւններէն հրատարակեցի, մանաւանդ գերման հիւպատոսներու եւ Կ. Պոլսոյ գերման դեսպաններու զեկոյցները:

Դուք հոս երկու զեկոյց լսեցիք, Թէիլիբեանէ եւ Տիկ. Թերզիպաշեանէ տեղահանութեան ժամանակ իրենց կրածներուն ուտեսածներուն մասին: Նման զեկոյցներ թանձր մանրամասնութիւններով, որոնք ամէնքը անձնական փորձառութեան դրոշմ կը կրեն, հարիւններով տպուած են, մեծ մասամբ գերման, մասամբ նաեւ ամերիկեան եւ անգլիական հրատարակութիւններու մէջ: Իրողութիւնները անտարակուսելի են: Կատարման եղանակները կը նմանին ամենուրեք անոնց, որորնք հոս մեզի Թէիլիբեանի եւ Տիկ. Թերզիպաշեանի կողմէ ստորագրուեցան: Ապա թէ ոչ հարկ էր հարցնել. ի՞նչպէս կարելի է, այնքան կարճ ժամանակի մէջ միլիոնաւոր անձինք սպաննել: Այս հնարաւոր էր ամենավայրագ եղանակներով, ինչպէս սպանցուցած է նաեւ ա՛յն դատավարութեան բանախօսութիւններով, որ Կ.Պոլիս պատերազմական ատենին առջեւ Թալէաթ փաշայի եւ ընկերներուն դէմ տեղի ունեցաւ: Ատեանը

կազմուած էր զօրաբաժնի մը հրամանատարէն, իբր նախագահ, 3 զօրավարներէ, որոնց մէջ նաեւ պատերազմէն ծանօթ զօրավարներ, եւ հարիւրապետէ մը: Ամբաստանութեան 5 կէտերէն առաջինը կը հայեր հայ ջարդերուն: Պատերազմական ատեանին 6 յուլիս 1919 վճռովը մահուան դատապարտուեցան բոլոր գլխաւոր հեղինակները. Թալէաթ, Էնվեր, Ջեմալ եւ Դր. Նազիմ:

Հայերը ոչնչացնելու հրամանին կատարումը այնու ապահովուեցաւ, որ Կ. Պոլսէն վալիներուն, մութեսարիֆներուն եւ գոյմագամներուն, այսինքն վերին նախագահներուն, կառավարական նախագահներուն եւ նահանգային խորհրդականներուն յանձնուեցաւ կատարումը: Պաշտօնէաներ, որ չէին հնազանդիր, պաշտօնանկ կ'ըլլային: Օր. համար, Հալէպի վալին Ջեմալ փաշա մերժեց իր վիլայէթին մէջ տեղահանութեան հրամանները կատարել: Թալէաթէ պաշտօնագուրկ եղաւ եւ Գոնիա տեղափոխուեցաւ: Հոն այնպէս վարուեցաւ, ինչպէս Հալէպի մէջ, պաշտպանեց մնացած հայերը եւ տեղահանեալներն իւր հովանաւորութեան տակ առաւ: Հետեւութիւնը սա եղաւ, որ դարձեալ վար առնուեցաւ եւ այս անգամ անպաշտօն մնաց: Մին էր ան ամէնէն աւելի նշանաւոր եւ արդարակորով վալիներէն, որոնք Թուրքիա ունէր: Ուրիշ վալի մը, Ռաշիդ 'է, Տիարպէթի մէջ, մարդախոշոշներու ձեռօք սպաննեց երկու Գայմագամ, որոնք յանձն չէին առնէր հրամայեալ տեղահանութիւններն ի գլուխ հանել: Թրքական բնակչութեան դէմ, որ յաճախ տէրութեան հրամաններուն կը տհաճէր, բռնութիւն կը բանեցուէր, նոյնպէս պաշտօնէաներու եւ զինուորականներու դէմ: 3. Զօրաբաժնի հրամանատարը հրաման մը հանեց, որ ամէն թուրք, որ հայոց օգնութիւն կ'ընէ, իր տան առջեւ պիտի սպաննուի եւ տունը հրկէզ պիտի ըլլայ: Եթէ պաշտօնէաներ հայոց ռեւէ օգնութիւն ընելու “յանցանքը” գործէին, պէտք է որ արձակուէին եւ պատերազմական ատեանի առջեւ հանուէին:

Հայոց սկզբնական 1.850.000 թուէն տեղահանուեցան իբր 1.400.000: Կը մնան ուրեմն 450.000 հոգի: Ասոնցմէ իբր 200.000 աքսորէ ազատ մնացին, գլխաւորաբար քաղաքացի բնակչութիւնը Կ. Պոլսոյ, Ջմիւռնիայի եւ Հալէպի: Հալէպի հայութեան ազատելուն մէջ արդիւնք ունի գերման հիւպատը Ռէսուլէր, այն, որ համաձայնական մամուլին մէջ զրպարտուեցաւ, իբր թէ անձամբ ջարդերը կազմակերպած ըլլայ: Ջմիւռնիայի մէջ Զօրվ. Լիմա Ֆոն Ջանդէրս, ինչպէս իրմէ ալ պիտի լսէք, արգելք եղաւ հայոց տեղահանութեան: Նոյնն ըրաւ Ընդ. Հ. Մարաջախտ Ֆոն դէր Գոլց: Երբ ան Բաղդադ եկաւ, իմացաւ որ հայերը Բաղդադէ Մուսուլ աքսորուած են եւ հոն Մուսուլի հայերուն հետ դէպի Եփրատ պիտի տեղահանուին, այսինքն ի մահ պիտի յուղարկուին: Ֆոն դէր Գոլց Մուսուլի վալիին ծանոյց, որ կ'արգելու տեղահանութիւնները: Երբ վալին նոր հրաման ստացաւ, տեղահանութիւններն ի գլուխ հանելու, Ֆոն դէր Գոլց իր հրաժարականը մատոյց: Այժմ ուրեմն Էնվեր փաշա տեղի տուաւ, սակայն Ֆոն դէր Գոլցի գրած թղթին մէջ աւելացնելով, որ “իր վերին հրամանատարի իշխանութիւնները իրան իրաւունք չեն տար թրքական պետութեան ներքին գործերուն խառնուելու”:

Կ. Պոլսոյ մէջ դեսպաններն արգելք եղան հայոց տեղահանութեան: Թոյլ տուէք հոս անցողակի դիտողութիւն մ'ընել: Յաճած կը կարդանք, որ հայ ջարդերը հետեւութիւն են սա պարագային, որ հայ վաճառական դասակարգը թուրքերը կ'եղէքած է, եւ թէ թուրք բնակչութիւնը կատղած ինքնաբերաբար հայոց դէմ ոտք ելած է: Նախ ապացուցուած է որ ոչ 1895/96ի ջարդերը ու ոչ ալ

վերջին ջարդերը ժողովրդական ինքնաձին խլրտումներէ ծագում առած են: Թէ՛ այն ատեն եւ թէ՛ վերջերս թրքական պետութեան վարչական հրամաններն է որ կը գործէին: Ճիշդ ալ Կ. Պոլսոյ, Չմիւտնիայի, Հալեպի գլխաւոր վաճառատեղիներուն հայ վաճառական դասակարգն էր որ թէ՛ այն ժամանակ եւ թէ՛ հիմայ ինայուեցաւ, մասամբ ալ վասն զի ասոնք ի վիճակի էին իրենք զիրենք փրկանաւորալու: Ասոր հակառակ Անատոլուի ամբողջ գիւղացիութիւնը, որ հայ բնակչութեան 80% կը կազմէ, արհեստաւորներու հետ միասին, որոնք մեծամասնութեամբ հայ են, անապատ զրկուեցաւ եւ ոչնչացաւ:

Հայ բնակչութեան մնացորդը, իբր 250.000 հոգի արեւելեան վիլայէթներէ, սահմանակից վիլայէթներու ռուսական գրաւումով տեղահանութենէ զերծ մնացին եւ Կովկաս ապաստանեցան: Ռուսերը այն ժամանակ Վանայ ծովու արեւմտեան եզերքը յառաջացան, Երբ յետոյ ետ դարձան, հայերը միասին առին, ոչ հայերը սիրելէ, քանի որ երբ Ռուսերը դարձեալ յառաջացան նոյն վիլայէթները, հայ ընտանիքներուն թոյլ չտուին իրենց հայրենիքը վերադառնալու: Եանուշկէիչ՝ Նիկոլայ Նիկոլայեիչի սպայակոյտին զլուխը, որ այն ատեն Կովկասի մէջ հրամանատար էր, ծանոյց որ Ռուսաստան դատարկուած երկիրներու մէջ փոխանակ հայերու՝ քուրդերու եւ կոզակներու գաղութներ պիտի հիմնէ, որպէս զի զինուորական լայն գօտի մը կազմուի թուրքերու դէմ: Միլիկով, ռուսական Կադէտներու վարիչը, այն ատեն Դումայի մէջ սաստիկ կշտամբանքներ յուզեց, թէ Ռուսական տէրութիւնը կ'ընէ այն ինչ թուրքերն ըրած էին առաջ, ան կ'ուզէ «Հայաստան մը առանց հայո»: Յամենայն դէպս ռուս յառաջխաղացումը 350.000 հայերու կեանքը փրկեց. եւ ռուս նահանջը զանոնք իրենց երկրէն զրկեց: Դեռ այժմ Կովկաս կը բնակին անձուկ երկրամասի մը վրայ, եւ տարիներ սով քաշեցին եւ մեծ նեղութիւն կրեցին:

Ակամայ կը հարցնէ մարդ ինք իրեն. ի՞նչպէս այսպիսի դէպքեր պատմականօրէն հնարաւոր եղան: Պիտի փորձեմ կարճ ի կորձոյ պատասխանել:

Հայկական հարցը ինքնաբոյս տունկ մը չէ, այլ եւրոպական քաղաքագիտութեան ճնունդը: Հայ ազգը զոհն է Ռուսիայի եւ Անգլիայի իրարու հակառակ քաղաքական շահերուն: Երկու պետութիւններուն ոսոխութիւնը արեւելքի մէջ սկիզբ առած է Խրիմի պատերազմէն եւ Բերլինի Համաժողովէն: Լոնդոնի եւ Պետերսբուրգի քաղաքագիտական ճատրակին մէջ հայը զինուորն էր, որ երբեմն յառաջ կը քշուէր, երբեմն կը զոհուէր: Մարդասիրական պատճառները, «Հովանաւորութիւն քրիստոնէից», պտրուակներ էին: Երբ Ապտուլ Համիտ 1895ին բռնադատուած Անգլիայի, Ռուսիայի եւ Ֆրանսայի ներկայացուցած բարենորոգումներու ծրագիրն ստորագրած եւ արդէն կարգ մը հայկական ջարդերով պատասխանած էր, Լորդ Սալիսբուրի ծանոյց, որ հայկական հարցը Անգլիայի համար վերջացած է: Իշխան Լոբանով սուլթանին հասկցուց, որ հոգ ընելու կարիք չունի, որովհետեւ Ռուսիա բարենորոգումներու գործադրութեան նշանակութիւն չի տար: Սուլթանը եզրակացութիւնները հանեց... Սասունի ջարդը 1894ին, որ առիթ եղաւ բարենորոգումներու ծրագրին, հազար հայերու, 1895/6ի ջարդը, որ ծրագրին յաջորդեց, 100.000 հայերու կեանքն արժեց: 1915/18 ջարդը, որ կանխած էր 1913ի բարենորոգումներու ծրագիրը, զոհերու թիւը միլիոնի հասցուց: Այս սանդուխը 1894ի, 1895ի եւ 1915ի՝ 1000 - 100.000 - 1.000.000

ջերմնագիծ մը կը ներկայացնէ, որ աշխարհապատմական ջարդերու պատմութեան մէջ դժուարաւիբէն նմանն ունի: Միջնաշրջանին՝ 1909 տարւոյն մէջ կ'իյնայ դեռ Կիլիկեան ջարդը 25.000 հոգով:

Հակառակ Բերլինի դաշինքին 61 յօդուածին, որ 6 Մեծ Պետութիւնները ստորագրեցին, հակառակ 1878ի կիպրական համաձայնութեան, որուն մէջ Անգղիա քրիստոնէից պաշտպանութեան եւ հայկական բարենորոգումներու երաշխատը կը կանգնէր, հակառակ սուլթանին՝ անգղիական ռուսական ֆրանսիական բարենորոգումներու ծրագրին տակ դրած ստորագրութեան՝ այս Մեծ Պետութիւններէն եւ ոչ մին մատն անգամ շարժեց, իրենց պաշտպանեալները փրկելու կամ գոնէ մարդասպանները պատժել տալու: Մինչեւ այսօր հայերը միայն միջոց առ վախճան եղած են Անգղիայի, Ռուսիայի եւ Ֆրանսայի քաղաքագիտական խաղին: Գերմանիա, ինչպէս գերման վաւերաթղթերու հրատարակութիւնը պիտի սպացուցանէ, Բերլինի համաժողովէն ի վեր հայկական հարցին հանդէպ միշտ բարեացակամ եւ զգօն դիրք մը բռնած է եւ ասոր փոխարէն ամբողջ աշխարհի մէջ զրպարտուած է իբրեւ պետութիւն մը, որ Սուլթանին եւ թրքական կառավարութեան բոլոր չար գործերուն նեցուկ եղած է: Անգղիայի ու Ռուսիայի քաղաքագիտական խաղն էր որ նախ Սուլթանը եւ ապա Երիտասարդ թուրքերը համոզեց, հայերը՝ Թուրքիայի կայունութեան ամենավտանգաւոր ազգատարրը նկատելու:

Ապտուլ Համիտ սա եզրակացութեան յանգեցաւ. “Եւրոպայի ի նպաստ Բուլգարիայի միջամտելովը՝ Բուլգարիան կորսնցուցի: Այժմ հայոց հետ կու գան եւ կ'ուզեն ձեռքէս արեւելեան Անատոլուն առնուլ, որպէս զի մաս առ մաս Թուրքիայէ անջատեն”: Աստի ջարդերը եւ հայերը հալածելու խենթութիւնը:

Եւ սակայն հայկական բարենորոգումները կը մնան պետութեան քաղաքական ծրագրին մէջ: 1913ին դարձեալ օրախնդրոյ կարգ անցան: Ռուս եւ գերման դեսպանները բանակցութիւնները կը վարէին, Անգղիա ետ կը քաշուէր: Այս բանակցութիւններէն դուրս եկաւ բարենորոգման ծրագիր մը, զոր Դուռը ստորագրեց եւ որմէ հայերը զոհ էին: Բարենորոգումներու հսկողութիւնը պիտի յանձնուէր Եւրոպայի երկու Ընդի. Տեսուչներու: Խնդիրը մինչեւ հոս չտեսաւ: Պատերազմը ծագեցաւ եւ երկու բարենորոգիչներն ալ ետ կոչուեցան: Ես 1913ին Կ. Պոլիս էի: Բանակցութիւններու միջոցին երիտասարդ թուրքերը շատ զայրացած էին, որ հայկական բարենորոգման հարցը դարձեալ կը զբաղցնէ պետութիւնները ու կրկնակի դառնացան, երբ Գերմանիայի եւ Ռուսիայի համաձայնութեան շնորհիւ հարցը հայերուն ցանկացած կերպով կարգադրուեցաւ: Այն ատեն Երիտասարդ թուրքերու կողմէ կ'արտայայտուէր. “Եթէ դուք հայերդ բարենորոգումներէ ձեռք չէք քաշեր, պիտի պատահի բան մը, որուն հանդէպ Ապտուլ Համիտի ջարդերը տղու խաղալիք էին”:

Երիտասարդ թուրքեր եւ հայեր միասին յեղափոխութիւն յառաջ բերած էին: Վարիչները բարեկամացած էին եւ ընտրութիւններու մէջ փոփոխակի իրերու ձեռնտու կ'ըլլային: Պատերազմի առաջին ամիսներուն անոնց մէջ ամէն բան խաղաղ կ'երեւար: Ահա յանկարծ ապրիլ 24-25ի գիշերը 1915, ի զարմացումն ամբողջ Կ. Պոլսոյ, հայ ամենալաւ ընկերութեան 235

ատաւորականները ձերբակալուեցան, բանտ տարուեցան եւ Փոքր Ասիա տեղափոխուեցան: յաջորդ օրերը քանի մը հարիւր ալ աւելցաւ:

Ընդ ամենը 600 էին: Ասոնցմէ միայն 15ը ողջ առողջ պրծան: Կ. Պոլսոյ հայ մտաւորականութիւնն էր: Խորհրդարանի հայ անգամ Վարդգէս, անձնական բարեկան Թալէաթի, դէռ ազատ մնացած էր: Գնաց ան Թալէաթի, հարցնելու համար որ ըլլալիքն ինչ է: Թալէաթ ըսաւ Վարդգէսի. “Մեր տկարութեան օրերուն մինչեւ մեր կոկորդը հասաք եւ հայկական բարենորոգման հարցը յուզեցիք, այս պատճառով մենք ալ մեր այժմ գտնուած դիրքի նպաստաւոր պայմանէն պիտի օգտուինք՝ Ձեր ազգը այնպէս ցիրուցան ընելու, որ 50 տարի բարենորոգումներու գաղափարը Ձեր մտքէն վանէք”: Վարդգէս վրայ բերաւ. “Ուրեմն կը դիտուի, Ապտուլ Համիտի գործը շարունակե՞լ”: Թալէաթ պատասխանեց. “Այո”:

Ինչպէս սպառնալիքը, այնպէս եւ գործը: Կ. Պոլսոյ պատերազմական ատեանին դատավարութիւնները, “Journal Officiel” ի զեկոյցին համաձայն փաստը կ’ընձեռեն, որ արքայը որոշած է Երիտասարդ թուրքերու Կոմիտէն եւ թէ Թալէաթ փաշա, Կոմիտէին հոգին եւ անոր ամենաազդեցիկ մարդը, բնաջնջումը հրամայած եւ ոչինչ ըրած է, զայն արգիլելու: Առ այս կարելի է գերման եւ թուրք վաւերաթղթերու վրայ յեցած պաշտոնական գրաւոր ցուցում բերել:

Իմ այս խօսքերուս նպատակն էր ցուցել, թէ պետութիւններու քաղաքագիտական խաղը հոն առաջնորդեց, որ նախ Ապտուլ Համիտ եւ ապա Երիտասարդ թուրքերը հայոց դէմ այնպէս կասկածոտ դարձան, որ սա եզրակացութեան եկան, թէ հայերու ուրիշ բան կարելի չէ ընել, բայց եթէ զանոնք ոչնչացնել: Այս ոչնչացումը հազարաւոր ու բիւրաւոր դէպքերու մէջ այն ձեւերն առաւ, որոնց մասին ականատեսներու բերնէն քիչ առաջ լսեցիք:

Դր. Վերթաուէր.- Ըսիք, թէ Ռուսիայի եւ Անգոլիայի քաղաքագիտական խաղը հայերու ոչնչանալուն նպաստեց: Ինչո՞ւ:

Դր. Լեպսիուս.- Վասն զի թուրքերուն սա վախը ներշնչեցին, թէ կ’ուզեն Հայաստան անկախ ընել, որով ասիական Թուրքիայի գոյութիւնը պիտի վտանգուէր:

Դր. Վերթաուէր.- Առաջ կը լսէինք, թէ պատճառը այս է որ թուրքերը մահմետական եւ հայերը քրիստոնէայ են, եւ թէ ատելութիւնը հարիւրաւոր տարիների հնութիւն ունի:

Դր. Լեպսիուս.- Համաթրքական, համախալամիստական պետութիւն մը ստեղծելու գաղափարը որուն մէջ քրիստոնէաներու տեղ պիտի չըլլար, Կոմիտէն եւ Էնվեր փաշայէն ծագած է:

Դր. Վերթաուէր.- Ուրեմն ինչպէս որ “համազերման” կամ “համառուս” կամ “համաթուրք” կ’ըսեն, կ’ուզէին ամէն բան, ինչ որ թուրք չէր, ոչնչոցնէ՞լ:

Դր. Լեպսիուս.- Այո՛:

Դր. Նիմայէր.- Այսպէս չէ՞: Հայը նուաճած քրիստոնէայ վերջին ազգն էր, որուն երկրին ու տիրապետութեան մասին Թուրքիա տակաւին կրնար հաշիւներ շինել: Բալկանի եւ Թիւրքիայէ

կանխապես ընկճուած միւս բոլոր ազգերը կարգաւ ուրք ելած եւ իրենք զիրենք թրքական գերիշխանութենէն ազատած էին: Արդ որպէս զի արգիլեն, որ չըլլայ թէ հայերն ալ նոյնն ընեն, որոշուեցաւ անոնց ոչնչացումը: Ճի՞շտ է այս տեսութիւնը:

Դր. Լեպսիուս. – Այո՛: Կոմս Մետտերնիխ, որ 1918 Կ. Պոլիս գերման դեսպան էր, Յուլիս 30էն զեկույցի մը մէջ կը գրէր. “Հայերու գործը վեջացած է: Երիտասարդ թրքական վոհմակը անհամբեր կը պատրաստուի այն բռնակին, երբ Յունաստան Թուրքիայի դէմ պիտի դառնայ: Յոյները կը կազմեն Թուրքիայի քաղաքակիրթ տարրը, ան ալ պիտի ոչնչացուի իր կարգին, ինչպէս հայկականը”: Այսպէս կը նկատէր խնդիրը կոմս Մետտերնիխ:

Իրազեկ զօրավար վսեմաշուք Օտտօ Լիմանֆոն Զանդէրս 66 տարեկան, աւետարանական:

(Իրազեկներու յատեւկ երդումն ընելէ վերջ)

Պ. Դր. Լեպսիուսի խօսածին վրայ կ'ուզեմ քանի մը բան զինուորական տեսակէտէ աւելցնել:

Իմ կարծիքովս՝ պէտք է երկու մասի բաժնել այն ամէնը, ինչ որ Հայաստանի մէջ պատահած է, եւ ինչ “հայկական ջարդ” անուան տակ կ'ամփոփուի: Առաջինն է, ըստ իմ տեսութեանս, երիտասարդ թրքական կառավարութեան մէկ հրամանը հայ տեղահանութեան մասին: Կրնանք ուրեմն երիտասարդ թուրք կառավարութիւնը պատասխանատու բռնել այս կարգադրութեան համար ամբողջապէս, հետեւանքներուն՝ մասամբ: Երկրորդն են այն կոիւնները, որոնք Հայաստանի մէջ տեղի ունեցան, որովհետեւ նախ՝ հայերը իրենք զիրենք կը պաշտպանէին, թրքական կառավարութենէն պատուիրեալ զինաթափութեան չէին ուզեր տեղի տալ, եւ որովհետեւ, երկրորդ, որ առանց ո եւ է տարակուսի ապացուցուած է, ռուսերու հետ թուրքիոյ դէմ ելած են մասամբ: Բնականաբար այդ՝ կոիւններու, եւ ինչպէս սովորաբար, յաղթող մասին համար ջարդի դուռ եղած է: Կը կարծեմ թէ ասոնք զանազանելի իրեր են: Կառավարութիւնը հրամանագրած է տեղահանութիւնները, եւ այն՝ յենլով թէ զինուորական եւ թէ քաղաքական վերին պաշտօնարաններու զեկոյցներուն վրայ, որոնք զինուորական պատճառներէ հարկաւոր կը դատէին արեւելեան անատոլուն հայերէն պարպել:

Կը բաղձայի հոս շեշտել, որ գնդապետներն ու հրամանատար զօրավարները Կովկասի մէջ միշտ թուրքեր եղած են, վասն զի այն հարցին շուրջ շատ սխալ ու անչիշտ բաներ գերմանացոց դէմ ըսուած են: այս գնդապետներն ու քաղաքական պաշտօնարանները զեկուցած են Կ. Պոլիս՝ ինչ որ ըսի - եւ ասոր վրայ արձակուած տեղահանութեան հրամաններու գործադրութիւնը ինկած է ամենավատ ձեռքերու մէջ: Հարկ է հետ շեշտել որ թրքական ոստիկանութիւնը պատերազմէն յառաջ շատ լաւ էր: Ունէր 85.000 հեզի եւ յատկապէս ընտրեալ գունդ մը: Բայց ապա բանակ մուծուեցաւ եւ բաժանուեցաւ մեծ մասամբ օգնական ոստիկանութիւն մը, որ լաւ տարրերէ չէր բաղկանար: Մասամբ աւազակներ, մասամբ պարապորդներ էին: Այս մարդկանց մէջ կարգապահութիւնը բնականաբար շատ չնչին էր: Այս պարագան նկատելու է, երբ հայոց չուին

վրայ հանդիպած խժողովություններու մասին խօսք կըլլայ: Թուրք զինուորներ չէին, այլ ոստիկանութեան շատ վատ փոխարէն մը, որ ի հարկին պէտք եղած էր ստեղծել: ապա պէտք է նկատի առնել, որ թրքական էտապը այնքան խեղճ էր, որ ոչ միայն հայեր, այլ նաեւ շատ թուրք զինուորներ մեռած են սնունդի պակասութենէ, հիւանդութենէ, թրքական պետութեան մէջ կազմակերպութեան բացակայութենէ: Հոն հազարաւոր թուրք զինուորներ մեռած են. միայն իմ բանակէս Գալիպոլիի արշաւանքէն վերջ հազարաւոր վատուածներ մեռան, վասն զի թերասուն էին:

Կը կարծիմ թէ այս ամէնը հարկաւոր է նկատի առնել:

Դարձեալ կարելի չէ անտեսել, որ այս ուղեկից խումբը մասամբ “սուրբ պատերազմի” մթին պատկերէն ազդուած էր, հայերու մէջ քրիստոնէաներ կը տեսնէր եւ կը կարծէր թէ ասոնց հետ անողոք խստութեամբ վարուիլը բարի գործ է: Ստորին պաշտօնէութիւնը կրնայ այս աւելի արծարծած ըլլալ: Արդէն յիշուեցաւ որ քուրդերը, որոնք հայոց միշտ թշնամի էին, կը յարձակէին անոնց վրայ եւ ջարդէին:

Գերման կառավարութիւնը, որչափ զիտեմ, ըրաւ ինչ որ այն ատեն կրնար ընել, որչափ որ իրերը կը ներէին: Բայց դժուար էր իրեն համար: Գիտեմ մասնաւորապէս, թէ դեսպան կոմս Մետտերնիխ վճռական բողոքներ բարձած է հայերու հանդէպ եղած կարգադրութիւններուն դէմ:

Կրնամ մեզի համար ըսել – վասն զի մենք, ինչպէս պ. Դր. Լեպսիուս բարութիւնն ունեցաւ շեշտելու, անչափ կասկածներու ենթարկուեցանք – որ ոչ մէկ գերման սպայ հայերու դէմ եղած կարգադրութեան մը մասնակցած է: Ընդ հակառակնէ միջամտեցինք՝ ուր որ կրցանք: Կը բաղձայի յիշել, որ ես երբեք հայոց մասին թալէաթէ ստորագրուած հրամանն չեմ ստացած: Իմ ստացած հրամաններս ստորագրուած էին էնվերէ եւ թեթեւ էին:

Այս հրամանները երբեմն բոլորովին անիմաստ էին եւ չէին կարող գործադրուիլ: Օր. համար անգամ մը հրաման մը եկաւ բոլոր հրեաներն ու հայերը սպայակոյտներէ հեռացնելու: Ինքնին հասկանալի է որ հրամանը չգործադրուեցաւ, վասն զի հայերու եւ հրեաներու կը կարօտէինք իբր թարգման:

Յաճախ այսպիսի անիմաստ հրամաններ կը ստացուէին հոն:

Առիթ ունեցայ 1916ի փետրուարին, երբ Ադրիանուպոլսի վալին ալ կը փորձէր հայերն ու հրեաները Ադրիանուպոլսէն վճնտելու, ընդդիմանալու: Լուր ստացայ բաւերական վերին տեղակալ Վիլմարէ, ուղեւորուեցայ հոն, քննեցի խնդիրը, մեր նեկայացուցիչն էր աստրիական հիւպատը: Իրապէս ալ վալին հրամայած էր վտարումը: Անցայ Կ. Պոլիս եւ իմ ջանքովս եւ դեսպան կոմս Մետտերնիխի եւ դեսպան բդեաշի Պալաւիչիսիի աջակցութեամբ խնդիրը կանգ առավ: Ուրիշ անգամ մը Չմիւռնիա եկայ: Հոն վալին 600 հայ անկողիններէն հանել, վագոններու մէջ դնել տուած էր, որպէս զի զանոնք տեղահան ընէ: Մէջ մտայ եւ վալին ըսել տուի. Եթէ հայու մը դպչին, իր ոստիկանները զինուորներուս ձեռքը հրացանահար ընել կու տամ: Ասոր վրայ

հրամանը ետ առնուեցաւ: այս իրողութիւն է: Պ. Դր. Լեպսիուսի գրքին մէջ ալ այս դեպքը կը պատմուի:

Այս է մօտաւորապէս, ինչ որ ուղղակի ինձի հանդիպած է: Կ'ուզէի շեշտել, որ ես ոչ Հայաստան ոտք կոխած, ոչ Հայաստանի մերձեցած եմ, եւ ոչ ալ երբեք թրքակալողմէ զիս լսած են կամ ինձի հարցում եղած է հայոց դէմ եղած ո եւ է կարգադրութեան մասին: Ընդհակառակն ամէն բան մեզմէ կը ծածկուէր, որպէս զի քաղաքական ներքին յարաբերություններու մասին գաղափար չստանանք:

Արտասահմանի մամուլին ամենամեծ գրպարտութիւններէն մին է սա, թէ ո եւ է կերպով մենք գերման սպաներս - եւ կարծեմ, կրնամ նոյնն ըսել բոլոր գերման պաշտօնեաներուն համար - նման կարգադրութեան մը մասնակցած ըլլանք: Ընդհակառակն համաձայն մեր պարտականութեան միջամտեցինք հայոց համար, ուր որ կրցանք: Իմ շրջանիս մէջ ցիրուցան, առանձին հայեր կ'ապրէին, եւ վերը նկարագրած դեպքերս միակն են, որ իմ ծանօթութեանս հասած են:

Թէ Թալէաթ անձնապէս որչափ մասնակից էր հրամաններուն - որչափ զիտեմ հայերու տեղահանութեան մասին գլխաւոր հրամանը 1915 մայիս 20. Էն է - չեմ կրնար ըսել: Յամենայն դէպս կոմիտէին մտայնութեան արդիւնքն է եւ ապա նախարարութեան ընդհանուր հաճութիւնն ալ ստացած է: Գործադրութիւնը, ինչպէս ըսի, վալիներու, փոխ - պաշտօնեաներու եւ ամենէն աւելի՝ ահռելի ոստիկանութեան ձեռքն էր:

Ամէն պարագայի մէջ պարտքս կը նկատեմ ըսելու, որ 5 տարիներուն մէջ, երբ ես Թուրքիա էի, Թալէաթէ ստորագրութիւն կամ հրամանագիր հայերու դէմ տեսած չեմ, եւ ոչ ալ կրնամ վկայել, թէ այսպիսի հրամանագիր տրուած է:

Ապա կը հարցաքննուի հայ առաջնորդական տեղապահ Գրիգորիս Պալաքեան, որ Մանչեստրէ Բերլին եկած է դատավարութեան համար:

Վկան կոտրած գերմաներէն մը միայն կը խօսի, բայց թարգմանի մը պէտքը չի նկատուիր:

(Վկաներու յատուկ երդումն ընելէ վերջ:)

Դեպքի մասին չեմ կրնար բան մը ըսել, նոյնպէս ալ ամբաստանեալին վրայ, զինքը երբեք չեմ ճանչցած:

1914ին երբ պատերազմը ծագեցաւ Բերլին էի եւ 1914 Սեպտեմբերի կեսին թողուցի Բերլին, ուղղակի Կ.Պոլիս դառնալու համար:

Հոն իբր 6-7 ամիս ետք, 1915 ապրիլ 21ին, 280 ուրիշ հայ մտաւորականներու հետ ոստիկանութեան կողմանէ բռնուեցայ եւ արքայութեան:

36 ժամ երկաթուղիով ճամբորդեցինք մինչև Էնկիւրիի քովերը: Հոն մեր կարաւանէն իբր 90 հոգի Այսա արքարուացան: Միւս իբր 190 հոգիները՝ Էնկիւրիէն 24 ժամ հեռու՝ Չանկըր արքարուեցան եւ կառքով հոն փոխադրուեցան: Ասոնք յետոյ դարձեալ 25, 15, 5 հոգիէ փոքր կարաւաններով Էնկիւրի փոխադրուեցան եւ հոն սպաննուեցան: 190 հոգիէն 16ը մնացին, խնայուեցան:

Չանկըրլի մէջ կային իբր 40 տուն հայ, որոնց մէջ կը բնակէին 250 հոգի, որոնք թրքերէն կը խօսէին, քաղաքականութենէ հեռու ապրող վաճառականներ: Այս իբր 250 հայերուն հետ Կ.Պոլսոյ 16 արքարեալները Տեր-Էս-Չօր անապատը պիտի տարուէին, եւ այն՝ Կ Պոլսոյ ներքին գործոց նախարարին հեռագրական հրամանովը:

Բայց Քաստամունիի վալին, Ռեշադ փաշա, մերժեց ներքին գործոց նախարարին հեռագրին հպատակիլ: Իսկոյն վար առնուեցաւ: Անոր տեղակալը կ'ուզէր հրամանը գործադրել մեզ տեղահանել: Ասոր դրամ տուինք – իբր 800 թրքական ոսկի - այդ անձն էր՝ կոմիտէի ատենադպիր (իթթիհադ կոմիտէ) Իոնուս 'էյ: Ասոր վրայ մեզ չտեղափոխեցին եւ մենք հոն մնացինք մինչև փետրուար 1915: Ապա Ռեշադ փաշայի տեղ Քաստամունի գրկուեցավ Էնկիւրիի վալին, որ, ինչպէս այն միջոցին լսեցինք, Էրկիւրիի վիլայէթին մէջ 82.000 հայ, կիներ, տղաք եւ այրեր սպանած էր: Այս նոր վալին հետեւեցավ ներքին գործոց նախարար Թալէաթ փաշայի հրամանին եւ մեզ մինչ Տեր-Էս-Չօր տանիլ տուաւ, թէեւ հայերը շատ հանդարտ էին եւ իրենց մայրենի լեզուն չէին կրնար խօսիլ, այլ ամենքը թրքերէն կը խօսէին: Բայց քաղաքականութեան պատճառով կ'ուզէին հայերը ամբողջ Փոքր Ասիայէ պարպել: Նախ 48 այր տարին: Կիներն ալ անոնց հետ պիտի քաշքշուէին: Հարցուցին մեզի, որ արդեօք կ'ուզենք կիներն ու տղաքը միզի հետ առնիլ թէ ոչ: Խորհուրդ տուի չառնիլ: Յետոյ իմացանք որ սպաննուած են: Տարին մեզ Չորուս - Եոզղադ - Բողազլեան – Կեսարիա - Թորմարզէ - Հաճին – Միս – Կարս - Բոզար – Օսմանիէ - հասանքէլի – Իսլահիէ գծով: Արիւնային գծերէն մին է սա: Եոզղադի եւ Բողազլեանի միջեւ միայն 43.000 հայ, կիներով եւ տղաներով, ջարդեցին: Կ'իմանայինք որ մեզ ալ պիտի սպաննեն, վասն զի թէ եւ պաշտօնեական անունն էր “Սեղահանութիւն” բայց յիրականին կազմակերպեալ քաղաքականութիւն էր ոչնչացումի: Բայց որովհետեւ մենք դրամ ունէինք, միասին իբր 15.000 - 16.000 ոսկի, կը մտածէինք որ անովպիտի կարենայինք մեր կեանքը փրկել, Արեւելքի մէջ սովորական ամենակարող “Բախշիշ”ին ուժով: Կը յուսայինք, թէ ինչ որ ուրիշ միջոցներով չէինք կարող ընել, պիտի կարենայինք ընել դրամով: Չէինք սխալած: Եթէ հոս դեռ կենդանի եմ, “Բախշիշ” ի շնորհիւ է:

Ինքնին հասկանալի է որ մեզ շատ գէշ կը հոգային: Անոթի էինք, եւ երբ ջուր, գետեր կը տեսնէինք եւ մեր ծարան անցնել կ'ուզէինք, թոյլ չէին տար: Երկու օր առանց հացի ապրեցանք: Չէինք ձգեր, որ մեր դրամով գնէինք: Երբեք չէինք կրնար քնանալ: Եւ սակայն գոհ էինք եւ կը մտածէինք՝ եթէ մեզ չսպաննէին, մեծ բախտ կ'ըլլար:

Երբ Եոզղադ, որ ամենէն ուելի արիւնային տեղան էր, եկանք, տեսանք չորս ժամ հեռու ձորի մը մէջ քանի մը հարիւր գլուխ երկար մազերով, ուրեմն կիներու եւ աղջիկներու գլուխներ: Մեզի հետ էր ոստիկանութեան հարիւրապետ մը Շիքրի անուն, որ մեզ վարած էր (իբր 48 այր էինք, եւ

մեզի հետ էին իբր 16 ձիաւոր ոստիկան): Հարցուցի հարիւրապետին. լսածեմ, որ հայ այրերը կը սպաննուին, ոչ թէ կիներն ու աղջիկները: Այո, ըսաւ, եթէ միայն այրերը սպաննէինք եւ ոչ թէ նաեւ կիներն ու աղջիկները, 50 տարի ետքը քանի մը միլիոն հայ կ'ըլլային, ուրեմն պէտք է որ նաեւ կիներ ու աղջիկներ սպաննենք, որպէս զի ընդ միշտ ներքին ու արտաքին խռովութիւններ դադրին: (Ներողամիտ եղէք, 4 – 5 տարիէ ի վեր գերմաներէն խօսք մը արտասանած չեմ, այս պատճառով չեմ կարող այլեւս սահուն խօսիլ գերմաներէն: Հայ հոգեւորական եմ 1901 էն ի վեր: Հայաստանի իմ ազգիս հարաբերութիւնները կը ճանչնամ, եւ լաւ ծանօթութիւններ ունիմ թրքական քաղաքականութեան վրայ:)

Հարցուցի ուրեմն, թէ ինչու կիներ ու տղաք կը սպաննուէին: Հարիւրապետը ամենայն պարզութեամբ պատմեց. ամէնքը սպաննեցինք, բայց ոչ քաղաքին մէջ: Այդ արգիլուած էր, վասն զի 1895/96ին Ապտուլ Համիտ հրամայած էր բոլար քաղաքացիներն սպաննել: Յետոյ այս եւրոպական ազգերը, քաղաքակիրթ ամբողջ աշխարհը իմացան, եւ չէին ուզեր թոյլ տալ: Ոչ մէկ մարդ ողջ պիտի մնար, որպէս զի ոչ մէկ վկայ ատեան դուրս գար: - Բայց փառք Աստուծոյ, կան դէռ քանի մը հոգի:

Հարիւրապետն ըսաւ ինձի. այս կրնամ հանդարտութեամբ պատմել, վասն զի դուք անապատ կ'երթաք եւ հոն անօթութենէ պիտի մեռնիք: - Ապա պատմեց մեզի մանրամասնութիւններ: - Նախ 14.000 այր հանած էին Եոզղադ քաղաքէն եւ շրջականերէն եւ հորերուն մէջ սպաննած: Սպաննուածներուն կենդանի ընտանիքներուն ըսուած է, որ այրերը Հալէպ հասած են, լաւ են հոն, եւ կառավարութենէն խնդրած են, որ հրաման տայ ընտանիքներուն՝ ետեւէն գալու միանալու: Ընտանիքները հոն պատրաստ բնակարաններ պիտի գտնէին: Կառավարութիւնը թոյլ կու տայ, որ ամէն շարժական ստացուածք միասին առնեն: Ասոր վրայ ընտանիքները ամէն բան ծրարած, ոսկի, արծաթ ապրանք, զարդ, գորգ եւ ամէն շարժական միասին առած են: - այս կը պատմէր այն հարիւրապետը, որ կարաւանը կը քշէր, եւ կ'ըսէր, թէ ինքն անձամբ՝ իբր ոստիկանութեան հրամանատար իբր 40.000 հայ սպաննել տուած է Եոզղադի եւ Բողազլեանի միջեւ: - Արդ կիները կը կարծէին, որ իրենց այրերը կենդանի են, եւ պատրաստութիւններ տեսան անոնց ետեւէն չուելու: Իբր 840 կառք կար, ասոնցմէ 380ը եզան կառք, միւսները ձիակառք:

Շատ կլիներ ու տղաք ալ ստիպուած էին հետիոտն երթալ: Հալէպ գաղթող կիներն ու տղաքը իբր 6400 էին:

Հարցուցի հարիւրապետին. Ինչու՞ ըրիք այդ բանը: - Ան ըսաւ. Եթէ կիներն ու տղաքը քաղաքներու մէջ սպաննած ըլլայինք, պիտի չկարենայինք գիտնալ, թէ հարստութիւններն ու՞ր մնացած են, արդեօք պահուած էին տեղ մը թէ ոչնչացուած: Ասոր համար “թոյլ տուինք” բոլոր զարդեղենները միասին առնել: - Երբ չորս ժամ յառաջացած էինք (այսպէս շարունակեց պատմութիւնը հարիւրապետը), ձոր մը հասանք, ուր 3 ջրաղաց կար: Մեզի հետ էին իբր 25-30 թուրք կիներ: Ասոնք սկսան հայ կիներու եւ աղջիկներու զգեստները խուզարկել եւ զարդարանքներն ու դրամներն առնել: Որովհետեւ իբր 6400 կին ու աղջիկ էին, այս պատճառով թուրք կիները իրենց խուզարկութեան համար 4 օրուան պէտք ունէին:

Երբ խուզարկութիւնը վերջացաւ, հարիւրապետն ըսաւ հայ կիներուն, թէ կառավարութենէն նոր հրաման մը՝ “շնորհք” մը եկած է, որ թոյլ կու տայ կիներուն իրենց տները դառնալու:

Վերադարձի ճամփուն վրայ – մէկ ժամ հեռու – մեծ հարթավայր մը կար, կառքերն ու կառապաններն արդէն ետ դրկուած էին: Կիները հարցուցին, ինչու: Ըսուեցաւ իրենց, ետ դառնալու շնորհքն եկած ըլլալով՝ կառքի կարօտութիւն չունէին, քանի որ մինչեւ Եոզղաղ 4 ժամ կը տեւէր:

(Այս հարիւրապետն ինքը պատմեց: Այսպէս շարունակեալ չխօսեցաւ, ինչպէս ես հոս, այլ ես միշտ կը հարցնէի, որպէս զի պատասխան ստանայի: Գուցէ կրնամ, կը մտածէի, լսածէս օգտուիլ:)

Արդ երբ կիները “շնորհք”ին հետեւանքով Եոզղաղ կ’ուզէին դառնալ, շատ ուստիկաններ դրկուեցան գաւառին գիւղերը եւ գիւղացիները “սուրբ պատերազմին” կոչուեցան (ջիհաս): Գրեթէ 12.000-13.000 գիւղացի եկան կացիներով եւ ուրիշ երկաթէ գործիքներով: Թոյլ տրուեցաւ ամենքը սպաննել եւ միայն գեղեցկագոյն աղջիկները հետերնին տանիլ:

Դր. Ֆոն Գորդոն (ընդամիջելով) Շատ բան արդէն լսեցենք, կ’ուզեի միայն էականն ալ իմանալ:

Վ. – Խնդրեմ, հարցումներ ըրէք:

Դր. Ֆոն Գորդոն. - Երբ Չանկըրը էիք, Ձեր պրոֆեսորներէն մէկին հետ վալիին գացի՞ք եւ խնդրեցի՞ք իրմէ, որ Ձեզի համար բան մը ընէ: Այնտեղի վալին Ձեզի հեռագիր մը չցուցու՞ց, որով Թալէաթ փաշա նոյն վալիին որոշ հարցում մը ուղղած էր:

Վ. – Թոյլ տուէք երկու վայրկեան ալ, աւարտելու վրայ եմ - ապա կու տամ պատասխանը:

Ուրեմն անխնայ սպաննած էին ամենքը, կին, տղայ, ամենքը: Հարիւրապետին հարցուցի, որ խիղճը չի՞ զարներ, Աստուծոյ, մարդկութեան, քաղաքակրթութեան հանդէպ պատասխանատու չէ՞: - Պատասխանատու չեմ, ըսաւ հարիւրապետ մըն եմ: Մեզի հրաման տրուած է ամենքը սպաննել, վասն զի սուրբ պատերազմ հռչակած ենք: - հիմայ կը վերջացնեմ:

Երբ զինուոր մը պատերազմի մէջ մէկը կը սպաննէ - այսպէս յառաջ տարաւ հարիւրապետը, յանցաւոր չէ: այսպէս գործեցի ես ալ. յետոյ ջարդէն աղօթք մը (նամագ) ըրի եւ արդարացայ:

Այո՛, ըսի, բայց միայն այրերու դէմ կրուելու է եւ անմեղ կիներու եւ տղոց դէմ սուրբ պատերազմ հռչակելու չէ:

(Պ. գաղտնի խորհրդական Ֆոն Գորդոնի հարցման՝)

Երբ ես պ. Սիրան Քելեքեանի՝ թրքական “Մապահե փերթին խմբագրին ու Կ. Պոլսոյ թրքական համալսարանի պրոֆեսորին հետ կը խօսէի, ըսաւ ինձի. Չէ՞ք ուզեր ինձի հետ այցելել փոխկառավար Ասաֆ-Բէյին: - Ըսի, կը կարծեն աւելի լաւ է, եթէ ծածկուինք եւ մեզ չցուցնենք: - Ան

ըսաւ. Ոչ, մի վախնաք, ան իմ աշակերտս է եւ ձեռքս կը համբուրէ եւ ինձի մեծ պատիւ կ'ընէ: Յաճախ այս մասին խօսած ենք, այս անպիտան յարաբերութիւնները ճանչնալու համար:

Ուստի այցելութեան զացինք Ասաֆ-Բէյի, որ նախկին փոխկառավար էր Օսմանիէի՝ Կիլիկիոյ մէջ: Մեծ քաղաքավարութեամբ ընդունեցաւ մեզ: Հարցուցինք, թէ ինչ կրնայինք ընել, Կ.Պօլիս փախչելու համար: Պատասխանեց. Սիրիւի ուսուցիչ, ինչ որ կ'ուզէք ընել, ըրէք շուտով, յետոյ ուշ է:

Հարցուցինք բնականաբար, թէ ինչու՞ ուշ պիտի ըլլար:

Ըսինք, լուր չունինք, որ Փ. Ասիոյ մէջ ջարդերն արդէն սկսած են: Իրաւ չէինք գիտեր: Եւ ոչ իսկ գիտենք, թէ մեզմէ 2 ժամ հեռու ինչ կ'անցնէր: - Ասաֆ Բէյ պատասխանեց. Ուրիշներուն բան մը չեմ կրնար ըսել, բայց Դուք (պ. Քելեքեան) իմ ուսուցիչս էք եւ Դուք (ինձի դառնալով) մուրախագ մը, հոգեւորական մըն էք, գաղտնիքը կը պահէք, մեծ վստահութիւն ունիմ Ձեր կրօնական վիճակին վրայ: Հեռագիր մը պիտի ցուցնել Ձեզի: - Այս ըսելով Պ. Քելեքեանի հեռագիր մը ցուցուց, գոր ես ալ կարդացի, վասն զի չէր արգիլած: Չեմ կրնար ըսել թէ բառապէս ինչ կար մէջը, չեմ ալ կրնար հաւաստել թէ հեռագիրը հարազատ էր, միայն դիտեցի զայն. գիրք մը պիտի հրատարակեմ եւ այս ամբըն պիտի ապացուցանեմ: Բայց պատճառ չունիմ տարակուսելու վաւերականութեան վրայ հեռագրի մը, որ գործօն փոխ-կառավար մը ցուցուց: Հեռագրին իմաստը մօտաւորապէս այս էր՝

"Հեռագրեցէք մեզի իսկոյն ուղղակի, հայերէն որչափ մեռած եւ որչափ դեռ կենդանի են: Ներքին գործոց նախարար Թալէաթ:"

Նախ չհասկացայ, թէ ինչ կը նշանակէր այս: Անկարելի էր մտածել, որ ամբողջ ազգ մը ջարդով պիտի ոչնչացուի, պատմութեան մէջ երբեք պատահած չէ այս: - Պ. Քելեքեան հարցուց Ասաֆ Բէյի. "Ի՞նչ կ'նշանակէ այս, չեմ հասկնար": - այնչափ խելացի էք, պատասխանեց Ասաֆ Բէյ, զլխաւոր խմբագիր էք... Հեռագիրը կը նշանակէ. Ինչու՞ կը սպասէք, ջարդեցէ՛ք":

Ժ.Քելեքեան սկսաւ լալ եւ ըսաւ. Տղաքս դեռ այնչափի հասցուցած չեմ, որ կարենան առանձինն կեանքի ասպարէզ մտնել: Ուրիշ բան չի մնար մեզի, բայց որ Դուք (զիս կ'ակնարկէր) հետս եկեղեցի գաք եւ ինձի Ս. խորհուրդը տաք:

Ասաֆ Բէյ ըսաւ. Ամէն ջանք ըրէք, բայց լուռ ու մունջ, որ երկու շաբաթէն Կ. Պօլիս ըլլաք. 15 օր ալ դեռ հոս եմ, ապա կը ձգեմ պաշտօնս: Արդէն 1909ին Օսմանիէ էի, այն ժամանակ ալ Ատանայի մէջ մեծ ջարդեր եղան եւ զիս ամբաստանեցին, թէ հայերը չարչարած եմ, եւ մեծ դժուարութիւններով միայն ազատեցայ: Չեմ ուզեր հայ ջարդերուն դարձեալ մասնակցիլ, վասն զի պատերազմէն վերջ ժամանակ պիտի գայ, երբ պատասխանատու բոլոր բարձր անձնաւորութիւնները պիտի ստիպուին արտասահման փախչելու: Եւ այն ատեն մեզ պատասխանատու պիտի ընեն ջարդերուն եւ գուցէ պիտի կախեն ալ:

Երդուեալ մը. Ի՞նչ ստորագրութիւնը կը կրէր հեռագիրը:

Վ. – Հեռագրին ստորագրությունն էր “Թալէաթ”, այդ աչքերովս տեսայ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. – Որուն՞ Միջոցովուրեմն ազատեցաք դուք, անգղիացու՞ց, ռուսերու՞, ֆրանսացիներու՞, որուն՞:

Վ. – աղետաւոր պատմութիւն մըն է այդ, եւ 5 տարուան մէջ գլխէս անցածները կրնայի ամիսներ, շաբաթներ պատմել:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. – Կը բաղձանք բոլորովին կարճ ու պայծառ կերպով լսել հոս:

Վ. – Իսլահիէէն մինչեւ Այրան - բաղժէ փախայ, հասայ ամանոսի լեռնաշղթան, ուր գերման ճարտարապետներ փապուղին կը շինէին: այս գերման ճարտարապետներն ինձի հանդէպ շատ քաղաքավար էին, երբ լսեցին որ Գերմանիա առած եմ կրթութիունս եւ գերմաներէն կը խօսիմ: Ըսին ինձի, որ պէտք եմ իսկոյն վարառնել մորուքս եւ պարեգօտս եւ իբրեւ եւրոպացի հագուիմ եւ գլխարկ կրեմ: Չորս ամիս հոն մնացի: Մորֆ եւ Կլաուս ճարտարապետներն էին որ այնպէս քաղաքավար էին ինձի հանդէպ եւ ինձի օգնեցին: Ամանոսի լեռնաշղթային աշխատութիւններուն մէջ 8.000 հայ կը զբաղէին եւ գերմաններէն կը պաշտպաննուէին: Բայց երբ հրաման եկաւ որ այն հայերը տեղահան պէտք են ըլլալ, եւ ասոնք Բաղժէի ու Մարաշի միջեւ սպաննուեցան, դարձեալ Տաւրոսի լեռները փախայ, ուր նմանապէս գերման ճարտարապետներ լեռնային փապուղին կը շինէին: Հոն ինձի հետ շատ սիրով էր գլխաւոր ճարտարապետ Լօյտենէզգեր: Երբ թուրք պաշտօնեաներ իմացան, որ կեղծ էր անունս եւ ես հայ: Հայ հոգեւորական էի, հարկ եղաւ փախչիլ, եւ եկայ Ատանա, Հոս դարձեալ գերման ճարտարապետներուն քով էի, 5 ամիս մնացի հոն կեղրոնական գրասենեակին մէջ, գլխաւոր ճարտարապետ Վինկլերի հովանաւորութեան տակ: Զինուորներէն գերման համազգեստ մը ստացայ, սորվեցայ զինուորական բարեւ եւ գերմանական զինուորի վարմունք:

Մեծ երախտագիտութեամբ պէտք եմ հոս յիշել գերման ճարտարապետները: Սրտագին շնորհակալութեամբ կը յիշեմ այն օգնութիւնները, զորս կարօտութեանս մէջ գերման ճարտարապետներէն ընդունեցայ:

Երբ Համաձայնական զինուորները Դամասկոս առին եւ դէպի Հալէպ կը չուէին, Ատանայի մէջ թուրքերը հայերուն կ'ըսէին. Ձեզ չենք ուզեր կենդանի թողուլ, որպէս զի մեր թշնամիներուն, Համաձայնականներուն հետ մեր վրայ ճծիծաղիք եւ չվնասէք մեզի: Քանի մը հազար հայեր, որ Ատանա թրքական մթերանոցի մէջ դեռ կ'ապրէին, կ'ուզէին Սիսի ոի Հաճընի լեռներուն մէջ շարդել:

Վերջին ոյժերս ժողվելով փորձեցի այս խժոժութիւններէն ալ ազատիլ եւ Գերմանիա անցնիլ:

Գերման սպայ մը գտայ, որ ինձի զինուորական զգեստ մը տուաւ, եւ այսպէս գերման զինուորի համազգեստին տակ գերման ենթասպաներու եւ զինուորներու հետ երկաթուղիով Կ.Պոլիս հասայ:

Չորս օրէ ի վեր հոն էի, երբ Պուկարներու եւ Համաձայնականներու միջեւ զինադադար եղաւ: Մտածեցի որ առաջ երթալու պէտք չունիմ, պատերազմը վերջացած է: Բայց ծանոթներու քով այլեւայլ տներու մէջ կը ծածկուէի, մինչեւ որ 1918 հոկտեմբերին ընդհանուր ներում եկաւ: 1918 նոյեմբերին Թուրքիա թողուցի եւ հայոց դէմ գործուած խժոժութիւններու զեկոյցներով Պարիս զացի, որպէս զի հոն ճշմարտութիւնը լոյս աշխարհ հանեմ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. – Վսեմաշուք Լիման Ֆոն Չանդերս մեզ խղճի մեծ անհանգստութեանց մէջ ձգեց: Խօսեցաւ հոս, թէ Թալէաթ փաշա չէ պատասխանատու խժոժութեանց, այլ այն անկարգ մարմինները, որոնց ինկած էր տեղահանութեան հրամանները կատարել: Հայերու մէջ տիրող ընդհանուր ըմբօման եւ ի մասնաւորի պ. Դր. Լեպսիուսի համոզման կը հակառակի այս: Կը բաղձայի հարցում մըն ալ ուղղել վկային. Հայերու քով մի՞թէ բացարձակ համոզում չկա՞յ, որ Թալէաթ անձնապէս այս ջարդերուն պատասխանատու է:

Վկայ Պալաքեան. – Ոչ միայն հայ ընդհանուր կարծիքն է այդ, այլ եւ ճշմարտութիւնը: Ես Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքարանի Սիւնհողոսի անդամ եմ եւ երկար ժամանակ առիթ ունեցած եմ թրքական յարաբերութիւնները ճանչնալու: Թալէաթը բնականաբար նաեւ անձնապէս կը ճանչնայի: Լիուլի ազդեցութիւն ունէր: Ամենայն ինչ կատարեալ գիտակցութեամբ կ'ընէր: Երբ մենք Հայ Պատրիարքարանի կողմանէ բան մը կ'ուզէինք, մեզի կ'ըսէր. “Պէտք չունիք նախ միւս նախարարներուն երթալու, ուղղակի ինձի եկէ՛ք, բայց հարկ չկայ բան մը գրելու, կրնաք ինձի անձնապէս ըսել ամէն բան, եւ ես կը կատարեմ”: Այնպէս կ'ընէր, որ իբր թէ միայն իր վրայ ըլլայ ամէն պատասխանատուութիւն եւ ոչ մէկու հաշիւ տալու պէտք ունենայ:

Դր. Նիմայեր. – Ձեզի, պ. վկայ, ծանօթ է, որ հայերու մէջ Թալէաթի սա խօսքը կը շրջի. “Հայկական Հարցը լուծելու համար ես մէկ օրուան մէջ աւելին ըրի, քան Ապտուլ Համիտ 30 տարուայ մէջ”:

Նախահահ. – Ծանօթ է ձեզի այս խօսքը:

Վկայ. – Լաւ չհասկցայ, թէ ի՞նչ կ'ուզուի:

Ն. – (Կը կրկնէ):

Վ. – Թալէաթի ըրածը ոչ թէ 30, այլ 500 տարուայ մէջ ալ չէ պատահած: Երբ 1915ին Չանկրը էի եւ սեպտեմբերի մէջ ամբողջ Անատոլու հայերէ դատարկուած էր հայերը սպաննուած էին, Էրզրումէ՝ ռուս-թրքական ռազմադաշտէն հազարապետ մը եկաւ Չանկրը, եւ կ'ուզէր անկէ Կ Պոլիս երթալ: Մա մեծ սիգութեամբ ըսաւ մեզի. ինչ որ մեր նախկին սուլթանները չըրին, մենք ըրինք. Պատմական ազգ մը 2 ամսուան մէջ մեռուցինք:

Ն. - Այս մտայնութիւնը հայերու եւ թուրքերու քով ամենուրեք կը տիրէ՞ր:

Վ.- Այո՛:

Ն. - Եւ ստո՞յգ է սա իրողութիւնը, թէ Թալէաթի ձեռքով, հայերը 15 ամսուան մէջ աւելի կորուստ տուած են, քան շատ տարիներու ընթացքին:

Վ.- Այո՛. բայց ան խօսքը, որուն մասին հարցում եղաւ ինձի, ուղղակի Թալէաթի բերնէն չեմ լսած:

Դր. Ֆոն Գորդոն. – (վսեմաշուք Լիման Ֆոն Զանդերսի), Վսեմաշուք Տէր, ըսիք, թէեւ ոչ դրական եղանակով, բայց յամենայն դէպս արտայայտեցիք, որ խժո՞ղութեանց պատասխանատու ստորին պաշտօնեանե՞րը բռնելու է:

Իրազեկ վսեմաշուք Լիման Ֆոն Զանդերս. - անգրթութիւններուն, ոչ տեղահանութեան:

Դր. Ֆոն Գորդոն. - Ասոր հակառակ ես ալ պարտք կը համարիմ հոս՝ ներկայացնել Հալէպի փոխ-վարչութենէն 5 հեռագիր:

(Գաղտնի խորհրդական Ֆոն Գորդոն կ'ուզէ սոյն հեռագիրները աստեանի սեղանին վրայ դնել:)

Այս հեռագիրներէն երկուքը կ'ուզեմ - փաստի այս առաջարկն ընելով – հոս կարդալ. Ժրոֆ. Լեպսիուս քննած է այս գեռագիրները:

Նախագահ. – Փաստը կանխած պիտի ըլլաք, եթէ այժմ այս հեռագիրները հոս կարդաք:

Դր. Ֆոն Գորդոն. – Սակայն հարկ է ըսեմ, թէ ինչ կայ այս հեռագիրներուն մէջ: Հեռագիրները կ'ապացուցանեն, որ Թալէաթ այս հեռագիրներով անձնապէս հրաման ըրած է, բոլոր հայերը՝ մանուկներն ալ ի միասին ոչնչացնելու: Ի սկզբան հրաման տրուած է, այն տղաք միայն պահել, որոնք ի վիճակի չեն յիշելու, թէ իրենց ծնողներուն ինչ եղած է: Յետոյ, 1916 մարտին, այս հրամանը ջնջուած է, վասն զի այս մանուկներէն Թուրքիայի համար վնասակար տարրեր կրնային առաջ գալ: - Այս հեռագիրներուն հարազատութեան մասին կրնայ վկայ Անտոնեան խօսիլ, որ այս հեռագիրները ուղղակի փոխվարչութենէն ստացած է, որ անգլիացիներէն գրաւելէ վերջ Հայ Պատուիրակութեան տրամադրուած էր: Անձնապէս՝ հնարաւոր, նոյն իսկ հաւանական կը համարիմ, եւ կը յուսամ, թէ երդուեալները ամբաստանեալին կը հաւատան, որ ան իր կողմանէ հաստատուն եւ ոչ առանց բաւական պատճառի համոզուած էր - եւ այն ոչ վերիվերոյ այլ մինչեւ սրտին խորքը – որ Թալէաթ հայերու դէմ գործուած ահռելի խժո՞ղութիւններուն հեղինակն եղած է եւ անոնց պատասխանատու է: Եթէ այս համոզման գաք, այն ատեն միայն կը հրաժարիմ փաստի առաջարկ ընելէ:

Դատախազ Գոլնիկ. – Կը խնդրեմ այսպիսի առաջարկ մը մերժել: Պ. Նախագահը տուաւ շատ ընդարձակ վիճաբանութիւն մը, թէ Թալէաթ հայ խժո՞ղութիւններու մէջ յանցաւո՞ր է: Այս հարցը սակայն բոլորովին չնչին է: Վասն զի իմ կարծիքով կարելի չէ ամենեւին տարակուսիլ, որ ամբաստանեալը համոզուած է, թէ Թալէաթի մէջ իր առաջելը կը տեսնէր այս խժո՞ղութիւններուն յանցաւորը: Ասով շարժառիթը լիուլի կը պարզուի: Ես այն կարծիքն ունիմ, թէ բացարձակապէս անհնար է այս ատեանին մէջ Թալէաթի յանցաւոր ըլլալուն խնդիրը վճռել: Վասն զի հարկ պիտի

ըլլար պատմական վճիռ մը կտրել, որուն համար մեր այժմ ունեցածէն բոլորովին տարբեր ատաղձի պիտի կարօտէինք:

Դր. Նիմայէր. – Կ'ուզէի դեռ մտադիր ընել, որ Թալէաթ կառավարութեան պատասխանատու՝ վերին պաշտօնեան, մեծ վեզիրն էր: Պետութեան ներկայացուցիչն էր: Թալէաթ ամէն բանի պատասխանատու էր, ուրիշ բան կարծել անհնար է:

Դր. Ֆոն Գորդոն. – Դատախազին բռնած այս դիրքին եւ պ. երդուեալներու վրայ ըրած ազդեցութեան նայելով կը կարծեմ թէ պիտի կարենամ հրաժարիլ, թէեւ ցաւ ի սիրտ, այս առաջարկն ընելէ:

Նախագահ. – Ասով, կարծեմ, այս առաջարկը կը վերջանայ:

Երդուեալ Պ. Էվալդ. – Կը բաղձայի հարցում մը ուղղել վկայ պ. Պալաքեանի: Ըսիք, որ “վալի”ին գացիք: Կառավար մըն էր ան, թէ քաղաքապետ մը: Հեռագիրը Թալէաթի ստորագրութիւնը կը կրէր:

Վկայ Պալաքեան. – Այո՛. Աչքերո՛վս տեսայ:

Դր. Ֆոն Գորդոն. – Վալին գրեթէ գլխաւոր նախագահի դիրք ունի, նահանգին վերին պաշտօնեան՝ կուսակալն է:

Նախագահ. – Կ'ուզէի դարձեալ հարցնել, թէ արդեօք ուրիշ վկաներու հարցաքննութենէ կը հրաժարուի՞:

Դր. Վերթաուէր. – Պիտի խնդրէի որ այսօր իսկ բժշկական իրագեկներու կարծիքը լսենք:

Իրագեկ Դր. Շտէօրմէր. – Շատ շնորհակալ պիտի ըլլամ, եթէ ինձի այսօր ունկնդրէիք: Կ'ապահովեմ Ձեզ թէ արտաքոյ կարգի կարճ պիտի բռնեմ:

Դր. Նիմայէր. – Այն ատեն պիտի խնդրէի, որ այսօր բժշկական բոլոր կարծիքները լսէինք:

Նախագահ. – Պիտի հարցնեմ ամբաստանեալին, թէ արդեօք կը բաղձայ դեռ ուրիշ վկաներու հարցաքննութիւնը:

Ամբաստանեալ. – Կը բաղձամ որ դեռ գրագէտ Արամ Անտոնեանը հարցաքննուի:

Նախագահ. – Երդուեալները կը աւատան Ձեզի, որ Դուք գործը ըրած միջոցին համոզումն ունէիք, թէ Թալէաթ փաշա է ջարդերուն պատասխանատուն:

Ասոր վրայ ամբաստանեալը ծանոյց, թէ հաւան է, որ ուրիշ վկաներու հարցաքննութիւնը զանց առնուի:

Այժմ կը յաջորդէ

ԲԺՇԿԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՆԵՐՈՒ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Իրազեկ, բժշկական գաղտնի խորհրդական դատական բժիշկ Դր. Ռոբերտ Շտեօրմեր, 57 տարեկան, աւետարանական, Բերլին:

(Կոչ ընելով իրազեկներու յատուկ՝ միանգամ ընդ միշտ եղած երդման:)

Դր. Շտեօրմեր. – Պարոններ, դատախազութեան եւ պ. քննիչին յանձնարարութեամբ եւ այսօր հոս գործի կոչուած հայ թարգմանին օգնութեամբ եւ տեղեկացայ ամբաստանեալէն իր մինչեւ օրս անցուած կեանքի մասին եւ ենթարկեցի զինքը մանրամասն մարմնական քննութեան: Ես արծարծեցի այն բոլոր հարցերը, որոնք անհրաժեշտ են՝ գալու համար վերջնական ու համապատասխան կարծիքի մը, զոր եւ կրնամ ներկայացնել:

Ես կազմեցի այն համոզումը, թէ ամբաստանեալը վերնոտ մըն է, եւ թէ այդ պարագան իր արարքին նկատմամբ մեծ չափով հաշուի կու գայ:

Ես կ'ուզեմ խիստ համառօտ կերպով կրկնել այն, ինչ որ կրցայ իմանալ իր կեանքի մասին: Ամբաստանեալը որդին է մանիֆայթուրայի վաճառականի մը, Երզնկայ քաղաքէն: Իր մանկութենէն բան մը չկայ, որ հետաքրքրական ըլլար բժշկական տեսակէտէն: Ան երբէք լրջօրէն հիւանդ չէ եղած մինչեւ 1915ը, երբ վկայ դարձաւ այստեղ յաճախ յիշուած կոտորածներուն: Ան ինծի ըսաւ շատ յուզուած կերպով, որ իր ծնողքը եւ իր եղբայրներն ու քոյրերը նոյնպէս զոհուեցան: Ան դողալով ու սոսկումով կը յիշէ այն վայրկեանը, երբ տեսաւ թէ ինչպէ՛ս թուրքի մը տապարը այնպիսի թափով իջաւ իր եղբօր գլխուն, որ վերջինս երկու մասի ճեղքուեցաւ: Ինքն ալ վերքեր ստացաւ՝ գլխուն, ձախ թելին ու ծունկին վրայ: Այս սպանութիւններու քստմնեցուցիչ տպաւորութիւնը՝ միացած իր սեփական վերքերուն եւ կրած տառապանքներուն՝ ուշագնացութեան մատնեցին զինքը: Երեք օր, ինկած դիակներու տակ, ան կորսնցուած էր գիտակցութիւնը ու վերջը ուշքի եկաւ՝ դիակներու ուժգին հոտէն, որը յաւիտենապէս մնաց տպաւորուած իր հոգեկան գործարաններուն մէջ: Ան կ'ըսէ որ ամէն անգամ, երբ կը կարդայ ո եւ է սոսկալի դէպքի մը մասին եւ մանաւանդ երբ կը յիշէ ջարդերը՝ դիակներու հոտը նորէն կը թափանցէ հոտառութեան գործարանը եւ այնպէս, որ ինքը չի կրնար ազատիլ անկէ:

Այդ ջարդէն ետք ամբաստանեալը որոշ ատեն մը կը թափառէր, մինչեւ որ ապաստան գտաւ լեռնական քուրդերու մօտ: Ան կը պնդէ, թէ 1916ին - աւելի որոշ կերպով չի յիշեր - վերնոտութեան առաջին բռնկումը ունեցած է: 1917ին ան վերադարձաւ Երզնկայ ու գտաւ այս քաղաքը ամայացած, իսկ իր հայրենի տունը՝ բոլորովին աւերակ: Այդ տպաւորութեան տակ ան ունեցաւ երկրորդ ուժգին բռնկումը: Այս վերջինս եւ նկարագրել տուի իր բոլոր մանրամասնութիւններով: Ան յանկարծակի թուլութիւն մը զգացեր է, ուժերը դաւաճաներ են իրեն, գիտակցութիւնը լքեր է զինքը: Ան սթափեր է կատարելապէս անօգնական վիճակի մէջ, ու երբ ուշքը վրան եկեր է՝ սոսկալի ծարաւ՝ զգացեր ու այն զգացումն է ունեցեր, թէ ինքը պէտք է

շարունակ քննայ: Յետոյ ան կը պատմէ, թէ պեղումներ կատարած է իր հայրական տան աներակներուն մէջ եւ հանած այն դրամը, գոր իր ծնողքը հոն պահած էին: Այս դրամով ան ճամբորդած է Եւրոպա, բայց ատկէ առաջ, 1918ին, եղած է Թիֆլիս ու հոն մտած է հիւանդանոց, ունենալով աղիքներու տենդային հիւանդութիւն մը, որ հաւանօրէն թիֆօ եղած պիտի ըլլայ: Ես չեմ կրնայ ըսել, թէ ատիկա իրապէս թիֆօ էր եղեր, որովհետեւ ամբաստանեալը անկարող էր այնպէս նկարագրել իր հիւանդութիւնը, որ կարելի ըլլար վճռական եզրակացութիւն մը հանել: Ապա ան կ'երթայ Եւրոպա եւ 1920ի դեկտեմբերին, անցնելով Պարիսէն, կ'ուզայ ժընէվ, իսկ անկէ՝ Բերլին: Հոս սկիզբը ան կը բնակէր Աուգուստուրգեր փողոցը թիւ 51 տիկին Շտելբաումի մօտ, իսկ յետոյ, 1921ի սկիզբը, կը տեղափոխուի Հարդէնբերգ փողոցը թիւ 37: Այս բնակարանը ես անձամբ դիտեցի՝ Թալէաթ փաշային հսկելու կարելիութիւններուն ծանօթանալու նպատակով: Ամբաստանեալին սենեակը վարի յարկն էր, ու անկէ կարալի էր հսկել այն տան պատշգամին, ուր կ'ապրէր Թալէաթ փաշան:

Ես մանրամասնօրէն հարց ու փորձ ըրի ամբաստանեալին՝ թէ որքա՞ն յաճախ տեղի կ'ունենային իր հիւանդագին բնկումները, եւ նկարագրել տուի, որքան այդ հնարաւոր էր, անոնց մանրամասնութիւնները: Ան պատմեց, որ բնկումները տեղի կ'ունենային շատ անկանոն կերպով. երբեմն կ'ընդհատուէին ամբողջ ամիսներ, երբեմն ալ կը վերսկսէին շաբաթներ ետք: 'Ննկումը կը սկսի անով, որ հիւանդին վրայ նախ տեսակ մը թուլութիւն կու գայ, ու գլուխը կը դառնայ: Պարիսի մէջ տաս ամսուան ընթացքին ան չորս անգամ բնկում ունեցած է, բայց ամէն անգամ, նկատելով իր վիճակը, կրցած է ժամանակին ինքզինքը ապահով կեցութեան մէջ դնել, այնպէս որ փողոցը կառքի տակ չէ ինկած կամ ուրիշ պատահարի մը չէ ենթարկուած: Թուլութենէ ետք ան ամէն անգամ կը զգար քիթին մէջ դիակներու հոտը, իսկ ուրիշներ ըսած են իրեն, թէ անգիտակից վիճակին մէջ ինքը կը ցնցուի ու կը դողայ: Ամբաստանեալը շատ լաւ տեղեակ է, թէ ի՞նչ փուլերէ կ'անցնին այս բնկումները: Ամէնէն առաջ ան կը զգայ դիակներու հոտը, ապա կու գայ բուն բնկումը ցնցումներով միասին, եւ ինքը կը կորսնցնէ գիտակցութիւնը. երբորդ փուլը՝ սթափումէն ետքը քոքը եկող ցաւերն են իր անդամներուն մէջ: Ան կը զգայ ինքզինքը ուժասպառ եւ յոգնած. այս վիճակին մէջ ան խիստ կը ծարաւնայ ու ապա կ'ընկղմի խոր քունի մէջ: Պարիս ան չորս նման բնկումներ ունեցած է, ժընէվ՝ ոչ մէկը, 'երլին՝ շատ անգամներ, որոնցմէ մէկը Երուսալէմէր փողոցը: Այս բնկումը տեղի է ունեցեր ստորերկրեայ երկաթուղիի կայարանին մօտ, եւ պանքային պաշտօնեայ մը զինքը հասցուցեր է տուն ու նստեցուցիւր սանդուխին վրայ: Յետոյ ամբաստանեալը ինքը մինակ բարձրացեր է վեր. իր տանտիրուհին, տիկին Շտելբաում, զինքը գինով է կարծեր ու այտին վրայ վերք մըն է նկատեր. բայց յետոյ յայտնուեր է, որ գինով չէ, որովհետեւ իրմէ ալքօլի հոտ չէր գար: Այն իսկոյն անկողին է մտեր ու ապա սկսեր է գանգատիլ, թէ սրտի խառնուք կը զգայ:

Ես անհրաժեշտ նկատեցի յիշելու այս մանրամասնութիւնները, որովհետեւ անոնց վրայ կը հիմնեմ իմ կարծիքս, թէ ամբաստանեալին հիւանդութիւնը վերնոտութիւն է: Առանց ատոր եւս իր մարմինը թոյլ է. ան երկու թոքերուն ծայրերու քաթառ անցուցած է, եւ քննութեան պահուն նկատելի էր բաւական ուժգին դող մը ամբողջ մարմնին վրայ, չնայելով որ խօսակցութիւնը իմ եւ

թարգմանին միջև տեղի կ'ունենար ամենախաղաղ կերպով, ու ոչ իմ, ոչ ալ իր կողմէն որ մէկ գրգռում երեւան չեկաւ: Փոքրիկ սենեակի մը մէջ միայն երեքս էինք, ու ոչ ոք կը խանգարէր մեզ:

Ամբաստանեալը ունի բաւական կենդանի ռէֆլէքսներ. ասոր հակառակ կը պակսին աչքերու միացուցիչ թաղանթներուն ռէֆլէքսները: Մէզին քննութիւնը ցոյց տուաւ, որ մէջը նշանաւոր չափով սպիտակուցկայ:

Այս ամէնը բաներ են, որոնք ոչ մէկ ազդեցութիւն ունին կամքին վրայ: 'այց անոնք իրաւունք կու տան եզրակացնելու, թէ ամբաստանեալը մարմնապէս հիւանդ մարդ մըն է: ՊԱրոն թարգմանը սիրալիր գտնուեցաւ խնդրի բժշկական կողմին վերաբերող իմ բոլոր հարցումներս այնքան ճշդօրէն թարգմանելու ամբաստանեալին, որ ես բնաւ տարակոյս չունիմ, թէ կրցած եմ ուշադրութեամբ դիտել անոր հոգեկան կեանքը: Երբ ան կը խօսի ջարդերուն, իր պատանեկան զարգացման խանգարումին եւ այն հոգեկան ցնցումներուն վրայ, զորս ապրած է ինքը, ես այն տպաւորութիւնը կը ստանամ, թէ այն ամէնը, ինչ որ ան կ'ըսէ, կը բխի իր սրտին խորքէն: Կրնամ հաստատապէս ըսել, թէ ամբաստանեալը ամենածանր կերպով հոգեպէս ցնցուած է, ու երբ կ'իյնայ այդ թախծոտ տրամադրութեանը մէջ, զոր նկարագրեցին իր երկու տանտիրուհիները, երբ կը սկսի մանդօլին նուագել ու կը նախընտրէ մուօթը, այդ արդէն նշան է, որ ան հոգեպէս խռովեալ վիճակի մէջ է: Ասիկա նկատի առնելու է՝ դատելու համար ամբողջ դէպքի մասին, եթէ մենք կ'ուզենանք արդար վճիռ մը տալ: Ասիկա միայն յիշողութիւնը չէ քստմնելի դէպքերուն եւ եղբօրը սպանութեան, ասիկա նաեւ արդարացի կարեկցութիւն մըն է, զոր կը զգայ ամբաստանեալը իր իսկ վերաբերմամբ: Իր պատանեկութիւնը, հաւատքը մարդկութեան հանդէպ, ընդհանրապէս արդարութեան հանդէպ անոր մէջ լիովին խախտուած է:

Այսպէսով, ամբաստանելը, իմ խորին համոզումովս, կը տառապի վերնոտութենէ մը, որը այս իմաստով գրաւած է իր հոգեկան գործարանը: Հոգեկան պատճառներէ ծագած վերնոտութեան առանձնայարկութիւններու թուին կը պատկանի սակայն կամքի այնպիսի տոկունութիւն եւ յամառութիւն մը, որպիսին սովորաբար կարելի չէ յաճախ գտնել: Հետեւողական ըմբռնում, ծրագրի մը կծռադատումը, որոշումը, ծրագրի նրբագոյն մշակումը մինչեւ գործադրութիւնը - այս ամէնը կը պատկանին այդ հիւանդութեան պատկերին: Նման հիւանդները ամէն պարագաներու տակ, չնայելով ոչ մէկ խոչընդոտի, կը գործադրեն այն, ինչ որ միտքերնին դրած են: Ասով կը բացատրուի այն, որ ամբաստանեալը չխորշեցաւ միջոցներէ ու ճամբաներէ՝ գտնելու իր ատելի թշնամին եւ խորհրդածելու, թէ ինչպէ՛ս կրնար իրագործել իր ծրագիրը ամենայարմար ձեւով:

Գործին մէջ դիպուած մը որոշ դեր կը խաղայ: Ամբաստանեալը կ'ըսէ, թէ երագին մէջ մայրը նորէն երեւցաւ իրեն, եւ թէ իր երագները շարունակ կը դառնային նման բաներու շուրջը: Անգամ մը մօր պատկերը կերպարանելի ձեւով կանգնեցաւ իր առջեւ ու ըսաւ իրեն. "Ի՞նչ, դուն կ'ուզես տակաւին իմ որդի՞ն ըլլալ. Թալէաթ փաշան 'երլին է, ու դուն ոչի՛նչ կ'ընես՝ զինքը սպաննելու եւ իմ վրէժս լուծելու համար": 'նականաբար ես ինքս ինձ հարցուցի, չըլլա՞յ թէ զգայութեանց պատրանք մըն է ասիկա: Սակայն մանրամասն հարցաքննութենէ ետք ես կրցայ ճշդել, որ զգայութեանց պատրանք չէ ամբաստանեալին ապրածը, այլ կենդանի մտապատկեր մը,

երագական երեւոյթ մը, զոր ան կը շարունակէր տեսնել նաեւ արթուն վիճակին մէջ, ինչպէս որ յաճախ կը պատահի վերնոտութեան ատեն:

Մենք կը տեսնենք ուրեմն, որ հիւանդութիւնը անուրանելի ազդեցութիւն ունի ամբաստանեալին վրայ: Սակայն եթէ մէկը ըսէր, թէ ան իր կամքը ազատօրէն սահմանելու կարողութենէն զուրկ էր, այդ պարագային պէտք է որ անմիջական կապակցութիւն մը ըլլար իր արարքին ու հիւանդութեան միջեւ: Ատիկա եւ սակայն չեմ կրնար գտնել: ‘այց ես կ’ընդունիմ, որ հիւանդութիւնը հոգեպէս փոխած է ամբողջ անձնատրութիւնը եւ առաջ բերած է տոկունութիւն եւ յամառութիւն՝ նպատակի իրագործման նկատմամբ. իսկ ազատ կամքը բացակայ չէր, որովհետեւ սպանութեան պահուն ամբաստանեալը ենթակայ չէր ոչ մէկ բռնկումի: Ես չեմ ուրանար, որ նոյն օրը ան խիստ սրտմտած եւ ներքուստ բոլորովին նկուն էր, եւ որ ան կոնեակ խմած էր՝ ինքնիրենը քաջութիւն ներշնչելու համար: Երբ որ իր սենեակէն կատարած հսկողութիւնները վերջացած էին, ան կը խլէ զենքը ու կ’աճապարէ փողոց: Ան ամենայն ճշդութեամբ նկարագրեց ինձի, որ ինքը կատարելապէս համոզուէր էր, թէ այդ մարդը Թալէաթ փաշան է. ու ինքը զարկաւ Թալէաթը ետեւէն, որովհետեւ եթէ անցնէր առջեւը, կը գրաւէր անոր ուշադրութիւնը, ան կրնար նկատել ատրճանակը եւ ի դերեւ հանել մահափորձը: Ան ճշդութեամբ կը դիտէ հագուստը եւ կը հասցնէ հարուածը գլխարկին ու վերարկուին միջեւ եղած տեղին: Ասոր մէջ ես կը տեսնեմ իրագործումը շատոնց նախապատրաստուած որոշումի մը: Ասոր համար, նկատի ունենալով, որ մահափորձը կատարելու օրուան առտուն կարելի չէ բան մը ցուցնել, որը սերտ յարաբերութիւն ունենար վերնոտութեան հետ, - թէւ բոլոր քստմնելի ապրումները, զորս ան ունեցած է Հայաստանի մէջ, անուրանալի ազդեցութիւն ըրած են իր արարքին վրայ, - ես այնուամենայնիւ կու գամ այն եզրակացութեան, թէ այդ ազդեցութիւնը այնքան հեռու չէրթար, որպէս զի անոր պատճառով գոյութիւն չունենար ազատ կամքը:

Նախագահ.- Կ’ըսէ՞ ամբաստանեալը, թէ այն պատկերները, որ կ’երեւնային իրեն, շատ կենդանի տեսիլներ էին:

Ամբաստանեալ.- Ինձի կը թուէր, թէ դիակները կ’երեւնային ինձի իրապէս մարմնացեալ կերպարանքով:

Նախագահ.- Կ’ուզէք պնդել, թէ սպանութիւնը կատարելու պահուն գիտկցօրէն չէ՞ք գործած:

Ամբաստանեալ.- Երբ տեսայ Թալէաթ փաշային տունէն ելլելը, միտքս եկաւ այն, ինչ որ ըսած էր մայրս:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Ամբաստանեալը կը ժխտէ՞, թէ խորհրդածութեամբ է գործած:

Նախագահ.- Այո՛: Կը խնդրեմ թարգմանին՝ հաղորդել ամբաստանեալին, թէ պ. իրագեկ Շտեօրմէրը զինքը պատասխանատու կը նկատէ արարքին համար: (Կը թարգմանուի):

Պ. Դր. Ֆոն Գորդոն.- Ընդունեցա՞ւ ամբաստանեալը, թէ ինքը այնքան կոնեակ խմած է:

Իրազեկ Դր. Շտեօրմեր.- Ան ընդունած թե այդ իր տանտիրուհի տիկին Դիտմանն է միայն, որ ըսած է այդ:

Երդուեալ մը.- Թերեւս արբեցութեան մէջ իրեն երեւցեր է իր ապրումներուն սոսկալի պատկերը, այնպէս որ իր մտածողութեան մէջ ընդհատում մըն է տեղի ունեցեր, եւ վրան հիւանդագին կացութիւն մըն է եկեր:

Դր. Շտեօրմեր.- Ես ինքս ալ խորհած եմ այդ ամէնը: Անծուծտ այն առտու, երբ գործը կատարելու առիթը ներկայացած էր, ան կը գտնուէր շատ հասկնալի ներշնչման մը ազդեցութեան տակ: Սակայն այդ ունեցած չէ զգայութեանց պատրանքի նշանակութիւնը՝ հոգեբուժական իմաստով:

Պաշտպան Դր. Վերթաուեր.- Իսկ եթէ նոյն առտուն վերնոտութեան բռնկում մը տեղի ունեցած ըլլար՝ այդ պարագայի՞ն ալ Դուք պիտի մնայիք ձեր կարծիքին մէջ:

Դր. Շտեօրմեր.- Ես ամէն ինչ փորձեցի՝ հասկնալու համար այդ: հարցուցի իրեն, գէշ չէ՞ր քնացած արդեօք այն գիշերը. ան խիստ քրտնած էր այն գիշերը...

Պ. Դր. Վերթաուեր.- Ատոր մասին չէ բնաւ իմ հարցումս: Եթէ կարելի ըլլար հաստատել, թէ ամբաստանեալը այն գիշերը վերնոտութեան բռնկում մը ունեցած էր, այդ պարագայի՞ն ալ ան, ձեր կարծիքով, պատասխանատու պիտի ըլլար իր արարքին համար:

Դր. Շտեօրմեր.- Եթէ տեղի ունեցած ըլլար վերնոտութեան բռնկում մը, այն ատեն կամքը անշուշտ աւելի ազդուած կ'ըլլար, սակայն կամքին ազատութիւնը այնուամենայնիւ գոյութիւն կ'ունենար:

Երդուեալ մը.- Չի՞ կրնար ըլլալ, որ ամբաստանեալը բնաւ չէ գիտցեր, թէ ինքը գիշերը բռնկում մը ունեցեր է:

Դր. Շտեօրմեր.- Հարկաւ, այդ կրնայ ըլլալ: Նման երեւոյթներու կը հանդիպինք խենթանոցներուն մէջ:

Նախագահ.- Ուրեմն աստիկա վերնոտութեան պարագայի՞ն ալ բոլորովին անկարելի բան մը չէ:

Օգնական-դատաւոր Դր. Լաքս.- Երկու բռնկումներու միջեւ եղող ժամանակի համար պատասխանատուութիւնը գոյութիւն չունի՞, թէ ունի՞՝ բայց աւելի նուազ չափով:

Դր. Շտեօրմեր.- Այո՛, աւելի նուազ չափով: Շատ տարիներ առաջ, երբանգամ մը երդուեալներու դատարանին մէջ ինծի նոյն հարցը տրուեցաւ, ես հետեւեալ բաղդատութիւնը գործածեցի եւ կը բաղդատեմ ամբաստանեալը հրաբուխի մը հետ. ծերնոտութեան բռնկումը իր բոլոր վերադիրներով՝ ցնցումներով, գիտակցութեան կատարեալ բացակայութեամբ, լաց ու կոծով, ասդին ու անդին թաւալելով՝ հրաբուխի մը ժայթքումն է. ըս այն շրջանը, երբ երեւան կու գայ վերնոտութեան միայն դժնդակ կողմը՝ լքումը, գաղափարի մը անընդհատ հետապնդումը՝ կարելի է բաղդատել հրաբուխի մը ժայթքումներուն միջեւ եղող կացութեանը հետ: Աւելի լաւ համեմատութիւն ես չէի կրնար ընել:

Դր. Լաքս.- ‘ոնկումներ չեղած միջոցին վերնոտը չի՞ գտնուիր արդեօք բռնադատեալ վիճակի մը մէջ:

Դր. Շտեօրմէր.- Շատ ցանցառ: Ամենաշատը վերնոտներու հինգերորդ մասին միայն բռնկումները մտաւոր – հոգեկան խանգարում մը կը պատճառեն:

Դր. Լաքս.- ‘այց չէ՞ որ դուք իսկ ըսիք, թէ այստեղ գոյութիւն ունին առանձին հոգեկան ցնցումներ, եւ թէ ատոր հետ մէկտեղ հոգին եւս ուժգնօրէն ազդուած էր:

Նախագահ.- Պ. իրազեկը ըսաւ այդ, սակայն ան ատկէ եզրակացութիւն չի հաներ 1921ի մարտ 15ի համար:

Դր. Վերթաուէր.- Մեզի համար որոշիչը՝ միայն հոգեպէս գոյութիւն ունեցող վերնոտութիւնն է:

Պաշտպան Դր. Նիմայէր.- Թէ ի՞նչ է եղեր ամբաստանեալին հոգեկան վիճակը սպանութեան վայրկեանին, պարոն իրազեկը չի՞ կրնար ըսել:

Իրազեկ գաղտնի խորհրդական Պրոֆ. Դր. Լիպման, պատույ կարգաւոր Պրոֆ. Համալսարանի, Երլին, 58 տարեկան (Երդումը ընելէն ետքը:)

Պրոֆ. Դր. Լիպման.- Ես կը հիմնեմ իմ կարծիքս այսօրուան դատավարութեան եւ երեք մանրամասն հետազօտութիւններու վրայ, որոնց վերջին շաբթուան ընթացքին ենթարկած եմ ամբաստանեալը բանտին մէջ:

Ես կ’ուզեմ այժմ իսկ ըսել, որ ամբաստանեալը հագուագիւտ անկեղծութեան տէր մարդ մըն է, որ ան ինքն իրեն այլեւայլ շինծու ձեւեր չի տար: Ան մինչեւ իսկ չափազանց վերապահ է: Տեսակ մը համակերպում կայ իր մէջը, ու ան հասկցուց ինծի՝ թէ թող ինչ կ’ուզէ ըլլայ, ինքը այլեւս հետաքրքրութիւն չունի կեանքի մասին: Ու այս ամէնը կամովին չէր բխեր իրմէ, այլ պէտք էր շարունակ փորփրել զինքը՝ բան մը դուրս քաշելու համար:

Բոլորովին ակնյայտ է, թէ մենք հոս պարզապէս խելագարի մը արարքին հետը չէ որ գործ ունինք, ինչպէս նաեւ ակնյայտ է, թէ այդ արարքը մթազնած կացութեան մէջ, օրինակի համար՝ վերնոտութեան բռնկման պահուն չէ որ կատարուեր է: Ես առ հասարակ չեմ, խորհիր, թէ վերնոտութեան գաղափարը այն կախարդական բառն է, որ կու տայ մեզի ամբաստանեալի հոգեկան կեանքին բանալին: Ընդհակառակը, պէտք է մտնել այն շրջանը, որ աւելի նուազ ծանօթ է, ըսել կ’ուզեմ՝ ընդհանուր հոգեախտաբանութեան շրջանը: Ու յանձն առնելով այդ, ես պէտք է ըսեմ, թէ խնդրին կացութիւնը ես քիչ մը տարբեր ձեւով կ’ըմբռնեմ, քան իմ պաշտօնակից պ. Շտեօրմէր:

Խնդիրը այստեղ հոգեկան ծանր ցնցումներու յետագայ ազդեցութիւններու մասին է, յատկապէս տրամադրուած մարդոց քով, ինչպէս նաեւ “գերարժէք գաղափարի” վարդապետութեան մասին:

Եթե մարմնեղ ու առողջ մարդ մը ցնցող ապրում մը ունեցած է, իր մոլեգնությունը՝ որքան էս ուժգին ըլլայ՝ շուտով կ'անցնի, ոմանց մօտ շաբաթ մը ետք, ոմանց մօտ ալ ամիսները ետք: Յամենայն դէպս հետզհետէ կը նուազի:

Բայց կան աւելի զգայուն բնաւորութիւններ, գորս իրենց ունեցած սոսկալի ապրումը բոլորովին կը հանէ սովորական ուղիէն, ու որոնց քով այդ ապրումը չի նուազիր, այլ ճակատագրական եղանակով կ'ամրանայ իրենց հոգիին մէջ: Նման ապրումի մը յիշողութիւնը կը կոչուի “գերարժէք գաղափար”: Ան կը մխուի այդ տեսակ բնաւորութիւններու մէջ, հետզհետէ կը նուաճէ մարդը. ան կը խաղայ տիրող դեր մը, միշտ ներկայ կը գտնուի, միշտ հանդէս կու գայ եւ կը բռնադատէ մարդը՝ իր իշխանութեանը ենթակուելու: Ես հիմայ մանրամասն կերպով պիտի ցուցնեմ, որ Թէհիլթեանը նման գերարժէք գաղափարի մը ազդեցութեան տակ է եղեր եւ չէ կրցեր ազատիլ իր ահաւոր ապրումներու յիշողութենէն: Ես կ'ուզեմ նախ մատնանշել, թէ սարսափելի դէպքերը, որոնք իր ամբողջ ընտանիքը կորուստի մատնեցին, զինքն ալ դուրս նետեցին իր սովորական ուղիէն: Ասիկա ծանր հոգեկան վերք մըն էր, որ թոյլ չտուաւ իրեն՝ նորէն տիրանալու իր հոգեկան հաւասարակշռութեան: Մի մոռնաք, որ մարդը 17 տարեկան հասակէն բոլորովին աստղուրս նետուած է իր ճամբէն: Յետագայ վեց տարիներու ընթացքին – 1915 էն մինչեւ 1921ը – ան հանգստագուրկ, արմատագուրկ թափառական կեանք մը վարած է: Ան եղեր է քուրդերու մօտ, յետոյ բաւական ատեն Թիֆլիսի մէջ առանց ո եւ է հաստատուն ու կանոնաւոր աշխատանքի: Ան բան մը սորվելու համար քայլեր է առեր, սակայն ինքն ալ կ'ըսէ, թէ ի վիճակի չէր ինքզինքը ժողվելու: Յետոյ ան նորէն գացեր է իր հայրենիքը, նորէն Թիֆլիս, Պոլիս, Սելանիկ, Պարիս, Բերլին... առանց հանգստութիւն գտնելու, առանց հաստատ զբաղումի ապրեր է ան, ու մենք կրնանք հաւատալ իրեն, երբ կ'ըսէ. ես երբէք չկրցայ միտքս ամփոփել, յիշողութիւնս ալ տկարացաւ: Մենք կրնանք ընդունիլ, որ այդ եղեր է հոգեկան հիւանդ վիճակ մը, որ ազդեր է իր զգացողական, ինչպէս նաեւ մտաւոր կեանքին վրայ: Ամէն բանէ առաջ սակայն ան ամբողջովին բռնուած էր այս գաղափարէն, այս գերարժէք գաղափարէն: Ես կը հաւատամ իրեն, երբ ան կ'ըսէ, թէ հասարակութեան մէջ, իր ընկերներու շրջանին մէջ առժամապէս կը մոռնար այն զարհուրելի ապրումները, բայց երբ մինակ կ'ըլլար՝ յիշողութիւնը նորէն երեւան կ'ելլէր ու հոգեպէս կը ճնշէր զինքը: Ու ես կը հաւատամ նոյնպէս, թէ այդ յիշողութիւնները, որպէս մարմնացեալ պատկերներ, կ'երեւնային իր առջեւ, եւ իրեն կը թուէր, թէ կը զգայ իր մերձաւորներու դիակներուն հոտը:

Սակայն ես էական չեմ նկատեր, թէ ո՞ր աստիճան մարմնաւոր էին այդ տեսիլները: Ճիշդ վերջին տասնամեակներու հետազօտութիւնները ցուցացած են, թէ ծանր հոգեկան հիւանդներու զգայութեանց պատրանքները միշտ ալ կատարեալ մարմնաւորման բնոյթը չեն կրեր: Աւելի կարեւոր է, թէ ի՞նչ ազդեցութիւն կ'ընեն անոնք հոգեկանին վրայ:

Որո՞նք են ուրեմն այն հոգեկան ցնցումներուն յաջորդող ազդեցութիւնները ամբաստանեալին վրայ: Բռնկումները: Այս բռնկումները ես չեմ կրնար խիստ իմաստով իբրեւ “վերնոտութիւն” ընդունիլ. թոյլ իմաստով միայն: Իսկական վերնոտութեան բռնկումներու երեւոյթներէն ամբաստանեալին քով կը պակասին լեզուի խածուածքներ, շրթունքներու խածուածքներ. ան

ունեցած չէ նաեւ միզագնացութիւն: Մեծ մասով ան իյնալով արիւնոտած չէ, ինչպէս այդ սովորաբար տեղի կ'ունենայ վերնոտութեան պարագային:

Իմ կարծիքով, եղածները ոչ թէ վերնոտութեան, այլ հոգեբեկութեան բնկումներ են:

Ատոնք բնկումներ են, որոնք պատճառուած են ոչ թէ մարմնական գրգիռներէ ուղեղին մէջ, այլ հոգեկան ցնցումներէ: Երկու պարագաներ անտարակուսելի կը դարձնեն, որ այստեղ մենք գործ ունինք հոգեբեկութեան բնկումներու հետ: Անոնց մասին ես կը խօսիմ վերջը:

Ասոր համար ես չեմ գար այն եղրակացութեան, ինչպէս իմ պաշտօնակից պ. Շտեօրմէրը, թէ ամբաստանեալին մօտ երկու բաներ քով քովի կ'ընթանան. մարմնական վերնոտութիւն մը եւ հոգեկան կեանք մը: Իմ կարծիքով, այս բնկումները արտայայտութիւնն են խիստ հոգեկան ցնցումին. հոգեբեկութեան բնկումներ են ատոնք, եւ կարեւորութիւնն ալ արդէն անոր մէջ է, որ այդ բնկումները արտայայտութիւնն են հոգեկան զօրաւոր վիրաւորման:

Այսպէս ուրեմն, անգամ մը որ աղէտին ամբողջ յիշողութիւնը, իբրեւ գերարժէք գաղափար, արդէն իր քովն էր. անգամ մը որ անիկա խաչաձեւ կտրած էր ամէն ուրիշ մտածում եւ զգացում - այդ գաղափարին յայտնաբերումը, այսինքն մօր երեւնալը, դարձաւ առանձնապէս գերարժէք: Ինչ բանի մասին ալ մենք հարցնէինք Թէհլիրեանին - արդեօք ինքզինքը իրաւաստ՞ւ կը նկատեր սպաննելու, դատաւորի դեր խաղալու - ան միշտ նոյնը կ'ըսէր, այն է թէ՛ մայրն էր դրեր իր վրան այդ պարտքը, եւ ատով ամբողջ խնդիրը իրեն համար կը լմննար: Ես հարցուցի, թէ իր քրիստոնէայ ըլլալը միթէ արգելք չէ՞ր իրեն համար. ու ան պատասխանեց, թէ ինքը շատ լաւ գիտէ, որ քրիստոնէութիւնը կը պատուիրէ չսպաննել. բայց մօր ոգին երեւնալէ ետք՝ ինքը հասկցաւ, որ ուղիղ ճամբու վրայ է: Այսպէտով, մօր երեւնալը իրեն համար գերազօր բան մըն էր, ինչ որ ապարդիւն կը դարձնէր ամէն վիճաբանութիւն:

Այս ամէնէն ետքը ես պէտք է ըսեմ. - Հոգեկան հիւանդ մը գործած է հոգեկան ճնշումի տակ: Հիւանդագին շարժառիթներ կային իր մէջ, որոնք կը ճնշէին զինքը եւ էապէս կը սահմանափակէին իր կամքին ազատութիւնը:

Ես կ'ըսեմ “ճնշում”, ես չեմ ըսեր “բռնադատում”:

Ու ահա ես կու գամ, առ նուագն իմ անձիս մասին, ըսելու. - Կամքի հոգեբեկ ազատութիւնը միայն էապէս սահմանափակուած էր. Թէհլիրեանը անպայման հոգեկան հիվանդ մըն է՝ հոգեբեկութեան բնկումներով եւ գերարժէք գաղափարներով: Դժբախտաբար, նուագեցուած պատասխանատուութեան մասին մշակուած նոր պատժական օրէնքը տակաւին գործադրութեան մէջ չէ: Ես կու գամ հետեւութեան. - Ամբաստանեալը “նուագեցուցուած չափով պատասխանատու” է, որովհետեւ ան հոգեկան հիւանդ է եւ գտնուէր է գերարժէք գաղափարի մը ազդեցութեան տակ:

Սակայն, երբ ես կը դիտեմ իր ամբողջ վարքը, ինչպէս որ այդ կը նկարագրեն վկանները, ինծի չի թուիր թէ ան լիովին անընդունակ է պատասխանատուութեան, թէ ան անխուսափելի բռնադատութեան առջեւ կը գտնուէր: Ուստի, իմ տեսակէտէն, ան չենթարկուիր 51-դ յօդուածին,

բայց բաւական մօտ է անոր, որովհետեւ պէտք պիտի ըլլար գործ դնել առանձին բարոյական ջանք ու ընդդիմութիւն՝ չընկճելու համար ճնշումին առջեւ:

Արդեօք խորհրդածութեա՞մբ գործած է ան: - Ես պիտի զգուշանամ վճիռ մը տալու այս իրաւագիտական խնդրի մասին: Բայց ես ինքզինքս պարտավոր կը զգամ պատկերացնելու, թէ, իմ կարծիքով, ինչ կացութեան մէջ է գտնուեր ամբաստանեալը: Ու ես պէտք է ըսեմ.- բոլոր հիւանդներուն քով, որ ունին գերարժէք գաղափար մը, այդ գաղափարին երեւան ելլելը կապուած է խիստ զօրաւոր հոգեկան յուզումի մը հետ: Ես պէտք է ընդունիմ հետեւեալը. երբ ամբաստանեալին յիշողութեան մէջ կ'արթննային ջարդերու պատկերները եւ Թալէաթը, իր կրքերը կը փոթորկուէին, ու այն ատեն չէր կրնար տեղի ունենալ այն, ինչ որ հետեւանքներու եւ դրդապատճառներու պաղարիւն կշռադատութիւն կը կոչուի:

Հիմայ կու գայ միտքս, որ ես աչքաթող ըրի յիշելու այն գլխաւոր հիմը, թէ ինչո՞ւ ես այնպիսի վճռականութեամբ կընդունիմ միայն այսպէս կոչուող “յոյզի վերնոտութիւն”, որ՝ խստօրէն դատելով՝ վերնոտութիւն ալ չէ, այլ հոգեբեկութեան բռնկումներ: Այստեղ է ահա, որ հանդէս կու գայ նախ այն պարագան, որ առաջին բռնկումը տեղի ունեցաւ ուժգին հոգեկան ցնցումէն զոր յառաջ բերին հայրական օճախին ըրած այցելութիւնը, աւերակներու պատկերը, ըսել է՝ հոգեկան մեծ ապրում մը. ու յետոյ այն, որ ինքը կը պատմէ, թէ իւրաքանչիւր բռնկում կը սկսի ջարդերու տեսարանով եւ դիակներու հոտով, ըսել է՝ ակներեւ յիշողութիւններով յուզումնալի ապրումի մը մասին: Այս հիման վրայ է մանաւանդ, որ ես կ'ընդունիմ, թէ մենք հոս գործ ունինք “յոյզի վերնոտութեան”, այսինքն հոգեբեկութեան բռնկումներու հետ:

Դիակներու հոտին պատրանքը ուրեմն, ինչպէս որ այդ իրապէս կ'ըլլայ իսկական վերնոտութեան բռնկումներու պահուն, չունի այստեղ գրգիռի տեղական ցուցարարի մը նշանակութիւնը:

Իրազեկ Պրոֆ. Դր. Բիխարդ Կասիրէր, 43 տարեկան հրեայ: Երդումը կ'ընէ:

Իրազեկ Պրոֆ. Դր. Կասիրէր.- Ես կը յայտնեմ իմ կարծիքս, հիմ ունենալով այն երկու բժշկական քննութիւնները, զորս կատարած եմ ամբաստանեալին վերաբերմամբ ներկայ տարուան փետրուարին, դէպքէն առաջ, ինչպէս նաեւ այն տպաւորութիւնները, զորս ստացայ այս դատավարութեան ընթացքին: Երկրորդ քննութենէն ետքը մինչեւ այսօր ես այլեւս տեսած չէի ամբաստանեալը: Այս վերջինս եկաւ իմ բժշկական ընդունարանը առաջին անգամը փետրուար 5ին, իսկ երկրորդ անգամը՝ փետրուար 18ին եւ թարգմանի մը միջոցով նկարագրեց ինծի իր հիւանդութիւնը: Ան սերած է առողջ ծնողներէ. իր ընտանիքին մէջ վերնոտութեան բռնկումներ պատահած չեն: Ան չպատմեց ինծի առանձին կարեւորութիւն ունեցող բաներ այն արտակարգ հոգեկան գրգռումներու մասին, զորս ինքը անցուցած է: Ըսաւ թէ առաջին բռնկումը ունեցած է 1917ին, երկրորդը՝ տարի մը ետքը, ապա 3-4 ամիսը անգամ մը, ու այնուհետեւ բռնկումները սկսեր են կրկնուիլ աւելի յաճախ, ատոր համար ալ ինքը եկեր է ինձ մօտ:

Ան պատմեց ինձի, թե սկիզբը ինքը կ'իյնար անհանգիստ կացութեան մը մէջ, կը դողայ եւ զգուելի դիակային հոտ կը զգայ ու յետոյ կը կորսնցնէ գիտակցութիւնը: Այդ կը տեսէ քանի մը վայրկեան, ապա յոգնածութիւն կու գայ վրան: Սկիզբէն իսկ ան յայտնեց, թէ երբէք լեզուի խածուածք ունեցած չէ, մեզ կորսնցուցած չէ, եւ՝ ինչպէս ուրիշները ըսած են իրեն՝ բռնկումներու պահուն շրթունքներուն վրայ փրփուր կ'երեւնայ:

Իմ կատարած քննութիւնը չտուաւ ո եւ է առարկայական արդիւնք իր նետարդային սիսթեմին նկատմամբ: Ես հետազօտել տուի նաեւ իր արիւնը եւ մէզը, բայց արդիւնքը նորէն բացասական եղաւ: Այս տուեալներու վրայ այն ատեն ես սա ենթադրութիւնը ըրի, թէ խնդիրը կրնայ հոս իսկական վերնոտութեան մասին ըլլալ. ու իմայս ախտագուշակութիւնս հիմնեցի անոր վրայ, որ բռնկումները հետզհետէ ավելի ստեպ տեղի կ'ունենային, որ ան զգուելի հոտ կը զգար, ինչ որ յաճախ նախընթացը կ'ըլլայ վերնոտութեան բռնկումին: Այն ատեն, եթէ չեմ սխալիր, ես տուի ամբաստանեալին դեղ մը, որու մասին գիտէի, թէ պիտի խանգարէ իր մտաւոր գործունէութիւնը: Ան դարձաւ աւելի յոգնած ու մասամբ այդ պատճառով էր որ դադրեցուց իր դասերը:

Սակայն այն ամէնէն ետքը, ինչ որ ես լսեցի դատաւարութեան պահուն, այլեւս չեմ կրնար պնդել վերնոտութեան մասին իմ ըրած ախտագուշակութեան վրայ: Այժմ ես էապէս կը հակիմ այն տեսակէտին, թէ հոս իսկական վերնոտութիւն չէ, այլ բռնկումներ, որոնք մերձաւոր կապակցութիւն ունին հիւանդին հոգեկան կեանքին հետ: Մենք, պատերազմի փորձառութիւններու շնորհիւ, աւելի մօտէն ճանչցանք այս բռնկումներուն բնոյթը ու տեսանք, թէ ինչպէս միաժամանակ պատահող արտակարգօրէն ուժգին հոգեկան գրգռումները յառաջ կը բերեն տրամադրուած մարդոց քով այնպիսի բռնկումներ, զորս մենք կը յատկանշէինք որպէս հոգեբեկութեան կամ յոյզի վերնոտութեան բռնկումներ:

Նոյն հիմներէն, որոնցմէ պ. Պրոֆ. Լիպման, ես եւս կ'եզրակացնեմ, թէ ամբաստանեալը նման վերնոտութենէ մը կը տառապի: Այս եզրակացութեան էական հիմը այն է, որ ամբողջ հոգեկան անձնաւորութիւնը հիւանդագին փոփոխման ենթարկուած է: Հոգեկանին այս հիւանդագին փոփոխութիւնը կը ցուցնէ ինքզինքը հիւանդներուն քով ոչ միայն նման բռնկումներու մէջ, որոնք մեծ մասով միացած են գրգռումներու հետ, այլ եւ ուրիշ երեւոյթներու մէջ: Հոգեկան անկայունութեան այս գետնին վրայ ծագած են անկանոն հոգեկան երեւոյթներ, ինչպէս որ այդ մեզ այստեղ ցոյց կը տրուի, եւ ամէնէն առաջ մօր երեւնալը երազական տեսիլի մը մէջ: Այստեղ անշուշտ իսկական պատրանք, չկայ, այլ գիտակցութեան երազական մղում մը, որ բոլորուին արթուն ատեն գոյութիւն չունի: Ասոր հետ են կապուած նաեւ տրամադրութեան զարտուղութիւնները, ինչպէս օրինակի համար՝ այն մշտական ինկած տրամադրութիւնը, զոր՝ վկաներու խօսքով՝ ունէր ամբաստանեալը: Այս վերջինս շատ յատկանշական յայտարարութիւն մը ըրաւ, ըսելով. ”Երբ ինքզինքս գէշ կը զգամ, ինձի կ'երեւնայ մայրս”: Ըսել է, երբ ան յոգնած էր, երբ ան ուժասպառ էր, երբ ան լեցուն էր խոհերով ու յիշողութիւններով, այն ատեն իր առջեւ կու գար մօր պատկերը: Այս կացութիւնը, ուր իրեն կ'երեւնար մայրը, զուտ հոգեպէս հիւանդ կացութիւն մըն է:

Այս պատճառով ես կուգամ այն եզրակացութեան, թէ ամբաստանեալը ծանր հոգեկան հիւանդ մը դարձած է: Եւ ատոր պատճառը ազդեցութիւնն է այն ամենաձանր հոգեկան ցնցումներուն, զորս առ հասարակ կարելի է երեւակայիլ մարդու մը համար. ու այս հոգեկան հիւանդութիւնը արտայայտուէր է հոգեբեկութեան տեւական կացութեան եւ յոյզի վերնոտութեան բռնկումներու միջոցով, որոնք ըստ ինքեան արդէն միշտ նշան են հոգեկան հաւասարակշռութեան շատ ուժեղ խանգարման: Այս գետնի վրայ է ազդեր արարքը յառաջ բերող ապրումը. ապա երբ այսպէս տրամադրուած անհատին առջեւն է ելեր իր ծնողքը սպաննողը, իր մէջ հասունցեր է անկէ վրէժ առնելու գաղափարը: Հոգեկանին այս ծանր խանգարման հետեւանքով է, որ ան նկատի չէ առեր ամբողջ շարք մը արգելադրութիւններ, որոնք առողջ մարդ մը պիտի ետ կեցնէին արարքէն: Ես նոյնպէս կ'եզրակացնեմ, թէ կան կարգ մը բնականոն շարժառիթներ, որոնք ծներ են ամբաստանեալին մէջ նման արարքի մը գաղափարը. բայց այս բնականոն շարժառիթներուն կից կան կարգ մը շատ էական հիւանդագին շարժառիթներ, որոնք կարելի դարձուցին արարքը, որ տեղի չպիտի ունենար, եթէ գոյութիւն ունենային բնականոն արգելադրութիւններ: Ես նոյնպէս աներկբայ կը նկատեմ, որ մթագնած կացութեան մասին խօսք չի կրնար ըլլալ:

Ես ան համոզումը ունիմ, որ շատ էական հիւանդագին պարագաներ դեր խաղացած են ամբաստանեալի արարքին կատարման մէջ: Թէեւ ե՛ս ալ չեմ ուզեր պնդել, թէ ան գործած է կացութեան մը մէջ, ուր կատարելապէս կը բացակայէ պատասխանատուութիւնը, այսինքն այն, ինչ որ կը տրամադրէ 51րդ յոդուածը. բայց ամբաստանեալը շատ մօտ է անոր, եւ մենք հոգեբոյժներս չենք կրնար ճշդօրէն ու աներկբայօրէն գծել այդ սահմանը:

Պաշտպան Դր. Վերթաուէր. – Կա՞ն արդեօք հիմնաւորեալ տարակոյսներ, թէ ամբաստանեալը գործեր է ազատ ու գիտակից կամքով:

Պրոֆ. Դր. Կասիրէր. – Ինձ համար ոչ մէկ տարակոյս չկայ, թէ ազատ կամքը ոչ լիովին բացակայ էր:

Դր. Վերթաուէր. – Դուք բոլորովին տարակոյս չունի՞ք, թէ ան բացակայ չէ:

Պրոֆ. Դր. Կասիրէր. – Ես կը պնդեմ, թէ ան ոչ լիովին բացակայ է:

Ես կ'ուզեմ միայն հարցնել. կա՞ն կասկածներ, թէ ան բժշկականօրէն բացակայ է:

Պրոֆ. Դր. Կասիրէր. – Ո՛չ:

Դր. Վերթաուէր. – Ուրիշ խօսքով, անտարակոյս է, որ ազատ կամքը գոյութիւն ունէր:

Դր. Նիմայէր. – Կրնա՞մ պ. իրազեկին ուղղել նոյն հարցումը, զոր ես տուի առաջին իրազեկին. կարելի՞ է գիտնալ, թէ ինչպէ՛ս է եղեր հոգեկան վիճակը սպանութեան վայրկեանին:

Պրոֆ. Դր. Կասիրէր. – Այդ կարելի չէ գիտնալ, այլ կարելի միայն ենթադրել:

Իրազեկ Պրոֆ. Դր. Էդմունդ Ֆորստեր, գլխավոր բժիշկ Բերլինի Համալսարանի ջղային կլինիկի, ներկայացուցիչ Պրոֆ. Դր. Բոնիտոֆերի. 42 տարեկան, անտարանական: (Երդումն ընելէն ետքը:)

Պրոֆ. Դր. Ֆորստեր.- Էականին մէջ ես կրնամ միանալ այն կարծիքին, զոր յայտնեցին Պրոֆ. Դր. Լիպման եւ Պրոֆ. Դր. Կասիրեր, երկուքն ալ հեղինակութիւններ իրենց մասնագիտութեան մէջ: Սակայն, ինծի կը թուի թէ կան քանի մը կէտեր եւս, որոնք կարօտ են լուսաբանութեան: Լսելով այն ամէնը, ինչ որ կրեր է ամբաստանեալը, մարդ կ'ունենայ այն զգացումը, թէ ինքնըստինքեան հասկանալի է՝ որ ան պէտք է սպաններ Թալէաթը, զոր մարդասպան կը նկատէր: Ու ահա առաջին հարցը. պիտի ընէ՞ր արդեօք նօրմալ մարդ մը եւս նոյնը: Ասիկա անպայման այդպէս չէ. որովհետեւ, եթէ նօրմալ մարդ մը նման պարագայի մը մէջ նոյն իսկ խորհի թէ՝ “ես պիտի սպաննեմ մարդասպանը”, այդ խորհուրդը գործի վերածելը բոլորովին ուրիշ բան մըն է: Ուրիշ հայեր, որոնք նոյն սարսափները ապրած են եւ թերեւս վրէժի նոյն գաղափարը ունեցած, իրապէս չգործեցին այդ ոճիրը: Անշուշտ, ոճիրը ըստինքեան բնաւ չի ապացուցաներ, թէ անոր հեղինակը ախտաւոր էր: Երկրորդ հարցն է. պէ՞տք է արդեօք ամէն մէկը, որ նման սարսափներ ապրած է, ատոր հետեւանքով տկարամիտ դառնայ: Այդ ալ այդպէս չէ: Ատոր մասին ես թերեւս կրնամ առանձնապէս ճշգրիտ վճիռ մը ունենալ, որովհետեւ ամբողջ պատերազմի միջոցին ես աշխատած եմ վտանգի շրջանին մէջ: Փորձը ցոյց տուած է, որ մարդ մը կրնայ տոկալ անհաւատալիօրէն շատ սարսափներու՝ առանց հոգեկան հիւանդ դառնալու: Թէեւ ասիկա ոչ մասնագէտի մը կրնայ անհաւատալի թուիլ, սակայն առարկայական վիճակագրութիւնը ցոյց տուած է, որ պատերազմի հետեւանքով հոգեկան հիւանդներուն թիւը չէ բազմացեր, ու միայն հոգեպէս հիւանդօրէն տրամադրուած մարդոց քով պատերազմի պատճառով հիւանդագին երեւոյթները աւելի յաճախ են ի յայտ եկեր: Ես եւս, ինչպէս որ նախորդ իրազեկը, այն տեսակէտին եմ, որ յանձին ամբաստանեալին մենք անտարակոյս գործ ունինք հոգեկան հիւանդի մը հետ: Ասով արդէն կարելի կը դառնայ, որ սարսափելի դէպքերու վրայ ան հակազդէ հիւանդօրէն: Ինծի եւս, ինչպէս Պրոֆ. Լիպմանին եւ Պրոֆ. Կասիրերին, աներկբայ կը թուի, որ մենք այստեղ գործ ունինք ոչ թէ իսկական, այլ յոյզի վերնտառութեան հետ: Իմ կողմէն կատարուած երկու մանրամասն քննութիւններէն եւ վկաներու նկարագրութիւններէն ես եկայ այն համոզման, որ բռնկումները յոյզի վերնտառութիւն միայն կը ցուցնեն: Իր յուզումնալի ապրումներէն առաջ ամբաստանեալը ունեցած չէ այս բռնկումները: Հիմայ ան կը նկարագրէ շատ որոշ կերպով.- երբ կը տեսնէ իր անցուցած սարսափներուն պատկերները, իրեն պարզորոշ կերպով կ'երեւնան դիակները, ու ան կը զգայ անոնց հոտը: Ապա կու գան բռնկումները, սակայն ասոնց չեն հետեւիր ոչ սովորական ճիշ մը, ոչ ալ ջղաձգութիւններ, ինչպէս որ այդ յատուկ է վերնտառութեան, այլ միայն հեծեծանք մը ու դող. ու ան վար կ'իյնայ: Այդ բռնկումներուն կազմուածքը այսպէս է: Ան կը վերապրի իր անցուցած սարսափները նորէն այնքան կենդանի կերպով, որ կը մարի: Ինչ որ ան իրականութեան մէջ անցուած է, կ'ելլէ իր աչքին առջեւ այն աստիճան կենդանի կերպով, որ յառաջ կու գայ նոյն յոյզը, ինչպէս իրականութեան մէջ: Այս կազմուածքը նոյնն է, ինչ որ անօթի մարդու մը քով. ատոր բերանին ջուրը կու գայ, երբ կը խորհի կտոր մը լաւ տապկած մսի վրայ: Այստեղ ալ երեւակայութեան միջոցով տեղի կ'ունենայ նոյն ազդեցութիւնը, որը պիտի ըլլար, եթէ մարդը իրականութեան մէջ ուտէր այդ միսը:

Բայց ոչ ամեն մեկը, որ այսպիսի սարսափներ անցուած է, կ'ունենայ նման բռնկումներ: Միայն հիւանդօրէն տրամադրուած մարդ մը ենթակայ կ'ըլլայ անոնց: Եւ միայն այնպիսիները, որոնք հոգեկանը հիւանդ են, նման յիշողութիւններու, նման գերարժէք գաղափարներու պատճառով կը փոխուին իրենց էութեանը մէջ: Ես ալ, ինչպէս Պրոֆ. Լիպման, այն կարծիքին եմ, թէ ամբաստանեալին քով՝ այս գերարժէք գաղափարներու հետեւանքով՝ անձնաւորութեան փոփոխութիւն մը կատարուեր է, եւ այդ այն իմաստով, ինչպէս որ նկարագրած է գերմանական հանճարեղ հոգեբոյժ Վերնիկէ:

Ամբաստանեալը այլեւս չի կրնար իր “իրաւունքին” տիրանալ. իր մերձաւորները մեռած կը մնան: Ան ինծի կըսէր, թէ կեանքը այլեւս իմաստ չունի իրեն համար: Ես առաջարկեցի, թէ չէ՞ որ ինքը կրնայ իմաստ ամուսնանալ, գործով մը զբաղիլ: “Ինչի՞ համար պիտի ամուսնանամ” - այս էր իր պատասխանը: Ան չուզէր ինքը անձամբ իր իրաւունքը վերականգնել: Ան չուզէր վրէժ առնել. սակայն նորէն ու նորէն հանդէս կու գայ իր հիւանդոտ երեւակայութեան բռնադատութիւնը, իր մօր պահանջը. ան նորէն ու նորէն կը տատանի, որովհետեւ արարքը խիստ անհաճոյ է իր բնաւորութեան: Նորէն ու նորէն ան կ'ըսէ. “Ես մարդասպան չեմ, բայց մայրս ըսաւ այդ, ու ես պէտք է ընեմ”: Իր ամբողջ անձնաւորութիւնը փոխուած է: Ես ոչ մէկ տարակոյս ունիմ, թէ մենք հոս գործ ունինք ախտաւոր անձնաւորութեան մը հետ, որուն վրայ յուզումնալի ապրումները ազդած են հիւանդագին ձեւով, եւ որը՝ այս ազդեցութիւններու հետեւանքով՝ կատարած է իր պատժելի արարքը:

Այժմ հարց կը դրուի. – կը պատշաճի՞ն արդեօք 51րդ յօդուածին պայմանները: Որ հիւանդագին շարժառիթներ գոյութիւն ունին՝ այդ աներկբայելի է:

Գերարժէք գաղափարներու հետեւանքով յառաջ եկած հոգեկան հիւանդութեանց պարագային կարելի չէ այդպէս դրուած հարցին՝ “հոգեկան հիւանդ է թէ ոչ” – պարզապէս “այո” կամ “ո՛չ” պատասխանել:

Ամեն մէկ ֆանատիկոս, ամեն մէկ մարդ, որ կը հետեւի զօրաւոր գաղափարի մը մղումին, որոշ բան մը ունի հոգեկան հիւանդէն, որ գերարժէք գաղափարէ մը բռնուած է: Հակառակ իսկական հիւանդներուն բառի նեղ իմաստով՝ հոս խնդիրը աստիճանական տարբերութիւններու մասին է:

Այն հարցին, թէ ախտաւոր փոփոխութիւնը ամբաստանեալին քով ա՛յն աստիճան ուժեղ էր, որ 51րդ յօդուածին տրամադրութիւնները կը պատշաճին, “այո”ով մը կամ “ո՛չ”ով մը պատասխանելը շատ դժուար է: Անտարակոյս տեսակէտի խնդիր է, թէ որտե՛ղ պիտի քաշուի սահմանը: Ես ընդհանրապէս հակուած եմ գծելու սահմանները 51րդ յօդուածին համար շատ նեղ, որովհետեւ օրէնքին մէջ վճռականապէս կը պահանջուի, որ ազատ կամքը պէտք է բոլորովին բացակայի: Ներկայ դէպքին մենք ունինք այնքան դժուար նշաններ գերարժէք գաղափարի հիւանդագին ազդեցութեան համար ամբաստանեալին վրայ, որ մարդ պէտք է առնուագն ըսէ, թէ 51րդ յօդուածին պայմանները շատ մօտէն կը շփուին դէպքին հետ, եւ թէ ես մինչեւ իսկ կը հակիմ ըսելու, որ ազատ կամքը բոլորովին բացակայ է եղեր: Այն հարցը՝ թէ՛ “ու՛նի՞ք հիմնաւորեալ տարակոյսներ”, լաւ չի յարմարիր: Ես ոչ մէկ հիմնաւորեալ տարակոյս ունիմ հիւանդութեան

պատկերի մասին, այլ միայն անոր մասին, թե ինչպե՛ս կրնամ ես իմ բժշկական վճիռը ստորադրել իրաւագիտական ձեւին: Սակայն այդ վերջիվերջոյ իմ գործս չէ: Աւելի շուտ երդուեալներու գործն է, թե ինչպե՛ս կ'ուզեն իմ բժշկական վճիռը յարմարցնել հարցարկութեան իրաւագիտական ձեւակերպումին:

Պաշտպան Դր Ֆոն Գորդոն. – Հարցում մը. արդեօք կարելի՞ Կը նկատէք, որ այս պոռթկումը ամբաստանեալին քով իրապէս տեղի ոյնենալէ ետք՝ իր վերնոտութիւնը, յոյզի վերնոտութիւնը այլեւս անհետանայ, եւ այլեւս բռնկումները չկրկնուին:

Պրոֆ. Ֆօրսթեր. – Այդ եւ չեն կարծեր, առնուազն կարելի չէ այդ առջուրնէ ըսել: Բայց փորձը կ'ուսուցանէ, թէ նման գերարժէք գաղափարները հետզհետէ կը թուլանան, երբ մարդը բոլորովին ուրիշ միջավայր մը կը մտնէ, որը ոչ մէկ առնչութիւն ունի այս գերարժէք գաղափարներուն պատճառներուն հետ: Սակայն այն վարկեանին, երբ յանկարծ յայտնուի հին ծանօթ մը եւ շօշափէ հին բաները, նորէն երեւան կու գայ նախկին վիճակը:

Իրազեկ ջղային բժիշկ Դր. Բրունօ Հակէ, Շէօնբերգէն:

Դր. Հակէ. – Այստեղ յայտնուած մանրամասն կարծիքներէ ետք եւ կրնամ շատ համառօտ ըլլալ: Ամբաստանեալը եւ տեսայ ներկայ տարուան փետրուար 4ին իմ ընդունարանիս մէջ, պարոնի մը հետ զոր եւ հոս ճանչցայ՝ որպէս պ. Աբելեան: Այն ատեն եւ այն տպաւորութիւնը ունեցայ, թէ վերնոտութիւն մըն է ամբաստանեալին հիւանդութիւնը եւ այդպէս ալ արձանագրեցի գրքիս մէջ: Բայց այսօր եւ այն կարծիքը ունիմ, թէ յոյզի վերնոտութիւն մըն է՝ հոգեկան ցնցումներու ազդեցութեան տակ: Միայն կ'ուզէի ըսել, թէ յոյզի վերնոտ մը, որպիսին է ամբաստանեալը, նման մտապատկերներու բռնադատութեան ներքեւ, իմ տեսակէտէն, զուրկ է իր կամքը ազատօրէն սահմանելու կարողութենէն: Ատոր համար եւ կ'ուզէի քիչ մը եւս հեռու երթալ, քան նախորդ իրազեկը, եւ այն հարցումին՝ թէ ազատ կամքը արդեօք բոլորովին բացակայե՞ր է՝ հաստատական պատասխան տալ:

Բժշկական իրազեկներուն այլեւս հարցումներ չեն ուղղուիր:

Կ'որոշուի ֆրանսերէնի թարգման իրազեկ Պրոֆ. Պֆեֆֆերը հարցաքննութեան չենթարկել:

Նախագահ. – Թերեւս կարելի է ընդհանուր յայտարարութիւն ընել, թէ ամէնքն ալ կը հրաժարին այլեւս վկաներէ եւ նոր փաստերէ:

Պաշտպան Դր. Վերթաուեր. – Պետութեան բարձրագոյն ատեանի երկրորդ պատժական ծերակոյտը կանգնած է այն տեսակէտին վրայ, թէ՛ երբ ընդհանուր հրաժարում մը կը յայտարարուի, ատով կը լմնան ատկէ առաջ եղած առաջարկները, նոյնպէս եւ մերժուածները: Ատոր համար եւ երբէք նման յայտարարութիւն մը չեմ ըներ, այլ միայն դէպքէ դէպք կը հրաժարիմ այս կամ այն փաստէն ու ցուցումէն:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն. - Ես ալ կը միանամ ատոր:

Ամբաստանեալ. - Ես համաձայն եմ:

Ատկէ ետք դատավարութեան շարունակութիւնը կը յետաձգուի հինգշաբթի առտուան ժամը 9ին:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Նախագահ Դր. Լեմբերգ ժամը 9,15ին կը բանայ նիստը:

Նախագահ. – Մենք կը շարունակենք դատավարութիւնը: Վճիռը գոյացնելու համար անհրաժեշտ անձերը ամէնքն ալ ներկայ են այստեղ:

Փաստական նիւթը, ինչ չափով որ ան կը յիշուի ամբաստանագրին մէջ, սպառած է եւ ընդհանրապէս՝ դատավարութեանը մասնակցողներուն հրաժարման հետեւանքով՝ լմնցած:

Այդ այդպէս ըլլալով, ես կ'ուզեմ հիմայ կարդալ իմ կողմէն մշակած հարցումները.

1. Յանցաւոր է ամբաստանեալ Սողոմոն Թեհլիրեանը՝ 1921ի մարտ 15ին Շարլօտտէնբուրգի մէջ մարդ մը, Թալէաթ փաշան, դիտաւորեալ կերպով սպաննած ըլլալուն համար:

Այս հարցումը կը վերաբերի անկանխամտած սպանութեան. իսկ այժմ կը դրուի թիւ 2 հարցումը՝ կանխամտածուած սպանութեան մասին. այս հարցումին պատասխանելու է սակայն այն պարագային միայն, եթէ առաջին հարցումին հաստատական պատասխան տրուի:

2. Արդեօք ամբաստանեալը սպանութիւնը խորհրդածութեամբ է կատարեր:

Ասկէ ետքը կու գայ թիւ 3 հարցումը, որուն պատասխանելու է այն պարագային միայն, եթէ թիւ1 հարցումին հաստատական պատասխան տրուի, իսկ թիւ 2 հարցումին՝ ժխտական:

3. Կա՞ն մեղմացուցիչ պարագաներ:

Կա՞ն արդեօք այնպիսիները, որոնք կ'ուզէին լրացումներ ընել այս հարցարկութեան նկատմամբ: Եթէ ոչ՝ այն ատեն ես խօսքը պ. աւագ դատախազին կու տամ:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Մեր կողմէ առաջարկուած միւս բոլոր վկաներն ալ հոս եկա ծ են. պէտք է որ անոնք որեւէ պաշտօնական եղանակով տեղեկացուին, թէ մենք կը հրաժարիքն զիրենք հարցաքննելէ: Ատկէ զատ, պարոն Ոսկանեանը եւս, որ ամբաստանեալի անձնաւորութեան եւ ընտանեկան պայմաններու մասին իր գիտցածը պիտի յայտնէր, Մերքիայէն նոյնպէս նոյնպէս տեղս հասած է: Յետոյ, ինծի ըսին, թէ վկայ Արմին Վեգներ, զոր մենք հրաւիրած էինք, եւ որը տեղին վրայ լուսանկարներ ըրած է, նոյնպէս ինքզինքը մեր տրամադրութեան տակ դրած է: Սակայն ես կը կարծեմ, թէ ձեր փափաքին համապատասխան վարուած կ'ըլլամ, եթէ ըսեմ, որ մենք այլեւս ոչինչի պէտք ունինք. մենք արդէն գիտենք այն, ինչ որ պէտք էր գիտնայինք:

Երդուեալ մը.- Պ. Նախագահ, հարցում մը. այստեղ ներկայ եղող հասարակութեան մէջ կը գտնուի հնդիկ մը, որ ըսած է, թէ այդ բոլոր կռիւները եւ սպանութիւնները ծագում առած են ոչ թէ տնտեսական, այլ կրօնական պատճառներէ:

Նախագահ.- Պարոններ, թէեւ այդ անմիջական կապակցութիւն չունի սպանութեան հետ, բայց անոր համար միայն, որպէսզի կարելի ըլլայ պարզել շարժառիթներու ամբողջ խորութիւնը եւ սարսափելի դէպքերու թուողուցած հսկայական տպաւորութիւնը, ես լայն արպարեզ բացի՝ արծարծելու համար այդ խնդիրները. այնպէս որ մենք իրօք պէտք չունինք այսօր նորէն անոնցմով զբաղելու:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Եթէ պ.պ. երդուեալները կ'ուզեն, պէտք է որ իրապէս անոնց գոհացում տրուի: Ատոր համար ես կը խնդրեմ խօսք տալ պ. Դր. Լեպսիուսին՝, որպէս իրազեկի:

Նախագահ.- Պ. Դր. Լեպսիուս արդէն մանրամասնօրէն յայտնած է իր կարծիքը:

Երդուեալ մը.- Ընդհանուր առումով մենք իրօք արդէն լիովին համոզուած ենք, միայն կը փափաքէի, որ այդ ուղղութեամբ լուսաբանութիւն տրուէր:

Նախագահ.- Ես այնուամենայնիւ չպիտի ուզէի այսօր կրկին զբաղիլ վկաներու երկայն բարակ հարցաքննութեամբ այս, իմ ըմբռնումով, խնդրին չվերաբերող կէտերու մասին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Մենք լսած ենք, թէ օտարազգիներ խօսեր են մէկ կամ միւս երդուեալին հետ այս խնդիրներու մասին. ու եթէ պ.պ. երդուեալները դարձեալ լուսաբանութիւններ կ'ուզեն, պէտք է ընդառաջ երթալ իրենց այդ փափաքին:

Նախագահ.- Արդէօք կրօնական թէ ուրիշ շարժառիթներ են եղեր – վկաներէն մէկն ալ ըսաւ թէ Թուրքիոյ համար կան եղեր պետական անհրաժեշտութիւններ - ատոր մենք պէտք չունինք մեր այս գործին համար:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Սակայն թերեւս թոյլ տայիք ինծի՝ այդ առիթով իմ կողմէս խօսք մը ըսելու:

Նախագահ.- Խնդրեմ, այդ կ'ըսէք ձեր ճառին մէջ, պ. դոկտոր: Իսկ հիմայ ես շնորհակալութիւն կը յայտնեմ այսօր հոս եկած վկաներուն: Դատավարութեան մասնակցողները հրաժարեցան զիրենք հարցաքննելէ. սակայն իրենք, անշուշտ, կրնան ներկայ ըլլալ դատավարութեան:

Այժմ ես խօսքը կու տամ պ. աւագ դատախազին՝ ըսելու իր կարծիքը յանցաւորութեան մասին:

Դատախազ Գոլնիկ.- Պ. պ. երդուեալներ, ներկայ քրեական դէպքին իրաւաբանական կողմը չէ, որ անոր առանձին նշանակութիւն կը պարզուէ եւ կը բացատրէ այն ուժգին հետաքրքրութիւնը, որ այս դատաւարահին վրայ կը դարձնէ մեր երկրին ինչպէս նաեւ արտասահմանին նայուածքները:

Ուրիշ պարագաներու ազդեցութիւն փնտրելու է խնդրին մէջ: Դէպքը, իր հոգեբանական պատճառներու նկատմամբ, կը վերադառնայ մինչեւ համաշխարհային պատերազմին ատենները: Ան կը բարձրանայ հեռաւոր Փոքր Ասիոյ մէջ կատարուած վայրագ ու արիւնոտ իրողութիւններու հիմերէն, ու մեր ականջները իբրեւ թէ նորէն կը լսեն անցած որոտը համաշխարհային պատերազմին: Յետոյ, դէպքի գոհին անձնաւորութիւնն է, որ անոր առանձին նշանակութիւն կը պարգեւէ: Անանուններու, անձանօթներու զանգուածէն ձեռք մը տարածուեցաւ ու գետին տապալեց մարդ մը, որ ինքը ըլլալով մէկը ժողովուրդի զաւակներէն, ժողովուրդներու հսկայական գօտեմարտի պահուն կը վարէր ճակատագիրը իր հայրենիքին ու, որպէս հաւատարիմ դաշնակից գերման ժողովուրդին, բախտին բարձունքներուն վրայ քայլեց:

Սակայն, պ. պ. երդուեալներ, այս տպաւորութիւնները եւ վերարթնցող ապրումները չեն կրնար հարկադրել ամբաստանողը եւ դատաւորը՝ թողուլ դէպքը եւ դէպքին հեղինակը սոսկ պատժական իրաւունքի տեսակէտով դիտելու այն նեղ ճամբան, գոր կը հրահանգէ օրէնքը. իսկ իրաւաբանական տեսակէտով խնդիրը առանձնապէս դժուարին ալ չէ: Թէկիլիբեանը 1921ի մարտ 15ին ատրճանակի հարուածով մը սպաններ է Թալէաթ փաշան Շարլօտտէնբուրգի մէջ: Նշանը լաւ առնուած էր, մահը վայրկեանական էր, ու տարակոյս չկայ, որ ամբաստանեալը ուզէր էր այդ մահը. ան գործեր էր դիտաւորեալ կերպով. չէ՞ որ ինքն իսկ ըսեր է, թէ մինչեւ հիմայ տակաւին գոհացում կը զգայ իր գործը յաջողած ըլլալուն համար: Մարդ մը սպաննելը պատժելի է գերմանական օրէնքով. ան պատժելի է, երբ խնդիրը պարզապէս մարդ մը սպաննելու մասին է. օրէնքը այսպէսով բնաւ տարբերութիւն չի դնէր՝ գերմանացի՞ մըն է սպաննուածը թէ օտար մը: Պետական պատժագրքի 3դ յօդուածի հիման վրայ գերման պետութեան պարժական օրէնքները կը տարածուին նոյն պետութեան սահմաններուն մէջ կատարուած բոլոր քրեական դէպքերու վրայ: Պարոններ, ամբաստանեալին ըրած շատ մը տեսակէտներով հետաքրքրական բացագանչութիւնը, որք ան բռնուեցաւ դէպքին վայրը ու տեսաւ իր շուրջը բազմութեան սպառնացող բռունցքները՝ “Գերմանիոյ համար ոչ մէկ վնաս, ես հայ, ան՝ թուրք” – ըսել է՝ մենք երկուքս ալ օտար ենք, ու Գերմանիա խնդրին մէջ գործ չունի - այս բացագանչութիւնը պատժական իրաւունքի համար ոչ մէկ նշանակութիւն ունի, որովհետեւ այն պարագան, որ սպաննուածն ալ, ամբաստանեալն ալ՝ երկունք ալ օտարներ են եղեր, պատժական իրաւունքի տեսակէտով բոլորովին միեւնոյն է: Ուրեմն ամբաստանեալը, մեր օրէնքներով, արժանի է պատժի, եթէ հարկաւ - բան մը որու մասին յետոյ պիտի խօսուի - չկան պարագաներ, որոնք անպատժելի կը դարձնեն դէպքը:

Ամէնէն առաջ սակայն ճշդելու է, արդեօք դէպքը կանխամտածուած սպանութիւն է թէ անկանխամտած. որովհետեւ օրէնքը կը տարբերէ մարդասպանութեան այս երկու տեսակները, ու դուք գիտէք, որ առաջին տեսակը աւելի ծանր քրեական արարք է, որուն համար այսօր տակաւին գոյութիւն ունեցող օրէնքը մահապատիժով կը սպառնայ. մինչ երկրորդ տեսակը, այսինքն յուզման վայրկեանին կատարուած սպանութիւնը, կը դիտուի իբրեւ աւելի մեղմ: Ես կրնամ նոյնպէս ընդունիլ իբրեւ արդէն ծանօթ իրողութիւն մը, թէ առաջին տեսակը այն սպանութիւնն է, երբ ոճիրին իրագործումը որոշ խորհրդածութեամբ կը կատարուի իսկ

խորհրդածութիւն կ'ըսուի՝ հանդարտ, յստակ, խելաչափ գործունէութիւն մը, երբ մարդասպանը, ոճիրը կատարելու միջոցին, տակաւին ի վիճակի է եղեր՝ պարզաբանել իր արարքին նշանակութիւնը, իր դրդապատճառները եւ ոճիրը կատարելու միջոցները, ոճիրին հետեւանքները, այն բարոյական հիմերը, որոնք կրնային արարքին հակառակ խօսիլ - այո, երբ ան ի վիճակի է եղեր՝ զգալ իր վրայ այս ամէնին ազդեցութիւնը, դէմ դիմաց դնելով չափել ու կշռել բոլոր թեր ու դէմ խօսող փաստերը, ապա այս գուտ խելաչափ նկատառումներէն հանել իր որոշումը:

Ու երբ ես այժմ կը հարցնեմ. “խորհրդածութենէ մը ե՞տքն է կատարեր արդեօք Թէհլիրեանը Թալէաթ փաշայի սպանութիւնը”, բնականաբար կու գամ ուրիշ հարցումի թէ՛ ի՞նչ պատճառներ դրդած են զինքը այդ ընելու: Տարակոյս չկայ որ մենք հոս գործ ունինք քաղաքական սպանութեան մը հետ: Ամբաստանեալին դրդապատճառները եղած են քաղաքական ատելութիւնը, քաղաքական քինախնդրութիւնը: Այստեղ ձեր աչքերուն առջեւ պատկերացուեցան շատ մը դէպքեր՝ հեռաւոր վայրերու մէջ տեղի ունեցած: Անկասկած սոսկալի բաներ տեղի ունեցած են, հայ ժողովուրդին նկատմամբ սարսափներ կատարուած են, ու անկասկած է նոյնպէս, որ ամբաստանեալին եւ իր ընտանիքին եւս զարհուրելի բաներ պատահած են, որ ճակատագիրը հարուածեր է զինքը մինչեւ իր ուղն ու ծուծը, երբ իր բոլոր ազգականները մահուան մատնուեր են, եւ ինքը ստիպուած է եղեր ականատես ըլլալու այս ամէնուն: Ու ահա իր մէջ վերջ ի վերջոյ ծագեր է վրէժի գաղափարը: Թէ ե՛րբ է տեղի ունեցեր այդ, ատոր մասին ետքը պիտի խօսիմ:

Յետոյ, անտարակոյս է որ ամբաստանեալը ճիշդ յանձին Թալէաթ փաշայի տեսեր է հեղինակը այն ճակատագրին, որ հարուածեց զինքը, իր ընտանիքը եւ ուրիշ շատերը իր ցեղակիցներէն. ու տեսեր է յանձին անոր ոչ միայն ներքին գործոց նախարարը, որ կը կրէ ձեւական քաղաքական պատասխանատուութիւնը այն ամէնին, ինչ որ տեղի ունեցած է իր պաշտօնաշրջանին մէջ, այլ եւ անձնական ու բարոյական հեղինակը յիշուած ոճիրներու:

Պարոններ, այս դրդապատճառներուն ճշդումը լիովին կը բաւէ՝ Թէհլիրեանի արարքին մասին պատժա - իրաւական տեսակէտով դատելու համար:

Բայց վկաներուն հարցաքննութիւնը տարածուեցավ նաեւ ուրիշ խնդրի մը վրայ՝ թէ Թալէաթ փաշան իրապէ՞ս անձնական ու բարոյական հեղինակը եղած է այս ոճիրներու: Ու թէեւ, իմ կարծիքով, արարքի մասին պատժա - իրաւական տեսակէտով դատելու համար բոլորովին միեւնոյնն է, թէ Թալէաթ փաշան եղած է կամ չէ եղած հեղինակը, թէ ամբաստանեալին այն գաղափարը, որ Թալէաթը եղած է այդ հեղինակը, կը համապատասխանէ իրականութեան թէ չի համապատասխաներ - այնուամենայնիւ պէտք է որ ես անդրադառնամ այդ խնդիրներուն, որոնք նիւթ եղած են վկաներու հարցաքննութեան:

Պարոններ, անտարակոյս է եւ վկաներու ցուցումներով հաստատուած, որ հայերը եւ իրենց բարեկամները այն համոզումը ունին՝ թէ Թալէաթ փաշան է յառաջ բերեր հայկական սարսափները: Սակայն, պարոններ, ատիկա կողմնակալ տեսակէտ մըն է, եւ դիւրին պիտի ըլլար բերել այստեղ ամբողջ շարք մը վկաներու, որոնք տեղի ունեցած դէպքերու մասին բոլորովին

ուրիշ ըմբռնում մը կը պարզէին: Ես խօսած եմ շատ մը գերման պարոններու հետ, որոնք Թուրքիա էին եւ շատ մօտ էին կանգնած դէպքերուն, եւ անոնք բոլորովին ուրիշ ըմբռնում մը ունին: Անոնք յայտնեցին՝ թէ խօսք անգամ չի կրնար ըլլալ, որ Պոլսոյ կառավարութիւնը որոշած ըլլար հայերու բնաջնջումը, եւ որ աւելի շուտ – թերեւս սխալ հասկացուած – պետական ու զինուորական ինքնապահովման նկատումներն են եղեր, որ դրդեր են զինքը՝ տալու տեղահանութեան հրամանը, որ ամէն պարագայի մէջ իր արդիւնքով ծայրայեղօրէն ճակատագրական եղաւ:

Նախագահը (ընդհատելով).- Կը խնդրեմ երկար կանգ չառնել այն խնդրին վրայ, որ առարկայ չէ եղած վկաներու հարցաքննութեան: Իսկ յիշել հոս իրողութիւնները, զորս յայտնած են ուրիշները, բնավ կապ չունի գործին հետ:

Դատախազը (շարունակելով).- Բայց ես կրնամ այնուամենայնիւ օգտուիլ ասկէ այն շափով, որ չափով որ այդ տարբերութիւնը երեւան եկավ երկու իրազեկներու տեսակետներուն ու ցուցումներուն միջեւ: Ես անշուշտ կրնամ հոս յայտնել, որ պարոն Դր. Լեպսիուսի տուած տեղեկութիւնները, որքան եւ հետաքրքրական ու մանրամասն են, ինծի համար ունին այնուամենայնիւ այն պակասութիւնը, որ դէպքերուն կու տան, իմ տեսակետով, չափազանց սխաթմատիք ու ծրագրուած բնոյթ. ու դժուար չէ տեսնել, որ Դր. Լեպսիուս եկած է այդ եզրակացութեան ոչ թէ տեղին վրայ, իր անձնական փորձերէն, դէպքերուն իսկ աստէն, այլ աւելի ուշ ստացուած տեղեկութիւններէ: Այդ պատճառով կը կարծեմ թէ իրատունք ունիմ աւելի մեծ արժէք տալու երկրորդ իրազեկին հիմնաւորումներուն, այն է՝ պ. գորավար Լիման ֆոն Չանդերսի, որ այն աստէն տեղին վրայ բարձր պաշտօն կը վարէր եւ շատ մօտէն ծանօթ է դէպքերուն, եւ որ այստեղ խիստ կերպով ընդգծեց տարբերութիւնը՝ հայերու տեղահանութեան հրամանը տուող Պոլսոյ կառավարութեան ըմբռնումին եւ տեղահանութեան իրագործման եղանակին միջեւ: Պոլսոյ կառավարութիւնը տեղեկութիւններ ստացած էր, թէ հայերը դաւաճանելու մասին կը խորհին, թէ Համաձայնութեան պետութիւններու հետ դաւադրութիւն կը կազմեն եւ վճռած են՝ երբ ռազմական կացութիւնը թոյլ տայ՝ կոնսկէն յարձակիլ թուրքերուն վրայ ու գլուխ հանել իրենց անկախութիւնը: Ատոր վրայ Պոլսոյ կառավարութիւնը, պետական եւ զինուորական ինքնապահովման համար, անհրաժեշտ նկատած էր հայերու տեղահանութիւնը: Գալով տեղահանման եղանակին, պէտք է նկատի ունենալ, պարոններ, որ Փոքր Ասիան այն գետինը չէ, որուն վրայ կը տիրեն քաղաքակրթուած ժողովուրդներուն յատուկ պայմանները - եւ կ'ուզեմ զգոյշ ըլլալ իմ արտայայտութիւններուս մէջ - այն պայմանները, որոնց մենք վարժուած էինք պատերազմէն առաջ: Աւանդութիւնը Փոքր Ասիոյ մէջ վայրագ ու արիւնալի է, եւ պարոն իրազեկը մատնանշեց, որ այն աստէն “սրբազան պատերազմ” էր յայտարարուած, ու ահա երբ այլացեղ ու այլակրօն ազգաբնակչութիւնը տեսաւ, թէ ինչպէ՛ս թուրքերը, ամէն կողմէ հայերը քջելով, մէկ տեղ կը ժողվեն, ատիկա բնականաբար ազդանշանը եղաւ՝ հայերուն վրայ յարձակելու: Ու հոս երեւան եկան մարդկային բնաւորութեան ամենագէշ բնագոյնները – կողոպուտ, սպանութիւն եւ այլն: Պարոն իրազեկը մատնանշեց նաեւ, որ տեղահանութեան համար գործի կոչուած ժանդարմները

այլևս նախկին ընտրովի զինուորականները չէին, այլ ասկէ անկէ ժողովուած սինյքորներ, որոնք յետոյ սեփական նախաձեռնութեամբ գործեցին ամէնքին յայտնի սպանութիւնները:

Ես պէտք կը նկատեմ ընելու այս կատարելապէս անհրաժեշտ շեղումը՝ ճշդելու համար հոս, որ վկաներու հարցաքննութեան արդիւնքը իրավունք չի տար ըսելու. “Ապացուցուած է որ Թալէաթ փաշան այն անձնաւորութիւնն է զոր անձնապէս եւ բարոյապէս պատասխանատու բռնելու է տեղի ունեցած սարսափներու համար”: Այս տեսակետէս չեն կրնար զիս շեղել նաեւ այն փաստաթուղթերը, որոնք կ’ուզեն հոս մեր առջեւը դնել: Ես իբրեւ դատախազ գիտեմ, թէ ինչպէ՛ս, օրինակի համար, մեզ մօտ յեղափոխական տակնուվրայութեան պահուն լոյս ինկան իսկ եւ իսկ նման փաստաթուղթեր, որոնք կը կրէին կարեւոր անձնաւորութիւններու ստորագրութիւնները, եւ որոնք սակայն, ինչպէս յետոյ կը պնդէին, կեղծուած էին: Զիս չի կրնար, վերջապէս, թիրիմացութեան մատնել նաեւ այն դատավճիռը, որ հանուած է Պոլսոյ մէջ Թալէաթ փաշայի դէմ, եւ որու մասին հոս յիշուեցաւ: Ես չեմ գիտեր, թէ հոն ճշդուա՞ծ է առարկայական ճշմարտութիւնը: Կարող է այդպէս ըլլալ, սակայն ատոր դէմ կը խօսի այն սովորական երեւոյթը, որ հին քաղաքական սիսթեմին տապալումէ ետք անոր գործիչները նոր սիսթեմին համար ոճրագործներ կը դառնան: Պարոններ, այնպիսի արագ ու բիրտ տապալում մըն էր, որմէ աւելի զօրաւորը մարդ չի կրնար երեւակայել, երբ Միջին Եւրոպայի պետութիւններու բարեկամ Երիտասարդ Թուրքերու կառաւարութիւնը հեռացուեցաւ ու անոր տեղ դրուեցաւ նոր կառաւարութիւն մը, որը ստիպուած էր, ընդհակառակը, քալելու այդ պետութիւններու թշնամիներուն՝ Համաձայնութեան պետութիւններուն հետ: Այսպէսով, ինչպէս ըսի, մենք ի վիճակի չենք գիտնալու՝ թէ ճշդուեցա՞ւ արդեօք առարկայական ճշմարտութիւնը: Կը կրկնեմ – վկաներու հարցաքննութիւնը չտուաւ անգամ նուազագոյն ապացոյցը, թէ Թալէաթ փաշան է եղեր բարոյական հեղինակը այն ոճրագործութիւններուն:

Այժմ ես կը վերադառնամ բուն սպանութեան: Ես պարզեցի ձեզի, թէ ամբաստանեալը դէպի սպանութիւն մղող պատճառը այն էր, որ ան կ’ուզեր վրէժ առնել անհատէ մը, որուն

մասին համոզուած էր, թէ ա՛ն է յանցաւորը, ա՛ն է բուն հեղինակը ջարդերուն: Պարոններ, անտարակոյս անազնիւ դրդապատճառ մը չէ այդ, եթէ նկատի առնենք ծանրութիւնը կատարուած ոճրագործութիւններուն: Դրդապատճառ մըն է այդ, զոր կարելի է մարդկայնօրէն հասկնալ ու պիտի հասկցուի, որքան ատեն որ կան մարդիկ, որոնք ի վիճակի են ատելու եւ սիրելու:

Ու երբ ես յետոյ հարցնեմ, թէ ամբաստանեալը խորհրդածելո՞վ է գործեր, այն ատեն այդ իսկ դրդապատճառէն արդէն կը հետեւի, թէ այո՛, այդպէս պիտի եղած ըլլայ: Երբ դուք ուշադրութեան առնէք, թէ ինչպէ՛ս ամբաստանեալը՝ Երզնկայի մէջ իր հայրական տան աւերակները տեսնելէ ետք՝ կ’անցնի ամբողջ Եւրոպայէն, մինչեւ որ Բերլին կը հասնի, ձեր մէջ այն տպաւորութիւնը կ’արթննայ, թէ ան ամբողջովին բռնուած է վրէժի ֆանատիկոս գաղափարէն, թէ ան, կարծես, մագնիսէ մը կը քաշուի ու կը բերուի մինչեւ դուրը այն տան, ուր իր գոհը կը բնակի: Այսպէսով, բոլորովին ճիշդ է իմ տեսակետով այն յայտարարութիւնը, զոր ան ըրած էր իր առաջին հարցաքննութեան միջոցին, ու ինծի համար բնաւ անտարակոյս չէ, թէ այդ յայտարարութիւնը չի

համապատասխաներ իրողութեան: Այն ատեն ամբաստանեալը ըսած էր. “Իմ ծնողաց տան աներակները տեսնելէ ետք ես շուտով որդեգրեցի վրեժի գաղափարը եւ կ’ուզէի իրագործել զայն: Այն ատեն արդէն գնեցի ատրճանակս”: Սակայն, պարոններ, ես չեմ ուզեր անելի մանրամասնօրէն կանգ առնիլ ատոր վրայ: Կրնայ ըլլալ, որ ատոր դէմ կասկածներ յայտնուին, եւ արդէն ամբաստանեալը ինքն ալ հրաժարեցաւ իր այդ խօսքերէն՝ իբրեւ այնպիսիներէ, որոնք արտասանուած են եղեր թեթեւամտօրէն՝ սպանութեան պահուն յառաջ եկած յուզումին անմիջական ազդեցութեանը տակ: Բայց ես կը յենում անոր, ինչ որ ըսած է ամբաստանեալը քննիչին ու ապա կրկնած է այստեղ: Համաձայն ատոր, Թալէաթ փաշան սպաննելու որոշումը տեղի է ունեցեր սպանութենէն 14 օր առաջ. ու այնուհետեւ մենք կը տեսնենք, թէ ինչպէ՛ս ամբաստանեալը որոշ ծրագրով եւ ամէն ինչ կշռադատելով կը դիմէ իր նպատակին իրագործման: Մենք կը տեսնենք, թէ ինչպէ՛ս ան կը ձգէ իր բնակարանը, ինչպէս կը պատճառաբանէ ատիկա առողջական նկատումներով, ինչպէ՛ս կը յաջողի ուրիշ բնակարան մը վարձել Թալէաթ փաշայի բնակարանին դիմաց, ինչպէ՛ս կը հետեւի անոր ու կ’իմանայ՝ ե՛րբ Թալէաթ փաշան սովորաբար դուրս կ’ելլէ տունէն. ինչպէ՛ս մարտ 15ին, ատրճանակը գրպանը դնելով, կ’երթայ անոր ետեւէն, ապա կ’անցնի առջեւը՝ համոզուելու համար, թէ մարդը իրապէս Թալէաթ փաշան է, յետոյ նորէն կ’անցնի ետեւի կողմը ու կու տայ մահացու հարուածը: Նշանը լաւ առնուած էր, այնպէս որ մահը վայրկենական եղաւ:

Որ ամբաստանեալը գործած էր խորհրդածութեամբ, կը տեսնուի նաեւ անկէ, որ յետոյ, ոստիկանատունը, երբ ոստիկանական պաշտօնեան հարցուցած է. “Ինչո՞ւ առջեւէն չյարձակեցաք անոր վրայ”,- ան պատասխանած է. “Այդ պարագային մահափորձը կրնար չհաջողիլ. որովհետեւ Թալէաթը պիտի պաշտպանէր ինքզինքը, պիտի շարժէր, ու ես չէի կրնար վստահ ըլլալ, թէ գնդակս նպատակին կը հասնի”:

Պարոններ, անելի վերջն ալ մենք կը տեսնենք, որ ամբաստանեալը կը գործէ պաղարիւնով ու խորհելով: Ան կը նետէ ատրճանակը, կը փորձէ փախչիլ, ու երբ զինքը կը բռնեն եւ կը սկսեն ծեծել, կը բացագանչէ. “Իմ սպաննածս գերմանացի չէ, ես ալ գերմանացի չեմ. դուք գերմանացիներդ պէտք չունիք յուզուելու այս դէպքէն, որը ձեզ համար բոլորովին անտարբեր պիտի ըլլայ”:

Պարոններ, այս բոլոր պարագաները նկատի ունենալով՝ ամէն ոք պէտք է ըսէ. “սպանութիւնը գլուխ հանուած է կատարեալ պաղարիւնով, կանխաւ մտածուելէ եւ կշռուելէ ետք”:

Ասոր վրայ կ’աւելնայ նաեւ ամբաստանեալին խառնուածքը: Արդեօք ամբաստանեալը տաքարիւն եւ դիւարաւ բռնկող մա՞րդ մըն էր: Իրողութիւնը հակառակն է. ամբաստանեալը իր մէջ ամփոփուած, հանդարտ, թախծոտ մարդ մըն է. այնպիսի մէկը չէ, որ անձնատուր ըլլայ հրճուանքի եւ ուրախութեան, որ պոռթկայ ցասումով, այլ մարդ մը, որ իր մէջը կ’որոճայ իր միտքերն ու գաղափարները: Աս ալ, իմ կարծիքով, կը խօսի յօգուտ իմ այն տեսակետին՝ թէ ամբաստանեալը կատարած է իր գործը խորհելով ու կշռելով”:

Այսպէս, իմ տեսակետով, կարելի էր իրապէս կանխամտածուած սպանութեան հիմնական նշանները զուտ առարկայօրէն ապացուցուած նկատել: Սակայն, պարոններ, ասիկա տակաւին

չպիտի բաւեր՝ պատժի ենթարկելու համար ամբաստանեալը: Պէտք է քննել՝ չկա՞ն արդեօք այնպիսի պարագաներ, ինչպէս ես արդէն սկիզբը ըսի, որոնք անպատժելի կը դարձնեն արարքը. ու ահա այստեղ է որ հրապարակ կու գայ գերման պետական պատժագրքին 51րդ յօդուածը, որը կըսէ՝ թէ պատժելի գործողութիւն չկայ հոն, ուր անոր հեղինակը կամ կը գործէ կատարեալ անգիտակցութեամբ, կամ երբ ան՝ գործողութիւնը կատարելու պահուն՝ գտնուեր է մտաւոր գործունէութեան հիւանդագին խանգարման կացութեան մը մէջ, որ անհնարին կը դարձնէ կամքի ազատ արտայայտութիւնը: Ուրեմն, երբ խնդիրը հոգեկան խանգարման ենթակայ անհաստի մը արարքին մասին է, օրէնքը չընդունիր առհասարակ պատժելի գործողութեան մը գոյութիւնը, այլ կը հաւասարեցնէ զայն մտաւորապէս դժբախտ պատահարի մը, այսինքն այնպէս, ինչպէս եթէ, օրինակի համար, մէկը սպաննուէր ձիու մը սմբակի հարուածէն: Այդպիսի պարագաներուն չկայ պատժա-իրաւական տեսակետով պատասխանատու մարդ մը, ուրեմն չկայ նաեւ պատժելի գործողութիւն: Այժմ հարց կը ծագի, թէ ամբաստանեալին նկատմամբ գոյութիւն ունի՞ն այս պարագաները կամ անոնցմէ մէկը:

Պարոններ, ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ բոլոր իրազեկները միեւնոյն բանը ըսեն, դատարանը բնականաբար միշտ անոնց տեսակետին կը հետեւի: Դժբախտաբար մենք հոս իրազեկներու այդպիսի միահամուռ տեսակետ մը չունինք, ուստի դատարանը հարկադրուած է ինքը որոշելու, թէ 51րդ յօդուածին տրամադրութիւնները, իր տեսակետով, ներկայ պարագային գոյութիւն ունի՞ն թէ ոչ:

Դուք լսեցիք, որ իրազեկներէն երեքը ըսին մեր տեսակետով այդ տրամադրութիւնները գոյութիւն չունին. իրաւ է, ամբաստանեալը վերնոտ մըն է, որ ենթակայ է ջղաձգական բռնկումներու, սակայն այդ տակաւին չի բաւեր, որովհետեւ վերնոտը կը գրկուի իր մտաւոր գործունէութենէն այն ատեն միայն, երբ բռնկումը սկսած է, իսկ սովորաբար ան բոլորովին բնական մարդ մըն է: Այդ պատճառով ամէն անգամ, երբ կ'ըսուի թէ ոճիրի հեղինակը վերնոտ է, դատարանը եւ իրազեկները կը հարցնեն. “այո՛, բայց բռնկում մը ունէ՞ր ան՝ ոճիրը գործելու պահուն կամ գործելէ քիչ ատեն առաջ”: Ու եթէ այդպէս չէ եղած, ապա ուրեմն ան կատարելապէս բնական մարդ մը կը նկատուի:

Այս տեսակետը արծարծած են առաջին երեք իրազեկները, մինչդեռ վերջին երկուքը ըսած են. մեզի այնպէս կը թուի թէ ոճիրը կատարելու պահուն ամբաստանեալը անպատասխանատու վիճակի մէջ է եղեր:

Դատարանը ուրեմն ինքը պիտի որոշէ: Ու ահա այստեղ անհրաժեշտ կը դառնայ՝ քննել ամբաստանեալին անձնաւորութիւնը, ինչպէս որ ան ինքզինքը ցուցուց դատավարութեան միջոցին, ու ես կը կարծեմ թէ ան հոս այնպիսի տպաւորութիւն մը գործեց, որ կարելի է ըսել թէ կը գտնուի մտաւոր կատարեալ բարձրութեան վրայ: Իր պատասխանները հատու են ու միշտ տեղին: Իր անձնաւորութիւնը պէտք է երեւան գայ նաեւ իր կեանքին ընթացքէն, որքան որ վերջինս մեզի յայտնի է: Ու այդ ընթացքը առանձին աչքի զարնող բան մը չի ներկայացներ: Ամբաստանեալը ապրեր է, ինչպէս ուրիշ երիտասարդներ: Ան ի վիճակի էր՝ չհոգալու իրեն

համար անպայման գործ մը գտնելու մասին: Ան կ'այցելէր իր բարեկամներուն, իր հայրենակիցներուն, պարի ու լեզուի դասեր կ'առնէր. իր տանտիկիները կը նկարագրեն զինքը որպէս հանդարտ, պարկեշտ մարդ մը: Այսպէսով, մենք կը տեսնենք, որ՝ բռնկման վայրկեաններէ դուրս՝ ան եղած է մտաւորապէս կանոնաւոր վիճակի մէջ: Այդ պատճառով ես կը կարծեմ, պարոններ, որ մենք միանալու ենք այն իրազեկներուն, որոնք կը մերժեն 51դ յոդուածին գործադրութիւնը:

Պարոններ, ձեզ երեւի յայտնի է, որ արդարադատութեան ապագայ բարեփոխումներու պահուն նոր պատժական օրինագիրք մը պիտի ընդունուի, եւ որ անոր նախագիծը արդէն պատրաստ է: Այդ օրինագիրքը եւս կանխամտածուած սպանութեան համար մահապատիժ կը տնօրինէ. բայց ան կ'ընդունի մեղմացուցիչ պարագաներ, որոնք հնարաւոր կը դարձնեն՝ մահապատիժը փոխարինել ուրիշ աւելի մեղմ պատիժով: Մեր հիմնական օրէնքը՝ կանխամտածուած սպանութեան պարագային՝ չի ճանչնար մեղմացուցիչ պարագաներ, ու ես կրնամ հասկնալ, որ ոմանց խիստ պիտի թուի, եթէ ես ստիպուած ըլլամ պահանջել, որ ամբաստանեալը յանցաւոր նկատուի՝ կանխամտածուած սպանութիւն կատարած ըլլալուն համար:

Բայց պարոններ, պէտք չէ որ մենք միայն ամբաստանեալը աչքի առջեւ ունենանք. նկատի առնելու է նաեւ զոհը: Խորհելու է, որ հոս կէանքէ խլուած է մարդ մը, որ կը գտնուէր լաւագոյն առնական տարիքին մէջ, որուն մահը կ'ողբան իր այրին ու իր մերձաւորները, եւ որը՝ առնուազն իր ազգակիցներուն ու կրօնակիցներուն քով՝ կը վայելէր մեծ հայրենասէրի մը ու պատուաւոր մարդու մը հռչակը:

Ու վերջապէս, պարոններ, այն պարագաները, որոնք այստեղ լայն չափերով ի նպաստ ամբաստանեալին կը խօսին, համաձայն մեր հիմնական օրէնքին՝ ներում շնորհող հաստատութեան քով անշուշտ լիովին նկատի կ'առնուին:

Ուստի, պ.պ. երդուեալներ, կ'առաջարկեմ՝ ձեզի ներկայացուած հարցումներուն տալ դրական պատասխան՝ ամբաստանեալը՝ կանխամտածուած սպանութիւն կատարած ըլլալուն համար՝ յանցաւոր ճանաչելու իմաստով:

Նախագահ.- Կրնա՞մ խնդրել թարգմանեն՝ յայտնել ամբաստանեալին, որ պարոն դատախազը կ'առաջարկէ երդուեալներուն՝ զինքը յանցաւոր յայտարարել կանխամտածուած սպանութիւն կատարած ըլլալուն համար. (Կը թարգմանուի:)

Պաշտպան, իրաւական գաղտնի խորհրդական Դր. Ադոլֆ Ֆոն Գորդոն, Բերլին:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Պ.պ. երդուեալներ, պարոն դատախազը յիշեց, որ եթէ դուք այստեղ ամբաստանեալ Թէլիբեանը մինչեւ իսկ յանցաւոր յայտարարէք եւ այդպէսով հիմ տաք, որ ան

մահուան դատապարտուի, այդ իսկ պարագային չարիքը մեծ չըլլար, որովհետև հանրապետութեան նախագահը անտարակոյս իրեն ներում պիտի շնորհէ:

Ասիկա թոյլատրելի ձեւ մը չէ՝ հոս, այս վայրին մէջ, ձեր վրայ ազդելու: Եթէ դուք ամբաստանեալը յանցաւոր ճանչնաք, ան մահուան կը դատապարտուի ու ոչ ոք մենէ չի կրնար գիտնալ, թէ գերման պետութեան նախագահը՝ ներման խնդրին նկատմամբ՝ ի՞նչ որոշում կու տայ: Այստեղ պետք է իրաւունքը որոշուի եւ ոչ թէ ներման ճամբան ցոյց տրուի:

Ես ուրախ եղայ՝ յանձին մեծապատիւ պարոն աւագ դատախազին որոշ իմաստով պաշտօնակից մը, պաշտպան մը ողջունելու. սակայն պաշտպան մը ոչ թէ Թէհլիրեանի, այլ Թալէաթ փաշայի, ու այն ալ դժբախտաբար միայն իրողութիւններու հիման վրայ, զորս զեկուցած ու պատմած են իրեն այլեւայլ անձեր: Պարոններ, ես չպիտի հետեւիմ իրեն այդ ուղղութեամբ, ես գիտակցաբար կը մերժեմ այդ: Հեռագիրներու ամբողջ զինարան մը ունիմ հոս, վկայ մը ունիմ, որ ահա հոն նստած է ու կ'ըսէ “այդ հեռագիրները վաւեր են, ե՛ս ձեռք բերած եմ զանոնք”: Ներկայ դատավարութեան պահուն ես արդէն կանգ առայ այդ ամէնին վրայ: Ես առաջարկ ըրի, զոր յետոյ նորէն ետ առի, որովհետև մեզ համար հոս կարեւորը այդ չէ. կը բաւէ որ Թէհլիրեանը, ինչպէս իր բոլոր ցեղակիցները, համոզուած էր, թէ Թալէաթն է ամբողջ սարսափներուն հեղինակը. եւ դուք ցոյց տուիք որ կը հաւատաք ատոր: Այդ կը բաւէ, ու եթէ դատավարութեան մէջ ատոր համար առարկայական պարագայ մը եւս կար, այդ ալ վկայութիւնն է այն փառաւոր մարդուն, Պալաքեան եպիսկոպոսին, որ ըսաւ: “Ես ու իմ պրոֆէսորս, որուն հետ մէկտեղ աքսորուեցայ, եղանք Չանղըրիի վալիին մօտ. մենք խնդրեցինք անկէ՝ բան մը ընել մեզի համար. ան ցուցուց մեզի հեռագիր մը, որով Թալէաթը կը հարցնէր.” Տարագրուածներէն քանի՞սը արդէն մեռած են եւ քանի՞սը ողջ: “Մենք ամենքս ալ հասկցանք, թէ ի՞նչ կը նշանակէր այդ.” Ասիկա միակ պարագան է, որ մեջտեղ եկած է վկաներու հարցաքննութեան միջոցին Թալէաթի՝ սարսափներուն հեղինակը ըլլալուն մասին: Մնացած բոլոր վկայութիւններէն մենք հրաժարեցանք: Բաւական է այն պարզ ու անվիճելի իրողութիւնը, որ քանի մը ամսուան ընթացքին 1.800.000 հայերէ 1.400.000ը տեղահանուած են, եւ այդ վերջիններէն մէկ միլիոնը սպաննուած, ինչպէս նաեւ այն որ տարբեր վայրերէ այդ դժբախտներու կարաւանները նոյն կեղքոններն են քշուած՝ առանց որ ու եւ է տեղ անոնց ապահովութեան մասին հոգացուած ըլլար: Խնդրեմ դուք ինքնիդ խորհիք, հնարաւոր է այդ՝ առանց սիսթեմաթիք ղեկավարութեան վերէն: Իրապէս թուրք կառավարութիւնը այնքան անզօր էր, որ ի վիճակի չըլլար այդ աղէտին դէմ միջոցներ ձեռք առնելու: Կը հաւատաք ատոր: Այն ատեն ըսէք “այո”: Ես չեմ կրնար այդ ընել:

Երրորդ կարճ նախնական դիտողութիւն մը. քիչ մը կասկածանքով եւ մինչև իսկ մտահոգութեամբ պ. դատախազը անդրադարձաւ դէպքին յաջորդ օրը, մարտ 16ին ամբաստանեալին կողմէ տրուած բացատրութիւններուն, որոնք կը վերաբերին այն վայրկեանին, երբ Թէհլիրեանը առաջին անգամ որոշած էր մահափորձը կատարել: Ամբաստանեալը իբր թէ որոշած ըլլար այդ անմիջապէս հայկական ջարդերէն ետք, տարիներ առաջ արդէն եւ այլն: Պարոններ, մենք պետք չէ որ դառնանք այս խնդրական բացատրութիւններուն: Այստեղ ձեր առջեւ նստած է այն թարգմանը, որ հրաւիրուած էր ամբաստանեալին առաջին հարցաքննութեան

համար, որ ոգևորուած՝ յանձին այդ ամբաստանեալին կը տեսնէր մեծ մարդ մը, եւ որ՝ ինքն իսկ գրեթէ յափշտակուած՝ այն տեսակէտէն էր, թէ հոս մեծ բան մը տեղի ունեցած է: Ու դուք լսեցիք իրմէ, որ ինքը Թէհլիրեանը այն ատեն կը գտնուէր այնպիսի հոգեկան վիճակի մը մէջ, վիրաւոր, ջերմէ բռնուած, ուժաբեկ, գանակոծման, իր ահաւոր որոշման եւ անոր իրագործման ազդեցութեան տակ, կացութեան մը մէջ, ուր ան ամէն մէկ հարցումի “այո” պիտի պատասխանէր. “այո՛, միայն հանգիստ ձգեցէք զիս, եւ գիտեմ, թէ ի՞նչ ըրած եմ. եւ այն, ինչ որ ըրած եմ, լաւ է. այլեւս չեմ ուզեր, որ զիս հոս ձանձրացնէք:” Այս կ’ըսէ թարգմանը, որ այն ատեն հրաւիրուած էր թարգմանելու ամբաստանեալին խօսքերը: Թարգմանը այստեղ վճռականօրէն ըսաւ. “Եթէ դուք անոր հակառակ հարցումներ իսկ ուղղէիք, ան նորէն “այո” պիտի պատասխանէր”: Ու երբ թարգմանը հարցաքննութեան արձանագրութիւնը պիտի ստորագրէր, ըսաւ. “Ես չեմ ստորագրեր, որովհետեւ արձանագրութիւնը կատարելապէս հարազատ ու հիմնաւոր չէ”:

Այսպէտով մենք կրնանք հաշուի առնել միայն այստեղ տրուած բանաւոր ցուցումները, ինչպէս որ պ. նախագահը հոս պատեհ առիթով նկատեց:

Թէհլիրեան ծնած է Բագառիճ գիւղին մէջ եւ չորս տարեկան հասակին եկած է Երզնկայ: Այս քաղաքը, խոշորագոյններէն մէկը, կը գտնուի 150-200 քիլոմետր Կարինէն դէպի արեւմուտք, Եփրատի երկու ճիւղերէն մէկուն վրայ, որ կը հասնի գրեթէ մինչեւ Կարին: Հոս երկայն ու մեծ ձոր մը կայ, որ ճամբան է դէպի հարաւ, միջին Եփրատի ուղղութեամբ, դէպի այն անապատը, ուր յետոյ աքսորուեցան հայերը:

Չորս տարեկան էր Թէհլիրեանը, երբ Երզնկայ եկաւ: Հոն կ’ապրէին շուրջ 20.000 հայեր, քիչ մը աւելի, 25.000-30.000, թուրքեր: Իր ծնողքը կը պատկանէին միջին դասակարգին: Իր հայրը միջակ կարգի վաճառական մըն էր, որու գործերը ընդհանրապէս բաւական յաջող էին: Ծնողքը պարկեշտ ճամբաներով քիչ մը դրամ խնայած էին: Խաղաղ ու բազմազան ընտանիք մըն էր, որ պատերազմի հետեւանքով քիչ մը տուժած էր, բայց ամէն ինչ կարգ ու կանոնի մէջ էր, մինչեւ որ հասաւ 1915ի աղետալի յունիսը: Այդ միջոցին Պոլիսէն եկաւ գուժկան լուրը՝ թէ հայերը պիտի տեղահանուին. իսկ յետոյ եկաւ մունետիկը եւ ազդարարեց. “դուք պէտք է որ քանի մը օրուան մէջ կապէք ձեր այն իրերը, զորս կրնաք հետերնիդ առնել, որովհետեւ պիտի տեղահանուիք”: Տեղահանութիւնը սկսաւ յունիս 10ին: Նախ կարգը եկաւ հարուստներուն ու ունեւորներուն, որոնք ձի ու կառք ունէին. առաջին խումբն էր այս: Երկրորդ խումբին կը պատկանէր Թէհլիրեանը իր ամբողջ ընտանիքով: Թէ որքան մեծ էր այդ խումբը՝ Թէհլիրեանը ի վիճակի չէ ըսելու: Այս երկու խումբերուն հետեւեցան ուրիշ շատերը: Դուրսը, քաղաքին դուռներուն առջեւ, ասոնց միացան բազմաթիւ հայեր՝ գիւղերէ ժողովուած: Թէհլիրեանը չէր տեսնէր կարաւանին ծայրերը. ան կը քալէր մէջտեղը, իր 15 տարեկան քրոջ քովը: Կարծեմ իր միւս 16 տարեկան քոյրն ալ հոն էր, ինչպէս նաեւ իր 26 տարեկան քոյրը փոքրիկ գաւակին հետ: Հոն էին ատկէ գատ իր երկու եղբայրները՝ 22 եւ 24 տարեկան, եւ վերջապէս իր հայրն ու մայրը՝ 55 եւ 50 տարեկան: Այսպէս կ’երթար ամբողջ ընտանիքը եզան սայլով մը իր ճամբան:

Անոնք տակաւին հեռու չէին գացած, երբ յարձակման ենթարկուեցան: Որո՞ւ կողմէն: Ժանդարմներու կողմէն,- որոնց այն ատենի նկարագիրը մեզի այստեղ պարզեց նորին վսեմութիւնը զօրավար Լիման Ֆոն Ջանդերս,- ինչպէս նաեւ ասկէ անկէ հաւաքուած խուժանի՝ քուրդերու, թուրքերու եւ ուրիշներու կողմէն: Ասոնք սկսան անով որ նախ եւ առաջ պահանջեցին հայերու զենքերը. առին անոնցմէ մինչեւ իսկ հովանոցները, ապա սկսան դրամ, ոսկի, ուտելիք փնտրել, իսկ կիներէն առին ամենէն թանկագինը՝ իրենց անասնական կիրքերուն յագուրդ տալու համար: Դեռատի աղջիկները, ի թիւս որոնց ամբաստանեալին 15-16 տարեկան քոյրերը, քարշ տուին թուփերու մէջ, եւ փոսի մը մէջէն ծնողներու եւ եղբօր ականջին հասան այս երկու երախաներուն աղեկտուր ճիչերը, եւ ասկէ անոնք հասկցան իրենց հարազատներուն գլխուն եկածը: Աղջիկները այլեւս երեւան չեկան: Իր քոյրերէն մէկուն դիակը ամբաստանեալը կրցաւ տակաւին տեսնել, երբ արթնցաւ իր ուշաթափութենէն: Իսկ եղբա՞յրը: Քսաներկու տարեկան եղբօր գլուխը - եւ այս ամենասոսկալի տպաւորութիւնն էր - շողշողուն կացինով մը ճեղքուած էր. եւ մինչեւ օրս տակաւին կը տեսնէ ամբաստանեալը իր յուզման պահուն այս ահաւոր պատկերը: Իր աչքին առջեւ մայրը գետին ինկաւ, հաւանօրէն գնդակէ մը զարնուած: Մնացածները անհետացան ընդմիջտ, չնայելով որ ամբաստանեալը յետագային յաճախ փորձած էր ծանուցումներու միջոցով անոնց հետքը գտնել:

Ասկէ զատ ան ուրիշ բան չտեսաւ, որովհետեւ ինքն ալ բութ գործիքի մը հարուած ստացաւ իր գլխուն ետեւի կողմը: Վերքը այսօր իսկ տակաւին կը հաստատուի բժիշկներուն կողմէ: Այս սարսափելի հարուածը միակ բանն է որ ան դեռ կը յիշէ: Ապա ան անզգայ գետին գլորեցաւ. ու երբ, բաւական ատեն անցած, իրիկուան դեմ ուշքի եկաւ, շրջապատուած հագարաւոր դիակներով, գտաւ իր վրան երկու վերք եւս - գնդակի վերք մը թելին եւ սուր զենքի վերք մը ծունկին վրայ: Այդ վերքերուն հետքերն ալ տակաւին գոյութիւն ունին: Կիսախաւարի մէջ ան կրցավ իր ուր ըլլալը ճշդել, փորձեց անգամ իր հարազատներէն մէկուն կամ միւսին դիակը գտնել: Ջարդէ ողջ մնացած ուրիշ ոչ մէկը կար իր շուրջը. ու ան, ճիգ ընելով, ոտքի ելավ ու փախուստի մէջ ուզեց փնտրել իր փրկութիւնը: Ան դիմեց դէպի լեռները, որոնք իրեն քաջ ծանօթ էին: Պարկեշտ պառավ քրդուհի մը ապաստան տուաւ իրեն, մինչեւ որ վերքերը բուժուեցան: Ապա ան շարենակեց իր ճամբան ու վերջ ի վերջոյ, գրեթէ ամիս մը տեւող թափառումներէ ետք, հասավ ռուսական հողը: Հոն ան սկիզբը ձերբակալուեցաւ, սակայն շուտով ազատ արձակուեցաւ: Ան ասպանջակութիւն գտաւ ռուսահայերու շրջանին մէջ. անոնք միջոց տուին իրեն Պարսկաստան անցնելու, ուր՝ պաշտօն ստանձնելով վաճառականական գործի մը մէջ՝ կարողացավ իր ապրուստը հոգալ:

Պարոններ, այս սոսկալի ջարդը այն աստիճան անհավատալի է, որ մենք սկիզբը կը տարակուսեինք մինչեւ իսկ՝ թէ ով գիտէ՝ կը հաւատա՞ն արդեօք պ. պ. երդուեալները ամբաստանեալին պատմածին: Եւ իրապէս, քանի մը օր առաջ հոս լոյս տեսաւ հակառակորդներուն կողմէ հրատարակուած եւ փողոցի ճաշակին յարմար աղմկայոյց գրքոյկ մը՝ "Թալէաթ փաշայի սպանութեան գաղտնիքը" խորագրով - հարկաւ, այստեղ բնաւ գաղտնիք չկայ, որովհետեւ խնդիրը արդէն բոլորովին պարզ է, եւ այդ ամէնը միայն պարապ խօսքեր են:

“Երիտասարդ հայը, կ’ըսուի հոն, որ Թալէաթ փաշան սպաննելը յանձն առած էր” (կ’ակնարկուի թէ դէպքին ետեւը մեծ պետութիւն մը կանգնած է), “գործիք մը եղած է Բարբարոսական մոլեգնութեան, որ կը յատկանշէ իր ցեղը, առանց ինքն իրեն հաշիւ տալու եւ առանց գիտակցելու, թէ ի’նչ կ’ընէր: Իր յուզիչ պատմութիւնը՝ թէ ինչպէ՛ս թուրքերը քարշ տուին տարին իր ծնողքը, բնականաբար նպատակ ունի միայն արթնցնել դատաւորներու համակրանքը”: Եթէ գրքոյկին հեղինակը երէկ այս սրահեն մէջ էր եւ լսեց վկայ տիկին Թերզիպաշեանի զեկոյցը, անշուշտ հեռացաւ ասկէ՝ տանելով իրեն հետ իր վերոյիշեալ խօսքերը ետ առնելու պահանջը:

Մենք կ’ուզէինք այդ ուղղութեամբ աւելի ընդարձակ ապացոյցներ բերել. այստեղ են երկու գերման գթութեան քոյրեր, որ ճիշդ նոյն միջոցին Երզնկայ էին եւ տեղի ունեցած դէպքերու մասին զեկոյցներ ըրած էին մեր արտաքին գործոց նախարարութեան: Ես հրաժարեցայ այդ վկաները հարցաքննելէ, որովհետեւ ինծի կը բաւէր, որ երեք շաբաթ ետքը տիկին Թերզիպաշեան, Կարինէն՝ ըսել է արեւլթէն՝ գալով եւ Երզնկայէն նոյնպէս մեծ կարաւանի մը հետ Քէմախի ձորով տարուած էր: Թէ ինչ զարհուրելի դէպքերու մասին ան պատմեց մեզի, ես չէի ուզեր այստեղ ոչ մէկ խօսքով կրկնել: Ան տակաւին տեսած էր իրմէ առաջ կարաւաններով տարուած հայերու դիակները. ան տեսած է, թէ ինչպէս այրեր ու երեխաներ գետը կը նետուէին: Այս ամէնը միեւնոյն ատեն ցայտուն ապացոյց մըն է Թեհլիրեանի ըսածներուն ճշդութեան. ու այս է պատճառը որ ես կը յիշեմ այդ: Թեհլիրեանի ըսածը ճշմարտութիւնը ի’նքն է եւ ոչ “յուզիչ պատմութիւն” մը:

1917ին տեղի ունեցավ ռուսներու յառաջխաղացութիւնը: Գրաւելով Կարինը, անոնք յառաջացան մինչեւ Երզնկայ: Ամբաստանեալը, որ Պարսկաստանի մէջ պաշտօն կը վարէր, լսելով այդ մասին, որոշեց վերադառնալ Երզնկայ տեսնելու համար՝ թէ իր հարազատներէն ու եւ մէկը ողջ չէ՞ եւ թէ ինչպէ՛ս է առհասարակ հոն դրութիւնը: Ան եկաւ հոն, տեսաւ իր հայրենի տունը կիսաւեր. բայց նորէն այնքան բան կար մնացած, որ յիշեցնէր իրեն իր բոլոր սիրելիներուն մասին, որոնց հետ ան հոն ապրած ու իր մանկութիւնը անցուցած էր. այնքան բան կար մնացած, որպէսզի ան կարողանար վերստին ճանչնալ իր երբեմն այնքան քաղցր ու անդորր օճախը: Ու երբ ան տեսաւ իր որբացած ու ամայացած տունը, եւ իր յիշողութեան մէջ արթնցան ջարդին բոլոր ահաւոր պատկերները, ան, կատարելապէս ողջ ու առողջ ընտանիքէ մը սերած այդ մարդը, մարեցաւ ու զետին ինկաւ: Ու այդտեղ առաջին անգամը ըլլալով տեղի ունեցաւ մէկը այն հիւանդագին բռնկումներէն, որոնք յետագային յաճախ կը կրկնուէին, այսինքն՝ դիակներու հոտ, որ ամբողջովին կը լեցնէր իր քիթն ու քիմքը, ջարդերու մտապատկերներ, ու յետոյ որոշ հոգեկան շփոթութիւն, ջղաձգային կթոտութիւն խոր թալկացման հետ մէկտեղ:

Եւ ի’նչ տեսաւ ան Երզնկայի մէջ. 20.000 հայերէ՛ երեք ընտանիք, որոնք փրկուած էին՝ միայն մահմետականութիւն ընդունելով, ու յետոյ քանի մը ցիրուցան եղած անհատներ, ամէնքը միասին 20 հոգի քսան հազարէ: Պարոններ, ասոնք տպաւորութիւններ են, զորս մարդ իր կեանքին ամբողջ ընթացքին չի մոռնար: Ապա ան մտաբերեց, որ իր ծնողքը չարքաշութեամբ ձեռք բերած իրենց դրամը թաղած էին: Ան սկսավ փնտրել իրենց նախկին ունեցածը. շատ բան պակաս էր, տնային ամբողջ արժէքաւոր կահ - կարասին անհետացած էր: Բայց հոգածութեամբ թաղուած դրամը, 4.000 ոսկիէ աւելի գումար մը, տակաւին մնացած էր: Այդ դրամը ան վերցուց՝ իր եւ իր

ընտանիքին համար, եթե վերջինիս անդամներն ու եւ է մէկը գտնուէր, ու պահ տուաւ Սերբիոյ մէջ իր մէկ ազգականին, զոր մենք նոյնպէս իբրեւ վկայ հրաւիրած էինք՝ Թէհլիրեանի ընտանեկան պարագաները ճշդելու համար, զոր սակայն հարցաքննելու պէտքը մենք այլեւս չունինք: Այնուհետեւ Թէհլիրեանը ամիս մը Երզնկայ մնալէ ետք՝ անցաւ Թիֆլիս այն ատեն, երբ ռուսները նորէն ետ քաշուեցան: Հոն ան վերստին նուիրուեցաւ վաճառականական գործերու, ու հոն էր որ 1918ին գնեց ատրճանակը: Ան եկած էր Երզնկայ, ինչպէս ըսի, 1917ին, ըսել է՝ կոտորածէն երկու տարի ետք: Թէհլիրեանը մնաց Թիֆլիս մինչեւ 1919ը: Նոյն թուին, երբ պայմանները Թուրքիոյ մէջ փոխուած էին, ան կ'երթայ Սելանիկ, անկէ Սերբիա՝ ոչ թէ հաճոյքի կամ իր ազգականները տեսնելու, այլ իրեն համար պատշաճ գործ մը գտնելու նպատակով: Յետոյ նորէն Սելանիկ կը վերադառնայ եւ 1920ի սկիզբները կ'անցնի Պարիս՝ սորվելու համար ֆրանսերէնը, որ Թուրքիոյ մէջ մասնաւոր կարեւորութիւն ունի: Հոն ան 10 ամիս աշխատեցաւ ամենայն ջանասիրութեամբ: Ան ազատ կը կարդայ ֆրանսական թերթեր, կը խօսի ֆրանսերէն այնքան, որքան որ մարդ կրնայ սորվիլ այդ կարճ ատենին մէջ: Ապա ան կ'ըսէ ինքն իրեն. “Այս թափառական կեանքը կամ պատահականօրէն վաճառականութեամբ զբաղիլը ինձի գոհացում տուող բան մը չէ. աւելի լաւ է մեքենագործութիւն սորվիլ, որպէսզի ապագային կարենամ գործել Հայաստանի մէջ՝ որպէս պիտանի մարդ: Ամէնէն յարմարը ատոր համար Բերլին է”: Այսպէսով ան Պարիսէն ուղիղ Բերլին երթալ կ'ուզէ: Սակայն իրեն կ'ըսեն, որ շատ դժուար է Պարիսէն Բերլին մտնելու թոյլտուութիւն ստանալ: Ծեր հայ մը, որուն ան կը հանդիպի, կ'ըսէ իրեն. “Ամէնէն դիւրին կերպով այդ գործը կարելի է կարգադրել ժընէվէն: Հոն ես տակաւին բնակարան մը ունիմ. ես պիտի Հայաստան վերադառնամ, այնպէս որ դուն կրնաս ստանձնել իմ բնակարանս եւ՝ իբրեւ ժընէվի բնակիչ՝ ձեռք բերել գերման հիւպատոսարանէն Գերմանիա մտնելու թոյլտուութիւնը”: Ասոր վրայ Թէհլիրեան ժընէվ կ'երթայ եւ իրապէս կ'ըստանայ այդ թոյլտուութիւնը, սակայն միայն ութ օր Գերմանիա մնալու իրավունքով: Ան կու գայ Բերլին, ուր Գերմանիոյ մէջ մնալու իրավունքը, ինչպէս որ իրեն ըսած էին ժընէվ, կ'երկարաձգուի: Ան ունէր իր քովը Բերլինի հայկական հիւպատոսարանի, ինչպէս նաեւ ուրիշ հասցէներ: Իրեն կը յանձնարարուի “Թիրգարտէն” հիւրանոցը, ուր ան կ'ապրի քանի մը շաբաթ: Ապա կ'այցելէ իր հայրենակից Էֆթեանին, որու հետ ծանօթացած էր տակաւին Պարիս եղած ատենը, եւ որը ներկայ է հոս իբրեւ վկայ: Էֆթեանի մօտ ան կը տեսնէ անոր քոյրը՝ տիկին Թերզիպաշեանը եւ ծխախոտավաճառ պարոն Թերզիպաշեանը: Ասոնք Թէհլիրեանի համար սենեակ կը փնտրեն եւ կը ծանօթացնեն զինքը Աբէլեանի հետ, որ կ'ապրի Աուգսբուրգէր փողոցը: Աբէլեանը ուրախ կ'ըլլայ, որ իր ապրած բնակարանին մէջ հայրենակից մը եւս սենեակ կը վարձէ. ու որովհետեւ Թէհլիրեան գերմաներէն չէր գիտեր, Աբէլեան պատրաստակամութիւն կը յայտնէ ամէն կերպ օգնելու իրեն: Աբէլեանի տանտիրուհին տիկին Շտէլլբաում սենեակ մը վարձու կու տայ Թէհլիրեանին մինչեւ մայիս: Թէհլիրեան կը փոխադրուի հոն ու կ'ապրի այսպէս, ինչպէս ամէն մէկ երիտասարդ. ան զխաւորաբար կ'աշխատի գերմաներէն սորվիլ եւ հետզհետէ կը ծանօթանայ այս կամ այն հայուն հետ: Ան քիչ մը մտազբաղ ու թախճոտ է, ուստի իր բարեկամները կը ջանան քիչ մը զուարճացնել զինքը եւ միեւնոյն ատեն պատեհ առիթ տալ՝ գերմաներէն սորվելու. ու երեքը միասին կը սկսին պարի դասեր առնել: Թէհլիրեան չէր ձգտեր կիներու հետ ծանօթանալ, ընդհակառակը, դուք արդէն իմացաք, թէ ինչպէ՛ս ան ազնուօրէն պարզ ու միամիտ ձեւով կը խօսէր կիներու հետ, ըստ երեւոյթին քիչ մը

զարկ տալու համար իր գերմաներենին, եւ թէ ինչպէ՛ս հոն ալ որոշ երկչոտութիւն կը ցուցնէր: Ասկէ դուրս, իր պարապ ժամերուն ան կը զբաղէր երաժշտութեամբ. ան կը նուագէ մանդոլին, կ'երգէ դժբախտ հայ ժոխովուրդին յատուկ թախծալի երգեր: Մէկ խօսքով, հետք մըն ալ չի տեսնուիր, թէ ան ուրիշ նպատակ մը կը հետապնդէ, քան սորվիլ գերմաներէն՝ բարձրագոյն դպրոցի դասընթացքին կարենալ հետեւելու համար: Իր ուսուցչուհին այստեղ արդէն հարցաքննուած է: Իր ըսելով՝ ամբաստանեալը արտաքոյ կարգի ջանասէր ու քիչ մը երկչոտ երիտասարդ մըն է: Վերջին աստենները սակայն ան սկսաւ հետզհետէ տեղի տալ ու այլեւս ի վիճակի չէր ինքզինքը ժողովելու: Ան դիմած էր հոգեկան հիւանդութիւններու մասնագէտ Պրոֆ. Կասիրերին, որովհետեւ իր վերնոտութեան բռնկումները նորէն սկսած էին կրկնուիլ: Պրոֆէտորը իրեն դեղ մը տուած էր, որ իր մտաւոր կարողութեանց վրայ տեսակ մը ընդարմացնող ազդեցութիւն կ'ընէր: Այնուամենայնիւ ան կը շարունակէր իր դասերը մինչեւ փետրուար 26ը, իսկ յետոյ մինակ կը կատարէր իր աշխատանքը, ամէն առաւօտ գերմաներէն դասագիրքէ մը սորվելով իր դասերը: Կարճ, ան հետեւողաբար կը ձգտէր իր նպատակին՝ ստանալու հոս իր բարձրագոյն ուսումը:

Հետաքրքրական է որ ան՝ ինչպէս կը յայտնեն բոլոր վկաները՝ իր սոսկալի ապրումներուն նկատմամբ խիստ վերապահ, խիստ սակաւախօս էր: Ով որ անսահմանօրէն խոր ապրում մը ունեցած է, ընդհանրապէս հաճոյքով չի խօսիր նման բաներու մասին. ու ներկայ պարագային մեր աչքին առջեւն է այն իրողութիւնը, որ Թէհլիրեան այդ խնդիրներու մասին առհասարակ գրեթէ չէր խօսեր Աբէլեանի, Թէրզիպաշեանի հետ: Թեթեօրէն կը յիշատակէր զանոնք այն ատեն միայն, երբ այդ բացարձակապէս անհրաժեշտ ըլլար, ինչպէս, օրինակի համար, Պրոֆ. Կասիրերի մօտ: Անգամ մըն ալ խօսեր է իր ուսուցչուհիին. դասի ատեն, երբ կտոր մը թարգմանելու միջոցին հանդիպէր են “ծննդավայր” բառին, ան ըսեր է. “Ես այլեւս ծննդավայր չունիմ. իմ մերձավորներս ամէնքն ալ կոտորուած են”: Մեծ մասով սակայն ան կը խօսէր իր միակ ընկերակցուհիին հետ, գոր լիովին կը հասկնար. տիկին Թէրզիպաշեանն էր այդ, որ նոյն սարսափները ապրած էր:

Այսպէտով, դուք կը տեսնէք ամէնուրեք որոշ զսպուածութիւն: Տեսնելով անգամ մը Դր. Լէպսիուսի գիրքը միեւնոյն բնակարանին մէջ ապրող Աբէլեանի ձեռքը, ան կը խլէ գայն ու կը գոչէ. “Հանգիստ ձգէ հին վերքերը. դո՛ւրս երթանք”:

Դուք, պարոններ, այստեղ այն մարդը չէք տեսներ, որ անընդհատ կառչած է այդ բաներուն, այլ այն, որ ընդհակառակը խոյս կու տայ անոնցմէ, ջանալով կարելի եղածին չափ քիչ խօսիլ, ու սակայն ներքուստ բնականաբար կրկնակի կը յուզուի:

Նոյն ատենները կը պատահի դէպք մը, որ արդէն ինքնին ընդունակ էր շանթի նման միտուելու այդ անդորր աշխատանքի մթնոլորտին մէջ: Այդ՝ հանդիպումն էր թուրքերէն խօսող երեք պարոններու հետ Հարդէնբերգ փողոցը. անոնցմէ երկուքը իրենց մէջտեղը գացող անձնաւորութեանը “փաշա” կըսէին:

Թէհլիրեան իր ուշադրութիւնը դարձուց անոր վրայ, դիտեց մարդը աւելի մօտէն, համեմատեց զինքը իր տեսած լուսանկարին հետ ու եկաւ հաստատ համոզումի մը. ակներեւ Թալէաթ փաշան

է այդ: Ան տեսաւ, որ երկու պարոններէն մէկը Թալէաթ փաշայի հետ մտաւ նոյն փողոցի թիւ 4 տունը, իսկ միւսը ակնածանքով հրաժեշտ տուաւ ու հեռացաւ: Ու Թէհլիրեան եկաւ այն համոզումին, թէ Թալէաթ փաշան հոն կը բնակի: Ասիկա ներկայ տարուան յունուարի կէսին էր: Հետաքրքրական է որ այդ դէպքին մասին Թէհլիրեան ոչ ոքի բան մը չյայտնեց. ան չէր ուզեր յուզուիլ, ան պահանջ չունէր խօսելու այդ բաներու մասին: Այս հանդիպումը իր մէջն իսկ յառաջ չբերաւ Թալէաթը սպաննելու որոշումը. ասորը համար ան բան մըն ալ չըրաւ: Ապրումը անցած էր հին դէպքերը նորէն հանգչեցան իր ներսը, եւ վրիժառութեան գաղափարը երեւան չեկաւ: Ան շարունակեց ապրիլ առաջուան պէս, մինչեւ որ այդ դէպքէն 5-6 շաբաթ ետքը տեսաւ երազ մը, մարմնապէս գրեթէ տեսլային երեւոյթ մը, թէ ինչպէ՛ս հոն դրուած է իր մօր դիակը, ինչպէս մայրը բարձրացաւ, ու որդին ըսաւ անոր. “Ես տեսայ Թալէաթը”: Ու մայրը պատասխանեց. “Դուն տեսար Թալէաթը ու չառի՞ր անկէ քու մօր, քու հօր, եղբայրներուդ եւ քոյրերուդ վրէժը: Դուն այլեւս իմ որդին չես”:

Ասիկա այն վայրկեանն է, ուր ան զգացումը ունեցաւ. “Այստեղ ես պէտք է գործեմ. ես կ’ուզեմ նորէն իմ մօրս որդին ըլլալ. ան չպիտի զիս մորժէ, երբ ես երկինք իր քովը երթամ. ես կ’ ուզեմ նորէն իր ծոցը գրաւել”: Այսպէս այդ երազը անցաւ արթնութեան, ինչպէս որ բժիշկները արտայայտեցին:

Յայտնի է, որ աժխոյժ արեւելցիներուն համար նման երեւոյթները բոլորովին տարբեր դեր կը խաղան, քան արեւմուտցիներուս համար, որոնք այդ բաները փիլիսոփայական եւ բժշկական աչքերով եր դիտեն: Յիշեցեք Սուրբ Գրքին պատմութիւնը, ուր ամէն առիթով կըսուի. “Ու երեւցաւ անոր հրեշտակը երազի մէջ”: Նման երեւոյթ մը, նման մարմնաւոր երեւոյթ մըն էր նաեւ այն, որ վճռական ազդեցութիւն ունեցավ Թէհլիրեանի վրայ : Ապա յաջորդ առտուն իսկ ան գործի կը սկսի, առանց իր հայրենակից Աբէլեանին մինչեւ անգամ խօսք մը ըսելու, կը գտնէ հայ ուսանողական միութեան նախագահը, որ լաւ գերմաներէն գիտէ, անոր օգնութեամբ կ’երթայ Հարդէնբերգ փողոց, որպէս զի այժմ բոլորովին գիտակցօրէն - եւ ոչ՝ ինչպէս պ. դատախազը պատկերաւոր կերպով ըսաւ՝ “մագնիսէ մը հոն քաշուելով”, - իրեն համար բնակարան մը վարձէ, ուրկէ կարենար հսկել Թալէաթին: Այդպիսի բնակարան մը ան կը գտնէ Հարդէնբերգ փողոցը, թիւ 37, առաջին յարկին մէջ:

Ասոր կու գայ միանալու այն, որ՝ նկատի ունենալով իր հիվանդութիւնը, իրեն պիտք էր լոյս ու արեւոտ սենեակ մը, որ՝ ատկէ գատ՝ ունենար ոչ թէ գազ այլ ելեկտրականութիւն: Որովհետեւ այդ ամէնը կարելի էր գտնել Հարդէնբերգ փողոցի յիշուած տանը մէջ, ուստի ան երազէն օր մը ետքը, մարտ 3ին, կը վարձէ բնակարանը: Բայց վերջինս տակաւին ազատ չէր, այնպէս որ ան կրնայ փոխադրուիլ հոն միայն շաբաթ օրը մարտ 5ին. իսկ մինչ այդ երկու- երեք օր ստիպուած կ’ըլլայ մնալու հին բնակարանին մէջ: Այսպէս, նոր բնակարանը վարձելէ ետք, ան կու գայ Աբէլեանի մօտ ու կըսէ. “Լսէ, շաբաթ օրը պիտի փքխադրուիմ նոր բնակարանս”: Ան կը գոհէ բնակարանին մէկ ամսուան վարձը, որ վճարած էր նախկին բնակարանին համար: Ան կ’ընէ այդ գոհաբերութիւնը՝ նոր բնակարանը ստանալու համար: Ան կը խորհի. “Ես որոշած եմ սպաննել Թալէաթը, ուստի պէտք է մօտ ըլլամ անոր”: Այդ վայրկեանին ան կ’ուզէր սպաննել Թալէաթը:

Բայց այստեղ ես էապես կը տարբերիմ պ. աւագ դատախազէն հետեւեալին միջ. -Պոք լսեցիք որ պ. նախագահը՝ամբաստանեալին մէկ արտայայտութեանը վրայ՝ անոր երկու անգամ միեւնոյն հարցումը ուղղեց, որովհետեւ ամբաստանեալը առաջին անգամ չհասկցաւ: Թեւիլրեանը պատասխանեց, որ երբ ինքը արդէն նոր բնակարանն էր, միտք մը ծագեցաւ իրեն մէջ թէ՛ չէ՞ որ ինքը քրիստոնէայ է - հնագոյն քրիստոնէութիւն մը հայերու սեփականութիւնն է, - ու չէ՞ որ գոյութիւն ունի պատուիրան մը՝ մի սպաններ: Ու ահա իր անձին անդրադարձած, ռեւէ բռնութիւն գործելու բոլորովին անտրամադիր այդ պատանիին մէջ կ'անհետանայ քիչ ատեն առաջ ընդունուած որոշումը: Ապա կը սկսի այն տատանումը, զոր ինքը այնպէս յատկանշօրէն կը պատկերացնէ. “Երբ ինքզինքս գէշ կը զգայի, ու նորէն կու գային այն սարսափելի մտապատկերները, այդ պահուն կը վճռէի սպաննել Թալէաթը. բայց երբ նորէն կ'առողջանայի եւ տէր կը դառնայի իմ զգացումներուս, այն ատեն ինձ համար պարզ կըլլար, որ պէտք չէ սպաննել զինքը”: Անհաւատալի չեն ամբաստանեալին այս բացատրութիւնները այդ ըսին բոլոր բժիշկները. “այս մարդէն կարելի չէ բան մը դուրս քաշել”. ու նոյնը կրնանք ըսել ձեզ մենք՝ երեք պաշտպաններս, այն, ինչ որ ամբաստանեալը չի կրնար ըսել մաքուր խիղճով, չըսեր: Խիստ դժուար է թափանցել իր հոգեկանին մէջ, մանաւանդ այն ատեն, երբ խնդիրը կը դառնայ այն բաներու շուրջը, որոնք կրնային ի նպաստ իրեն խօսիլ: Ուստի պէտք է հաւատք ընծայէք այն ամենին, ինչ որ ան կըսէ:

Սակայն արտաքին պարագաներն ալ կը խօսին յօգուտ այն բանին, որ Թեւիլրեանը, նոր բնակարանը փոխադրուելէ ետք, այլեւս չէր հետեւեր իր առջուան գաղափարին՝ սպանութիւն գործելու նկատմամբ: Այդ ամբողջ ատենը ան ոչինչ ըրած չէ նոյն ուղղութեամբ: Օրինակի համար, ան երբէք չհարցուց դոնապանին՝ թէ Թալէաթը ո՞ր ատենները տունէն կ'ելլէ. չհարցուց մինչեւ անգամ, թէ Թալէաթը իրապէս հո՞ն կը բնակի: Կարճ, ան կը շարունակէր ապրիլ ու աշխատիլ սովորական եղանակով – կը վարժուէր գերմաներէնի մէջ, կը նուագէր. որովհետեւ Պրոֆ. Կասիրերի տուած դեղերէն ինքզինքը թոյլ զգալով՝ ընդհատած էր իր դասերը ուսուցչուհիին մօտ, այժմ հեռաձայնով կը յայտնէ վերջինիս, թէ կը յուսայ քանի մը օրէն կարենալ վերսկսելու զանոնք: Այն առաջին տաս օրուան ընթացքին կարելի չէ նկատել իրեն կողմէն ու եւ է պատրաստութիւն ընդդէմ Թալէաթի:

Ու ահա կու գայ մեծ օրը – մարտ 15ը: Իր տանտիրուհին ցուցուց, թէ նոյն առտուն ան խմեց իր թէյը՝ գործածելով քիչ մը աւելի կոնեակ, քան սովորաբար: Կոնեակը գնուած էր մէկ օր առաջ, այնպէս որ՝ զայն գործածելու նկատմամբ՝ պէտք է հաշուի առնել նաեւ այդ մէկ անցած օրը: Սպասուիին վերջը բերաւ շիշը, որմէ խմուած էր մէկ քառորդը կամ մէկ երրորդը, եւ ոչ մէկ երրորդ լիթր: Այս է իրողութիւնը, որ վերջ ի վերջոյ պարզուեցաւ: Իրազեկ Շտէօրմերի այստեղ արտայայտած այն գաղափարը՝ թէ ամբաստանեալը խմելով ուզէր է ինքն իրենը քաջութիւն ներշնչել, կատարեալ մոլորութիւն մըն է: Ան կը խմէր կոնեակը թէյի հետ, որովհետեւ ստամոքսի անհանգստութիւն կը զգար: Իսկ կոնեակը կը լեցնէր պզտիկ գաւաթի մը մէջ՝ գիտնալու համար այն քանակը, զոր պիտի խառնէր թէյին. ան կը հետեւեր իր առողջութեան: Այն տեսակէտը, թէ նոյն առտուն ժամը 9ին ան կոնեակի միջոցով կ'ուզէր ինքնիրենը քաջութիւն ներշնչել, ոչ մէկ

քննադատության կը դիմանայ: Իրապէս, ինչպէ՞ս կրնար ան գիտնալ, թէ հէնց այդ օրը Թալէաթը պիտի երեւնայ պատշգամին վրայ ու յետոյ փողոց պիտի ելլէ, երբ 10 օր հանդիպած չէր իրեն: Ինչպէ՞ս կրնար ան նախատեսնել այդ: Այստեղ կարելի չէ ճշդել ո եւ է կապակցութիւն: Ու ահա ժամը 11ին ան կը տեսնէ Թալէաթը պատշգամին վրայ՝ արեւի մէջ կեցած: Ինքն ալ բացաւ պատուհանը: Ան կ'երթայ ու կու գայ սենեակին մէջ, կը կարդայ ու կը թարգմանէ իր գերմաներէն դասագիրքէն: Այդ վայրկեանին անշուշտ արիւնը կը զարնէր իր գլուխը, երբ կը տեսնէր հոն, պատշգամին վրայ, երեւութապէս երջանիկ մը, որ հեշտանքով արեւին ճառագայթները կը վայելէր: Բայց այս վայրկեանին եւս ան տակաւին չընդունեց Թալէաթ փաշան սպաննելու որոշումը: Թալէաթը պատշգամէն նորէն սենեակ կը մտնէ, ու խնդիրը այն օրուան համար, ըստ երեւոյթին, այդքանով ալ լմնցած էր: Բայց ահա քառորդ ժամ մը ետքը Թալէաթը յանկարծ տունէն կ'ելլէ: Թէկիբեանը կանգնած է պատուհանին առջեւ ու կը տեսնէ այդ: Ու ահա կը խուժեն անոր վրայ ջարդերու յիշողութիւնները, ան կը մտաբերէ իր ծնողքը, կը վազէ դէպի պայուսակը, կը հանէ ատրճանակը, կը նետէ վրան վերարկուն, կը դնէ գլխարկը, դուրս կը թռչի փողոց, կը նետուի դէպի Թալէաթը ու կը կրակէ: Թէ ինչպէ՞ս է տեղի ունեցեր այդ, առջեւէն թէ ետուէն է կրակեր - ատիկա զիս չի հետաքրքրեր: Այդ ամէնը, պարոններ, դատախազի տեսակէտով կանխաւ մտածուած է եղեր: Ես անձնապէս կը խորհիմ, թէ այդ վայրկեանին զգացումներու ամբողջ փոթորիկ մըն է անցէր այդ մարդու մէջէն:

Յետոյ ան չի նետեր, ինչպէս պ. դատախազը կ'ըսէ, իր ատրճանակը՝ նման այն մարդուն, որ կ'ուզէ հեռացնել իրմէ ամէն կասկած, այլ կը թողու որ ատրճանակը վար իյնայ իր ձեռքէն՝ նման այն մարդուն, որ կ'ըսէ. “Այժմ ես կատարեցի իմ պարտքս”: Ան, բնականաբար, կը փախչի՝ ազատելու համար անցորդներէն, բայց իսկոյն կը բռնուի: Դէպքէն հինգ երկվայրկեան ետքը անկ' ըսէ. “Գերմանացիները հոս գործ չունին. ան օտար, ես օտար”: Ան կը կրկնէ ասիկա: Ես բնաւ տրամադիր չեմ այս ամբողջ անցուդարձին մէջ խորհրդածուած բան մը փնտրելու:

Պարոններ, այս է դէպքը, այս է դէպքին նախապատրաստութիւնը, այս է մարդը. ու ես, իմ կարգիս, նոյնպէս կու գամ իրաւաբանօրէն պատասխանելու այն հարցին թէ՛ ինչպէ՞ս պէտք է դատել արարքը:

Ես կ'ուզեմ առայժմ մէկդի դնել գլխաւոր հարցը՝ պատասխանատու՞ թէ ոչ: Ապա ես բնականաբար հարցնելու եմ, քանի որ սպաննելու դիտաւորութիւնը կատարելապէս պարզ է՝ արդէօք դէպքը խորհրդածութեա՞մբ է տեղի ունեցեր:

Պարոններ, բան մը այստեղ պ. դատախազը պէտք եղածին չափ պարզ կերպով չըշտեց: Չըսուիր, ինչպէս պ. դատախազը հոս անգամ մը համառօտակի յիշեց՝ “Ով որ դիտաւորեալ կերպով կը սպաննէ...”, այլ այսպէս է օրէնքին տրամադրութիւնը. “Եթէ մարդասպանը կատարած է սպանութիւնը խորհրդածութեամբ”: Ու ահա պետութեան բարձրագոյն ատեանը – պ. նախագահը անշուշտ այդ պիտի ըսէ ձեզի վերջին պահուն իր խրատումներուն մէջ – իր որոշումներու ճիշտ հատորին մէջ շատ ազդու կերպով կը մատնանշէ, թէ այս խնդրին նկատմամբ գիտակից տարբերութիւն մը կայ մեր այսօրուան պատժական օրինագրքին եւ նախկին պրուսականին

միջեւ, որմէ ծագած է առաջինը, ուր խօսք կ'ըլլար՝ թէ ոճիր մը գործելու որոշումը արդեօք խորհրդածութեամբ տրուած է: Համաձայն այս նախկին իրավունքին՝ այն պարագաներուն, երբ որոշումը 14 օր առաջ տրուած էր ու յետոյ իրագործուած, կարելի էր առանց այլեւայլութեան ըսել, թէ ոճիրը ընդհանրապէս խորհրդածութեամբ կատարուած է: Ատիկա այսօր փոխուած է: Ուղղակի հակառակ նախկին օրէնքին տրամադրութեանց՝ բարձրագոյն աստեանը ամենայն վճռականութեամբ կը բացատրէ, թէ այժմ ոճիրի կատարման ժամանակն է որ որոշիչ կը նկատուի: Ուրեմն կարելոր չէ թէ ե'րբ է տրուած որոշումը: Այսպէսով, այն խնդրին վերաբերմամբ՝ թէ տեղի ունեցած է արդեօք ինքնին խորհրդածութիւն մը, մենք պետք է կշռենք ու պարզենք՝ արդեօք ան գոյութիւն ունէ՞ր սպանութեան կատարման պահուն, թէ կրքի, զգացումներու, մտապատկերներու փոթորիկ մըն էր ամբաստանեալին մէջ:

Ասոր պատասխանը ես բնաւ չեմ ուզեր տալ. ան կը գտնուի, իմ տեսակէտով, գործին բնութեանը մէջ:

Ես կ'ուզեմ միայն մատնանշել այն, որ պետութեան բարձրագոյն աստեանը բացառիկ պայծառութեամբ բացատրած է (հատոր 42, էջ 261), թէ ի'նչ է խորհրդածութիւնը եւ ի'նչ է յոյզը:

Պարոններ, ես ստիպուած էի արծարծել այստեղ բարեխղճութեամբ նաեւ խորհրդածութեան խնդիրը, թէեւ մինչեւ որոշ աստիճան հակառակ եմ ասոր, որովհետեւ մենք, պաշտպաններս, ամբողջ սրտով, կատարեալ համոզումով պիտի խնդրենք ձեզ՝ յանցաւորութեան հարցին ժխտողական պատասխան տալ:

Դուք գիտէք – պ. նախագահը նոյնպէս տակաւին պիտի ըսէ ձեզ այդ - առաջին հարցումը կը սկսի հետեւեալ խօսքերով. “Յանցաւոր է ան...”: Անպատասխանատու վիճակի, հոգեկան գործունէութեան հիւանդագին խանգարման եւայլնի մասին առանձին հարցումներ չպիտի տրուին, այլ “յանցաւոր” բառին մէջ կը պարունակուի պատասխանը այն հարցումին, թէ դուք ամբաստանեալը՝ իր արարքի վայրկեանին՝ պատասխանատու կը նկատուէ՞ք թէ ոչ:

Ասոր մասին մենք արդէն իրազեկներու ամբողջ շարք մը լսեցինք:

Հոգեկան գործունէութեան խանգարման խնդիրը օրէնքին մէջ այնպէս կ'արծարծուի թէ ազատ կամքը գոյութիւն չունի: Ու իրապէս, պարոններ, խիստ հետաքրքրական էր տեսնել, թէ ինչպէս իրազեկները այստեղ, գրեթէ մեր առջեւ, կը մշակէին իրենց տեսակէտները, բացառութեամբ պ. գաղտնի խորհրդական Դր. Շտէօրմէրի, որ առջուրնէ արտայայտած էր իր վերջնական տեսակէտը գրաւոր ցուցումի մը մէջ: Անկէ զատ մնացածները առաջին անգամը ըլլալով կը մօտենային խնդրին եւ իրեք իրենց հետ իսկ կը պայքարէին, դուք ալ անշուշտ այս տպավորութիւնը պիտի ստացած ըլլաք: Պ. Շտէօրմէր, մեր շատ փորձառու դատարանային բժիշկը, բայց այնուամենայնիւ ոչ հոգեբոյժ, եկած էր այն համոզման՝ թէ հոս մենք գործ ունինք պարզ մարմնական վերնոտութեան հետ, ու այդ համոզման վրայ ան կառուցած էր իր ցուցումը: Չէ՞, դուք ամենքդ ալ գիտէք, որ վերնոտութիւնը կ'ազդէ մինչեւ որոշ աստիճան հոգեկան գործունէութեան վրայ, սակայն աւելի կամ նուազ սահմանափակ չափով: Ու ահա պ. Շտէօրմէր

կը հարցնէ. այստեղ վերնոտութիւնը այս տեսակէ՞ն է, որ կ'ազդէ հոգեկանին վրայ այնպէս, որ ազատ կամքը բոլորովին կը վերնայ: Պատասխան. մեծ չափով նուազած, բայց ոչ բոլորովին վերացած:

Այնուհետեւ պ. Լիպման շատ նրբամիտ եղանակով ներկայացուց ուրիշ տեսակետ մը. այն է թէ վերնոտութիւնը այստեղ մարմնական չէ, ոչ թէ կը հանգչի կեդրոնական նեարդային սիսթեմի եւ առանձին նեարդերու հիւանդացման վրայ, այլ թէ խնդիրը այն է որ հզօր հոգեկան տպաւորութիւն մըն է եղեր պատճառը ներկայ մարմնական, վերնոտութեան նմանող վիճակին: Որոշ չափով անցած դէպքերու, հայրական տան պատկերին տպաւորութիւնն է, որ հիւանդ դարձուց ամբաստանեալին մարմինը: Պ. Պրոֆ. Լիպման կըսէ, թէ ամբաստանեալը այլեւս մինչեւ որոշ աստիճան բռնուած էր այս գաղափարէն, այն յիշողութենէն եւ այն ամէնէն, ինչ որ ատկէ կը բխէր, բռնուած էր նաեւ իր մօր երեւնալէն եւ անոր պատուերէն: Լիպման կը յայտարարէ, թէ Թեիլիբեանը ապրած է մշտական ծանրութեան մը տակ, թէ ան ինքզինքը գէշ կը զգար, երբ կը կենդանանային յիշողութեան պատկերները, դիակներու դաշտին հոտը, թէ ան եղած է ծանր ճնշումի մը, բռնադատութեան մը տակ: Ան հոգեկան հիւանդ մըն է՝ պատասխանատուութեան ամենանուազ կարողութեամբ:

Բայց այս զգուշաւոր, տարիքոտ հոգեբոյժը կու գայ այն կարծիքին, թէ ազատ կամքի կատարեալ բացակայութիւն մը գոյութիւն չունի: “Առնուազն, - կըսէ ան, - առնուազն իմ մասիս կըսեմ, որ այս վերջին եզրակացութիւնը չեմ կրնար հանել”: Ատով ան կը ցուցնէ, թէ՛ իբրեւ բժիշկ ինքը ստիպուած է հաշուի առնել դրական հետեւանքները: Ան չի կրնար ըսել. “Ես հաշուի կ'առնեմ հեռու գացող կարելիութիւններ”: Ան պէտք է ունենայ դրական բժշկական իրողութիւններ, որոնց կը յենու. ուստի՝ իբրեւ հոգեբոյժ՝ ան չի կրնար այդ ըսել: Սակայն զգոյշ կերպով ան կը կցէ. “Իմ մասիս՝ ես չեմ կրնար այս վերջին եզրակացութիւնը հանել, թէ եւ փոքրագոյն բան մը միայն կը զատէ կացութիւնը ազատ կամքի կատարեալ բացակայութեան սահմանէն”:

Պրոֆ. Կասիրէր էականին մէջ միացաւ անոր:

Մնացած իրազեկները եւս մեկդի թողուցին պ. Շտեօրմերի այն տեսակետը, թէ այստեղ մենք գործ ունինք վերնոտութեան հետ, եւ թէ այդ վերնոտութեան միջոցով է որ կրնար ներգործութիւն մը տեղի ունենալ հոգիին վրայ: Անոնք ամէնքն ալ կու գան այն տեսակետին, թէ հոգեկանը, հոգեկան յոյզն է յառաջընթացը, ու Պրոֆ. Կասիրէր կը խօսի “գիտակցութեան երազային պղտորում”ի մը մասին. ան կը մատնանշէ, որ ամէն անգամ, երբ ամբաստանեալը ինքզինքը գէշ կը զգար, յիշողութիւնները նորէն կու գային եւ չափազանց զօրաւոր կ'ըլլային. ու կ'եզրափակէ. գործին մէջ դէր խաղացած է նաեւ հիւանդութեան էական ազդակ մը, որ շատ մօտէն կը սահմանակցի 51րդ յօդուածին (այն յօդուածն է, որ կը խօսի ազատ կամքի բացակայութեան մասին). տարբերութիւնը մեզ հոգեբոյժներուս համար նուազագոյն է: - Ատոր վրայ ան կ'աւելցնէ, թէ ինքը՝ որպէս հոգեբոյժ՝ չի համարձակիր աւելին ըսելու, որովհետեւ այն ատեն դուրս կ'ըլլէր իր շրջանէն ու կը մտնէր դատաւորի, իսկ ներկայ պարագային՝ երդուեալներու շրջանը: Իմ պաշտօնակից Վերթաուերի հարցումին պատասխանելով ան կ'ըսէ, կարծեմ՝ բառացի կերպով, հետեւեալը. “Ես չեմ կրնար

ատոր բժշկականօրէն պատասխան տալ: Եւ առհասարակ, - կ'աւելցնէ ան, - ամբաստանեալին վիճակը սպանութիւնը գործելու վայրկեանին կարելի է միայն կռահել”:

Ապա կու գայ կրտսեր սերունդը (ու ասիկա հոգեբանօրէն անհետաքրքրական չէ) - պ. Պրօֆ. Ֆօրստեր, շատ ականաւոր մասնագէտ մը՝ որպէս հոգեբոյժ: Սկիզբը այն կը միանայ Պրոֆ. Լիպմանի ու Պրոֆ. Կասիրերի տեսակէտներուն: Բայց յետոյ, թէեւ ան պատերազմի ատեն իր ձեռք բերած փորձառութիւններու, պատերազմէն բխած հոգեկան հիւանդութիւններու եւ նման երեւոյթներու հիման վրայ շատ սկեպտիկ դարձած է եւ, ինչպէս ինծի առաջ ալ յայտնի էր, կը պատկանի այն բժիշկներու թուին, որոնք մեծ դժուարութեամբ ընդունելի կը նկատեն 51րդ յօդուածին կիրառումը, - ներկայ դէպքի մասին ըսաւ. “Այստեղ ծանր հիվանդութիւն մը իր բաժինը ունեցած է”:

“Հոգեբոյժին համար շատ դժուար է պատասխանել այս վերջին հարցերուն, որովհետեւ մենք հոգեբոյժներս, որպէս բնագէտներ, առհասարակ չենք կրնար ճանչնալ ազատ կամք: Բայց ճիշդ այստեղ է որ բառերու ամենանորբ տարբերութիւնները խնդրի առարկայ կը դառնան: Դժուար խնդիր մըն է, թէ ազատ կամք բարձելու հարցումին արդեօք հաստատակա՞ն թէ ժխտական պատասխան պէտք է տալ: Պիտի ըսէի թէ 51րդ յօդուածին առաջադրութիւնը, կամքի ազատութեան բարձումը այստեղ կը պատշաճին: Ես շատ տրամադիր պիտի ըլլայի ատոր: Ամէն պարագայի մէջ ես ունիմ հիմնաւորած տարակուսանք”:

Ուշադրութիւն դարձուցէք ճիշդ այս վերջին բառին. ես շուտով կ'անդրատառնամը անոր:

Յետոյ եկաւ նաեւ նեարդա՞յին հիւանդութիւններու բժիշկ Դր. Հակէ, որուն քով ամբաստանեալը իր հիւանդութեան մասին խորհրդակցելու գացած էր տակաւին առաջ, 1921ի փետրուար 4ին: Ընդհանրապէս ան միացաւ երեք նախորդ իրազեկներու տեսակէտներուն. սակայն իր խօսքին վերջը ըսաւ. “Ես աւելի հեռու կ'երթամ. հոս յոյզէ բռնուած անհատի մը գործողութիւն է: Մարդասպանը կատարեր է գործը իր մտապատկերներու ճշումին տակ: Ես զինքը բոլորովին անպատասխանատու կը նկատեմ”:

Պ. դատախազը, իրօք, որոշակի կերպով ընդունեց, որ իրազեկներու ցուցումներուն իմ ներկայացուցած այս պատկերը բացարձակապէս ճիշդ է::

Ինչպէս ըսի – ու դուք կը տեսնէք այդ - կրտսեր սերունդը թէեւ Պրոֆ. Ֆօրստեր արդէն 42 տարեկան է քիչ մը աւելի հեռու կ'երթայ, երէց սերունդը քիչ մը աւելի զգոյշ է: “Մոսկալի դժուար բան մըն է. մենք ամենքս ալ երկիւղ կը կրենք աւելին ըսելու, քան այն ինչի պատասխանատուութիւնը մենք, իբրեւ բժիշկներ, կրնանք վրանիս առնել: Սակայն ատոր հետ մէկտեղ մենք նաեւ չենք ուզեր ոչինչ կրճատել: Տարակուսանքներ կրնան գոյութիւն ունենալ”:

Ասիկա կ'ըսեն նոյնպէս պ. պ. երէց հոգեբոյժները: Ասով ամբողջ պատասխանատուութիւնը ձեզ վրայ կը գլտորուի, եւ իրաւամբ: Պարոններ, ես կրնամ ընդհանրապէս դիտել, որ բժշկական իրազեկը, ինչպէս ամէն մէկ իրազեկ, միշտ ալ միայն օգնականն է դատաւորին: Ան օգնելու է մեզի՝ կազմելու մեր վճիռը: Բայց դատաւորն է վերջին ատեանը:

Ասով հանդերձ գործը այստեղ քայլ մըն ալ յառաջկ'երթայ: Բարձրագոյն ատեան մը եւս՝ պետութեան զինուորական ատեանը ասոր մասին երկու շատ հետաքրքրական որոշում տուած է: Իր որոշումներու 14դ հատորին մէջ ան ուղղակի կ'ըսէ.

“Պատժական օրինագրքին 51դ յօդուածի պարագային, բժշկական իրազեկներուն պաշտօնը կը լմննայ անով, որ անոնք կը ներկայացնեն ու կը պատճառաբանեն իրենց կարծիքը հոգեկան հիւանդութեան մասին. խակայն անոնք չեն որ պիտի որոշեն՝ թէ այդ հիւանդութեան պատճառով ազատ կամքը ի բաց կը հանուի, կամ թէ՛ ինչ որ նոյն նշանակութիւնը ունի՝ ամբաստանեալը իր արարքին համար պատասխանատու չէ, կամ դատապարտութիւնը կարելի չէ: Որոշումը ասոր մասին միայն դատարանին գործն է:”

Նման ձեւով կ'արտայայտուի նաեւ 17դ հատորը, որը կ'ըսէ.

“Բժշկական իրազեկը քննելու է թէ հոգեկան կացութիւնը արարքին պահուն հիւանդո՞ւտ էր թէ ոչ: Պատասխանատու ըլլալու խնդիրը ինքնին իրաւա- գիտական է եւ դատաւորն է, որ որոշելու է զայն:”

Բայց իրապէս մենք պէտք չունինք նման որոշումներու, որովհետեւ, ինչպէս արդէն ըսած եմ, դուր առհասարակ ազատ էք ձեր որոճումին մէջ: Մինչեւ իսկ հոգեկան հիւանդութեան վերաբերմամբ իրազեկներու կարծիքը երբեք չի կրնար ձեզ բռնադատել:

Կամքի ազատութեան հարցին, որ հոս նկատողութեան կ'առնուի, կը միանայ սակայն մասնաւոր բան մը եւս, որ արգելք կ'ըլլայ բժշկական իրազեկներուն՝ որպէս այդպիսիներուն՝ պատասխանել այդ հարցին, եւ զոր մատնանշեց իրազեկ Պրոֆ. Ֆօրստեր այդ ան է որ բժշկական գիտութիւնը չի ճանչնար առհասարակ կամքի ազատութիւն:

Մարդկային կամքին ազատութիւնը, ինչպէս յայտնի է, այն խնդիրներէն է, որոնք ամէնէն շատ վիճաբանութեան առարկայ եղած են ոչ միայն փիլիսոփայութեան, այլեւստուածաբանութեան մէջ: Այս խնդրին մասին, որուն նկատմամբ անհնարին է փորձեր կատարել, մեր պատժական օրինագիրքը բնականաբար ոչ մէկ վերաբերում կ'ընդունի: Ազատ կամքի սկզբունքը, զոր իբրեւ հիմ ընդունած է այդ օրինագիրքը, առնուած է գործնական կեանքի դիտողութենէն: Օրենքը այն ենթադրութիւնը կ'ընէ - եւ պէտք է որ ընէ ի շահ իրաւակարգին – թէ հասուն եւ մտաւորապէս առողջ մարդը պէտք եղած չափով կամքի ուժ ունի՝ զսպելու համար պատժելի գործողութիւններ կատարելու մղումները եւ գործելու համար՝ համաձայն ընդհանուր իրաւագիտակցութեան:

Այժմ ես կը վերադառնամ այն բանին, որու մասին ասկէ առաջ խնդրեցի որ յիշէք: Պրոֆ. Ֆօրստեր, իր անձնականի մասին ալ աւելի հեռու երթալով, ըսաւ. “Ամէն պարագայի մէջ՝ գոյութիւն ունի հիմնաւորված տարակուսանք”: Ու ահա ես կը շեշտեմ ամենայն զօրութեամբ, որ պետութեան բարձրագոյն ատեանը բազմաթիւ որոշումներու մէջ ըսած է, ինչ որ ինքնըստիներան հասկնալի է, թէ հարցը երբեք կարելի չէ այսպէս դնել.

“կա՞յ այստեղ դրականապես այնպիսի խանգարում մը, որ արգելք ըլլար կամքի ազատութեան”, այլ պէտք է հակառակ կողմէն գալ դրական համոզման, թէ “այս մարդը լիովին պատասխանատու է”: Ամենաթոյլ տարակոյսն իսկ, թէ սպանութեան վայրկեանին ազատ կամքը իրապէս գոյութիւն է ունեցեր, այդ տարակոյսը այն արդիւնքը պէտք է ունենայ, որ ամբաստանեալը պէտք է անպարտ արձակուի: Եթէ պահանջուէր, որ դատավճիռը պատշառաբանուած ըլլար, այն ատեն չպիտի բաւեր բացասական ճշդումը՝ թէ երեւան եկած չեն այնպիսի պարագաներ, որոնք տարակուսելի կրնային դարձնել ազատ կամքը, այլ անհրաժեշտ պիտի ըլլար հաստատել հակառակ ձեւով, այն է թէ՝ “այս մարդը պատասխանատու էր”:

Ու ինձի կը թուի, պարոններ, թէ պետութեան բարձրագոյն ատեանը տուած է ուղղութեան թելը նաեւ իրապէս գլխաւոր հարցին մէջ՝ թէ ե՞րբ գոյութիւն չունի ազատ կամքը. եւ ան ըրած է խիստ յստակ կերպով, աւելի յստակ քան բժիշկները, որոնք առհասարակ չեն ճանչնար կամքի ազատութիւնը:

Բարձրագոյն ատեանի մէկ որոշումին մէջ հետեւեալը կըսուի բառացիօրէն. “Ազատ կամքը կը պակասի այն ատեն, երբ հիւանդոտ խանգարման հետեւանքով որոշ մտապատկերներ կամ զգացողութիւններ կամ օտար ազդեցութիւններ այն աստիճան հզօրապէս կ’իշխեն կամքին վրայ, որ անոր որոշումը բանական կշռադատումներու միջոցով անհնարին կը դառնայ”:

Ուրեմն, երբ հոգեկան ուժերու ամբողջութիւնը, ամբողջ Ես’ն է ստեղծիչը գործ մը ընելու որոշումին, այն ատեն միայն կարելի է գործին պատասխանատուութիւնը վերագրել Ես’ին՝ որպէս այդ ամբողջութեան:

Դարձեալ. “Եթէ մէկուն վրայ լիովին իշխող հզօրագոյն գաղափարն է, որ ինքը մինակ յառաւ կը բերէ արարքը, իսկ բոլոր ուրիշ ազդակները կը մնան շուքին մէջ, այդ պարագային այլեւս ամբողջ Ես’ը չէ, այլ անոր մէկ հիվանդոտ մասն է, որ կը կատարէ արարքը”:

Ըլլալով այս տեսակէտէն՝ ըսեք հիմայ. կրնա՞ք վստահօրէն պնդել թէ ամբաստանեալը այն վայրկեանին, երբ տեսաւ Թալէաթ փաշային տունէն ելլելը եւ նոյն վայրկեանին տուաւ որոշումը, առաւ ատրճանակը պայուսակէն, փողոց նետուեցաւ ու յարձակեցաւ անոր վրայ – կրնա՞ք պնդել թէ նոյն պահուն ան կատարելապէս ի վիճակի էր ի մի ժողովելու իր բոլոր հոգեկան ուժերը՝ ընդունելու համար որոշում մը – կամ թէ իր մեռած մայրը չէ՞ր միայն եւ իր զարհուրելի մտապատկերները, յիշողութիւնները իր խոշտանգուած ժողովրդի մասին եւ ուրիշ նման բաներ, որոնք կը դառնային իր գլխուն մէջ եւ դրին զէնքը իր ձեռքը: Ես անհնարին կը նկատեմ, թէ կարելի ըլլար դրականապէս հակառակը պնդել: Բժիշկները դժուարին կացութեան մէջ ձեզ մինակ կը ձգեն, անոնք ձեզ վրայ կը թողուն պատասխանատուութիւնը: Անոնցմէ երկուքը կ’ըսեն “ոչ, կարելի չէ ճշդել թէ ան պատասխանատու էր”:

Կը կարծեմ թէ ըսածս պիտի բաւէ, որպէսզի դուք այս անսահման դժուարին խնդրին մէջ դիրքութեամբ կարենաք կարենաք որոշել ձեր բռնելիք դիրքը. ըրովհետեւ ես գիտեմ թէ ընդհանրապէս կրնան ըսել. “Այնուամենայնիւ ցաւալի ու ձախող բան մըն է, որ մէկը

հիւրընկալուած էր գերմանական հողին վրայ ու ահա այժմ կը սպաննուի”։ Մոր այս ժամանակին մէջ, ուր ամենուրեք պայքարներ տեղի կ’ունենան, ուր այսօր ալ տակաւին հայերու եւ թուրքերու միջեւ կռիվնորը կը շարունակուին, ու ամէն տեղ արիւն կը հոսի - արդէն պ. դատախազը ինքը եւս մատնանշեց այդ - այս պայմաններու մէջ նման բաներու հետ աւելի շուտ կարելի է հաշտուիլ։ Ամէն մարդ այն զգացումը պիտի ունենայ, է՝ յամենայն դէպս Թալէաթի կառաւարութեան միջոցով է որ թափեցաւ արիւնի ամբողջ ծով մը՝ առնուազն մէկ միլիոն հայերու - երեխաներու, կիներու, ծերերու եւ քաջ ու կարող այրերու. եւ եթէ Հարդէնբերգ փողոցին մէջ ատոր մէկ կաթիլ արիւն եւս միացաւ, մենք պիտի մխիթարենք մեզ անով, թէ մեր ճակատագիրն է, որ այսպիսի ահաւոր ժամանակ մը կ’ապրինք։

Ես շատ հեռու եմ անկէ, որ հոս վերջնական վճիռ մը տամ մարդ - Թալէաթի մասին։ Ինչ որ կարելի էր առարկայօրէն ըսել, ես ըսի սկիզբը։ Սակայն բան մը եւս կ’ուզեմ ըսել. անշուշտ անեւս, իր կարգ մը ընկերներու պէս, կը ձգտէր ոչնչացնել հայ ժողովուրդը՝ ստեղծելու համար զուտ թուրքական մեծ պետութիւն մը. անշուշտ, ասոր համար ան գործածեց միջոցներ, որոնք մեզ եւրոպացիներուս անհանդուրժելի կը թուին - անարդարութիւն՝ թէեւ, երբ կ’ըսուի, թէ Ասիոյ մէջ, ուր կեանքը աւելի վար կը գնահատուի, նման սարսափները կարելի է ըմբռնել. չէ՞ որ արդէն նոյն Ասիոյ մէջ կ’ապրին տարբեր աշխարհայեցողութիւններու ներկայացուցիչներ, եւ ամէնէն առաջ բողոքայականներ, որոնք մասնաւոր գործով կը խնայեն մարդը եւ մինչեւ իսկ անասունը։ Բայց ես այնուամենայնիւ չեմ ուզեր, նկատի ունենալով աւելի բարձր տեսակետ մը, անհատապէս պատասխանատու բռնել այն մարդը, որ պառկած է հողին տակ։ Անոր նոյնպէս կը պատշաճի այն, ինչ որ ըսած են երկու հանճարեղ ֆրանսացիներ, Գիւստավ Լըբօն եւ Անրի Բարբիւս , համաշխարհային պատերազմին սարսափելի երեւոյթներու մասին. - Առանձին գործիչներու ետեւ կանգնած են ոգիներ, դէտեր, որ կը վարեն զիրենք. անոնք միայն գործիքներ են իրաւացի կամ անիրաւացի գաղափարներու եւ զանգուածային ներծնչումներու, որոնք այս ու այն կողմ կը մղեն մարդերը՝ իբրեւ ճատրակի խաղաքարեր. այդ գործիչները կը կարծեն թէ կամեցողութիւն ունին, իրականութեան մէջ սակայն կը գործեն ճնշումի մը տակ։ Որքան ալ ահաւոր ըլլայ այն, ինչ որ հոս տեղի ունեցած է, այնուամենայնիւ պէտք չէ մենք այնքան պզտիկ ըլլանք, որ ատիկա փաթթենք առանձին դժբախտ անհատի մը վիզը։ Իրապէս սոսկալի ճակատագիր մը վիճակուած է մեզի, եւ այդ ճակատագրին կը պատկանի, իբրեւ պզտիկ մաս մը, Հարդէնբերգ փողոցին դէպքը։

Սակայն աւելի սոսկալի կը ըլլար, եթէ գերմանական դատարան մը այդ ճակատագրին միացներ վիրաւորումը հանդարտօրէն կշռադատող արդարութեան՝ ընդդէմ անօրինակ ծանր փորձութիւններու ենթարկուած այս մարդուն։

Ես կը յուսամ, պ. պ. երդուեալներ, թէ այս գաղափարը դուք խօրապէս պիտի դրոշմէք սրտներուդ մէջ՝ տալու համար այն անսահմանօրէն դժուարին վճիռը, որ միայն ձեր խիղճերուն վրայ կը ծանրանայ։ Իսկ մենք ունինք միայն համէստ պաշտօնը՝ ձեր վճիռներու միջոցին մանկաբարձուիի մը ծառայութիւնը մատուցելու։

Պաշտպան իրավական խորհրդական Դր. Իօհաննէս Վերթաուէր, Բերլին:

Դր. Վերթաուէր. – Պարոններ երդուեալներ, ձգի կը տրուի հարցաթերթը, ուր կը գտնէք նախ սպանութեան վերաբերող հարցումը: Այդ հարցումին արդէօք “այո” կամ “ոչ” պիտի պատասխանէք - այս է ահա քննութեան առարկան: Որդուք խորհրդածութեան վերաբերմամբ դրուած հարցումին ժխտողական պատասխան պիտի տաք, ատոր մասին աւելորդ կը նկատեմ խօսիլ: Ես պէտք է խօսիմ այն մասին, թէ սպանութեան վերաբերմամբ դրուած հարցումին “այո” թէ “ոչ” պիտի պատասխանէք: Արդէն հարցաթերթը ինքը կու տայ ձեզի յենակէտը՝ “ոչ”ի համար, որովհետեւ հոն չըսուի թէ՝ “ամբաստանեալը սպաննէ՞ր է արդէօք Թալէաթ փաշան”, այլ՝ “յանցաւո՞ր է ամբաստանեալը Թալէաթ փաշան սպաննելուն համար”: Այս տարբերութիւնը կ’ուղեկցի Ձեզ երդուեալներուն սենեակը. ու երբ վերադառնաք այդ սենեակէն, ան երեւան կու գայ ձեր պատասխանին մէջ. ձեր խորհրդակցութեան ամէն փուլին մէջ ան ձեր աչքին առջեւը կ’ըլլայ: Ան կը համապատասխանէ գերմանական օրէնքին:

Գերմանական օրէնքը այդ կէտին նկատմամբ լաւ է. ան հին է, աւելի քան 50 տարի առաջ կազմուած, բայց եւ այնպէս լաւ է: Եթէ գերման պատժական դատավարութեան մասին գէշ կը խօսուի, այդ կը վերաբերի միայն լավ օրէնքի գործադրութեան: Իմ կարծիքով, պէտք ալ չկայ այդ օրէնքին փոփոխութեան, ու ես բնաւ չեմ ալ յուսար, թէ պ. դատախազի յիշած բարեփոխութիւնը իրապէս բան մը բարելաւէ: Ներկայ օրէնքը բաւական լաւ է, եթէ միայն ամէն ոք կատարէ իր պարտականութիւնը:

Ամէն մարդ կը զգայ, որ ամբաստանեալը ազատ պիտի արձակուի: Դժուարութիւնը անոր մէջ է, որ գուցէ խօրհիք, թէ՛ քանի որ ամբաստանեալը մարդ մը սպաններ է, արդէօք օրէնքը չի պահանջեր, որ դատապարտենք զինքը. մենք գերմանական իրավունքին դատաւորներ ենք, մենք երդուել ենք նպաստել արդարութեան յաղթանակին. ըստի, համաձայն օրէնքի, պէտք չէ որ անպարտ արձակենք մարդասպանները: Պիտի ըսեմ ձեզի, որ սխալ եզրակացութիւն մը կը ըլլար այդ, եւ այն՝ նոյն այդ օրէնքին տեսակէտէն: Համաձայն մեր գերմանական օրէնքին՝ պէտք է անպարտ արձակէք ամբաստանեալը. ու այն ինչ որ ամէն ոք կը զգայ, այս պարագային պատահաբար նոյնն է, ինչ որ օրէնքը կը պահանջէ. անհրաժեշտ է միայն, որ բացատրեմ ձեզի այդ՝ պարզ ու անպաճոյճ խօսքերով:

Պաշտպանութիւնը բնաւ դիտաւորութիւն չունի՝ անարդար որոշումով մը արատաւորել անունը գերման իրաւունքին, որուն ներկայացուցիչներն էք դուք, ինչպէս եւ մենք: Ամբողջ աշխարհը կը նայի ձեզի, ու ձեր որոշումը պիտի ըլլայ այնպիսի որոշում մը, որը թերեւս հազարավոր տարիներէ ետքն ալ, որպէս իրաւացի որոշում մը, արժէք ունենայ: Ուստի պաշտպանին պաշտօնը պէտք է նոյն իսկ տեղի տայ մարդկային պարտականութեան առջեւ, այն է՝ չմոլորեցնել ձեզ, որպէսզի անարդար որոշում մը չտաք: Բայց երբ ներքին համոզումով այդ մարդը պէտք է անպարտ արձակուի, եւ երբ իրաւաբանն ալ անոր համար ներկայ է, որ ձեզ ըսէ, թէ այդ համաձայն է նաեւ ամէնախիստ իրավունքին, այն ատեն պարտականութիւն կը դառնայ տալ այս բացատրութիւնները՝ վերցնելու համար երեւութապէս գոյութիւն ունեցող դժուարութիւնները:

Ըսի ձեզի, որ հարցաթերթը կը հարցնէ. “յանցաւոր է ամբաստանեալը...”, ու կը կրկնեմ, որ “յանցաւոր” բառին մէջ կան շարք մը պարագաներ, որոնք կ’ընդգրկեն ամբողջ պատժական օրինագիրքը:

Մեր պատժական օրինագիրքը ունի ընդհանուր եւ յատուկ մաս. այս վերջինս կը վերաբերի յանցանքներու տեսակներուն՝ սպանութեան, խաբէութեան, գողութեան եւայլն: Այդտեղ յօդուածի մը մէջ յիշուած է. “Այն անձը, որ մարդ մը կը սպաննէ դիտաւորեալ կերպով եւայլն, ինքզինքը յանցաւոր կը դարձնէ սպանութեան համար”: Բայց կայ ընդհանուր մաս մը եւս, որ դրուած է առանձին յանցանքներէ առաջ, եւ որ ամէն մասնաւոր հարցերու կը յարմարի եւ այդ պատճառով ալ ամէն անգամ չի կրկնուիր:

Այդ ընդհանուր մասին երկրորդ յօդուածը կ’որոշէ, թէ ոչ ոք կրնայ պատժուիլ, եթէ նոյն յանցանքին համար առաջուրնէ պատիժ նշանակուած չէ: Առանձին յանցանքի համար որոշուած պատիժը կ’երեւնայ ընդհանուր եւ յատուկ մասերէն: Ընդհանուր մասը կը պարունակէ միայն քանի մը յօդուած, որոնք այսօրուան որոշումին համար վճռական են. եւ ինչպէս իմացաք տեղի ունեցած հակաճառութիւններէն, ատոնք այն առանձին վիճելի կէտերն են, որոնք ենթակայ են ձեր նկատառութեան:

Ընդհանուր մասի 51րդ յօդուածը կը հրահանգէ, թէ որոշ պարագաներու մէջ պատժելի գործողություն չկայ, եթէ նոյն իսկ անհատ մը կատարած է յատուկ մասին մէջ յիշուած յանցանքներէն մէկը կամ միւսը, այն է՝ գողութիւն, սպանութիւն եւ այլն: Ատիկա այն յօդուածն է, որ կը զբաղի յանցանքի հեղինակի մտաւոր յատկութիւններովը: Երկու յօդուածէ ետք կու գայ նման յօդուած մը եւս, որուն նիւթըն է ստիպողական ինքնապաշտպանութիւնը: Ստիպողական ինքնապաշտպանութիւն ըսելով կը հասկցուի՝ յարձակման մը էմ դնելը, բայց նոյն յօդուածի 3րդ հատուածին մէջ կ’ըսուի, որ եթէ նոյն իսկ ստիպողական ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը գոյութիւն չէ ունեցեր, սակայն տուեալ անձնաւորութիւնը, երկիւղի եւ խուճապի մատնուելով՝ անցեր է ստիպողական ինքնապաշտպանութեան սահմանէն, այդ պարագային եւս ան ազատ կը մնայ պատիժէ: Վերջը ես կրկին կը դառնամ այդ երկու յօդուածներուն, որովհետեւ անոնք են միայն, որ էական նշանակութիւն պիտի ունենան ձեր որոշումին համար: Արդէն մատնանաշուեցաւ, որ՝ ինչպէս կըսք 51րդ յօդուածի առաջին նախադասութիւնը՝ պատժելի գործողութեան կատարման պահուն անգիտակից կացութեան մէջ է եղեր, եւ կամ, ինչպէս կ’աւելցնէ երկրորդ նախադասութիւնը՝ եթէ ան գործեր է մտաւոր գործունեութեան հիւանդոտ խանգարման մէջ: Ուրեմն, միեւնոյն յօդուածին մէջ իրար հետ ձուլուած են երկու բոլորովին տարբեր բաներ – ծանր անգիտակցութիւն եւ մտաւոր գործունեութեան հիւանդոտ խանգարում: Անշուշտ, կան դէպքեր, ուր այդ արկուքն ալ գոյութիւն ունին: Ատիկա հաւանական է ներկայ պարագային: Ներկայ պարագան, կ’ուզէի ըսել, կ’արդարացնէ ոչ թէ մէկ, այլ երկու անպարտ արձակումներ, այնքան ցայտուն կերպով երեւան կու գան 51րդ յօդուածին մէջ յիշուած այդ երկու բաները եւս:

Վերը արդեն յիշեցաւ, թէ նման խնդիրներու շուրջը տարակոյսներ կրնան ծագիլ: այն հարցին, թէ կատարուէ՞ր արդեօք իրողութիւն մը, որ արդեն անցեալին մէջն է, գոր մարդ ինքը անձամբ չէ տեսեր ու չէ ապրեր - այդ հարցին ամէ մէկը կրնայ հաստատական կամ ժխտական պատասխան տալ, բայց պատասխանը կրնայ նաեւ սապէս ըլլալ. “ես այդ չեմ գիտեր”: Եթէ, օրինակի համար, հարցնեն՝ թէ կատարուա՞ծ է արդեօք գիւտ մը, մէկը կրնայ ըսել. “այո, ես այդ հաստատ գիտեմ”. մէկ ուրիշը կրնայ որոշապէս յայտարարել. “այդպիսի բան չկայ”. երրորդ մըն ալ կրնայ խոստովանել “ես չեմ գիտեր, ես այդ խնդրով հետաքրքրուած չեմ”: Ճիշդ նոյնն է, եւ այս գործին մէջ:

Միշտ պէտք է նկատի ունենաք, որ իրաւաբանութիւնը մոզական արուեստ մը չէ, այլ մարդկային առողջ դատողութեան կիրառում: Երբ մարդ կ’անցնի իսկական սահմանը եւ կ’յնայ չակերտաւոր իրաւաբանութեան ետեւէն, այն ատեն ան արդէն սխալ ճամբայ կը մտնէ: Որքան աւելի պարզ ու յատակ նայինք գործին, այնքան աւելի կը դիւրանայ որոշումը: 1921ի մարտ 15ին տեղի է ունեցեր այս երիտասարդին արարքը: Այժմ կը հարցնեն ձեզ՝ կրնա՞յ նկատի գալ 51րդ յօդուածը, այսինքն՝ գոյութիւն ունեցե՞ր է այն ատեն անգիտակից կացութիւնը կամ մտաւոր գործունեութեան հիւանդոտ խանգարումը: Ամբաստանեալը արդէն արտայայտուեցաւ, նոյնպէս եւ վկաները. իրազեկները իրենց կարծիքը յայտնեցին, ըսել է՝ դուք լսեցիք ամէն տեսակ մարդիկ: Հաւանական է, որ դուք ըսէք. “ամբաստանեալը բոլորովին առողջ էր”: Կարելի է նոյնպէս, որ ձենէ ոմանք ըսեն. “ան առողջ չէր, անոր մտաւորը հիւանդոտ կերպով ազդուած էր”: Բայց կարելի է նոյնպէս, որ ձենէ ոմանք ալ ըսեն. “մենք չենք գիտեր, մեզ համար այդ տարակուսելի մնացած է”: Այստեղ արդէն մէջ բերուեցաւ որոշում մը, գոր տուած է պետութեան բարձրագոյն ատեանը նման դէպքի մը մասին: Բարձրագոյն ատեանը կու տայ հարկաւ ինչպէս ճիշդ, այնպէս եւ սխալ որոշումներ: Բայց եթէ անոր որոշումներէն մէկը իր բովանդակութեամբ ճիշդ է, այն ատեն կարելի է մէջ բերել զայն, ոչ անոր համար, որ բարձրագոյն ատեանը հեղինակութիւն մըն է - իրավունքի շրջանին մէջ չկան առհասարակ ուրիշ հեղինակութիւններ, բայց եթէ հեղինակութիւնը այն բանին, որը իրաւունքի շրջանին մէջ ճիշդ է: Սակայն եթէ բարձրագոյն ատեանին ըսածը, գոր մենք կրնանք վերստուգել, ճիշդ է, ու եթէ մեր մարդկային առողջ դատողութիւնը մեզի կ’ըսէ, որ այդ ճիշդ է, որ որոշումը առարկայօրէն ճիշդ է, այն ատեն մենք կրնանք նման որոշում մը, իբրեւ էական պարագայ, հանգիստ սրտով օգտագործել:

Բարձրագոյն ատեանին որոշումը հետեւեալն է:

... “Եթէ անպատասխանատու վիճակը որոշապէս ընդունուած է, իբրեւ հիմ մը, որ ի բաց կը հանէ պատիժը, այդ պարագային այլեւս չի բաւեր դիտաւորութեան ընդհանուր ճշդումը, այլ պէտք պիտի ըլլակ պատճառաբանութեան կանոնագրի 266րդ յօդուածին: Անհրաժեշտ է որոշապէս ճշդել, թէ արարքին հեղինակը նոյն միջոցին գտնուած չէր 51րդ յօդուածի յիշած կացութիւններէն ոչ մէկուն մէջ:

Բաւական չէ ճշդել, թէ դատավարութիւնը ոչ մէկ հիմ տուած է ընդունելու անպատասխանատուութիւնը. Ժէտք է, ընդհակառակը, դրականապէս ճշդուած ըլլայ, թէ արարքին

հեղինակը գործը կատարելու պահուն գտնուած չէր 51րդ յօդուածի յիշած կացութիւններէն ոչ մէկուն մէջ:

Պետք է ուրեմն դրականապէս ճշդուի, որ այն խանգարիչ ազդեցութիւնները գոյութիւն չեն ունեցեր: Եթէ տարակոյս մը մնացած ըլլայ, այն մասին, թէ անոնք գոյութիւն ունեցե՞ր են արդեօք, այդ պարագային ամբաստանեալը անպարտ արձակելու է՞”:

Այդ է ուղղութիւն տուող վճիռը, որուն մասին ցարդ ոչ ոք լուրջ տարակուսանք ունեցեր է, որովհետեւ ան իրապէս համաձայն է մարդկային առողջ դատողութեան: Ուրեմն, եթէ դուք ներկայ դատավարութեան հիման վրայ տարակուսիք, թէ ամբաստանեալը, 1921ի մարտ 15ին ժամը 11ին, երբ կ’արձակէր գնդակը, ազատ կամքի տէր էր – որովհետեւ այդ կամքը գիտակցութեան խանգարման կամ մտաւորի հիւանդոտ խանգարումներու հետեւանքով բացակայ էր - այդ պարագային պիտի ըսէք “մենք տարակոյս չունինք”: Ու եթէ դուք նոյն իսկ այդ առիթով միայն տարակուսանք ունիք, պետք է անպարտ արձակէք ամբաստանեալը: Եթէ ձենէ ոմանք ըսեն. “բոլորովին հաստատ է, որ ան տէր չէր պետք եղած մտաւոր կարողութիւններու”, եւ ոմանք ալ ըսեն. “մենք կը տարակուսինք, թէ ան տէ՞ր էր արդեօք պետք եղած մտաւոր կարողութիւններու”, այդ պարագային ձեր բոլոր ձայները իրար կը միանան, ու այդ կը բաւէ, որ ամբաստանեալը անպարտ արձակուի: Միայն անոնք կրնան հարցումին հաստատական պատասխան տալ, որոնք դժուարութիւն չեն զգար ըսելու. “մենք կը յայտարարենք, որ ամբաստանեալը գործողութեան պահուն, 51րդ յօդուածին իմաստով, իր պատասխանատուութեան կատարեալ տէրն է եղեր. իր ազատ կամքը ո՛չ անգիտակցութեան, ո՛չ ալ մտաւոր գործունէութեան հիւանդոտ խանգարման հետեւանքով կաշկանդուած է եղեր”:

Թոյլ տուէք, ձեր վճիռը դիւրացնելու համար, այստեղ լրացնեմ այն, ինչ որ բժշկական իրագեկները մինչեւ հիմայ չըսին: Կարելոր է քննել, թէ Թէիլիբեանը ինչ հոգեկան զգացումներ է ունեցեր գնդակը արձակելու պահուն. կարելոր է վայրկեան մը պարզէք ձեզ համար, թէ ինչ բանի մէջ կը կայանայ հոգեպէս արտաքին պատճառներէ դրդուած եւ մարմնապէս տուեալ անձին կողմէ կատարուած այս գործողութեան էութիւնը. այսինքն, որտեղ իրօք կը սկսի անգիտակցութիւնը եւ մտաւոր գործունէութեան հիւանդոտ խանգարումը: Բժշկական իրագեկները իրապէս պետք էր որ բացատրէին ձեզ, թէ ներկայիս տիրող կարծիքին համաձայն, կամքին վրայ հանգչող գործողութիւնները կը յառաջանան այն տպաւորութիւններէն, որ կան տուեալ գլուխին մէջ, եւ որ այդ տպաւորութիւնները ուղեղի այսպէս կոչուող մեծ կեղեւէն այսպէս կոչուող բուրգերու ճամբով կը փոխադրուին ողնածուծի կեղրունը, եւ այս վերջինս պետք է հարկադրէ թելը՝ որ բարձրանայ, աչքը՝ որ տեսնէ եւնձան առնէ, ձեռքը՝ որ սեղմէ: Այս է բնականոն ընթացքը: Իսկ եթէ կամքի այս կանոնաւոր ընթացքը խանգարուած է ու եւ է հիվանդոտ երեւոյթի մը պատճառով, կամ եթէ ուղեղի մեծ կեղեւին մէջ գիտակցութիւնը վայրկեան մը իսկ կը դադրի, այդ պարագային ազատ կամքը այլեւս չկայ. անգիտակցութիւնը եւ մտաւոր գործունէութեան հիվանդոտ խանգարումը զայն ի բաց հանած են:

Այդ այն է, ինչ որ արդեն պ. Դր. Ֆոն Գորդոն այստեղ կարդաց: Ես կ'ուզեի անգամ մը եւս մէջ բերել կարեւոր տեղը, որ հետեւեալն է.

...“Ազատ կամք ըսելով, 51դ յօդուածոն իմաստով, հասկնալու է մարդուն կարողութիւնը՝ կամքի յառաջընթացութիւնը կազմող տարբեր դրոշմապատճառներէ եւ այդ յառաջընթացութեանը հակառակող կամ օժանդակող տպաւորութեանց կամ զգացմանց կերպարանաւորումներէ կազմել ամփոփ եւ վերջնական կերպով կամքի նոր, միաւորական ու կատարելապէս որոշակի բովանդակութիւն մը, “վճիռ” մը, իբրեւ արտայայտութիւնը ամբողջ անձնաւորութեան իշխանութեան՝ հոգիի մասնակի յառաջընթացութիւններու վերաբերմամբ: Այդ ընդունակութիւնը պէտք է ոչ միայն սահմանափակուած կամ նորագած ըլլայ, այլեւ բոլորովին ի բաց հանուած. որովհետեւ առանձին յուզումները, որ զգացումի եւ տպաւորութեան միջոցով շեշտուած են իր ուժին մէջ, միայն դժուարութեամբ կարելի է ենթարկել ամբողջականին իշխանութեանը եւ դարձնել Ես'ին ընդհանրական կամքը:

Եթէ բացակայ է ընդունակութիւնը՝ կեդրոնացնել հոգիի բոլոր ուժերը այն ձեւով, որ ան՝ ընդգրկելով առանձին շարժառիթները՝ ստեղծականորէն դարձնէ զանոնք նոր բովանդակութիւն ունեցող միաւորական կամեցողութիւն մը, այն ատեն կը պակսի ինքնորոշումը: Եթէ այնուամենայնիւ կամքի վճիռ մը կը կազմուի, այդ տեղի չունենար այնպէս, որ Ես'ը տիրէ տարբեր շարժառիթներու եւ միացնէ զանոնք, այլ այնպէս, որ շարժառիթներէն մէկը կամ միւսը տիրող կը հանդիսանան եւ իրենց տարբերէն կը յառաջացնեն վճիռ մը, որը կը տիրէ Ես'ին: Կամքը կասմելութեան թէքնիքը այստեղ եւս հարկաւ նոյնն է, ինչ որ ինքնորոշման միջոցով կազմելու ատեն, այն տարբերութեամբ սակայն, որ այլեւ Ես'ը չէ, իբրեւ ամբողջութիւն բոլոր հոգեկան կարողութիւններու, որ ունի իշխանութիւնը եւ կ'որոշէ կամքի վճիռին բովանդակութիւնը, այլ կամքի առանձին տարրերէն մէկն է այդ: Ազատ կամքը կը պակսի, եթէ հիւանդոտ խանգարումներու հետեւանքով որոշ տպաւորութիւններ, կամ զգացումներ (կամ կողմնակաւ ազդեցութիւններ) կը տիրեն կամքին այնչափ զօրաւոր կերպով, որ կամքի ազատ որոշումը բանական կշռադատումներու միջոցով անկարելի կը դառնայ: Միայն եթէ հոգեկան կարողութիւններու ամբողջութիւնը, ամբողջ Ես'ն է վճիռը ստեղծողը, այն ատեն միայն կարելի է այդ վճիռէն բխած արարքը վերագրել Ես'ին, իբրեւ այդ ամբողջութեանը”:

Ասով եւ արծարծեցի ամենադժուարին թէքնիք - բժշկական եւ իրաւաբանական խնդիրներէն մէկը: Սակայն եւս հաւատացած եմ, որ հնարաւոր է այնպէս արծարծել զայն, որ առողջ դատողութիւն ունեցող ամէն մարդ կարենայ ըմբռնել, հաւանիլ եւ հետեւիլ անոր: Դուք տեսաք, որ իրաւագիտութիւնը կատարելապէս համաձայն է այն բանին, ինչ որ կ'ըսէ ամէն առողջ եւ բանաւոր մարդ: Եթէ ուղեղի մեծ կեղեւին կամ բուրգերու ճամբուն, կեդրոնական նիարդային սիսթեմին մէջ անիմաստ օտար մտապատկերներ կային, որոնք բնութիւն կը գործէին կամքի կազմակերպման վրայ, այն ատեն տուեալ մարդը այլեւս ազատ կամքի տէր չէր. ապա կային ճնշող մտապատկերներ, որոնք մինչեւ որոշ աստիճան անպատասխանատու կը դարձնէին ամբաստանեալը:

Այս իրաւական բացատրութիւններէն ետք դուք ի վիճակի կ'ըլլաք պարզ ու դիւրին կերպով դատելու ներկայ դէպքի մասին:

Բան մըն ալ աւելացնեն, որ հազարաւոր տարիներէ ի վեր ժողովրդի բերանին առածի բնոյթ ստացած է: Կ'ըսուի. “մարդուն գլուխը կը դառնայ”: Այդ կը նշանակը, որ նման վայրկեանի մը մէջ ազատ գիտակցութիւնը խանգարուած է: Այդ կացութեան մէջ մարդ կ'ընէ այն, ինչ որ ուրիշ ատեն չպիտի ըներ:

Թոյլ տուէք յիշեմ Բարձրագոյն ատեանի մէկ ուրիշ վճիռը եւս: Ընդդիմադիր տրամադրութիւն ունեցող անհատ մը գացեր է եկեղեցի: Քահանան կը խօսի նիւէի մը մրայ, որ բոլորովին հակառակ է այդ անհատի կարծիքին: Ան կը լսէ հետզհետէ աւելի մեծ ուշադրութեամբ, վերջը կը կատողի ու այն աստիճան կը մոռանայ ինքզինքը, որ բարձրաձայն կը գոչէ. “Լո՛ւ, սու'տ է ըսածդ”: Այդ անհատը դատարան կը քաշեն՝ պատարագը խանգարած ըլլալուն համար բայց անպարտ կ'արձակեն, որովհետեւ քահանայի ըսածներու ազդեցութեանը տակ անոր գիտակցութիւնը խանգարուեր էր, եւ արիւնը այնպէս ուժգնորէն գլուխն էր զարկեր, որ այդ վայրկեանին ան այլեւս տէր չէր իր կամքին:

Հիմայ այն ամէնը, ինչ որ յայտնուած է ամբաստանելի մասին դատավարութեան ընդացքին, եւ ինչ որ կրնայ ձեզի յենակէտ ծառայիլ որոշելու համար՝ թէ ան մարտ 15ին ժամը 11ին ազատ կամքի տէ՛ր էր արդեօք, - այդ ամբնը կարելի է վերածել շարք մը առարկայական կէտերու: Իրազեկներու ներքին պայքարը ձեզ չի վերաբերիր, որովհետեւ ձեր վճիռը պէտք է կախուած ըլլայ անկէ, թէ ինչպէ՛ս կը դատէք ազատ դատավարութեան առարկայի մասին, առանց անոր, որ կապուած ըլլայիք բժիշկներուն: Առարկայական տեսակետով, եթէ կ'ուզէք դատել ամբաստանեալի կամքին տրամադրութեան եւ հոգեկան ապրումներու մասին իր արարքի վայրկեանին, այդ պարագային ուշադրութեան առնելու էք, որ ան կը պատկանի հարաւային ազգի մը, որը՝ ինչպէս յայտնի է՝ աւելի դիւրագրգիռ է, քան պաղարիւն հիւսիսցին: Ատկէ գատ, նկատի առնելու էք, ինչպէս պ. դատախազը արդէն յիշեց, որ այդ երկիրը արիւնտ աւանդութիւն ունի: Յայտնի է, որ թուրքերը՝ ուր ոտք կը կոխէին՝ արիւնտ դրօշ կը տանէին իրենց առջեւ թուրքերը 1683ին նոյն իսկ Վիեննայի առջեւ կը տեսնենք. եթէ անկէ ետք անոնք հոս գային, Գերմանիոյ մէջ ալ անշուշտ շատ բան չէր մնար: Որոշ արիւնտ աւանդութիւն կայ այդ հարաւային ազգերուն քով, եւ ոչ միայն թուրքերու այլեւ հայերու:

Յետոյ լսեցիք, որ ամբաստանեալը թիֆօ է ունեցեր. ու դուք գիտէք թէ մէկը, որ մալարիա կամ թիֆօ է ունեցեր, յաճախ տարիներ շարունակ չի կրնար նօրմալ նկատուիլ:

Յետոյ, ամբաստանեալը, ստամոքսի հիւանդութեան կամուրիշ պատշառով, իրեն համար անսովոր չափով կօնեակ կը խմէր, այնպէս որ այդ ուղղութեամբ եւս իր հոգեկան հաւասարակշռութիւնը բոլորովին կանոնաւոր չէր:

Ատոր կ'աւելնայ առարկայօրէն, որ՝ ինչպէս լսեցիք՝ հայերը ու թուրքերը նորէն, ինչպէս դէպքին ատեն, պաշտօնապէս յայտարարուած պատերազմի մէջ կը գտնուէին: Որ որ հանդիպէին իրար

այդ երկու ազգերը, կը հանդիսանային որպէս թշնամիներ, եւ երկուքն ալ մինչեւ որոշ աստիճան իրենց իրաւունքը կը նկատէին՝ իրար դէմ ելլել իբրեւ պատերազմողներ: Երբ ամբաստանեալը ըսաւ. “ան օտարական, եսօտարական. ատիկա Գերմանիոյ չի վերաբերիր”, ան անելցնելու էր միայն.”ատկէ զատ, մենք պատերազմական ու վրիժառութեան կացութեան մէջ կ’ապրինք իրաի հետ”:

Ապա դուք լսեցիք նաեւ, որ Թալէաթի մասին մահաւճիռ արձակուած էր: Դատաւճիռները կամ կը ճանչցուին, կամ չեն ճանչցուիր: Եթէ մենք չուզենք ճանչնալ ուրիշ դատարանի մը վճիռը, այն ատեն չենք կրնար պահանջել, որ ուրիշները մեր վճիռը ճանչնան: Թալէաթի մահաւճիռը տրուած է պատերազմական ատեանի կողմէն: Ես առհասարակ բարեկամ չեմ պատերազմական եւ զինուորական ատեաններու. ես կ’ընդունիմ, որ սովորական դատարանը, եթէ լաւ է, այնպէս է, որ ոչ ոք այլեւս պէտք ունի այն ձեւի մասնաւոր հաստատութիւններու: Բայց ուր որ կան պատերազմական եւ զինուորական ատեաններ, հոն կան անտարակոյս նաեւ պարկեշտ դատաւորներ, որոնք ճիշդ վճիռներ կուտան: Ես նուազագոյն տարակոյսն իսկ չունիմ, թէ այն բարձրաստիճան ու կրթուած դատաւորները, որոնք մեծ խնամքով քննեցին եւ դատեցին Պոլսոյ ոճրագործները, գտան նաեւ ճիշդ դատաւճիռը: Աւելի եւս անթոյլատրելի է ըսել, թէ դատաւճիռը ծագեր է անգղիական նաւային թնդանօթներու ճնշումին տակ: Ես երբէք լսած չեմ, որ անգղիական դատաւորները այս ձեւով ազդեն արդարադատութեան վրա: Անգղիոյ մասին կրնաք խօսիլ, ինչպէս որ կ’ուզէք՝ ելլաւ, եւ գէշ. բայց անգղիական արդարադատութիւնը օրինակ ծառայած է բոլոր ժամանակներու եւ երկիրներու համար: որեմն սխալ է ըսել, թէ պատերազմական ատեանը տուեր է իր վճիռը անգղիական նաւային թնդանօթներու ճնշումին տակ: Աւելի ճիշտ կ’ըլլար քննել այդ դատաւճիռին հիմերը, ու այն ատեն կը տեսնուէր, թէ՛ ինչպէս այստեղ ցուցուց վկաներէն մին՝ հայկական կոտորածները եւ չորս ուրիշ կէտեր զատ - զատ ճշդուած են եւ ատոր համաձայն ամբաստանեալներուն համար մահաւճիռ է հանուած: Դատապարտուածներէն մէկուն նկատմամբ, որ Պոլիս կը գտնուէր, մահապատիժը գործադրուէր է: Ես անհատապէս կ’ատեմ մահապատիժը ճիշտ այնպէս, ինչպէս մարդասպանութիւնը, եւ չեմ հաւատար սպանութեանց դէմ պայքարելու յաջողութեան, որքան ատեն որ մահաւճիռներ կը տրուին ու կը գործադրուին: Ես կը խորհիմ առհասարակ, որ ոչ մէկ պարագայի տակ պէտք չէ սպաննել: Այդ դատաւճիռէն ետքը սակայն Թալէաթը ստիպուած էր փախչիլու թագնուիլ կեղծ անուան տակ, որպէս զի վճիռը իր նկատմամբ չգործադրուէր: Այդ վճիռի ճշդութեան մասին ես ոչ մէկ տարակոյս ունիմ. անու միայն հաստատուած է, որ Թալէաթը յանցաւոր էր այն չարագործութիւններուն համար: Բայց այդ վճիռը ազդեցութիւն ունի նաեւ հայուն վրայ. նոյն իսկ արդարացի եւ ճիշդ խորհող հայը պիտի ըսէ ինքն իրեն. “այդ մարդը մահուան դատապարտուած է. ուրեմն ան է գործեր ոճիրները եւ արժանի է մահապատիժի”:

Յետոյ, նկատի կու գայ նաեւ այն գաղափարը, որ կապ ունի ստիպողական ինքնապաշտպանութեան հետ: Այդ անձերը, Էնվերը եւ Թալէաթը, կ’ապրէին Գերմանիոյ մէջ կեղծ անուան տակ: Այստեղ խօսք եղաւ թէ անոնք Գերմանիոյ “հիւրերն” էին: Այդ եւ ամենայն վճռականութեամբ պիտի մերժեմ. ես չեմ հաւատար, թէ գերման կառաւարութիւնը թոյլ տար, որ

իրենց հայրենիքը լքած փախած նման ոճրագործներ, իբրև “հիւրեր”, կեղծ անուններով թագնուեին այստեղ: Չէ՞ որ այդ անձերն մին նորէն փախեր է ասկէ. ինչպէս կը գրեն թերթերը, Էնվերը նորէն գացեր է Ռուսիա դարբնելու համար մեծամասնականներու հետ նոր ծրագիրներ, որոնց նպատակներէն մէկն է՝ պատերազմիլ հայերու դէմ եւ ոչնրացնել զանոնք: Եթէ Թալէաթ, ինչպէս որ ինքը անշուշտ ուզեր էր, հետեւէր Էնվերին, մէկ կամ երկու շաբաթէ ետքը հաւանօրէն պիտի տեղի ունենային նոր սարսափներ հայերու վերաբերմամբ: Եթէ մէկը, իբրև ազատիչ իր ժողովուրդին, սպաննէ նման մարդ մը, որ վտանգաւոր ու ոճրական գործունէութիւն կը ծաւալէ այդ ժողովուրդին դէմ, անսարակոյս ան սապէս պիտի խորհած ըլլայ. “այս մարդը հայ ժողովրդին թշնամին է. եթէ դուրս կ’ելլէ Գերմանիայէն եւ Էնվերին պէս միանար մեծամասնականներուն, նորէն մեր կիները եւ երեխաները կը կոտորուին”: Այսպիսով, ամբաստանեալին արարքին մէջ կայ լայն իմաստով – թէեւ ոչ իրաւաբանօրէն – ստիպողական ինքնապաշտպանութիւն. անհաստատապէս այն երկիւղն ունէր, երբ Թալէաթը նորէն իր առջեւ տեսաւ: Այս եւս առարկայօրէն բացատրելէ ետք՝ անցնինք բժշկական իրազեկներու կարծիքներուն քննութեան:

Դուք տեսաք իրազեկներու վէճը վերնտութեան մասին: Իրազեկները դատաւորի օգնականներն են. անոնք միայն ըսելու են այն, ինչով որ՝ իրենց իրազեկութեան հիման վրայ՝ կրնան օգտակար ըլլալ իրավունքին: Եթէ տան մը փլումէն մարդ մը սպաննուի թերեւս ըսուի, որ ճարտարապետն է յանցաւոր այդ մարդու մահվան համար: Բայց ես երբէք իրազեկին չէի ձգեր դատելու՝ թէ այդ պարագային ճարտարապետն է արդեօք յանցաւոր: Այդ անոր գործը չէ. ան միայն կրնայ ըսել, թէ այդ տունը կանոնաւոր թէ սխալ սխալ կերպով է կառուցուած եղեր: Տան փլումը կրնայ ուրիշ պատճառներէ կախուած ըլլալ: Այսպէս եւ բժշկական իրազեկնորը չեն կրնար ըսել, թէ սպանութեան կատարման վերաբերմամբ 51դ յօդուածը արդեօք նկատի պիտի գա՞յ. ըրովհետեւ սպանութեան վայրկեանին եղած անգիտակցութեան հարցին՝ հոգեբանն է որ պիտի պատասխանէ, այլ ոչ բժշկական իրազեկը: Այս վերջինը ասպարէզ կու գայ այն ատեն միայն, երբ խնդիրը հոգիի հիւանդոտ խանգարման մասին կ’ըլլայ: Բժիշկի գործը հիւանդութիւնն է եւ ոչ անոր ազդեցութիւնը: Երբ խնդիրը հիւանդութեան մասին է, ես պէտք է հարցնեմ բժիշկին, ու այն ատեն ան թող ըսէ ինձի այն ամէնը, ինչ որ յայտնի է իրեն իր գիտութենէն. իսկ իրաւաբանի արուեստին ան իրաւունք չունի խառնուելու: Գործադրելի՞ է 51դ յօդուածը թէ ոչ - ասիկա հարց մըն է, որ բնաւ չի վերաբերիր բժշկական իրազեկին: Ես կը խոստովանիմ, որ մեր իրաւաբանական գործունէութեան ատեն յաճախ, գործնական նկատումներով, բժիշկին հարց կը տրուի. “ձեր կարծիքը միայն ամբաստանեալի հիւանդութեան մասին պիտի յայտնէք, թէ նաեւ այն ազդեցութեան, զոր այդ հիւանդութիւնը ունեցեր է անոր կամքին վրայ. կը կարծէ՞ք թէ 51դ յօդուածը գործադրելու է”:

Ես այդ վերջին հարցումը երբէք չէի ըներ. ու եթէ դատական նախարար մը հարցնէր ինձ, թէ պաշտօնը ստանձնելէն անմիջապէս յետոյ որը պիտի ըլլայ իր առաջին գործը, ես կը պատասխանէի. “Արգիլեցէք հարցնել բժշկական իրազեկին, թէ պէտք է կամ կարելի է արդեօք գործադրել 51դ յօդուածը. եւ արգիլեցէք բժշկական իրազեկին՝ պատասխանել այդ հարցումին”: Բժիշկը, զինուած իր գիտութեան բոլոր ծանօթութիւններով, միայն քննելու եւ նկարագրելու է

ամենայն մանրամասնությամբ. իսկ այս հարցին հետ, գոր այստեղ որոշելու ենք մենք, ան ոչ մէկ գործ ունի. այդ մասին ան ըսելիք չունի:

Դուք լսեցիք արդէն իրենցմէ իրազեկներէն/ բացառութեամբ առաւին իրազեկ պ. Դր. Շտէօրմէրի, թէ իրենք սիրով չեն մօտենար այդ հարցին, որովհետեւ բժիշկները տաչբեր տէսակէտներ ունին կամքի, անոր սահմանափակման եւ այլնի մասին, քան իրավաբանները: Բայց եւ այնպէս ամենքն ալ վերջիվերջոյ մի մի պատասխան տուին, առանց սակայն ստանձնելու պատասխանատուութիւնը իրաւաբանական պատասխանին համար: Մէկ մասը պատասխանեց միայն “այո”ով, իսկ միւսը՝ “ոչ”ով: Ու միայն առաջին իրազեկն էր, որ հաստատապէս ըսաւ, թէ 51դ յօդուածը կարելի չէ գործադրել: Պ. Դր. Շտէօրմէրի դէմ եւ բան մը չեմ ըսեր. եւ շատ կը յարգեմ ու կը գնահատեմ զինքը: Բայց իր կարծիքը անգործածելի է, ինչպէս որ դուք ինքներդ ալ նկատեցիք: Վերնոտուութեան մասին իր քննութեան արդիւնքը ճիշդ չէ. ան ճշդեր է մարմնական վերնոտուութիւն, մինչդեռ միւս բոլոր պարունները, ինչպէս եւ, կարծեմ, մենք ամենքս՝ տարակոյս չունինք, որ աստիկա հոգեկան վերնոտուութիւն է: Պ. առաջին իրազեկը հետագօտեր է հոգեկան վերնոտուութեան պատճառները ոչ լիովին եւ ատոր հետեւանքով սխալ ախտագուշակութիւն է ըրեր: Ես կ'ընդունիմ, որ իր կարծիքը մշակուած է շատ ճշգրիտ կերպով եւ մեծ խնամքով. բայց այդ չարգիլեր ինձ որ ըսեմ, թէ սխալ է: Մէկը կրնայ խնդրի մը մասին յայտնել մանրամասն, բայց սխալ կարծիք. մէկ ուրիշը կրնայ կէս ժամուան մէջ ճիշդը ըսել: Որ պ. Դր. Շտէօրմէրի կարծիքը անճիշդ է, այդ բացատրեցին – թէ եւ իրաւամբ ամենավայելուչ ձեւով – պ. պ. պաշտօնակիցները:

Այդ իրազեկները կ'ըսեն, թէ ամբաստանեալը հոգեկան վերնոտուութիւն ունէր, այսինքն հոգեկան խանգարումներու վրայ հիմնուած մարմնական կազմ մը, որ ծարունակ առիթ կու տար վերնոտուութեան բռնկումներու: Այստեղ արդէն շատ ճիշդ կերպով շեշտուեցաւ, որ մենք չենք գիտեր, թէ ամբաստանեալը սպանութեան նախընթաց գիշերը կամ առավոտը կանուխ ունեցէ՞ր է արդեօք բռնկում: Այդպիսի բռնկումներ կրնան գալ ու անցնիլ, առանց որ հիւանդը գիտնար այդ, որովհետեւ միայն բռնկումէն ետքը ան թուլութիւն կամ նման բան մը կը զգայ: Իմ հարցիս՝ “չէ՞ք գիտեր, նախընթաց գիշերը բռնկում մը տեղի չէ՞ ունեցեր” – պ. դր. Շտէօրմէր եւս որոշակի պատասխանեց. “ոչ, այդ եւ չեմ կրնար գիտնալ. ամբաստանեալը չըսաւ թէ ունեցեր է բռնկում. ես ալ չեմ գիտեր, ունեցէ՞ր է թէ ոչ. բայց հարկաւ կրնայ ունեցած ըլլալ”: Ու ատոր համար խիստ կարեւոր է այն, ինչ որ պ. պ. օգնական դատաւորներէն մին բժշկական գետնին վրայ աւելցնել ուզեց. այդ այն է, որ նման բռնկումներ կրնան տեղի ունենալ, առանց որ հիւանդը գիտնար. բայց այդ պարագային ալ բռնկումին հոգեկան արձագանգը կրնայ տեսել բաւական ատեն, մինչեւ իսկ օրեր: որեմն անհրաժեշտ ալ չէ, որնման բռնկում մը տեղի ունեցած ըլլայ անմիջապէս սպանութենէն առաջ՝ գիշերը կամ առտուն կանուխ: Մենք լսած ենք դերասանի մը մասին, որ վերնոտուութեան բռնկումներ է ունեցեր. օր մը յանկարծ թատրոն չէ գացեր, հեռացեր է քաղաքէն ու անհետացեր, այնպէս որ ոչ ոք չէ գիտցեր, թէ ուր է: Իսկ ան կրցեր է երկայթուղիի տոմս գնել, ճամբորդել, հիւրանոց մը երթալ, առանց այնուամենայնիւ գիտնալու իր վերնոտ կացութեան հետեւանքով, թէ ինչ կը կատարուի իրեն հետ: Իրեն կը պակասէր մտաւոր ու հոգեկան յառաջընթացներու շարք մը՝ ակներեւ իր գիտակցութեան հիւանդոտ խանգարման պատճառով:

Պ. օգնական դատաւորը հարցուց պ. դր. շտեօրմէրին. “չէք գիտեր արդեօք, սպանութենէն առաջ վերնոտութեան բռնկում եղէ՞ր է, թէ ոչ.” ըւայդ հարցումը կը շօշափէր խնդրի ամենաեական կէտը: ու երբ պ. Դր. Շտեօրմէր պատասխանեց՝ “ոչ, չեմ գիտեր”, ատով իր կարծիքը ինձ համար լմնցած էր:

Միւս պ. պ. իրազեկները շատ աւելի լայն են ընդգրկած խնդիրը, ոչ թէ ջանասիրութեան, այլ գիտական փորձառորթեան գործադրութեան նկատմամբ:

Դուք գիտէք վերջապէս, որ ամբաստանեալը ստացեր է ծանր հարուած մը իր գլխուն, եւ որ սպանութեան առտուն ինքզինքը գէշ զգալով՝ կօնեակ էր խմեր:

Բժիշկներուն խօսքով՝ ամբաստանեալի հիւանդութիւնը հոգեկան վերնոտութիւն է եղեր, ան ունեցեր է հոգեբեկութեան բռնկումներ: Այդ օտարոտի արտայայտութիւններով ըստ ինքեան կարելի չէ ոչ ոքի վրայ տպաւորութիւն գործել. բայց այն, ինչ որ ատով արտայայտել կ’ուզեն, ներքնապէս ճիշդ է: Իրազեկները ըսին, թէ ամբաստանեալը երբ 1915ի ջարդէն ետք, որուն զոհ գացին իր ազգականները, արթնցաւ ուշաթափութենէն, դիակի հոտ առաւ, եւ թէ յետոյ ալ, երբ իր յիշողութեան պատկերները կը դառնային այն ժամերուն, այն միշտ նորէն նոյն հոտը կը զգար: Ասիկա, բշիժկներուն խօսքով, նշան է, որ ամբաստանեալի հոգին խռոված էր, այնպէս որ՝ երբ պատկերները կու գային, ան այլեւս իր կամքին տէրը չէր: Եթէ ես կամքիս տէրն եմ, կաղամարը հոտոտելով դիակի հոտ չեմ զգար. բայց եթէ գիտեմ, որ թերեւս առաջ այդ կաղամարով մարդ մը սպաններ են, ու յետոյ կաղամարը հոտոտելով կարծեմ, թէ իրապէս դիակի հոտ կ’առնեմ, յն ատեն այլեւս ազատ կամքիս տէրը չեմ:

Ինչպէս գիտէք, կան նման “գլխապտոյտի բռնկումներ”. կան մարդիկ, որ դիւրաւ կը կարծեն, թէ գլուխնին կը դառնայ: Երբ անոնք լեռ կը բարձրանան, պէտք է որ բանէ մը բռնեն, թէւ վար իյնալու ոչ մէկ վտանգ կայ: Այսպէտով, կան երեւակայութիւններ, զորս կարելի չէ վանել օրինակի համար՝ մէկը կը նայի պատուհանէն վար ու շարունակ կը խորհի. “դուն պէտք է վար նետուիս”: Այդպարագային լաւագոյնն է գոցել պատուհանը եւ հեռանալ անկէ. արդարեւ, ո՞վ կրնայ ըսել, որ այդ մարդը, եթէ հոգեպէս հիւանդոտ տրամադրութիւն ունի, դուրս չէ նետուիր. որովհետեւ հոգեկան ստիպումը անդիմադրելի է: Պ.պ. իրազեկները բացատրեցին մեզի այդ շատ գեղեցիկ կերպով, այնպէս որ կրնանք վստահօրէն իրենց հետեւիլ:

Հիմայ ամեն մէկը իրեն հարց կու տայ. “ի՞նչ է կատարուեր ամբաստանեալի հոգին մէջ. ի՞նչը, իբրեւ հարկադրիչ մտապատկեր, նուաճեր է զինքը”: Ան ինքը տուաւ մեզի ամենալաւ բացատրութիւնը “Թալէաթը տեսնելը”: Երբ ան եկավ Բերլին, Թալէաթներու մասին չէր խորհեր, չէր խորհեր նաեւ մէկ ամիս այստեղ ապրելէ ետքը: Բայց երբ օր մը, Հարդէնբերգ փողոցէն անցնելու միջոցին, ան երեք թուրք տեսաւ եւ նկատեց, թէ ինչպէս անոնցմէ մէկը խոնարհեցաւ միւսին առջեւ ու “փաշա” ըսաւ անոր, ու երբ՝ համեմատելով թերթի մէջ լոյս տեսած պատկերը՝ ճանչցաւ որ “փաշա”ն Թալէաթն է եղեր, այն ատեն Թալէաթը դարձաւ անոր համար այն, ինչ որ մէկ ուրիշի համար այսպէս կոչուող կարմիր լաթն է : Այդ նոյն մարդը ն նորէն տեսաւ դէպքի առտուն. ան իջաւ փողոց: Ի՞նչ մտապատկերներ կը դառնային իր ուղեղին մէջ, երբ վերցուց

ատրճանակը, իջաւ վար եւ արձակեց իր գնդակը: Ատոնք մտապատկերներ են, որ կապուած են Թալէաթի անձին հետ:

Ես չէի ուզեր ներս բերել քաղաքականութիւնը դատասարահին մէջ. բայց չեմ կրնար չմատնանշել, որ այդ ըրաւ պ. դատախազը, ըսելով որոշ բաներ ի նպաստ Թալէաթի: Եթէ այդ տեղի ունեցած չըլլար, թերեւս պէտք չունենայի արտայայտուելու ընդդէմ այս վերջինիս: Ըսուեցաւ, որ այստեղ սպաննուած է “Գերմանիոյ դաշնակիցը”: Այդ ճիշդ չէ Թալէաթը եւ իր կոմիտէն դաշնակիցներն էին պրոսական եւ գերմանական նախկին զինուորական կառուարութեան: Գերման ժողովուրդի դաշնակիցներ այդ մարդիկը երբէք եղած չեն: Բայց որովհետեւ այնուամենայնիւ ըսուեցաւ, թէ Թալէաթը Գերմանիոյ դաշնակիցն էր, չեմ ուզեր առիթը փախցնել եւ պարտականութիւնս կը նկատեմ առանձնապէս շեշտելու - այդ երիտասարդ թուրք մարդիկը երբէք գերման ժողովուրդի դաժնակիցները չէին: Ճիշդ է, անոնք տապալեցին հին թուրք կառուարութիւնը եւ ծով մը արեւան գնով մօտ տասը տարի իշխանութիւնը իրենց ձեռքը պահեցին: Ճիշդ է նաեւ, որ գերման նախկին կառուարութիւնը դաշնակցած էր անոնց հետ. բայց ան դաշնակցած էր նաեւ Լենինի եւ Տրօցկիի հետ, զորս անկէ առաջ անցուցած էր Գերմանիայէն՝ Ռուսիոյ մէջ յեղափոխութիւն կատարելու համար: Այդ նոյն կառավարութիւնը հարցուցած էր նաեւ Հազէին՝ թէ չի՞ ճանչնար արդեօք ո եւ է երկրի մէջ քանի մը յեղափոխականներ կամ անիշխանականներ, զորս կարելի ըլլար դրդել յեղափոխութիւն յառաջ բերելու: Բայց թէ Թալէաթը գերման ժողովուրդին դաշնակիցը եղած է, այդ եւ երբէք ու ոչ մէկ պարագայի տակ կրնամ ընդունիլ: Թալէաթը անհատապէս կրնար ուղիղ մարդ ըլլալ. բայց ան միլիթարիստներու դահլիճի մը անդամ էր, իսկ միլիթարիստը այն է, ինչ որ իրաւունքի հակառակն է: Միլիթարիստը այն մարդը չէ, որ կոչումով զինուորական է: Կարելի է սպայ կամ զինուորական ըլլալ, միշտ համազգեստ կրել, շարունակ զէնքի հետ գործ ունենալ եւ միեւնոյն ատեն միլիթարիստ չըլլալ: Սպան եւ զինուորը եւս կրնան պահպանած ըլլալ իրենց մէջ իրաւունքի եւ արդարութեան սկզբունքները եւ կատարել իրենց պաշտօնին պարտականութիւնները: Բայց միւս կողմէն կան անթիւ միլիթարիստներ, եթէ ոչ ամէնքը, որ երբէք զինուորական համազգեստ չեն հագած, որ նստած են կաղամարին առջեւ, յօդուածներ կը գրեն ու գազանօրէն կը պաշտպանեն բռնի ուժի դրօշակը: սսս Միլիթարիստը բռնի ուժին մարդն է՝ ընդդէմ արդարութեան մարդուն: Այս վերջինս արդարութիւնը աշխարհին մէջ ամէն բանէ բարձր կը դասէ: Եթէ հաւատացեալ է՝ իրեն համար Աստուծմէ անմիջապէս ետքը կու գայ արդարութիւնը եւ ապա միայն մարդը: Եթէ հաւատացեալ չէ՝ մարդը, իբրեւ սուրբ կը գրավէ առաջին տեղը: Միլիթարիստը տարբեր կը խորհի. ան ուժի մարդ է, եւ իրաւունքը իրեն համար այնչափ միայն արժէք ունի, որչափ որ կարելի է “համաձայնեցնել” զայն՝ ինչպէս որ կ’ըսուի սովորական դարձած նախադասութեան մը մէջ՝ “զինուորական անհրաժեշտութիւններուն”: Միլիթարիստներ կը գտնէք երկրագունդի բոլոր ժողովուրդներուն մէջ: Անոնք կապուած չեն ոչ մէկ որոշ ազգի, երկրի կամ սահմանի: Անոնք կը կազմեն կաստա մը, միացեալ ու միաբան դաս մը, միլիթարիստներու կաստան, բռնի ուժի մարդոց կաստան՝ ընդդէմ արդարութեան մարդոց դասին: Մենք ինքնիստ ալ այս պահուստ սուկալիօրէն կը տուժենք միլիթարիստներէն, որոնք պիտի որոշ ազդեցութիւն ունենան Ռենուսի միւս կողմը: Ո՞վ գիտէ, թէ մենք դեռ ինչոր պիտի քաշենք բռնութեան մարդոց ձեռքէն: Մենք մեզ մօտ եւս բռնի ուժի մարդիկ ունեցանք, մենք կարգ մը անձեր դրկեցինք

Թուրքիա՝ հոն զինուորականությունը մարզելու համար, ինչ որ բնաւ մեր գործը չէր: Մենք միլիտարիստներ տեսանք Ռուսիոյ մէջ, եւ հիմայ մեծամասնականներն են, այդ իսկական միլիթարիստները, հոն իշխանութեան գլուխը: Ամէն տեղ մենք կը գտնենք միլիթարիստներ: Անոնք ունին մարդուն արտաքինը, անոնք ունին ուղեղ, բայց իրենց ուղեղին մէջ կը պակասի այն գործարանը, որ կը ներկայացնէ արդարութիւնը: Ինչպէս որ կան շատ կենդանիներ, որոնք երբէք մարդկայնօրէն զգացող սիրտ մը չպիտի ունենան, այդպէս ալ կանգնած են միլիթարիստները բոլոր ազգերուն հանդէպ: Անոնք պատերազմ կ'ուզեն. ու բռնի ուժի մարդիկ են եւ ոչ թուրք ժողովուրդը, որ ոչնչացուցին հայ ժողովուրդը:

Ժողովուրդ մը տեղահանելու հրամանը ամէնէն հրէշային բանն է որ կրնար ծնունդ առնել միլիթարիստի մը ուղեղի մէջ: Եթէ, ինչպէս որ հոս շեշտուեցաւ, Երիտասարդ թուրքերու կօմիտէն ուներ այն համոզումը, թէ լաւ ժանդարմները հեռացած են, եւ իր ձեռքին տակ, իբրեւ ժանդարմներ, սինլքորներ են միայն, այն ատեն ան իրաւունք չունէր տեղահանութեան հրամանը տալու: ու եթէ ան այնուամէնայնիւ տուաւ զայն ու վստահեցաւ սեղահանութեան գործը նման մարդոց, ապա ուրեմն ինքն է պասասխանատու հետեւանքին համար: Ես բոլորովին հակառակ կը դնեմ խնդիրը, ես անշուշտ յանցաւոր կը նկատեմ ժանդարմները, որոնք ճամբան ոճիրներ գործեցին, բայց ոչ այնչափ յանցաւոր, որչափ Պոլիս եղող այն անձը, որ տեղահանութեան գործը տուաւ նման մարդոց ձեռքը: Ամբողջ մեղքը կ'իյնայ կառաւարութեան վրայ, որը տուաւ տեղահանութեան հրամանը եւ իրագործեց զայն կասկածելի մարդոց միջոցով:

Ես կանգնած եմ այն տեսակետին վրայ, թէ առանձին անհատը երբէք ինքը չէ, որ կ'որոշէ, թէ կ'ուզէ՞ պատերազմ երթալ թէ ոչ: Անգամ մը որ պատերազմ յայտարարուած է, այդ առանձին անհատն ալ կը քաշուի կը տարուի, ու այն ատեն ուզէ չ'ուզէ պիտի երթայ Երբ պատերազմին բախտը իր ժողովրդին դէմ կը դառնայ, ու ինքն ալ դերի կ'իյնայ, այդ պարագային թշնամին պետք է գիտնայ, թէ գերին ինքը չէ որ յառաջ է բերեր պատերազմը, այլ՝ համաձայն իր պարտականութեան՝ գործեր է որպէս ներկայացուցիչը իր ժողովուրդին: Ամէն մէկ գերի սուրբ մըն է, որովհետեւ ան իր ժողովուրդին ներկայացուցիչն է, որ իր տան ու հայրենիքին համար ստիպուած էր պատերազմ երթալու եւ այժմ դժբախտ բերումով մը գերի ինկած է: Ով որ հայիոյական խօսքեր կ'ուղղէ գերիի մը կամ ձեռք կը բարձրացնէ անոր դէմ, այդպիսին իմ տեսակետով այլեւս տեղ չունի պարկեշտ մարդոց հասարակութեան մէջ. որովհետեւ ամէն մէկ գերիին մէջ ես կը յարգեմ իր ժողովուրդին ներկայացուցիչը, որ պատերազմելու է ելեր իր հայրենիքին համար եւ գերի իյնալու դժբախտութիւնն է ունեցեր:

Այդ պետք էր որ գիտնար Պոլսոյ կառավարութիւնը: Եթէ հայերը մինչեւ իսկ դաշնակցած ըլլային ուրիշ ժողովուրդներու հետ, եթէ մինչեւ իսկ կուրացած վարիչ մը դաւաճանութիւն գործած եւ ռուսերուն միացած ըլլար, Երիտասարդ թուրքերը այնուամէնայնիւ գիտէին, որ կային հազարաւոր կիներ եւ երեխաներ, որոնք այս պատմութիւններէն բնաւ լուր չունէին, եւ որ տեղահանութեան հրամանին առաջին պայմանը պետք է ըլլայ խիստ կարգադրութիւնը՝ հոգալ կիներու, երեխաներու եւ այն այրերու մասին, որոնք կապ չունին այն դաւաճաններուն հետ: Եթէ ես առհասարակ մահապատիժին հակառակ չըլլայի, ամեն պարագայի մէջ արդարացի պիտի

նկատելի զայն այն անձին համար, որ “ռազմական անհրաժեշտության” նկատումով կու տայ հրաման մը՝ առանց իր վրայ առնելու անոր հետեւանքներուն պատասխանատւութիւնը՝ անմեղներու նկատմամբ: Ես պարզապէս բարնաջանք կը նկատեմ, երբ այս սրահէն դուրս կ’ըստի, թէ տեղահանութիւնը անոր համար էր, որ հայերը դաշնակցած էին ռուսերուն հետ, եւ որ “ռազմական անհրաժեշտութիւնները” կը պահանջէին այդ: Եթէ հոն, առանձին լեռնային գիւղերու մէջ մնար ժողովուրդին այս կամ այն հատուածը, ասիկա բնաւ կապ չունէր “ռազմական անհրաժեշտութիւններուն ” հետ: Եթէ դուք նայէք Կովկասի եւ Արարատեան շրջանի քարտէսը, կը գտնէք հոն ընդարձակ տարածութիւններ, շատ աւելի մեծ քան Գերմանիան: Հոն երկու հազար տարիէ ի վեր դժբախտ ժողովուրդ մը կ’ապրի. իրմէ վար՝ մէկ կողմը կը տարածուի այն արգաւանդ դաշտը, որ միշտ կը գրգռէ նուաճողական ձգտումներ ունեցող ազգերու ախորժակը, միւս կողմը՝ սուկալի անապատ մը. իսկ իրմէ վեր կը գտնուին այն լեռնացքերը, որոնք միշտ օտարներու ձեռքն են եղեր: Ով տէր է այդ անցքերուն, տէր է նաեւ բարձրագուտին: Այս բարձրագուտին մէջ ապրող ժողովուրդը՝ երկրագործ հայր աւարն է անոնց, որոնք կու գան աջէն ու ձախէն: Աւելի քան 500 տարիէ ի վեր Հայաստանը երեք մասի բաժնուած է: Օտար ցեղեր, մէկը միւսի ետեւէն, սրացեր անցեր են Հայաստանի մէջէն: Նոյն ցեղերը, որոնք ամայացուցին Առաջաւոր Ասիան, Հունգարիան եւ հասան մինչ Ռենոս, մարդիկ՝ նման Ատտիլայի, որոնք կը շարունակեն ապրիլ մեր մանկական յիշողութեանց մէջ, ամենաքստմնելի կերպով երեւցան նաեւ Հայաստանի մէջ՝ ոչնչացնելու համար ժողովուրդը:

Այս դժբախտ արհեստաւոր եւ երկրագործ ժողովուրդի դէմ էր որ յարձակեցաւ Երիտասարդ թուրքերու կառաւարութիւնը: Երիտասարդ թուրք ըսելով իրապէս հասկնալու է հին թուրքը, իսկ հին թուրք ըսել է բռնի ուժի մարդ, միլիթարիստ: Պատճառները միայն կրօնական չէին, այլեւ քաղաքական:

Այս վերջիններու մասին մենք արդէն լսեցինք: Երբ 1914ի օգոստոս 1ին պայթեցաւ պատեւազմը, Երիտասարդ թուրքերու կօմիտէն այսպէս խորհեցաւ. “Հիմայ մենք կրնանք լմնցնել մեր գործը նաեւ հայերուն հետ. աշխարհիս մեծ պետութիւններէն ոչ մէկը կրնայ այլեւս օգնել իրենց”: Մենք լսեցինք պ. Դր. Լէպսիուսէն, թէ առաջները այս կամ այն մեծ պետութիւնը միշտ օգնէր է հայորուն: Կնքուէր են միջազգային համաձայնութիւններ՝ հայերու կացութիւնը բարուրդելու համար, ապահովելու համար անոնց իրավունքը՝ ազգ մը դառնալու: Բայց ահա ծագեցաւ մեծ պատերազմը, եւ թուրքերը կրնային լմնցնել իրենց գործը հայերուն հետ: Մակայն ասիկա միակ հիմը չէր. մենք լսեցինք, թէ այն երկու հայ ընտանիքները, որոնք կոտորածէն ազատելով՝ մնացեր էին Երզնկայի մէջ, պէտք էր մահմետական դառնային ողջ մնալու համար ասով անուղղակի կերպով տրուած կըլլայ պ. պ. երդուեալներէն մէկուն հարցումի պատասխանը: Կար նաեւ կրօնական ատելութիւն եւ ֆանատիկոսութիւն: Կ’ուզէին կոտորել քրիստոնէաները, կ’ուզէին միայն մահմետական հայեր ունենալ, որովհետեւ կը յուսային, թէ Ղուրանի սահմաններուն մէջ կարելի պիտի ըլլար աւելի դիւրին իրագործել բռնի ուժի հին-թուրքական գաղափարը:

Հին թուրքական կայսրութիւնը եւ իր բոլոր նուճումները կը հանգճին զինուորական ուժի գաղափարին վրայ, եւ ուժի այս գաղափարը անմիաբանելի է Հին եւ Նոր կտակարաններու վարդապետութեանց հետ, թերեւս նաեւ ճիշտ ըմբռնուած Ղուրանին հետ, ու ամենէն առաջ իր բովանդակութեամբ անմիաբանելի է, “ սիրէ մերձաւորդ որպէս քու անձդ” սկզբունքին հետ: Ասոր համար ալ Երիտասարդ թուրքերը օգտուեցան առիթէն՝ իրենց հեռաւոր սահմանին վրայ ապրող այդ միակ քրիստոնէայ ժողովուրդը ոչնչացնելու համար: Անոնք չհամարձակեցան ընել այդ՝ Պոլիս ապրող հայերուն նկատմամբ. բայց հեռաւոր սահմաններու մասին՝ վալիներուն ուղղուած հեռագիրներով, որոնց պատճէնները կը գտնուին մեր ձեռքը, Երիտասարդ թուրքերը կը հրամայէին, որ հայ ժողովուրդը այլեւս գոյութիւն չպիտի ունենայ: Ատկէ գատ անոնք կը հրահանգէին, թէ այն վալիները, որոնք լաւ են տրամադրուած դէպի հայերը, ուրիշ շրջաններ դրկելու է, իսկ եթէ այդ ալ չօգնէ՝ պաշտօնանկ ընելու է: Ու ահա մենք ունինք մեր առջեւ սպանութիւնը ժողովուրդի մը, որուն ոչնչացման պատասխանատուութիւնը կ’իյնայ Երիտասարդ թուրքերու կօմիտէին եւ մասնաւորապէս անոնց ամենաազդեցիկ նախարար Թալէաթի վրայ:

Ամբաստանեալի մտքին մէջ 1921ի մարտ 15ին ժամը 11ին տեղի կ’ունենայ հաշուեկշիռը իր ժողովուրդի հազարամեայ տանջանքներուն, որոնց մասին ան լիակատար տեղեկութիւններ ունէր: Ասոր վրայ կ’ավելնայ այն, որ 1915ին ինքը անձամբ ալ մաս ունեցաւ այդ տանջանքներէն, երբ իր քաղաքին հայ բնակիչները կոտորուեցան կէս ժամ քաղաքէն հեռու: Կոտորածին քստմնեցուցիչ տեսարանը մեծ ազդեցութիւն ունեցաւ իր հոգեկանին վրայ: Այդ ամէնը մարտ 15ի առտուն նորէն երեւցաւ իր աչքին առջեւ: Անոնք Վիլմիլմա Տէլլի դէպքը: Գէսպէր կը ծաղրէ ու կը հեզնէ ժողովուրդը, կը կանգնէ ստրկութեան նշանակը, կը ստիպէ տէլլը՝ նետու զարնել հարազատ զաւակի գլխուն վրայ դրուած խնձորին: Այդ կուսակալը Հին-թուրքերու, բռնի ուժի մարդոց արիւնէն է: Այն միտքը, որ կը ծագի այդ վայրկեանին վիլիլմա Տէլլի մէջ, կը սաւառնի Թէհլիրեանի աչքերուն առջեւ: Ամբողջ աշխարհի երդուեալներու դատարաններէն ո՞րը պիտի դատապարտէր Տէլլը, եթէ ան իր նետովը գետին տապալէր կուսակալը: Ես կը հարցնեմ՝ կա՞յ արդեօք աւելի մարդկայնական բան մը, քան այն ինչ որ այստեղ մեր առջեւ հանուեցաւ: Մէկ միլիոն սպանուածներու, ամբողջ ժողովուրդի մը վրիժառուն է, որ կանգնած է այդ ժողովուրդի սպանութեան համար պատասխանատու անձին, բոլոր տանջանքներու հեղինակին դիմաց: Հոգեկան ստիպում չէ՞ ասիկա: Պէտք ունի՞նք տակաւին մօր պատկերին եւս՝ ունենալու համար նաեւ արտաքին բժշկական հարկադրիչ մտապասկերները: արդ, մենք ունինք նաեւ այդ պատկերը: Ամբաստանեալը երեւան կու գայ միաժամանակ որպէս ներկայացուցիչը իր ընտանիքին, իր մօր: Մայրը կ’ըսէ իրեն. “Այլապէս դուն այլեւս իմ որդին չես”: Այս բոլոր խոհերը կը լեցնեն զինքը, երբ ասորձանակը կ’առնէ ու վար կ’իջնայ: Ան, այսպէսով, վար կ’իջնայ, ներկայացնելու համար արդարութեան ոգին ընդդէմ բռնի ուժի սկզբունքին: Ան վար կ’իջնայ, ան՝ ներկայացուցիչը մարդկայնութեան ընդդէմ հակամարդկայնութեան, ներկայացուցիչը արեւային իրաւունքին ընդդէմ խաւար անիրաւութեան: Ան կու գայ իբրեւ ներկայացուցիչը ճնշուածներուն՝ ընդդէմ ճնշողներու հաւաքական ներկայացուցիչին: Ան կու գայ յանուն մէկ միլիոն սպանուածներու ընդդէմ մէկուն, որը՝ ուրիշներու հետ միասին՝ այդ ոճիրներուն մեղքը ունի: Անկու գայ իբրեւ ներկայացուցիչը իր ծնողքին, իր քոյրերուն, իր քեռայրին ու եղբայրներուն, եւ ի

վերջոյ իբրեւ ներկայացուցիչը իր քրոջ երկուքուկէս տարեկան մանկան: Հայ ազգը, հազար տարիէ ի վեր մինչեւ ամէնէն փոքրիկ երեխան, կանգնած է անոր ետին: Ան կը կրէ - ու ասոնք են իր խոհերը - դրօշակը արդարութեան, դրօշակը մարդկայնութեան, դրօշակը վրեժխնդրութեան՝ իր քոյրերու եւ ազգականներու պատուին համար: Այս խոհերով ան կ'ելլէ ընդդէմ անոր, որ պղծել տուաւ իր ընտանիքին պատիւը, ոչնչացնել տուաւ ամէնքին բարօրութիւնը, ամբողջ ժողովուրդ մը բնաջինջ ընել տուաւ մարմնապէս: Ամբաստանեալը հոգեպէս հիւանդ մարդ մը դարձաւ, եւ դուք, պ. պ. երդուեալներ, որոշելու էք, թէ ինչ է տեղի ունեցեր անոր հոգիին եւ ուղեղին մէջ՝ սպանութիւնը կատարելու պահուն, թէ ան տէ՞ր էր արդեօք իր կամքին:

Պարոններ, ես հաստատ համոզումը ունիմ թէ՛նախ քան իմ կողմէն խօսք մը ըսուած ըլլար՝ դուք արդէն սա կարծիքը ունէիք. “Ապացուցուած չէ, թէ ան տէր էր իր կամքին”:

Եթէ իմ թոյլ խօսքերս բան մը աւելցուցին, այդ այն է որ անոնք ուզեցին տալ իրաւաբանական հիմերը, որպէսզի դուք գիտնաք, թէ ինչպէս դատելու էք նաեւ իրաւաբանօրէն:

Նկատողութեան առեք, պարոններ, այն եւս, որ մարդկութեան նայուածքը ուղղուած է ձեր որոշումին, որ արդարութեան աչքը, կատարեալ համաձայնութեամբ մարդկութեան զգացումներուն հետ, ձեզի կը սպասէ: Ըսէք պարզապէս. “Ան յանցաւոր չէ: մնացածը մեր գործը չէ”:

Պաշտպան Դր. Նիմայեր, գաղտնի խորհրդական եւ Պրոֆ. Կիլի համալսարանի իրաւագիտական բաժնի:

Դր. Նիմայեր. — պ. պ. երդուեալներ, մէկ հատիկ հարցի մըն է որ մենք պէտք է պատասխանենք, որովհետեւ այդ միակ, առաջին հարցն է, որ նախ կանգնած է մեր առջեւ: Այդ հարցը հետեւեալն է. յանցաւոր է արդեօք Սողոմոն Թէհլիրեանը՝ սպանութիւն գործած ըլլալուն համար. պէ՞տք է արդեօք ան իր գլուխը դնէ կտափնարանի կոճղին վրայ եւ քաւէ մարտ 15ի դէպքը: Ձենէ ամէն մէկը առանձնապէս երկու խնդիր ունի լուծելու: Նախ, պէտք է կենդանացնել իրականը իրեն իսկ մէջ՝ կարելի եղածին չափ ճշմարտութեանը համապատասխան, եւ այդ ընելու է պատժական օրինագրքին տրամադրութեան իմաստով: Երկրորդ խնդիրը այն է որ պէտք է կշռել, թէ ինչ իմաստ ունի ձեր դատաւորական գործունէութիւնը: Վերջինս երկու տեսակի է: Պատժական օրինագիրքը՝ սակաւաթիւ յօդուածներէ գատ, որոնց մասին մինչեւ այժմ խօսք եղաւ՝ ունի շատ մը ուրիշները եւս: Յոգուածները կազմուած են հատուածներէ, հատուածները՝ նախադասութիւններէ, նախադասութեանց մասերէ, վերջինները՝ բառերէ, եւ բառերը՝ վանկերէ: Իւրաքանչիւր յօդուածի միջեւ եւ յօդուածի ներսը կ'անցնի անվերջ բազմութիւն մը բաներու, զորս մենք իրաւագիտական թելեր կը կոչենք. ու այդ թելերուն վրայ, եթէ անոնք իսկապէս իրաւագիտական են ու երեւան կու գան իբրեւ արտայայտութիւն, իբրեւ սիւսթեմ արդարադատութեան իրագործման - այդ թելերուն վրայ մարդ կը սայթաքի, երբ կը հաւատայ անոնց: Չկայ գրեթէ ոչ մէկ ըմբռնում, ոչ մէկ մեկնութիւն

իրաւագիտական կանոններու, օրինաց յօդուածներու, գորս մարդ չկարենար պաշտպանել ինչ ինչ տրամաբանական հիմերով: Եթէ խնդիրը հոս միայն ասոր մասին ըլլար, այն ատեն ես պատիր չպիտի ունենայի այստեղ գտնուելու, այն ատեն իմ պաշտօնակից-պաշտպաններու եւ ամբաստանեալի բարեկամներու վստահութեամբը կոչուած չպիտի ըլլայի՝ իմ բաժինս բերելու պաշտպանութեան գործին: Իմ պաշտօնս այն իմաստը ունի որ ես կարենամ այստեղ բան մը արժեցնել այն ընդհանուրը, որ գոյութիւն ունի իրավագիտութեան ուսուցիչի եւ երդուեալներու դատարանի կոչումին մէջ: Իրաւագիտութեան կոչումն է՝ ճանչնալ կապակցութիւններ եւ մեռեալ յօդուածներուն կենդանի իմաստ ներշնչել: Մեծ մասով մենք կրնանք այդ ընել այնպէս, ինչպէս որ կը համապատասխանէ կեանքի իմաստին, պետութեան իմաստին, հասարակութեան իմաստին, մարդկային համայնակեցութեան իմաստին:

Երդուեալներու դատարանը աշխարհի ամէնէն հին դատարանն է: Գերմանացիները, հռոմայեցիները, անգլիացիները երդուեալներու դատարանով սկսած են: Հռոմէական դատաւորը, գերմանական “շէֆֆէ”ն երդուեալներ էին, սուրբական ոչ մասնագէտ մարդիկ. իրաւագէտը միայն վարիչն էր դատին: Այն առողջ ըմբռնումը, թէ խիստ, որոշիչ, երկսայրի եւ իրաւագիտական գաղափարներու եւ յօդուածներու մէջ որպէս ջրաբաժին գործող տրամաբանութիւնը թէեւ անհրաժեշտ է թեքնիքի, լուսաբանութեան, նախապատրաստման, հրահանգման համար, սակայն արդարադատութեան իրագործման համար չի կրնար վերջին եւ վճռական ազդակը ըլլալ - աս է հիմնական իմաստը երդուեալներու դատարանին, եւ այդ՝ նպատակին երկու կողմերու նկատմամբ եւս, այսինքն՝ մէկ կողմէն գնահատել դէպքին էութիւնը՝ սեփական ազատ հայեցողութեամբ, անկախ ձեւական ապացուցման կանոններէ, եւ միւս կողմէն՝ գնահատել օրենքի տրամադրութեան իմաստը:

Ու եթէ ես այժմ կանդ պիտի առնեմ առանձին թեքնիք խնդիրներու վրայ, այդ պիտի ըլլայ շատ կարճ եւ այն չափով, որ չափով ինծի անպայմանօրէն անհրաժեշտ կը թուի: Ես պիտի խօսիմ գլխաւորաբար գործի կապակցութեանը մասին:

Ես չեմ խօսիր յանցանքը խորհրդածեալ ըլլալու կամ չըլլալու խնդրին մասին. ես չեմ խօսիր մեղմացուցիչ պարագաներու մասին. աւելի եւս նուազ կը խօսիմ ներման մասին, որ պիտի սրբագրէր այն անարդարութիւնը, գոր մենք հոս կրնայինք գործել: Ինձ համար տարակոյս չկայ որ այն վայրկենին, երբ կատարուեցավ դէպքը – ու այս վերջինս է միայն որ խնդրի առարկան կը կազմէ - նոյն վայրկենին տեղի չունեցաւ ո եւ է խորհրդածութիւն, եթէ մինչեւ իսկ առաջուրնէ տեղի ունեցած ըլլային ամենամանրակրկիտ խորհրդածութիւններ: Այն որ խորհրդածութիւնը մերժելու դէպքին կրնան ընդունուիլ մեղմացուցիչ պարագաներ, այդ չի կրնար ո եւ է դեր խաղալ գլխաւոր խնդրին համար: Ատիկա կըլլար այն դիրասիրութիւնը – հոս կարելի է նոյն իսկ ամենախիստ արտայայտութիւնը գործածել - ատիկա կ'ըլլար բարեխղճութեան այն պակասը, ու կը գլտորէ պատասխանատուութիւնը դատական յետագայ աստիճաններու, ուրիշ ատեաններու վրայ: Այստեղ կրնայ խօսք ըլլալ միայն՝ կանխամտածուած սպանութեան հարցին “այդ” կամ “ոչ” պատասխանելու մասին:

Այն խնդիրը, թե արարքին հեղինակը ի վիճակի՞ է հաշիվ տալու ինքն իրեն՝ իր ըրածներուն համար, իմ տեսակետով արդէն պարզուած է, եւ ամէնէն առաւ՝ երկու պատճառներով: Մէկ այն է որ իրազեկները եւ ասոնցմէ մանաւանդ պ. Դր. Շտեօրմէր, որ ամէնէն աննպաստ կերպով խօսեցաւ ամբաստանեալին համար, վճռականապէս ըսաւ. “Որն է եղեր հոգեկան վիճակը դէպքի կատարման պահուն՝ այդ եւ չեմ գիտեր, այդ ոչ ոչ կրնայ գիտնալ”: Նոյնը ըսաւ նաեւ Պրոֆ. Կասիրէր: Եթէ այդ ոչ ոք գիտէ, այն ատեն պէտք չէ այնպէս վճռել, ինչպէս որ պիտի ընէին, եթէ գիտնային: Երկրորդ պատճառը այն է որ ամբաստանեալը կատարեր է իր գործը առանց ո եւ է ծրագրի: Շատ աւելի հասկնալի կ’ըլլար, եթէ ան աւելի երկար հետապնդէր Թալէաթ փաշան: Իրեն համար կրնար աւելի նպաստաւոր առիթ ներկայանալ, քան ան որ ներկայացաւ Հարդէնբերգ փողոցին մէջ: Սակայն եւ չեմ ուզեր ասիկա աւելի մանրամասն լուսաբանել: Իմ տեսակետով արդէն լիուին պարզաբանուած է, որ այդ վայրկեանին գոյութիւն չունէր ոչ միայն խորհրդածութիւն, այլ եւ կամքի ազատ տրամադրութիւն:

Բայց ամէնէն մեծ կշիռը եւ պիտի տամ հետեւեալ նկատումին.

Օրէնքի այն յօդուածը, որու հիման վրա դուք պիտի տաք ձեր վճիռը, հետեւեալը կ’ըսէ. “Ով որ դիտաւորեալ կերպով մարդ մը կը սպաննէ, ան՝ եթէ սպանութիւնը խորհրդածութեամբ կատարած է՝ նման սպանութեան համար մասամբ կը պատժուի”: Ենթադրեցէք թէ Սողոման Թէհլիրեանի գլուխը ինկաւ դահիճի կացինին տակ. ըւ, վերջապէս, ենթադրեցէք թէ՝ փախուած պարագաներու մէջ՝ մէկը դատ կը սկսի դահիճին դէմ, ամբաստանելով զինքը կանխամտածուած սպանութիւն կատարած ըլլալուն համար: Չէ՞ որ “ով դիտաւորեալ կերպով մարդ մը կը սպաննէ, ան՝ եթէ սպանութիւնը խորհրդածութեամբ կատարած է նման սպանութեան համար մահուամբ կը պատժուի”: Պէ՞տք է որ դուք, պ.պ. երդուեալներ, դահիճը մահուամբ պատժէք, ըսելով ձեր վճիռին մէջ՝ “այո՛, ան յանցաւոր է մահուան համար !” Այստեղ, Բերլինի մէջ, 40 տարի առաջ իրաւագիտութեան ուսուցիչ մը կար, որ ատիկա լրջորէն կը պնդէր: Խնդրին մէջ նկատի առնուած փոքրիկ բան մը. այն է որ պատժական օրինագրքին շատ մը յօդուածներու մէջ վճռականապէս չըսուի թէ՝ պատժելիութիւնը կախուած է ապօրինութենէն եւ ապօրինութեան դիտակցութենէն: Աւելցուցէք վերը յիշուած օրէնքի յօդուածին այդ բառը այս ձեւով՝ “Ով որ ապօրինի կերպով եւ այլն մարդ մը կը սպաննէ...”, այն ատեն ճիշդ կը լինի: Ու կատարեալ համաձայնութիւն կը տիրէ այն բանին շուրջը, թէ պատժելիութեան համար միշտ ալ ապօրինութիւն կը պահանջուի: Ատոր հետ մէկտեղ պէտք է որ ըլլայ նաեւ ապօրինութեան գիտակցութիւնը: Որ ամբաստանեալը առարկայօրէն ոչ թէ օրէնքին համաձայն, այլ օրէնքին հակառակ, ապօրինի կերպով է գործեր, այդ թերեւս առաջին նայուածքով անտարակուսելի թուի, բայց եւ այնպէս ոչ բոլորովին անտարակուսելի է: Արդարեւ, դէպքը կատարուելու ատեն թուրքերու եւ հայերու միջեւ պատերազմական վիճակ կը տիրէր, եւ այդ երկուքը՝ միջազգային իրաւունքի տեսակետով՝ իբրեւ թշնամիներ ընդունելու էր: Ուստի անտարակոյս չէ, թէ Գերմանիոյ սահմանադրութեան 4րդ յօդուածը չէ՞ արդեօք, որ այս պարագային նկատի պիտի առնուի. իսկ ըստ այդ յօդուածի՝ միջազգային իրաւունքի ընդհանուրի կողմէն ճանչցուած հիմնական կանոնները կը կազմեն գերմանական իրաւունքի բաղկացուցիչ մասերը: Միջազգային իրաւունքի նաեւ այն հիմնական

կանոնները, որոնք կը վերաբերին միայն որոշ պետություններու, կրնան՝ նոյն իմաստով՝ միջազգային իրաւունքի ընդհանուրի կողմէն ճանչցուած հիմնական կանոնները ըլլալ: Ես պետք չունիմ սակայն ասոր մասին երկար խօսելու: Ինչ որ այստեղ խնդրին նիւթ կրնայ ըլլալ, այն է որ ներկայ դէպքին՝ ապօրինութեան գիտակցութիւնը ամբաստանեալին քով երեւան կու գայ յարաբերաբար - ազգայնօրէն գունաւորուած:

Գործողութեան օրինականութեան կամ ապօրինութեան գիտակցութիւնը արեւելյան ժողովուրդներուն քով բոլորովին ուրիշ կերպ է գունաւորուած, քան մեր քով: Թէիլիբեանի հոգին եւ մասնաւորաբար ապօրինութեան գիտակցութեան քննութեան ատեն մենք պետք է ելլենք այն իրողութենէն, որ արեւելցիներու քով, որոնց թուին կը պատկանին նաեւ հայերը (թէեւ վերջիններս քրիստոնէայ են, ալսած մօտաւորապէս 300 թուականէն), իրաւունք, կրօնք եւ բարք բոլորովին մէկ են: Ամէն մէկ թուրքական աղանդ տարբեր կրօնք մը ունի: Պարսկական շիաները ունին շիայական իրաւունք, որովհետեւ անոնց համար վաւերական է միայն Ղուրանը (ինչպէս որ բողոքականներու համար Սուրբ Գիրքը՝ առանց աւանդութեան), առանց Սուննայի (աւանդութեան): Հանէֆական թուրքերուն քով, Ղուրանէն զատ, գոյութիւն ունի նաեւ Սուննան: Այսպէսով, իրաւագիտակցութիւնը, տարբեր է այն պատճառով, որ անոնք տարբեր դաւանութիւն, տարբեր կրօնք ունին: Այսպէս է նաեւ արեւելեան քրիստոնէաներուն քով կրօնքը - եւ այդ է միանգամայն պատճառը եւ ներգործութիւնը ներկայ դէպքին էութեան - կրօնքը անոնց քով դարձած է կեանքի ճշմարտութիւնը եւ իրականութիւնը բոլորովին ուրիշ ձեւով, քան մեր քով: Իսլամը շատ աւելի հզօրապէս եւ իրականօրէն կեանքի որակ մըն է, շատ աւելի ճշմարտութիւն եւ իրականութիւն է, քան ո եւ է տեղ եւ ո եւ է ատեն այդ եղած է քրիստոնէութիւնը, չհանշուելով այն առանձին կրօնական համայնքները, ուր կրօնքը եւ կեանքը իրապէս նոյնն են:

Հայերը առանձնապէս կրօնասէր ժողովուրդ մըն են: Իրենց ծէսը, իրենց սերտ կախումը կրօնքին՝ մինչեւ իսկ իրենց առօրեայ սովորույթներու նկատմամբ՝ նման են մինչեւ որոշ աստիճան իսլամին իր լուացումներով եւ աղօթքներով: Հայը կ'ապրի բոլորովին կրօնական ուղղութեամբ, ու ես չեմ կրնար հրաժարիլ այս խօսքը հայերու մասին ըսելէ - այն է որ՝ քանի մը չարաղէտ դարձրածներ, որոնք ողորմելի տաս-փարանոցներու նման ձեռքէ ձեռք կ'անցնին, հայերու մասին գէշ համբաւ ստեղծած են.- “մէկ յոյնը երեք հրէայ կը ծախէ, մէկ հայը՝ երեք յոյն” եւ նման խօսքեր: Պարսկական առած մը պարսիկները ամէնէն լաւ կը ճանչնան հայերը կ'ըսէ: “Առ հացդ քուրդէն, բայց քնացիր հային տունը”, ըսելէ՝ պարսիկը իսլամ է ու չի կրնար իր հացը հայէն առնել, ուստի կ'առնէ զայն քուրդէն: Բայց ան չօգտուիր իր կրօնակիցներու հիուրընկալութենէն, այլ հայերու, որովհետեւ հայը - չի գողնար: Սեփականութեան ապահովութիւնը, բարեխիղճ յարգանքը դէպի ուրիշին սեփականութիւնը ոչ մէկ տեղ այնպէս աչքի չեն զարնէր, ինչպէս հային մօտ:

Մենք լսեցինք, թէ ինչպէս պարոն նախագահին այն հարցումին՝ արդեօք ամբաստանեալը ինքզինքը յանցաւոր կը ճանչնա՞, ան լսաւ “ոչ” ու ապա երբ պարոն նախագահը հարցուց անոր “ինչու չէք ինքզինքնիդ յանցաւոր ճանչնար”, ամբաստանեալը պատասխանեց. “Իմ խիղճս հանգիստ է”: Անոր համար բարոյական եւ իրաւական ճշդութիւնը նոյնանշան են: Ան չի կրնար խորհիլ անգամ, թէ այն, ինչ որ բարոյապէս ճիշդ է, իրաւապէս կրնայ անճիշդ ըլլալ. ան չի կրնար

խորհիլ անգամ, թե այն, ինչ որ բարոյական տեսակետով լաւ է, կրնայ զինքը մահապարտ դարձնել: Ես կատարելապէս համոզուած եմ ու կը խորհիմ, թե դուք ամենքդ ալ պետք է համոզուած ըլլաք, որ մաքուր խիղճը, զոր անպայման ունի ամբաստանեալը, զոր ան՝ լիովին ընդունելով հանդերձ կատարուած իրողութիւնը, որ կը ծանրանայ իրեն վրայ, այնուամենայնիւ կը պահպանէ առաին իսկ վայրկեանէն ու ամենկացութեան մէջ - այս մաքուր խիղճը կը նշանակէ՝ իրաւաբանօրէն ձեւակերպելով՝ այն ժայռի նման ամուր գիտակցութիւնը, թէ ինքը գործեր է իրաւունքին համաձայն, ոչ մէկ կերպով հակառակ ճշմարիտ, իսկական իրաւունքին, որպիսին միայն արժէք ունի իրեն համար:

Ամբաստանեալի հոգեկան վիճակը, այն խոր ազդեցութիւնը, որ ունեցաւ անոր վրայ այն, ինչ որ ան ապրեցաւ, ու ապա այն կատարեալ քայքայումը, զոր յառաջ բերին իր հոգիին եւ զգացումներուն մէջ իր ապրումները եւ տեսիլները, իր այս ներքին վիճակը սերտօրէն կապուած է հայերու մօտ գոյութիւն ունեցող ընտանեկան զգացումներուն հետ: Ամբաստանեալին հօրեղբօրորդին, որ եկած է երէկ եւ այսօր պիտի հարցաքննորէր, դժբախտաբար չի կրնար այդ նիւթի մասին հարցաքննուիլ: Բայց դուք ատոր մասինչպիտի կասկածիք, եւ իրազեկները, որներկայ են այստեղ, կրնային անտարակոյս համոզեցուցիչ կերպով մեզ յայտնել, որ հայերու ընտանեկան կեանքը առանձնապէս լաւ է ու եթէ դուք կը յիշէք այն արտայայտութիւնը, որով ամբաստանեալը պատասխանեց իրեն ուղղուած հարցումին՝ թէ ինքը իր ընտանիքին, իր ծնողներուն հետ լա՛ւ յարաբերութիւններու մէջ եղած է ... չեմգիտեր, կը յիշե՞ք արդեօք ... յատկանշական ցնցում մը անցաւ իր դէմքին վրայէն ... Թարգմանը այլեւս ոչինչ չըսաւ ... Ես կը կարծեմ, որ ատիկա ամենայուզիչ կերպով ցոյց տուաւ ամբաստանեալին մասնաւոր վերաբերումը իր սպաննուած ընտանիքին հանդէպ:

Ապա ատոր կու գայ միանալու ամբաստանեալի վերաբերումը հանդէպ իր ժողովուրդին, որը անոր համար իր ընտանիքին շարունակութիւնն է: Հայերը մեծ ընտանիք մըն են: Անոնք մեծ պետութիւն մըն էին: Ատկէ ետք թուրք պետութեան մէջ անոնք միշտ մեծ ու համբերատար ընտանիք մը եղած են: Ապա, երբ սկսաւ ժողովուրդներու անջատումը Թուրքիայէն, - 1820ին ազատագրուեցան յոյները ամբողջ Եւրոպայի աջակցութեամբ, 40ական թուականներուն Եգիպտացիները, աւելի ուշ դանուբեան իշխանութիւնները, բուլղարները, ռումանացիները, սերբերը, սելեւոնցիները, այլանացիները,- այդ ատենները հայերը հանգիստ ու համբերող էին: Բ. Դուռը ոչ միայն չէր կրնար գանգատիլ անոնցմէ, այլեւ երբէք ալ չգանգատեցաւ: Ու որովհետեւ հայերը այդպիսի բարեյոյս ու հաւատարիմ մասն էին պետութեան, Բ. Դուռը տակաւին 1860ին Ազգային Մահմանադրութիւն մը տուաւ անոնց, որ նորէն յատկանշական է՝ Արեւելքի մէջ եկեղեցականի եւ քաղաքական - ազգայինի զուգադիպութեան տեսակետով: Երբ բալկանեան ժողովուրդները ամենուրեք իրենց շղթաները կը խորտակէին, հայերը համբերատար էին, որովհետեւ կը յուսային թէ այսուհետեւ իրենց համար բարեփոխութիւններ պիտի կատարուէին, իրենց կեանքն ու ինչքն պիտի ապահովուէին, եւ իրենք հնարաւորութիւն պիտի ստանային՝ որոշ չափով մասնակցելու իրենց ներքին գործերու կառավարման: Անոնք լուռ ու հանգիստ էին:

Միայն Բերլինի վեհաժողովէն ետք, 1878ին, երբ ուրիշ ժողովուրդներ ամենքն ալ բան մը ստացան, երբ եւրոպական Թուրքիոյ բաժանումը այլևս իրողութիւն էր, այն ատեն միայն կացութիւնը փոխուեցաւ: Թուրքիան վախցաւ ու սկսաւ խորհիլ թէ հայերը, այժմ միայն իրենք մնալով Թուրքիոյ տիրապետութեան տակ, կրնան վտանգաւոր դառնալ: Ու ահա, առանց որ հայերը ո եւ է առիթ տուած ըլլային, թուրք կառաւարութիւնը կազմակերպեց առաջին սոսկալի հալածանքներն ու կոտորածները: Առանց ո եւ է առիթի: Այդտեղ էր որ հայերը սկսան կազմակերպուիլ: Անոնք հաստատեցին կօմիտէներ Պարիսի ու ժընեվի մէջ՝ ձեռք բերելու համար այն բարեփոխումները, զորս խոստացած էր իրենց Բերլինի դաշնագրին 61րդ յօդուածը:

Ու ահա սկսաւ: Ես չեմ ուզեր մանրամասնօրէն հետեւիլ դէպքերու զարգացման: 1899ին ես երկու անգամ եղայ Պոլիս, ու այն, ինչ որ լսեցի ականատեսներէն 1896ի օգոստոսին տեղի ունեցած կոտորածներու մասին, սոսկալի տպաւորութիւն գործեց վրաս: Ու երբ մարտ 16ին կարդացի Հարդէնբերգ փողոցին մէկ կատարուած դէպքի մասին, աչքերուս առջեւ ներկայացան երեք պատկերներ, որոնցմէ երկար ատեն ի վիճակի չէի ազատիլ: Անոնցմէ ոչ մէկը ես տեսած չէի. սակայն անոնք կանգնած էին առջեւս, իբր թէ անձամբ տեսած ըլլայի զանոնք:

1896ի օգոստոս 26ին, երբ հայերը ապստամբութեան փորձ մը նախապատրաստած էին, և անոր մասին ոստիկանութիւնը ընդեկութիւն տուած էր թուրք կառաւարութեան, այս վերջինս՝ յանձին սուլթան Ապտիլ Համիտի՝ ոչինչ չըբար խանգարելու համար ըմբոստութիւնը, ինչ որ շատ դիւրին պիտի ըլլար ընել. ընդհակառակը, ան ուրախութեամբ ողջունեց ըմբոստութիւնը: Կառաւարութիւնը կազմակերպեց մահակաւորներու անբողջ խումբեր, որոնք հրաման ստացան սպաննելու այն բոլոր հայերը, զորս կը տեսնէին փողոցը՝ սկսած օգոստոս 26ի կէսօրէն. ու գերման կիներ ու երեխաներ կը պատմէին ինծի, թէ իրենք տեսան այդ սպանութիւնները, և թէ ամէնէն տիպար պատկերը այն էր որ երբ մահակաւորները մերկ իրանով, լայ վարտիկով, ոստիկանի մը ուղեկցութեամբ կը յարձակէին հայերու վրայ, այս վերջինները, ծունկի գալով, ձեռքերնին դէպի երկինք կը բարձրացնէին, գլուխնին կը խոնարհէին և թոյլ կը տային ու զիրենք սպաննեն: Այն ատեն սպաննուածներէն հարիւրին իննսունի վերքը գլխնուն վրայ էր:

Երկրորդ պատկերը. ինչպէ՞ս 1909ին Թալէաթ փաշան կառաւարութեան տիրացաւ: Ան եկաւ իր քանի մը բարեկամներու, քաղաքական ընկերներու հետ նախարարութիւն՝ եպարքոսինմօտ, որ իրեն կը սպասէր և որ, սիկարէթ մը վառելով ու ձեռքերը գրպանը դնելով, ըսաւ. “Այդ ի՞նչ է որ դուք կ’ընէք. գիտէք չէ՞ որ մենք ատոր չենք հաւնիր”: Նոյն վայրկեանին լսուեցաւ հրազենի պայթիւնը, և ան, որ կ’ուզէր մեկդի դնել Թալէաթ փաշան, ինկաւ անշունչ՝ կոկորդէն վիրաւորուած:

Ու այնուհետեւ կու գայ երրորդ տեսարանը, տեղի ունեցած 1921ի մարտ 15ին, զոր մենք ամենքս ալ գիտենք: Մենք կրնանք ընդդիմանալ ատոր, ինչպէս որ կ’ուզենք. բայց այս դատաւարութիւնը այնպէս չէ, ինչպէս ամէն մէկ ուրիշը ան ինքն իրեն կը պայթեցնէ այս սրահին նեղ շրջանակը և կը ստիպէ մեզ՝ դարձնել մեր նայուածքը հեռաւոր կապակցութեանց վրայ և եորձել հասկնալ ուրիշ ժողովուրդներ, ուրիշ մարդիկ, ուրիշ պայմաններ և արդար ըլլալ անոնց հանդէպ: Մենք

ստիպուած ենք տալու Յրդ շրջանային դատարանի եւ երդուեալներու ներկայ դատարանի վճիռը այն իմաստով, որ լայնօրէն ու լուսաբանուած կերպով ճանչցուած ըլլան իրաւունքին էութիւնը եւ մարդկութեան նպատակները եւ անոնց կապակցութիւնը. ըւ եթէ այդպէս ըլլայ, ես չեմ հաւատար թէ դուք մահապարտ նկատէք Սողոմոն Թեփլիբեանը: Եթէ դուք այդ ընէք, այն ատեն մենք ամենքս ալ, կարծեմ, գիտենք թէ ինչ տեղի կ'ունենայ անկէ ետք: Ու ահա թէ ինչ. այդ պարագային ան պիտի յայտարարէ ներքին հաստատակամութեամբ, անսահմանօրէն մաքուր խիղճով, վսեմ համոզումով, զորս ան երեւան բերաւ անով որ չուզէց աւելորդ բառ մը ըսել, որ մինչեւ անգամ այն ատեն, երբ իրեն ներշնչուեցաւ, թէ պէտք է որ խօսի, ան՝ իր հոգիին անհաւատալի կոսութեանը մէջ՝ յայտարարեց. “Ես չեմ ուզեր խօսիլ, ես չեմ ուզեր անգամ մը եւս վերապրիլ այդ, աւելի լաւ է իսկոյն մեռնիմ”, - ան լսաւ այդ առանց ո եւ է յուզումի, այո, ես կըսեմ, այդ պարագային ան պիտու յայտարարէ, “Եթէ այդպէս է՝ աղէկ, ես կը մեռնիմ”: Անկը դնէ իր գլուխը, իր մարտիրոս գիւղիկը կոճղիկն վրայ. մայրը կ'երեւնայ ու օգնական կ'ըլլայ իրեն, ու ան կը մեռնի երանելի մահով: Մարդ գրեթէ պիտի փափաքէր մաղթելու իրեն այդ: Իր անպարտ արձակումը չպիտի կենդանացներ իր ծնողքը, իր քոյրերն ու եղբայրները, նոյնպէս չպիտի նորէն առողջ դարձներ զինքը. ան այլեւ երբէք չպիտի ըլլայ այնպէս, ինչպէս ուրիշներն են:

Ի վերջոյ ես կը կրկնեմ առաջին պ. պաշտպանին խօսքը: Դուք չէք կրնար Թեփլիբեանը պատասխանատու գտնել: Ան գործեց այնպէս, ինչպէս պէտք էր որ գործէր. ան ըրաւ այն, ինչ որ չէր կրնար չընել: Արդեօք դուք այն մղումը, որին ան կը հետեւէր, կ'ուզէ՞ք հոչակել աւելի քան դիւական կամ բարոյական, վսեմ թէ հիւանդ մարմնական հիմի վրայ ստեղծուած կացութիւն մը,- ես չեմ գիտեր ես կը խորհիմ միայն, թէ անշուշտ այս բոլոր նկատումները առանձին առանձին հաշուի առնելու է: Սակայն, երբ անոնք հաշուի առնուի, անհրաժեշտ պիտի ըլլայ նորէն յիշել իրերու ամբողջ կապակցութիւնը եւ հարցում տալ ինքն իրենը. “Ի՞նչ արդիւնք պիտի ունենայ դատավճիռը. ի՞նչ արդիւնք պիտի ունենայ ան՝ ո՛չ թէ քաղաքական տեսակէտով կամ ուրիշ տեսակէտով մը ներկայ վայրկեանի համար ո եւ է տեղ, այլ՝ ի՞նչ արդիւնք պիտի ունենայ ան բարձրագոյն արդարութեան կամ այն բարիքներու իմաստով, որոնց համար մենք կ'ապրինք, որոնց համար ապրիլը՝ կեանքը ապրելու արժանի կը դարձնէ:”

Աւագ դատախազ Գոլնիկ.- Պ.պ. երդուեալներ, պ.պ. պաշտպանները մէկ բան մը չըսին ձեզի, այն է՝ որ դատաւորը հարկադրուած է դատել ըստ օրէնքի: Դատաւորը երեւան բերելու է տրամաբանօրէն քննող որոշող գործունէութիւն մը. ան պարզապէս ճշդելու է, թէ այստեղ յառաջ բերուած իրողութիւնները կը լրացնեն արդեօք օրէնքին պահանջները՝ պատիժը որոշելու վերաբերմամբ: Եթէ այդ այդպէս է, այն ատեն դատաւորը չի կրնար ըսել. “Այո՛, իրաւ է, անոնք կը լրացնեն օրէնքին պահանջները, սակայն պատիժը - ես չեմ ուզեր”: Ան չի կրնար ըսել այդ, որովհետեւ օրէնքը իրմէ վեր է: Անշուշտ, կրնար այնպիսի դէպք մը ըլլալ որ մարդ ըսէ: “Օրէնքը այստեղ անկատար է, անխստութիւն մը ունի իր մէջ ծածկած”: Ես համաձայն եմ առաջին պ. պաշտպանին հետ այն չափով, որ չափով որ ան ալ շատ իրաւամբ կ'ընդունի, թէ սպանութեան կատարման պահուն խորհրդածութիւնը պէտք է գոյութիւն ունեցած ըլլար. ու բոլորովին ճիշդ է նաեւ այն, թէ սպանութիւն մը՝ որպիսի խնամքով ալ խորհրդածուած նախապատրաստուած

ըլլայ՝ երբեք չի կրնար կանխամտածուած սպանութիւն նկատուիլ, եթէ կատարման վայրկեանին խորհրդածութիւնը գոյութիւն չէ ունեցեր: Ես նոյնպէս համաձայն եմ, որ՝ պ. պ. իրազեկներու արտայայտած կարծիքներուն հիման վրայ՝ կարելի է ընդունիլ, թէ ամբաստանեալին մէջ, որ կը տառապի հոգեկան պատճառներու վրայ հանգչող հիւանդութենէ մը, իր դժբախտութեան կարծեցեալ հեղինակը տեսնելուն պէս մեծ յուզումներ յառաջ եկած են. ու եթէ դուք այդպէս կը կարծէք, այն ատեն պէտք է որ անկանխամտած սպանութեան մասինեղած հարցումին հաստատական պատասխան տաք:

Երկրորդ պ. պաշտպանը այստեղ ձեզի կարգ մը բաներ լսաւ, որոնցմէ մէկ քանիսին ես պիտի համաձայնիմ, իսկ միւսներուն պիտի հակաճառեմ: Դուք կը ճանչնաք անշուշտ մեծ բանաստեղծ Հայնրիխ Հայնէն: Այս բանաստեղծը ամէն առիթով կ'ըմբոստանար կեանքին թշնամի որոշ սկզբունքներու դէմ, զօրս կը վերագրէր քրիստոնէական վարդապետութեանը. ու ընդհակառակը, կը փառաբանէր դասական Յունաստանի ծիծղուն կենսութիւնը: Արդ, բանաստեղծին հաշակաւոր քննադատներէն մէկը կ'ըսէր անոր մասին. "Երբ ան տարիքոտ ու արմատական դարձաւ, աշխարհին մէջ այլեւս ուրիշ բան չէր տեսներ, բայց եթէ վտիտ նագովրեցիներ եւ պարարտ յոյներ": Այս բաղդատութեան մասին էր, որ ես ստիպուած էի խորհիլ, երբ կը լսէի երկրորդ պ. պաշտպանին խօսքերը միլիտարիստներու եւ աջակողմեաններու մասին: Երկրորդ պ. պաշտպանը կը թուի թէ ամբողջ մարդկութիւնը կը բաժնէ միլիթարիստներու, որոնց ուղեղէն դէմ մը հաներ է այն մասերը, ուր արդարութիւնը, կարեկցութիւնը եւ մարդկայնութիւնն են տեղաւորուած,- եւ ուրիշ մարդերու, որոնց քով այդ մասերը իրենց տեղն են: Ես կը կարծեմ, թէ այս ըմբոնումը իրօք քիչ մը արմատական է, շատ միակողմանի եւ արհեստականացուած, ու թէ կեանքին բազմապիսութիւնը թոյլ չի տար՝ նման չոր ու ցամաք բաժանում կատարել: Այնուամենայնիւ ես իրեն պ. պաշտպանին կը թողում այս տեսութիւնը, իսկ ուրիշ կէտի մը նկատմամբ պիտի հակաճառեմ իրեն արդէն ամենայն վճռականութեամբ:

Ան չհաւնեցաւ, որ ես որակեցի սպաննուածը որպէս գերման ժողովուրդին հաւատարիմ դաշնակիցը: Ես պէտք է կրկնեմ, որ թուրք ժողովուրդը կռուեցաւ ուս ուսի գերման ժողովուրդին հետ եւ անպայման կրնայ որակուիլ որպէս այս վերջինին դաշնակիցը: Ես պատուաբեր չեմ նկատեր՝, մինչեւ որոշ աստիճան ուրանալ անցեալը, ինչ ալ որ ըլլայ վերջի վերջոյ անհատին քաղաքական տեսակէտը: Ես պէտք է ամենախիստ կերպով բողոքեմ որ պ. պաշտպանը Թուրքիոյ այս քաղաքականութեան երկու ներկայացուցիչները, Էնվեր եւ Թալէաթ փաշաները, վիրաւորական ձեւով որակեց այստեղ՝ որպէս իրենց հայրենիքը լքած փախած ոճրագործներ:

Ուրախ եմ սակայն, որ ուրիշ կէտի մը վրայ ես կրնամ համաձայնիլ երկրորդ պ. փաստաբանին հետ. այն է, որ իրաւագիտութեան մէջ որոշիչը իրօք պէտք է ըլլայ մարդկային առողջ դատողութիւնը: Ես կը յուսամ, պ.պ. երդուեալներ,- այդ վստահութիւնը ես ունիմ,- թէ ձեր քով այդ յատկութիւնը յաղթական է մնացեր՝ հակառակ այլեւայլ հանգամանքներու այն շփոթիչ առատութեան, որ այստեղ գիտական, թեքնիք-իրաւաբանական, բժշկական ձեւի տակ ձեր դէմ ելած է. ու ես կը խորհիմ, որ եթէ դուք մարդկային առողջ դատողութեանը իր արժանի կարեւորութիւնը տաք, այն ատեն կը գտնէք ճշմարիտը:

Պաշտպան Դր. Ֆոն Գորդոն.- Պարոններ, քանի մը խօսք միայն: Պ. աւագ դատախազը յանդիմանեց մեզ անոր համար, որ մենք ձեզի մէկ բան մը չըսինք. այն է՝ որ դատաւորը հարկադրուած է դատել ըստ օրէնքի: Այո՛ պարոններ, ես պիտի ամչնայի ըսել ձեզի այն, ինչ որ ինքնըստինքեան բոլորովին հասկնալի է (շարժում սրահին մէջ):

Յետոյ, պ.աւագ դատախազը ըսաւ, թէ պէտք չէ որմաստնանշուի սպառնացող պատիժը, ներկայ պարագային ուրեմն – մահապատիժը: Այդ բացարձակապէս սխալ է: Տրուած ըլլալով, որ մեր օրէնքը որոշ տեսակի ոճիրներու համար կը տնօրինէ մահապատիժ, անհրաժեշտ որ դուք յետադարձօրէն քննէիք, թէ ի՛նչ տեսակի պէտք է ըլլալ նման ոճիրը: Ասիկա սխալ իրաւագիտութիւն մըն է, մերժուած նաեւ պետութեան բարձրագոյն ատեանի կողմէ պատերազմին պահուն, իրաւագիտութիւն մը՝ կազմուած այլեւայլ գաղափարներէ: Բարձրագոյն ատեանը պատերազմէն առաջ վերլուծման ենթարկած է պատժական եւ քաղաքացիական իրաւունքին վերաբերող հազարաւոր գաղափարներ եւ անոնց վրայ մեծ խնամքով կանոններ հիմնած: Ապա եկաւ հզօրագոյն պատերազմը եւ այդ ամէնը մէկդի նետեց: Ու ահա բարձրագոյն ատեանը շատ բան վերագնահատման ենթարկեց, կարգ մըն ալ նոր բաներ սորվեցաւ: Ես կրնամ կարդալ ձեզի որոշում մը, որով մեր բարձրագոյն ատեանը համարձակ անկեղծութեամբ կը խոստովանի, թէ ինքն ալ առաջ որոշ գաղափարներ աւելի նեղ կերպով ըմբռնած էր, թէ ինքն ալ շատ բան սորվեցաւ միջավայրի պայմաններէն, պատմական դէպքերէն, կեանքէն: Ու դուք եւս, պ.պ. երդուեալներ, պէտք է միշտ աչքի առջեւ ունենաք, որչէք կրնար տալ որոշում մը, որ ներքուստճշմարիտ եւ ձեր խղճին համար ընդունելի չըլլար: Ինչու՞: Որովհետեւ անհնարին է որ մեզ մօտ արդարութիւնը արդարութիւն ըլլայ: Ոչ մէկ խաղ գաղափարներու հետ պէտք չէ երբեք իբրեւ արդիւնք ունենայ վճիռ մը, գոր ամէն առողջ մարդ որպէս առարկայական անարդարութիւն կը զգայ:

Իսկ հիմայ երրորդ բանի մը մասին, գորըսաւ պ. աւագ դատախազը: Էականը կը թողում իմ յարգելի պարոն պաշտօնակցիս, իսկ ինքս կ'ուզեմ համառոտ կերպով շօշափել խնդիրը իմ տեսակէտէս: Դուք , պ. աւագ դատախազ, խօսեցաք այն բանի մասին, թէ մենք ուրանալու չենք անցեալը, թէ թուրք ժողովուրդը կռուեցաւ կողք կողքի մեզ հետ: Սակայն թուրք ժողովուրդը յանցաւոր յանցաւոր չէ սոսկալի ջարդերուն համար, ան կը դատապարտէ զանոնք, ինչպէս որ այդ կ'ընէ ամէն մէկ բնականօրէն զգացող մարդ: Հայերու այս սիսթեմաթիք ոչնչացումը ծագած չէ ժողովուրդի կիրքերու պոռթկումէն, այլ վարիչ շրջանակներու կողմէն խնամքով չափուած ու որոշած վարչական- քաղաքական միջոց մըն էր, որի կատար ածուեցաւ սինյքորներու, կ'ուզեմ լսել՝ թուրք ժանդարմներու կողմէն, որոնց պատկերը այստեղուս բաւականի գծուեցաւ: Թուրք ժողովուրդը ատկէ բարձր է կանգնած, եւ մենք հաւատարմութեամբ մեր միտքը կը պահենք այն, ինչ որ դժուարին ատենը ան եղած է մեզ համար, եւ ինչ որ եղած ենք մենք անոր համար: Բայց խնդիրը այստեղ ատոր մասին չէ:

Պաշտպան Դր . Վերթաուէր.- Համաձայն պատժական օրինագրքի 190րդ յօդուածին, երբ մէկու մը մասին ըսուած խօսքը կամ տարաձայնուած լուրը իր կատարած պատժելի գործողութեան մը կը վերաբերի, այդ պարագային խօսքին կամ լուրին ճշմարտութիւնը ապացուցուած կը նկատուի,

Եթե վիրաւորանք կրած անձը այդ գործողութեան համար օրինապէս դատապարտուած է: Եւ ընդհակառակը, ճշմարտութիւնը ապացուցուած չի նկատուիր, եթե վիրաւորանք կրած անձը այդ գործողութեան համար՝ իր մասին խօսքը ըսուելէ կամ լորրը տարածուելէ առաջ՝ անպարտ արձակուած է:

Թալէաթ փաշան, Էնվեր փաշայի, Ճեմալի եւ Նազըմի հետ մէկտեղ, 1335ի (թուրքական տօմար) յունիս 10ին հանրային պատերազմական ատեանին կողմէ, որ կազմուած էր ամենէն ականաւոր դատաւորներէ, դատապարտուած է՝ որպէս հողինակ անարգ ոճիրի մը, այն է՝ հայերը կոտորելու եւ անմեղներ պատժելու համար: Այս դատավճիռը օրինական է. ու սխալ է եւ գերման օրէնսդրութեան հակառակ՝ ըսել թէ ես մարդիկ վիրաւորելու յանցանքը կը գործեմ անով, ամենաանարգ ոճիրը գործած ըլլալուն համար օրինապէս դատապարտուած անձերը ոճրագործներ կը կոչեմ: Այսպէսուով, ինծի՝ նման յանդիմանութիւն մը ընել՝ կը նշանակէ չգիտնալ գերման իրաւունքը: Թէ իրենց հայրենիքը լքած փախած այդ ոճրագործները, որոնք ապրած են այստեղ ուրիժ անուններով, կը վայելէի՞ն արդեօք այս կամ այն միլիթարիստին պաշտպանութիւնը, ատիկա յայտնի չէ ինծի: Այդ առթիւ ես ոչինչ չեմ կրնար ըսել, որովհետեւ՝ հակառակ պ.դատախազի ըսածին՝ չեմ ուզեր խնդրին մէջ քաղաքականութիւն խառնել:

Ապա պ. դատախազը ըսաւ նոյնպէս, թէ թուրք ժողովուրդը՝ իբրեւ հաւատարիմ զինակից՝ կողք կողքի կանգնած էր գերման ժողովուրդին հետ: Այդ , անշուշտ, ճիշդ է, եւ ոչ ոք հակառակը պնդած է: Թուրքերը նաեւ քաջ զինուորներ են: Այս թուրք ժողովուրդը սակայն պատասխանատու չէ պատերազմին համար, ինչպէս պատասխանատու չէ նաեւ գերման ժողովուրդը: Ըստ սահմանադրութեանց, զորս այն ատեն ունէին այդ երկու երկիրները, ժողովուրդները ոչ մէկ ազդեցութիւն ունէին պատերազմի յայտարարման վրայ, որ տեղի կ'ունենար առանց հարցնելու ժողովուրդին կամքը: Ժողովուրդները միայն պարտք ունէին կատարելու:

Մարդիկ, ինչպէս են Էնվեր փաշա, Թալէաթ փաշա եւ ուրիշ անձնաւորութիւններ, նոյնպէս պատերազմի յայտարարման առիթով չէ, որ այստեղ խնդրի առարկայ կ'ըլլան, այլ անոր համար, որ ձեռնարկեցին տեղահանութեան, որու հետեւանքով հայ ժողովուրդին նկատմամբ գործուեցան այնպիսի սոսկալի ոճիրներ, որոնց նմանը չի տեսել մարդկային պատմութիւնը:

Ես արդէն առաջ ալ ըսի ձեզ, պ.պ. երդուեալներ,- ձեր որոշումը՝ այն անարգ ոճիրներու պատճառով՝ թերեւս հազարաւոր տարիներ ետքը տակաւին ուշադրութեան առարկայ ըլլայ: Ես անձամբ ի վիճակի չեմ հասկնալու, թէ ինչպէ՞ս կարելի է այս խնդրին մէջ քաղաքականութիւն խառնել: Ստորնութեան այս թագաւորութեան մէջ կը դադրի ամէն քաղաքականութիւն, ու ես չեմ կրնարհասկնալ թէ ինչպէ՞ս կարելի է բռն մը իսկ արտասանել ի նպաստ տեղահանութեան հրամաններուն: Չէ՞ որ գերման ժողովուրդն ալ յանիրաւի կ'ամբաստանուի՝ տեղահանութեան նման հրամաններ տուած ըլլալուն համար: Միայն կատարեալ, անվերապահ մերժումը այս տեսակ սկզբունքներուն, դատապարտումը նման ոճրական հրամաններուն կրնայ ապահովել մեզի այն յարգանքը, որուն իրավունքը, իմ համոզումով, մենք ունինք: Երբ ես յետոյ ըսի, թէ միլիտարիստները, բռնի ուժին այն մարդիկը, զորս շփոթելու չէ առանձին զինուորական

անհատներու հետ, տարածուած են բոլոր ազգերու մէջ ամբողջ երկրագունդին վրայ,- բոլորուին նոր բան մը չէր, գոր ես յառաջ բերի: Ու ես ապշած եմ, որ պ. դատախազը այդ առիթով իմ ըսածը իբրեւ նոր բան կ'ընդունի:

Ով որ, ինչպէս գերման ժողովուրդը, կը տոջժէ միլիտարիստներու ստոր արարքներէն, ան պիտի համաձայնի, որ աստոր յանցանքը միլիտարիստներունն է. ըս ան արդարացիօրէն կը վարուի, երբ կ'ատէ միլիտարիստները եւ կ'ուզէ արմատախիլ ընել զանոնք: Սակայն արմատախիլ ընելը կամ ոչնչացնելը մարդոց մասին չէ որ կ'ըսուի, այլ ուղղութեան, սկզբունքի. ըրովիտու ինչպէս առաջալ ըսի՝ սրբութիւնը մարդուն, որ ստեղծուած է Աստծոյ կերպարանքով, բիրտ ու անգութ վերաբերումի կ'ենթարկուի այն անձանց կողմէն, որոնք միլիտարիստական բռնակալ գաղափարներ ունին: Միլիտարիստները ժողովուրդէն դուրս կը գտնուին: Անոնք հայրենիք չունին, ազգ չունին, մարդկային զգացում չունին. ունին միայն բռնի ուժին զգացումը, եւ այդ ուժին նպատակը այն է, որ ճնշուի իրավունքը:

Այդ մենք տեսանք այս գործին մէջ, ուր երկու նման հակառակ տեսակետներու ներկայացուցիչներ դէմ առ դէմ ելած են. մէկ կողմը՝ ներկայացուցիչը բռնի ուժին, միւս կողմը՝ ճնշուածներուն ներկայացուցիչը, որկը նախավճռէ արդարութեան ընթացքը: այս էր որու մասին ես թոյլ տուի ինծի մանրամասնօրէն խօսելու: Իրօք, երբ արդարութեան ներկայացուցիչը եղող այսպիսի մարդու մը հանդէպ կանգնեցաւ այն միւս ներկայացուցիչը, այն ատեն առաջինին գլուխը դարձաւ, այնպէս ու ան այլեւս չէր գիտեր, թէ ինչ կ'ընէր:

Դատարանը պէտք է արդարօրէն դատէ, ամբաստանեալին արդարութեամբ հատուցանէ: Մենք պաշտպաններս այստեղ արդէն քանիցս շեշտեցինք, թէ մենք գրթութիւն չենք մուրար, թէ մենք զգացումէ բխած բան մը չէ որ կ'ուզենք, այլ այն, որ կիրառուի պատժական իրավունքը: Իսկ պատժական իրաւունքը ներկայ պարագային յանցաւորութեան մասին դրուած հարցումին ժխտողական պատասխանն է, որովհետեւ այն պահուն, երբ ամբաստանեալը փողոց իջաւ եւ ատրճանակը ուղղեց իր գոհին դէմ, ան յանցաւոր չէր: Ու ան յանցաւոր չէր անոր համար, որ իր կամքը առողջ, ազատ չէր ու կը գտնուէր որոշ ազդեցութեան տակ: Ես արդէն ըսի ձեզի, օրինակ մը գործածած ըլլալու համար, թէ՛ ան ինքը չէր, որ փողոց կ'իջնէր. իր մէջ կ'իջնէին դարերը, միլիոնաւոր սպաննուածները: Ան, կարելի է ըսել, կը տանէր իր առջեւ դրօշակը իր ամբողջ ժողովուրդի պատիւին, դրօշակը խոշտանգուածներուն, դրօշակը իր լլկուած ընտանիքին: Որքան յաճախ դուք հարկադրուած էք դատելու ամուսինի մը մասին, որը՝ վերադառնալով տուն՝ կը տեսնէ կնոջ անհաւատարմութիւնը եւ կը սպաննէ զայն: Որո՞ւ միտք կրնար գալ՝ դատապարտել զինքը:

Բայց ամբաստանեալին նկատմամբ ամուսնական անհաւատարմութիւն չէ, որ տեղի ունեցած է. իր քոյրերն են պղծուած, իր ծնողքը եւ եղբայրներն են սպաննուած, իր ամբողջ փարթամ ընտանիքն է ոչնչացուած: Ու ան բարձրացուց իր դրօշակը հանդէպ այն ոճրագործին, որ յանցաւոր է այդ բոլոր անարգ ոճիրներուն համար, բռնուած է իր արարքներուն մէջ եւ

դատապարտուած: Արդ, ամբաստանեալը կորսնցուց իր յստակ գիտակցութիւնը, նշան առաւ, սեղմեց ատրճանակին բլթակը, ու ահա դժբախտաբար նորէն մարդ մը սպաննուած էր:

Այս է, որ դուք պէտք է խնամքով քննէք, առաջնորդուելով արդարութեան գիտութեամբ, ամէն բանէ առաջ սակայն առաջնորդուելով ձեր առողջ բանաւոր զգացումով: Այդ պատճառով մենք միայն մէկ փափաք ունինք եւ անոր շուրջը թերեւս կարենանք համաջայնութեան գալպ. դատախազին հետ.-թողէք ու ձեր զգացումը գործէ անվերապահօրէն, համակուած՝ արդարութիւնը կատարելապէս հիմնաւորուած ըլլալու իրաւագիտական համոզումովը: Եթէ այնուհետեւ դուք “այո” կամ “ոչ” ըսէք, այդ պարագային մենք ամէնքս ալ տեղի կու տանք ձեզի: Բանէ մը միայն մենք կ’ուզէինք խուսափիլ. այդ այն է, որդուք, որովհետեւ մարդ մը սպաննուած է, չկարծէիք թէ այն անձը, որ գործեր է սպանութիւնը, պէտք է յանցաւոր նկատուի: Ատով դուք անցած կ’ըլլայիք պատժական օրինագրքի ամբողջ ընդհանուր մասի վրայէն, որ իրապէս կառուցուած է կատարեալ արդարութեամբ:

Հայնրիխ Հայնէի օրինակը, գոր մէջ բերաւ պ. դատախազը, ինձ վրայ բնաւ չազդէր, ուովհետեւ ես աւելի քիչ բանաստեղծ եմ, քաբ պ. դատախազը (շարժում սրահին մէջ): Մեր կառուարութեան նկատումները, այն կառուարութեան, ու դաժն կնքած էր Թալէաթ փաշայի եւ Էնվեր փաշայի հետ, ինձ վրայ նոյնպէս չեն ազդէր, որովհետեւ այդ դաշինքը կնքելէ առաջ՝ անոր մասին ոչ որ հարցուցած է իմ կարծիքս, ինչպէս նաեւ գերման ժողովուրդին կարծիքը: Այս ամէնը կը պատկանի անցեալին: Միակ բանը, որ ինձ վրայ կ’ազդէ, կ’ըլլար այն եթէ դուք սխալ բան մը դնէիք ուղիղին տեղը, եթէ դուք հարցնէիք. “սպաննա՞ծ է արդեօք ամբաստանեալը”, եւ ոչ ինչպէս որ մենք կ’ուզենք՝ “յանցաւո՞ր է ամբաստանեալը սպաննած ըլլալուն համար”: Այն ինչ որ պ. դատախազը վերջիվերոյ կ’ուզէ, կը յանգի հետեւեալ հարցումին. “Սպաննա՞ծ է արդեօք ամբաստանեալը”: Իսկ մենք կ’ուզենք, որ դուք հարցնէք ձեզ. “յանցաւո՞ր է ամբաստանեալը՝ սպաննած ըլլալուն համար”: Մենք կը խնդրենք ջեզ, որ այս առթիով բարեհաճէիք հետեւելու մեզի:

Պաշտպան դր. Նիմայեր.- Ես կ’ուզէի ուշադրութեան առնել խնդրի քաղաքական կողմը, գոր շօշափեց պ. աւագ դատախազը, եւ անոր առիթով բան մը ըսել: Պ. նախագահը դատաւարութեան առաջին օրը ըսաւ, թէ մենք քննելու չենք այս դէպքը տարբեր կերպով, քան ամէն մէկ ուրիշ դէպք. ուրեմն՝ ճիշդ այնպէս, ինչպէս ամէն մէկ ուրիշ դէպք, որըսել է թէ այս դատաւարութիւնը չպիտի քաղաքական դատաւարութիւն մը դառնայ: Ես կը յուսամ, թէ դուք կը վկայէք պաշտպաններու մասին, որ անանք խուսափած են այն ամէնէն, ինչէ որ կարող էին խուսափիլ, ուպէս զի ներկայ դատաւարութիւնը չդառնայ քաղաքական դատաւարութիւն՝ այդ բառին հանրածանօթ գէշ իմաստով: Հակառակ պարագային գործը պիտի ընթանար այնպիսի ուղղութեամբ մը, որ չպիտի նպաստէր արդարութեան յաղթանակին եւ չպիտի համապատասխանէր գերման էութեանը: Ես կը կարծեմ, թէ մենք կրցանք գործնական մնալ: Եթէ դուք ծանօթանայիք այն ստուար նիւթին, գոր մենք կրնայինք ներկայացնել ձեզի, այն ատեն դուք կու տայիք մեզի ամենախղճամիտ ինքնասահմանափակման վկայականը:

Սակայն թոյլ տուէք ինձի այնուամենայնիւ ըսել բան մը, որի համար զիս հարկադրեց պ. աւագ դատախազը: Պատերազմին ատեն Գերմանիոյ պատերազմական եւ ուրիշ հաստատութիւնները այստեղ երկրին մէջ եւ դուրսը լռութեան մատնեցին եւ քողարկեցին հայկական սարսափները այնպիսի եղանակով մը, որ կը հասներ ներելի սահմանի վերջին գծին: Անշուշտ, գերմանացիները ջանացին մինչեւ որոշ աստիճան՝ դադարեցնելու սարսափները: Բայց թուրք ժողովուրդը ըսաւ ինքն իրեն. "Անհնարին է, որ այդ տեղի ունենայ առանց գերմանացիներու կամքին: Չէ՞ որ գերմանացիները զօրաւոր են": Ուրեմն մենք գերմանացիներս Արեւելքի եւ ամբողջ աշխարհին մէջ թուրքերու հետ մէկտեղ պատասխանատու դարձած ենք հայկական սարսափներուն համար: Մեծ գրականութիւն մը կայ Ամերիկայի, Ֆրանսիայի եւ Արեւելքի մէջ, որ նպատակ ունի ցուցնելու, թէ գերմանացիները իսկական Թալէթներ եղած են Թուրքիոյ մէջ: Եթէ ըսուի՝ Սողոմոն Թէիլիբեանը անպարտ արձակուած է, այն ատեն այդ ըմբռնումը աշխարհին մէջ կանգուն չի մնար: Աշխարհը կ'ողջունէ այդ դատավճիռը՝ իբրեւ գործ մը ճշմարիտ, բարձրագոյն արդարութեան:

Նախագահ (թարգմանին).- Յայտնեցէք ամբաստանեալին, թէ իր երեք պաշտպանները կը պահանձեն իր ազատ արձակումը, եւ հարցուցէք, թէ ինքն ալ իր կողմէն ուրիշ ըսելիք մը չունի՞ (կը թարգմանուի):

Ամբաստանեալ.- Ես ոչինչ չհասկցայ պ.պ.պաշտպաններու ըսածներէն, բայց համոզուած եմ, թէ այն , ինչ որ անոնք ըսին, արդէն կը բաւէ: Ես բան մը չունիմ անելցնելու:

Նախագահ.- Այժմ ինձի կը մնայ՝ պ.պ երդուեալներուն անհրաժեշտ իրաւական խրատումը ընել, ու ես կ'ուզեմ կատարել իմ այդ պարտականութիւնը քանի մը համառոտ խօսքով: -Մեր պատժական օրինագիրքը կը բխի այն սկզբունքէն, թէ նորմալ մարդուն յատուկ է ազատ կամքը: Արդ, 51րդ յօդուածը կ'ըսէ, թէ պատժելի արարք մը գոյութիւն չունի, եթէ անոր հեղինակը եղեր է անգիտակից կամ մտաւոր գործունէութեան անցողակի հիւանդոտ խանգարման կացութեան մէջ՝ որ ի բաց կը հանէ ազատ կամքը: Ազատ կամքը գոյութիւն ունի, եթէ մարդ մը ի վիճակի է՝ իր գործողութիւնները, իր բնագոյները, բան մը ընելու, բան մը ձեռնարկելու իր ներքին մղումները կանոնաւորել իր իմացականութեան, իր մտաւոր անձնաւորութեան միջոցով: Եթէ մենք ժխտենք ասիկա լայն ծաւալով, այնատեն մենք ժխտած կ'ըլլանք զատ կամքի մը կարելիութիւնը: Օրէնքը այսպէտով կը պահանջէ, որ այն կացութիւնը, զոր դուք ճշդելու էք, այնպէս ըլլայ, որ ոչ միայն դժուարացնէ կամքին կազմումը, արգելք ըլլայ ու վնասէ անոր, այլեւ բոլորովին ի բաց հանէ զայն: Ուրեմն դուք պէտք ք հարցնէք ձեզ - արդեօք ամբաստանեալին վերնոտութիւնը եւ բժշկական իրազեկներուն կարծիքներուն մէջ յիշուած ուրիշ հանգամանքները ստեղծած են ամբաստանեալին քով այնպիսի կացութիւն մը, որ ան այլեւս իր տրամադրութեան տակ չունենար բոլոր մասերը իր գիտակցութեան, բոլոր մասերը իր զգացումներու եւ մտապատկերներու աշխարհին, երբ 1921ի մարտ 15ին կը գործէր սպանութիւնը: Եթէ դուք ընդունիք, որ իր գիտակցութեան մէկ նշանաւոր մասը կամ իր մտաւոր անձնաւորութեան որոշ լարերը այն աստիճան վնասուած էին, որ ան այլեւս ի վիճակի չէր ազատօրէն կազմելու իր կամքը, այն ատեն պէտք է որ, համաձայն 51րդ յօդուածին, ժխտէք նաեւ պատժախրաւական

պատասխանատուութիւնը եւ զինքը անպարտ արձակէք: Այս է առաջին քննութիւնը, որուն դուք ձեռնարկելու էք նաեւ ներկայ պաւագային, ուովհետեւ հարցումը կը սկսի հետեւեալ բառերով. “Յանցաւո՞ր է ամբաստանեալը...”:

Իսկ եթէ դուք չընդունիք նման անգիտակից կացութիւն մը եւ մտաւոր գործունէութեան նման հիվանդոտ խանգարում մը այն պատճառով, որ ձեզի կը թուի, թէ դէպքը իր ամբողջութեամբ չի կրնար երաշխաւորել ատիկա, այլ ընդունիք, թէ եղեր է միայն նուագած պատասխանատուութիւն, այն ատեն դուք պարտական էք շարունակել քննելու, թէ չկա՞ն արդեօք դիտաւորեալ սպանութեան նշանակները: Ասոր մասին պէտք չունիմ երկար խօսելու: Դուք պէտք է հարցնէք ձեզ՝ կ’ուզէ՞ր արդեօք ամբաստանեալը սպաննել Թալէաթը եւ գիտէ՞ր արդեօք ան, թէ ինքը մարդ մը կը սպաննէ: Թէ ինչ բանի հասաւ ան ատով, այդ հոս դեր մը չի խաղար: Եթէ այդ առհասարակ խնդրի առարկայ դառնայ այստեղ, այն ատեն պէտք է որ դուք հարցումին հաստատական պատասխան տաք, եթէ անշուշտ 51րդ յօդուածը որոշիչ չնկատէք:

Խորհրդածութիւնը, որը կը պատճառաբանէ կանխանտաճուած սպանութեան մասին տրուած հարցումին հաստատական պատասխանը, ոչ մէկ առնչութիւն ունի դիտաւորութեան հետ: Խորհրդածութիւնը աւելի ընդարձակ իմաստ ունի:

Յետոյ, պէտք է որ դուք ձեռք բերէիք այն համոզումը, թէ ամբաստանեալը սպանութեան վայրկեանին, երբ կը հասցնէր իր հարուածը, խորհրդածութեամբ կը գործէր: Այդ դուք կրնաք ընել, եթէ ըսէք. “Ան ներքին գրգռման կացութեան մէջ չէր. ան տակաւին ի վիճակի էր կշռադատելու ի կողմն եւ հակառակն: Իսկ եթէ ընդունիք ներքին գրգռման կացութիւն մը, որ ի բաց կը հանէր հանդարտ կշռադատման հնարաւորութիւնը, այն ատեն պէտք է որ դուք ժխտողական պատասխան տաք խորհրդածութեան մասին եղած հարցումին:

Այստեղ խնդիր մը եւս ծագած է, այն է թէ ամբաստանեալին կը պակսէր ապօրինութեան գիտակցումը:”

Պարոններ, ես կը կարծեմ, թէ դուք պէտք չունիք ատով զբաղելու: Ապօրինութեան գիտակցումը, դիտաւորեալ սպանութեան պարագային, ոճիրին էութիւնը բնորոշող նշանակներէն մէկն է: Ան չի մտնէր դիտաւորութեան բովանդակութեանը մէջ: Դուք պէտք է քննէք՝ թէ գիտէ՞ր արդեօք ան, որ կը սպաննէր, եւ կ’ուզէ՞ր ան սպաննել:

Ատկէ գատ, ես կը հրավիրեմ ձեր ուշադրութիւնը անոր վրայ, որ միայն կանխամտաճուած սպանութեան համար կայ մահապատիժ, իսկ անկանխամտաճ սպանութեան համար, ընդունելով մեղմացուցիչ պարագաներ, նուագագոյն պատիժը վեցամսեայ բանտարգելութիւնն է:

Արդ ես կը խնդրեմ ձեզ, որ դիմէք ձեր գործին եւ տաք ձեր առջեւ դրուած հարցումներուն պատասխանները, ընտրելով նախ ձեր մէջէն սուորական եղանակով գլխաւոր մը՝ դէկլարելու համար խորհրդակցութիւնը եւ քուէարկութիւնը:

Դուք գիտեք անշուշտ,, ու “յանցաւոր է”ի համար կը պահանջուի երկու երրորդական մեծամասնութիւն: Օրէնքը կը պահանջէ, որ արտայայտուած ըլլայ այս ձեւով: “այո, եօթեւեակ ձայնով”: Ուրեմն առնուած ութ հոգի պէտք է “այո” պատասխանեն՝ ըսելու համար, թէ ներկայ պարագային գոյութիւն ունի պատժախրական պատասխանատւութիւն, որու մասին կիրառելի չէ 51րդ յօդուածը: Եթէ դուք դիտարկութեան մասին հաստատական պատասխան տաք, պէտք է յայտարարէք. “Այո, եօթեւեակ ձայնով”: Նոյնը, եթէ պատասխանելու ըլլաք խորհրդածութեան մասին դրուած հարցումին “Այո, եօթեւեակ ձայնով”: Ատոր հակառակ, եթէ ընդունիք մեղմացուցիչ պարագաներ, պարզ մեծամասնութիւն մը միայն կը պահանջուի, եւ կը բաւէ, որ պատասխանէք. “Այո, վեցեւեակ ձայնով”, կամ պարզապէս. “այո”:

Արդ, ես կը ստորագրեմ հարցումները:

Ատկէ ետք երդուեալները կը մեկուսանան խորհրդակցելու:

Մէկ ժամուան խորհրդակցութենէ յետոյ երդուեալներու գլխաւորը կ’ազդարարէ. “Պատուով եւ խիղճով կը վկայեմ՝ որպէս երդուեալներուն որոշումը”

Յանցաւոր է ամբաստանեալ Սողոմոն Թէլիքեանը 1921 մարտ 15ին Շարլոտտենբուրգի մէջ դիտարկեալ կերպով մարդ մը, Թալէաթ փաշան, սպաննած ըլլալուն համար:

Ոչ:

Օտտօ Բայնիկէ, երդուեալներու գլխաւոր:

(Մեծ շարժում սրանին մէջ եւ ծափահարութիւններ:)

Նախագահ.- Ես կը ստորագրեմ որոշումը եւ կը խնդրեմ պ. քարտուղարին՝ նոյնը ընել եւ կարդալ ի լուր որոշումը:

Քարտուղարը կը կարդայ որոշումը, որ կը թարգմանուի ամբաստանեալին:

Նախագահ,- Ապա ուրեմն կ’ազդարարուի հետեւեալ դատավճիռը.

“Ամբաստանեալը անպարտ կ’արձակուի պետական սնդուկին հաշտոյն:”

(նոր շարժում եւ ծափահարութիւններ:)

“Համաձայն երդուեալներու որոշումին՝ ամբաստանեալը յանցաւոր չէ իր վրայ իբրեւ մեղադրանք ծանրացող պատշէլի արարքին համար”:

Յետոյ կը ծանուցուի հետուեալ որոշումը.

“Բանտարկութեան հրամանը ամբաստանեալին նկատմամբ կը ջնջուի”:

(Ամբաստանեալը կը շնորհաջորեն իր պաշտպանները, հայրենակիցները եւ ներկայ գտնուող հասարակութիւնը:)